Շիրակի կուրարաքայան խմբի մարդաբանական նյութերի ուսումնասիրության արդյունքում հաջողված է հաստատել հետևյալը. Երեք զանգերի վրա փաստված է, որ զլուխները կտրված են, ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանաց մոտ կան ատամների կարիես, ատամների քարեր, կենդանության օրոք ատամների կորուստ, որ վկայում են ա) սննդակարգում գերակշռող կոստի, ածխաջրերով հարուստ սննդի օգտագործման մասին, բ) էպիգորիկ ստրեսի նման մարկերներ, ինչպիսիք են եմակի եփառալազիան և cribra orbitalia-ն, ցույց են տալիս, որ բացառական գործոնների պարբերաբար ազդեցությունը (վարակերը, պարագիտները, քաղցի փուլերը) խոշրնդութել են մանուկ հասակում օրգանիզմի բնականն զարգացմանը, զ) բերանի խոտաշի եփակենայի բացակայություն, որը նպաստել է բորբոքային եփականությունների պարագնությունը, կարիեսի ալվեուշը արցեսի տարածմանը, դ) բորբոքային գործնքացների (սիֆիլիս, բորախու) առկայությունը մտանածնշում է ինֆեկցիոն բնույթի զանազան եփական եփականությունների լայն տարածման մասին:

Сведения об авторах

Խւավերճյան Անաստ Յորիևна - ք. ինժ. լ., Ինститут археологии
и этнографии НАН РА. E-mail: akhuyedzun@yandex.ru

Պետրոսյան Լևոն Ասոտոսիչ - ք. ինժ. լ., Ինститут археологии
и этнографии НАН РА. E-mail: galstyan-1966@mail.ru

Խաչառյան Ամազան Ակոպոսիչ - Շիրակский краеведческий музей.
E-mail: smuseum@web.am

Եղանյան Լորисա Գրիգորիան - ք. ինժ. լ., Շիրակский краеведческий
музей. E-mail: smuseum@web.am

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ԵՌՈՒՏԱՆԻ ԵՎ ՔԱՌՈՒՏԱՆԻ ՏԱԿԴԻՐ-ԶՈՀԱՍԵՂԱՆՆԵՐ
ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐԻՑ

Մեծ Սեպասարից հայտնաբերված կուրարաքայան մշակույթի ծխական խցեղենի մեջ կամ դեղնավուն, մանրահատիկ, երբեմն նաև քիչ ավազախառն, լավ հունցված և լավ բրծված կալից, եռուտանի կամ քառոտանի, սեղանածել իրերի թեկորներ, որոնց երեսը հարթ է, անկյունները՝ սուր (տախտ. I, նկ. 1-3, տախտ. II, նկ. 3, 9) կամ քիչ կորացող (տախտ. II, նկ. 1, 2, 4-8): Կամ շրթերից քիչ բարձր (տախտ. II, նկ. 2, 5, 7, 8), երբեմն էլ ակրոսվ ընդգծված երեսով ձևել (տախտ. II, նկ. 7, 8): Սեղանի երեսի եզրերից սկավում և աստիճանական թեքությամբ իջնում են իրանի հետ միաձույլ, կորուրյամբ դեպի դրու հակված, խոյի երկարավուն զոլով հիշեցնադ ուրերք (տախտակ II, նկ. 1, 4, 5, 9): Գտածոների մեջ կա նաև ուղիղ ուրերքով տարբերակ (տախտակ II, նկ. 2): Սեղանածել իրերի երեսներին ունեն 2-3սմ հասարակուն, ուրերքի բարձրությունը 8սմ-14սմ է: Քննարկվող իրերի տարբերությունները եռանկյուն կամ քառակուսի ձևերի և կտրվածրում դրանց շրջանածեն, ձվածեն կամ քառակուսի ուրերքի բանակի (երեք կամ չորս) միջին է: Կախված ուրիշ բարձրությանից և երեսի չափերից տարբեր են նաև ուրերքի և երեսի միացումով ձեղակորված կամարի կորուրյունն ու բարձրությունը:

Կրակի (մեկը նաև կարմիր ներկի) հետքերով այսպիսի իրերի բնկորներ հայտնաբերվել են ինչպես պաշտամունքային կառույցում ուղղահայաց դիրքով կանգնած քառանիստ կորողի մոտ, պայտածե, խոյագուխ պատվանդանների, անորածե օջախ-կրակարանի, նախշազարդ և անզարդ, ծխական ամրողական և թեկորային տարատեսակ անորների ու նվիրաբերված-գոհաբերված այլ նյութերի հետ (in situ), այնպես էլ պեղակայիր տարբեր հատվածներում:

Կուրարաքայան մշակույթի հուշարձաններից քառանիստ կամ եռանիստ հատած բորզի ձև ունեցող այսօրինակ իրեր հայտնաբերվել են Շբէշ բլուրում¹, Սոխիրաբուրում², Աղթամիրում³, Հաղիձում⁴, Ազարակում⁵: Հայտնի են նաև Դվինից, Շենգավիրից, Քյուլ-թափայից⁶, Այրումից⁷, Արևիկից⁸ Գամսիկից⁹, Քերիից¹⁰, Շիրակավանից¹¹:

¹ Խանզարյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ. Ռիազարայակում, Եր., 1967, էջ 67, աղ. XVIII; Յ. Խանզարյան, Բանացեազուօչ ուսումնական բնակչության համար, Արևանք, 1969, N 4, ռուս. 10.

² Թումանյան Գ., Ազարակ 1. Վաղդրոնզերայան թնակավայրը (2001-2008թթ.), Եր., 2012, էջ 52.

³ Խանզարյան Է., Գալոհի IV, 1949-1966 պեղումների արդյունքները, Եր., 1969, էջ 70:

⁴ Խաչառյան Տ. Ճրենյան կոլլեցիա Շիրակ, Եր., 1975, սր. 72-73, ռուս. 33.

⁵ Թումանյան Գ., Ազարակի հնավայրի 1 տեղամասի 2002թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XIII, Եր., 2005, էջ 52, ռուս. XIV/2:

⁶ Խանզարյան Է., 1967, էջ 4. աշխ. էջ 67, աղ. XVIII:

⁷ Եսայան Ս. Ճրենյան կոլլեցիա Արևանք, Եր., 1976, սր. 33, ռուս. 19/6:

⁸ Խանզարյան Յ. Բանացեազուօչ ուսումնական բնակչության համար, Արևանք, 1969, N 4, ռուս. 9/1.

Սիայն Հայկական լեռնաշխարհին հատուկ նման իրերը հայտնի են «Եղբայրական պատվանդաններ»¹² կամ «տակդիրներ» անուններով¹³: Ըստ Է. Խանզադյանի՝ «Նրանց վրա կամ լիքավամաններ են դրվել կամ ի պաշտամունքային նշանակություն ունեցող որևէ իր, արձանիկներ և այլն»¹⁴ միաժամանակ շրացառելով նաև դրանց կենցաղային բնույթը¹⁵: Իրերը կարող են լինել վաղբրոնզիդարյան խեցեղենին բնորոշ զարդանախշմամբ (Շրեշ բլուր, Արևիկ, Քերի, Շիրավավան և այլն) կամ անզարդ, ինչպես Սևծ Սեպասարի տարբերակները:

Վաղրբոնզիդարյան մշակույթի ուշ փուլում իրերն այլևս փայլեցված չեն, կոպիտ են, կամի մեջ խառնուրդներ կան, որոշակի փոփոխություն կա նաև ձևում. իսկ Համհճի, Շենգավիթի և Աղքամիրի օրինակները ցույց են տալիս, որ տեղի են ունենաւ որոշ պարզեցում՝ դառնալով իրերն այդ փուլին դասելու բնութագրական և տարբերակիչ հատկանիշ¹⁶:

ՍԵԾ ՍԵՎԱՍԱՐԻ ԳՄԱԾՈՆԵՐԸ կրկնում են Հայկական լեռնաշխարհի համանման նրաբերի ձերը, նկատելի են նաև փոքր տարրերություններ ոտքերի և երեսի ձևավորման մեջ, որ կարելի է դիտել որպես լրկալ առանձնահատկություն։ Հայատանի ենազիտական հուշարձաններից հայտնի համանման գտածոների ձերի համադրմամբ, ինչպես նաև քննարկվող իրերի եւս հայտնաբերված հստակ թվագրվող մուս նյութերով, եռտանի և քառտանի սեղանաձև իրերը թվագրվում են կուրարարայան մշակույթի ուշ փուլով։

Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող իրերի բնկորներ նախնական դիրքությունները կատարվել են նաև պաշտամունքային կառույցում, կրակի մնացորդների հետ այսինքն՝ անմիջականորեն կապված են կրակի (=օջախի) հետ և ակնհայտորեն ծխական գործառույթ ունեն, հետևաբար նոյնքան կարևոր է նաև վերջիններին ծխական բովանդակության բազահայտումը:

Հոգեստը մշակույթին առնչվող հնագիտական նյութը խոսուն է դառնու ինչպես գրավոր աղբյուրներում պահպանված վկայությունների, այնպես էլ հա- վատալիքների, ստվարույթների և ծեսների համայրացմաներով։ Վերջինս, լինելու անհրաժեշտ, նաև բարդ է, քանի որ ծիսական իրերից տրաքանչյուրը հաճախ ունի հիմասուրանական մի շարք կապերի հանձնուող բազմաթիվ համականիշներ։

Այդուհանդեռձ, նման մոտեցումն ուղղակի անհրաժեշտ է, որ ուսումնասիրությունը չինք իրերի սոսկ ձևի, որակի, չափերի և զուգահեռների փաստում:

Խեթական գրավոր աղբյուրներից հայտնի է, որ ծիսական որևէ կառուցում զոհաբերություն կատարելիս զոհ մասուցվում էր ոչ միայն աստվածություններին, այլ նաև ծիսական նշանակալից, հաճախ աստվածացված օրեւկտներին. զակին, պատվանդանին, որի վրա կանգնեցված էր աստծու արձանը, օշախին (-զոհասեղանին), պատուհանին, փայտյա սողնակին¹⁷. Ըստ նույն աղբյուրների վկայությունների՝ կրակի հետ անմիջականորեն կապված օշախիներն աստվածացվում էին, երանց նաև զոհ էին մասուցում¹⁸: Տեսնաբար, Ենթադրելի է, որ օշախիների հետ կապված իրերը, այդ բնույթ նաև քննարկման առարկա կառութերը, ծիսական և պաշտամունքային որոշակի գործառույթ են ունեցել, և իրերի ձեռքի վերը նշված բոլոր մանրամասները ծիսականորեն իմաստավորված են եղել:

Հնարկվող իրերը համադրելի են խեթական աղբյուրներում հիշատակվող սեղաններին: Խեթական ծիսական տեքստերում հաճախ են հիշատակվում զոհաբերությունը դնելու համար տեղադրվող հասուկ սեղանների մասին: Այսպէս, խեթական թագավորի և թագուհու մասնակցությամբ ծեսերում օգտագործում էին երկու սեղան, մեկը՝ թագուհու, մյուսը՝ թագավորի համար¹⁹: Մի քանի ծեսերում շեշտվում է նաև յուրաքանչյուր աստվածության համար տեղադրվող առանձին սեղանի (օրինակ՝ Հարիի պահապան աստվածություն համար) մասին: Ծիսական սեղանները ոչ միայն կարող էին լինել մի քանիսը և կոչվել գոհ մատուցողի անունով, այլ նաև հաճախ սեղան էին տեղադրում և՛ թագավորի, և՛ թագուհու, իսկ մի ծեսում խոսվում է թագավորի, թագուհու, թագաժառանգների ու ճանաչված մարդկանց համար դրվագ աստվածություններին նվիրված ծիսական տասնույթ սեղանների մասին, ընդ որում զոհաբերվելիք հացերի և աստվածությունների թիվը նույնն է²⁰: Այսինքն՝ յուրաքանչյուր աստվածության համար դրվագ էր առանձին հաց: Նույն սեղանին կարող էին դրվել մի քանի աստվածությունների համար նվիրաբերումներ, ինչպես ամսվան նվիրված խեթական տանին էր, երբ պատրաստվում էր տասներեք հացիկներով և լուսեակներա մի հատու սերպին²¹.

Այսինքն՝ եռոտանի կամ բառոտանի իրերը տակդիր-զոհասեղաններ են, որոնք օգտագործվել են նվիրաբերվող-զոհաբերվող և առողջության պետ-յու համար և չեն հակասում իրերին արված վերը բերված բնութառութեունի:

Խեթական ծիսակարգում թագավորը, մոտենալով սեղանին, մանրում էր հացերը՝ դնելով դրանց կեսը սեղանի մի, մյաւը՝ հակառակ կողմում²²: Սեղանի տարբեր կողմերում դնելը ենթարրում է, որ արարողությունը խստապես է՝ արա-

⁹ Խանզադյան Է., 1969, Աշվ. աշխ., 1970, աղ. XX ստորթինգ

¹⁰ Петросян Л. Раскопки памятников Кети и Воскесакса (III-І тыс. до н. э.), Ер., 1989, стр. 44, табл. 34/4; Badalyan R., Avetisyan P. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I. M. Aragats and its Surrounding Region// BAR International Series 1697, 2007, p. 161, pl. IV/12.

¹¹ Թորոսյան Ի., Խելիկյան Օ. Ս., Աշարոսյան Լ. Ա., Հին Շիրակավան (1977-1891թթ. պէտքական դաշտերի արդյունաբերող) .Եր., 2002, էջ 14, աղ. II. 7-11; Badalyan R. S., Avetisyan P. S. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region// BAI International Series 1697, 2007, p. 229, pl. II₂₀.

¹² Խանգաղյան Է., 1967, նշվ. աշխ., էջ 67.

¹³ Թումանյան Բ., 2012, նշվ. աշխ., էջ 52.

¹⁴ Խանգաղյան Է., 1967, Աշխ. աշխ., էջ 67-68.

¹⁵ Ханзалин Э., 1969, бгվ. шгђи., бг 168:

¹⁷ Ардынба В. Ритуалы и мифы Древней Анатолии. Москва, 1982, стр. 60.
¹⁸ Шапошников И. Г.

Шаншишвили Н. Происхождение и функции очажных подставок Куро-арахской культуры. Археология, этнография и фольклористика Кавказа (материалы международной конференции), Пермь, 2003, стр. 58-59.

Арханба В., նշվ. աշխ., էջ 140

Նոյն տեղում, էջ 66, 116

Նոյն տեղամ, էջ 60

Lungip

շնորդվելով ծիսակարգում աջ-ձախ (խեթական ծիսակարգում թագավորը ստվաբար հարաբերվում է աջ հատկանիշի, իսկ թագուհին՝ ձախի հետ²³), ուժեղ-քույլ, տղամարդ-կին հակառակ հատկանիշները շեշտելու անհրաժեշտությունից: Աջ կողմում դնում էին ամպրոպի աստծու օջախը (=զրհասեղանը) և զոհ մատուցում արական աստվածություններին, որ ծեսի ժամանակ կատարում էր ամպրոպի աստծու գահին նստած տղամարդը (=քուրիլը), իսկ ձախ կողմում շեփաթ աստվածություն համար դրված օջախին (=զրհասեղանին) զոհ էր մատուցում կինը (քրութին)²⁴: Ծիսակարգում արականի և իգական հակառակ հատկանիշների արտացոլումը պահպանված է հոգեհացի ծեսում: Ծիրակում հոգեհացի ժամանակ տղամարդկանց և կանանց համար սեղանները տարբեր սենյակներում կամ նույն սենյակում առանձին-առանձին դնելը նման հակադրության հետևագույն վկայություն են:

Քննարկվող նյութերի ծիսական գործառույթում արականի և իզականի հակադրության մասին են վկայում Եռանկյուն կամ քառանկյուն ձևերը: Այն, որ Եռանկյուն և քառանկյուն զոհասեղանները ծիսական որոշակի իմաստի կրողներ են, ծիսակարգում արական և իզական հատկանիշների տարբերակման մարմնավորում երեքի և չորսի ծիսական բովանդակության կրողներ, կարող են հաստատել երկրաշափական այդ ձևերի մասին հնդկաբառական պատկերացումները: Քառակուսին խորհրդանշում է աշխարհի չորս կողմերը, չորս անկյունները²⁵, իսկ երեքը՝ տիեզերքի երեք շերտերը²⁶: Երեքը՝ դինամիկ, իսկ չորսը ստատիկ ամբողջականություն են, որոնց գումարը կազմող մոգական յոթ թիվը խորհրդանշում է տիեզերքի ամբողջականության գաղափարը²⁷: Եռանկյան և քառակուսու են կապված հենազոյն այս պատկերացումներն արտացոլված են վաղբրոնզիդարյան ծիսական անորթների և պաշտամունքային իրերի (օջախներ, հենակ-պատվանդաններ, կանաց արձանիկներ և այլն) զարդանախշերում:

Գտածոների մեջ կա կարմիր հետքով բարձնելուն զոհասեղանի բեկոր՝ թեև միակ օրինակն է, կարծում եմ, պատահական չլ. և ներպարում է ծխակարգում նաև գոյնի կարեռումը, մանավանդ որ կարմիրը տիրական է Մեծ Սեպասարի պաշտամունքային կառույցների ներքին ձևավորման մեջ, նաև ծխական իրերի գունային լուծումներում²⁸:

Կարմիրն արևի, կրակի և արյան գույնն է: Արյունը սեմանտիկական նույն շարքում է կյանքի և մահվան հետ: Այստեղից էլ շատ կարևոր կռումողնիկ մոտիվ՝ առաջին մարդու զոհաբերության աստվածներին կա և իր միջամարդկան մեկնեն, կա և

²³ Аргинба В., *ицј. шгји.*, б9 137, 142.

²⁴ Նոյն տեղում, էջ 136-137:

²⁵ Голан А. *Миф и символ*. М., 1993, стр. 105; Ардзинба В., նշվ. աշխ., էջ 24.

²⁶ Голан А. Աշվածականությունը. Եղ 32:

²⁷ Топоров В., Числа, Мифы народов мира (шынгытЫңбыл МНМ), Энциклопедия, т. 2, Москва, 1992, стр. 630.

²⁸ Егиян Л. Памятник раковинного периода Мец Сенасар в контексте нидерландских верований и ритуалов. РАН, Институт этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая, Маргинская археологическая экспедиция. Труды Маргинской археологической экспедиции. Том 4, Исследования Гонур-Депе в 2008-2011 гг. Москва, 2012, стр. 278.

ինքն իրեն: Այսինքն՝ զոհի արյունով նոր կյանքի արարում: Տիեզերքի բոլոր չկանոնակարգված տարրերը զոհի մարմնի մեջ են ամփոփված և զոհաբերությամբ ավարտվում եր կանոնակարգման արարումը²⁹: Կարմիրը նույնացվում է արև-մուտքի, անդրաշխարհի և դժոխքի աստծու կամ տիրակալի հետ³⁰, որով էլ պայմանավորված են մահվան տիրակալ Յամայի³¹ և հինգումեական Վակիսի հագուստի կարմիր գույնը. Պրիառի արձանը կարմիր ներկելը. Վյունեյան Կաղմու ֆալիկ աստվածությանը «կարմիր աստված» կոչելը³² և այլն:

Այսինքն՝ գույնը խորհրդանիշ է, որն ամփոփվում է պաշտամունքի երբեմն խոր թաքնված կամ զաղտնազրկած իմաստաբանությունը։ Կարմիրով նշված ուղղանկյուն գրեակեղանը ձևով և գույնով համապատասխան է հենց վլուպտական ընկալում։ Եթե արականին հատկացվող հատկանիշներին և ծիսակարգություններին արական աստվածությանը նմիաբերում-գոհաբերություն մատուցելիս:

Եվ Վերջինը: Խչպէս արդեն նշկ ենք, զոհարերության սևդանները բեկորային են (նաև՝ *in situ* զոնվածները), այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ծիսակարգի ժամանակ դրանք նույնական զոհարերվել են: Միասկարգից հետո անորոշները կոտրելու ծես փաստված է նաև Մեծ Սեպասարի սրբարանում, որտեղ արարողակարգի ժամանակ օգտագործված բալոր ամանները կոտրված են: Նման ծեսի մասին զրավոր վկայություններ կան խեթական տեքստերում: Այստեղ ևս ընդունված էր կենդանիների, խմիչքների, մրգերի և հացի զոհարերությունից հետո բալոր անորոշները կոտրել³³: Շեսն անցել է նաև քրիստոնեությանը: Աստվածաշունչը վկայում է, այն անորոշները, որոնց մեջ եկիվում էր զոհարերության կենդանու միսը, օգտագործելուց հետո պետք է կոտրեին. «Իռղի ամանը, որի մեջ եռ է ածուել այս միսը, պիտի կոտրուի...»³⁴:

Զոհարերության ծևսից հետո անոթները կոտրելու ավանդույթը հատկապես արտացոլվել է քաղման ծեսում։ Այն փաստված է Հայաստանի և հարևան երկրների տարածամանակայա քաղումներում³⁵։ Նրան հոգևորականիներից է սկսված

³⁹ Дьяконов И. Архангельские мифы Востока и Запада. Москва, 1992, стр. 133.

¹⁰ Голан А., Աշվ. աշխ., էջ 44.

¹¹ Гриффер П. Яма, Мифы народов мира, Энциклопедия, т. 2, Москва, 1992, стр. 683.

Голан А., Աշվ. աշխ., լը 45:

Otten H. *Hethitische totem rituale*, Berlin, 1958, p. 13-16.

¹⁷Ասավածաշունչ, Աւտագր. Գլ. Զ, Ողջակեզի, հացի ընծայի և մեղրի պատարագի կանոններ, Ծովութարդ, 1989, էջ 424:


¹⁵ Տե՛ս Խմբիկյան Օ.՝ Դամբարանագաղտներ Միսխանի ջրանում, ԼՀԳ, 1984, թիվ 9, էջ 59; Նույինի Սյունիքի մ.թ.ա. IV-Ի հազ. թաղման ծեսի մեկնարյան փորձ, ԲԵՀ, 1993, թիվ 3, էջ 126-135; Խանզադյան Է., Ալյոսյան Կ., Պարսամյան Է., Սեծանոր, Եր., 1973, էջ 169; Անջյան Ա., Նշվ. աշխ., էջ 100; Թաւմանյան Գ., Ուշրընթերքարյան թաղման ծեսը Հայկական լեռնաշխարհի կյուսին-արևելքում (ըստ հնագիտական տվյալների), թեկնածուական ատենախոսություն 1997, էջ 17; Խաչատրյան Ժ., Արտաշատ Ա., Եր., 1981, էջ 47; Եղանյան Լ., Շիրակի անտիկ դամբարանագաղտները, Շիրակի հևացիտական և պատմազգագրական ուսումնաժողություններ, հ. 1, Եր., 2010, էջ 139.

ծեսը, եթք Օսիրիսի հարությանը նպաստելու համար եզիստացիները նրա գերեզմանի վրա անորների բեկորներ էին շարում³⁶:

Մեսի հետեազույն վկայությունը՝ գերեզմանի վրա զինին հեղեղուց հետո 22երն ու քածակները, քարերին խփելով, կոտրելու է, որ մինչև անցյալ դարի 70-ական թվականները պահպանվում էր Լենինականում³⁷: Թաղման ծեսի ավարտին անորները կոտրելու նպատակը հանգույցալի և իրերի փոխազդեցության կապերը կարելն է³⁸ և վերածունդն ապահովելը³⁹: Աստվածություններին նվիրաբերում-գոհարերություններ մատուցելիս զոհասեղանները կոտրելու մոտիվը նոյնպես մեռնելով վերածնվելու է, մասնավորապես եթե այն դիտարկենք նաև Մեծ Սևաստոպում հնագիտական նյութով փաստված գարնանամուտին նվիրված ծեսերի համատեքստում. հետ մահը նախորդում էր նորի ծննդին, մեռնամ էր իր նոյն տարին, որպեսզի ծնվեր նորը: Վերածության նպատակով էր կատարվում նաև խեթական թագավոր Սուսիին աֆազիայից՝ խոսելու ունակությունը կորցնելուց բուժելու ժեսը: Թագավորի մահվան մոտիվը արտահայտվում էր նրա անօտարելի սեփականություն իրերը՝ սեղանը, անոթը, անկողինը, տռնական հագուստները, մարտակառը և զենքերը հեռացնելով, իսկ ծիսական մահից հետո ծնունդը արտահայտվում էր մարրագործող լվացմամբ⁴⁰: Նոյն խորհուրդն ուներ նաև հիվանդին բուժելու նպատակով կատարվող հայկական ծեսը, եթք սուրբ ծառի մոտ հիվանդի ձեռքերը, ոտքերը լվանալուց հետո կուլան, խփելով ծառին, շարդում էին⁴¹:

Այսպիսով, եռուտանի կամ քառուտանի իրերը զոհաբերության սեղաններ են, որոնց ձեւերը երեքի և չորսի խորհրդանշական իմաստների տիրություն են. եռանկյունին՝ իգականի, ուղղանկյունը՝ արականի: Պաշտամունքային իրերի ուրաքանչյուրը ձեւ նախատեսված է եղել համապատասխան սեռի աստվածությանը զոհ մատուցելու համար: Տարբերակման իմաստը պահպանվել է նաև կանանց կամ տղամարդկանց կողմից զոհ մատուցելիս. կանանց համար դրվել են եռուտանի, իսկ տղամարդկանց համար՝ քառուտանի սեղաններ: Իրերի ծիսական գործառույթում հականաբար որոշակի իմաստ է ունեցել նաև գույնը, և կարմիրով նշվել է արական աստվածությանը զոհ մատուցելու համար հատկացված սեղանը: Կարևորվել է նաև վերածունդը կամ նորացումն ապահովելու նպատակով զոհասեղանները կոտրել-զոհաբերելը, որով է ավարտվել է ծեսը:

Տախտակ I



³⁶ Պերս Է. Լուսնի եց. Մոսկվա, 1976, սր. 364.

³⁷ Մեղրոսյան Կ., Արհեստավարական սովորությունները և դրանց արտահայտությունները լեռներականցիների կենցաղում. Հայ ազգագրություն և քանակություն 6. Եր., 1974, էջ 249.

³⁸ Եղանակ Լ., եշվ. աշխ., էջ 140:

³⁹ Հնեցյան Ս., 2006, եշվ. աշխ., էջ 100: Թումանյան Գ., 1997, եշվ. աշխ., էջ 17:

⁴⁰ Առշանեց Բ., եշվ. աշխ., էջ 108:

⁴¹ Ղազինյան Ա., Իրանի շարադար զավարի հայերի ուխտավայրերը. Հայոց սրբերը և սրբավայրերը. Եր., 2001, էջ 284:

ТРЕХ-И ЧЕТЫРЕХУГОЛЬНЫЕ ГЛИНЯНЫЕ СТОЛИКИ-ПОДСТАВКИ ИЗ МЕЦ СЕПАСАРА

Резюме

L. Егаян


При раскопках памятника раннебронзового периода Мец Сепасар, обнаружены многочисленные образцы глиняных фрагментарных ритуальных столиков-подставок куро-акаксской культуры трех-и четырехугольной форм. Предметы со следами огня, изготовленные из тщательно растертой, светлой глины, обнаружены и в ритуальных помещениях у очага или в слое золы. Предметы относятся к позднему этапу раннебронзового периода.

Сопоставляя упоминания в хеттских источниках об ритуальных столиках с указанными глиняными предметами, также хеттские и армянские верования и обычаи, можно уверенно сказать, что квадратные и трехугольные предметы-ритуальные столики-подставки были предназначены для жертвоприношения; прямоугольные-мужским, а треугольные-женским божествам.

Ритуальная особенность столиков-подставок не только в форме: с красной отмечиной предназначалась для жертвоприношения для божества мужского пола. После ритуала столики разбивались, цель: обновление и возрождение.

Տեղեկություններ հեղինակի մասին

Եզանյան Հարիս Գրիշայի-պ.գ.թ., 22 ԳԱԱ Երևանի
հայագիտական հետազոտությունների կենորուն,
E-mail: smuseum@web.am



1 2 3
4 5
6 7
8 9

1 2 3
4 5
6 7
8 9

**Համագասայ ԽԱՇԱՏՐՅԱՆ, Լարիսա ԵԳԱՆՅԱՆ,
Հեռե ՊԵՏՐՈՍՅԱՆ, Անդրեա ՖՈՒՐԹՎԱՆԳԼԵՐ,
Թորիաս ՆԵՐԻՄԵՐ, Դորոքեա ՄԱՌԻԵՐՍԱՆ**

ԱԶԱՏԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2014թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2014թ. Շիրակի երկրագիտական թանգարանի և Հալեի համալսարանի հայ-գերմանական համատեղ հնագիտական արշավախմբի կողմից շարունակվեցին Ազատանի ուշ բրոնզ-երկարի լայն տարածման ժամանակաշրջանների հնավայրի պեղումները:

Նպատակ ունենալով հստակեցնել առաջին դամբարանադաշտի տարածման սահմանները՝ աշխատանքներն իրականացվեցին տվյալ տարածքով արեւելք-արևմուտք ձգվող հեղեղատի աջ, բարձրադիր, թեր լանջին: Այստեղ ակնվեցին երկու կից կրոմլեխներ և նույն լանջի վերին և միջին հատվածներում գտնվող, նույնպես կրոմլեխնու շրջագծված 2 կիսավեր դամբարաններ:

Հարավային կրոմլեխն ուներ մոտ 4մ տրամագիծ: Հիմնահողային քաղման խուցը գտնվում էր կրոմլեխի հարավային կողմում: Այն ուներ հյուսիս-արևելք կողմանուրոշում: Կմախքը կծկված վիճակում պատկած էր աջ կողքին՝ դեմքով դեպի հյուսիս: Ուստերի աջք դրված էին երեք խեցանոր՝ մեկ կճուճ և երկու քրեղան (աղ. I, չափագրություն): Ներկայացվող դամբարանի նյութերը հիմնականում համապատասխանում են ուշ բրոնզի ավարտական փուլին և թվագրվում մ.թ.ա. 14-13դդ:

Այս դամբարանին հյուսիսային կողմից կից կրոմլեխն ուներ մոտ 6մ տրամագիծ: Թաղման խուցը գտնվում է կրոմլեխի հյուսիսային կողմում և ծածկված է երկու մեծ, անկանոն ժայռաբեկորներով: Աջ կողքին կծկված, հյուսիս-հարավ դիրքով կմախքի վրա դրված էին միջին չափի մեկ կճուճ և երկու քրեղան (աղ. II, նկ. 1-6, չափագրություն 2): Կրոմլեխի հյուսիսային կողմում՝ սալաքարով ծածկված առանձին փոքր խօսում, հայտնաբերվեց երկու կճուճ (աղ. II, նկ. 7, 8): Քննարկված դամբարանը, ըստ հայտնաբերված նյութերի, համաժամանակյա է հարավային կրոմլեխին:

2014թ. արշավախմբի կողմից պեղված հաջորդ դամբարանը գտնվում էր նախորդից մոտ հարյուր մետր արևմուտք: Լանջի մակերեսին քափալված մի քանի ժայռերի տակից՝ հարավային կողմում՝ դիտվում էին ուկորներ և խեցանորների բեկորներ: Պեղումների ընթացքում այստեղ բացվեց կիսում չափ ավերված դամբարան: Կմախքի մեացորդների դիրքը հուշում էր, որ այն կծկված դիրքով պատկած է եղել աջ կողքին, հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ, դեմքով դեպի հարավ (չափագրություն 3): Հանգույցալին ուղեկցող նյութեր էին՝ սևանյան տեսակի բրոնզյա դաշույն, մեկական բրոնզյա ապարանջան, ականջօղ, երեք խեցանոր, սարդինից և շաղախից ուղանքներ (աղ. 3): Նման անոյնները հայտնի են ուշ բրոնզի վաղ փուլի, իսկ Ազատանի գտածոների գուգահետները՝ հիմնականում ուշ բրոնզի դարի վերջին փուլի և վաղերկարիալարյան ժամանակաշրջանից: Ուսումնասիրվող դամբարանի ժամանակագրական տեղորոշման խնդրում մեծ կարեն-

րություն ունի մ.թ.ա. II հազարամյակի վերջում և I-ի սկզբում ձևավորված սեանյան տեսակի դաշտունք:

Այս դամբարանի գտածոների մեջ կան բրոնզյա ապարանջան և մատանի, ինչպես նաև սարդինից, շաղախից և խմանջից ուղանքներ: Ուշ բրոնզ-վաղերկարիալարյան ժամանակաշրջանին բնորոշ այս նյութերով դամբարանը թվագրվում է մ.թ.ա. 11-10-րդ դարերով:

Հաջորդ կիսավեր դամբարանը գտնվում էր սրանից վերև՝ մոտ 200մ հյուսիս-արևելք: Դամբարանը նախորդների նման շրջափակված է եղել մոտ 4մ տրամագծով, լանջի թերությամբ հողածածկովը ներքև սահելու պատճառով թաղման խցի վրա դրված մեծ, անկանոն ժայռաբեկորները տեղաշարժված են մասմբ ավերված, ձվածիր կրոմլեխով: Թաղման խուցն ուներ հյուսիս-հարավ կողմանորոշում: Կմախքից պահպանվել էին գանգը, ազդուսկը և մի քանի այլ ուկորներ: Ըստ պահպանված ուկորների՝ կարելի է ենթադրել, որ թաղումը կատարվել է հարավ-հյուսիս ուղղությամբ, կմախքն ունեցել է աջ կողքին կծկված դիրքը, դեմքով՝ դեպի արևելք: Դատերավ ազդուսկը մոտ կուտակված տարբեր ուկորներից՝ չի բացառվում դիմամանատման ծեսը (չափագրություն 4): Թաղման ուղեկցող նյութերն են երկու կճուճ և ուկորից իլիկի զյուխ (աղ. IV, նկ. I, 2, 3), որոնց ձևերը և զարդարանշերը թույլ են տալիս դամբարանը թվագրել մ.թ.ա. 11-10-րդ դարերով:

2014 թվականին Ազատանում պեղումները ընթացան նաև ամրոցի հարավայաց լանջի ստորոտում, որտեղ նախ 1995թ.-այսուհետև նաև 2013թ. պեղվել էին պատահական բացված ժայռափոր մեկական դամբարաններ (չափագրություն 5, նկ. 1): Դամբարանի այս տիպը Հայաստանի ուշ բրոնզ-վաղ երկարի ժամանակաշրջանների դամբարանային համալիրներում փաստված չէ և առաջին եզակի է:

Տեղանքը, որտեղ բացվել են նշված ժայռափոր թաղումները, հեղեղատի արևոտյան լանջի ստորոտն է, որտեղ վերին շերտն իրենից ներկայացնում է կրային զանգվածով շաղախված բազալտյա հոծ կեղև, որը նստած է հրաբխային ծագման բույլ, պեմզայատիպ զանգվածի վրա: Թաղման համար հեղեղատի լանջի ստորին մասում հորիզոնական անցք է բացվել, այնուհետև մոտ 1մ խորանարդ ժայռի մեջ և ընդարձակվելով, հորիզոնական հարք մակերեսով թաղման խուց է փորվել: Թաղումը կատարելուց հետո մուտքը փակվել է մեծ քարով կամ միջին մեծության քարերի շարվածքով՝ միաժամանակ պահպանելով լանջի բնական թերությունը: Կառուցղական նման լուծումն ապահովել է թաղումների աննկատ մնալը:

2013թ. պեղված դամբարանի հարեւանությամբ, դեպի հյուսիս պեղվեցին ևս 2 ժայռափոր թաղումներ (նկ. 1):

Ժայռափոր դամբարաններից հյուսիսայինի մուտքը ուներ մոտ 0,8մ լայնություն և փակված էր մեծ ժայռաբեկորով: Սուս 1մ խորանարդ ժայռի մեջ անցքն ընդարձակվում է վերածվում է 1,2մx1,8մ չափերով, հյուսիս-հարավ կողմանորշմանը թաղման խցի (չափագրություն 5, նկ. 3): Խցի կենտրոնում բացվեց հարավ-հյուսիս դիրքով, աջ կողքին կծկված դիրքով պատկած, դեմքով դեպի արևելք կմախքը: Մի քանի անորներ շարված էին կմախքի շուրջուրությունը: Այլ անորներ և մեկ այլ գանգ բացվեցին ավելի ցածր մակարդակում: Ըստհանուր առմամբ, դամբարանի դամբարանական ժամանակագրական տեղորոշման խնդրում մեծ կարեն-

րանից հայտնաբերվեցին իինզ ամբողջական և տարբեր անորների մի քանի բեկորներ, մեկական բրոնզյա ապարանջան և մատանի (աղ. V): Դամբարանում թաղման ուղեկից իրերը համաժամանակյա են հարեանորդայմը պեղված ժայռափոր մյուս դամբարանների նյութերին և Հայաստանի այլ հուշարձաններից հայտնի բազմաթիվ զուգահեռների համարմամբ թվագրվում են մ.թ.ա. 12-րդ դարով:

Հարավային ժայռափոր դամբարանի մուտքն ունի մոտ 0,8մ լայնություն և նույնքան երկարություն: Թաղման խուցն ունի մոտ 1,5մ կողերով անկանոն ուղղանկան ձև: Դամբարանում կմախր և զանգ չհայտնաբերվեցին: Գտնվեցին կենդանական մի քանի ոսկորներ (չափազրություն 5, նկ. 2):

Խցում հայտնաբերվեցին տասը կավամաններ՝ քրեղաններ, կճուճներ և տարատեսակ այլ նյութեր (աղ. VI), որոնք ունեն ուշ բրոնզի և վաղ երկարի ժամանակաշրջաններին բնորոշ հատկանիշներ, համապրեկի են 2013թ.-ին պեղված ժայռափոր դամբարանի նյութերին ու թվագրվում են մ.թ.ա. 12-րդ դարի սկզբով:

Ազատանում 2014 թվականին շարունակվեց նաև կատակոմբային դամբարանների ուսումնասիրությունը: Պեղվեց ևս մեկ կատակոմբային դամբարան, որն այս ձևին բնորոշ կառուցվածք ունի. քարե խցանով փակված ուղղահայց հորատանցք, որը, ներքում ընդարձակվելով, վերածվում է թաղման խցի և կրկնում է Արքիկի կատակոմբային բաղրամների ձևը: Արքիկում կատակոմբային բաղրամները կատարված են տուփի շերտի մեջ, իսկ Ազատանում վերին շերտը երաբխային ծագմամբ, պեմզայատիպ, փափուկ ապարների վրա նստած բազալտյա կեղև է: Դամբարանը ներառված էր 5, 5մ x 4, 5մ ձվածիր, զոյզ շարքով կրոմլեխի մեջ: Կրոմլեխի հյուսիսային մասում՝ մակերեսին, հսկայական ժայռ է, որը գրավում է կրոմլեխի ներքին մակերեսի մեկ երրորդից ավելին: Սրան հարավային կողմից հարում էին մի քանի խոշոր ժայռաբեկորներ: Կատակոմբի մուտքը գտնվում է հարավային կողմում՝ մեծ ժայռից մոտ 1,2մ ներքև: Ժայռի տակ բացվեց մոտ 0,7մ բարձրությամբ, միջին քարերով շարված պատ, որը փակում էր թաղման խցի մուտքը: Դրա դիմաց հորիզոնական դիրքով ընկած էր կոպտատաշ բազալտ: Մոտ 1,25մ բարձրությամբ կորող, որն, ամենայն հավանականությամբ, ի սկզբան կանգնած է եղել մակերեսին և, բացի ծիսական նշանակությունից, մատնանշել է մուտքի տեղը: Մուտքը փակող պատը հեռացնելուց հետո բացվեց 0,7մ լայնությամբ և մոտ 1մ երկարությամբ միջանցք, որը, մտնելով ժայռածածկույթի տակ, ընդարձակվելով վերածվում է 2,3մ երկարությամբ և 1,5մ լայնությամբ թաղման խցի: Կատակոմբում կատարվել է մի քանի թաղում: Արդեն իսկ մուտքի մեջ հայտնաբերվեցին խեցանորներ, մարդկային և կենդանական ոսկորներ, մուտքի մասն կողմում, թաղման խցի սկզբնամասում քրեղանի մեջ՝ մարդու զանգ:

Դամբարանից հայտնաբերվեցին թվով տասնվեց անորներ, երկարյա դանակ, բրոնզյա երկու ապարանջան, երեք մատանի, ականջոյ, տակ և եկրու (աղ. VI, նկ. 1-22, չափազրություն 6): Դամբարանում կատարվել են տարծամանակյա իինզից վեց թաղում: Ավելի վաղ թաղումների ոսկորները և ուղեկցող նյութերը տեղափոխելով դամբարանի խորքը և պատերի տակ՝ կատարվել են հաջորդ թաղումները: Դրա հետևանքով անորների բեկորները խառնված էին մարդաբանա-

կան նյութերի և կենդանական ոսկորների հետ: Համեմատաբար անխարար պահպանված էր վերջին թաղումը, որ բացվեց խցի ձախ կողմում՝ արևմտյան պատի երկայնքով, և ուներ հարավ-հյուսիս դիրք:

Պեղված դամբարանները դիտարկենք ժամանակագրական հերթականությամբ:

Թիվ 2 կրոմլեխի հյուսիս-արևելք, հարավ-արևմտուք հիմնահողային դամբարանախցում գտնվեցին երեք խեցանորներ՝ մեկ կճուճ և երկու քրեղան (աղ. I, նկ. 1, 2, 3): Կճուճն ունի հարք հատակ, փոռն իրան, զանաձե, քիչ բարձր վիզ, դուրս պլորված շուրբ: Ուսերին արված են ակոսագոտիներ, ևս մեկը՝ իրանի ուռուցիկ մասում (աղ. I, նկ. 1): Անորների այս տեսակի սկզբնավորումը և լայն տարածում ստանալը ակնհայտ են Քերիի «Քարու հաղեր» դամբարանադաշտի վերին գյուղին հարակից տարածքներում պեղված միջինից ուշ բրոնզի անցման ժամանակաշրջանի թիվ 18-20 դամբարաններում¹, լավ հայտնի են նաև Հարիճի², Լոռի բերդի³ դամբարաններում: Նկատենք, որ կճուճների այս տեսակը հաջորդ երկարիդարյան ժամանակաշրջանում զրեք ամբողջությամբ ձևափոխվում է, ինչը հավանաբար պայմանավորված է կիրառության փոփոխությամբ:

Ներկայացվող դամբարանի միուս նյութերը միմյանցից փոքր-ինչ տարբեր երկու քրեղաններ են (աղ. I, նկ. 2, 3), որոնցից մեկի հատակին մոտ մասը զարդարված է երեք շարք ակոսագոտիներով (աղ. I, նկ. 2), նույն նախշով մյուսի միայն ուսերն են զարդարված (աղ. I, նկ. 4): Ի տարբերություն այս դամբարանի ներկայացված կճուճը՝ նման քրեղանների ձևը թեև ավելի վաղ է, սակայն տարբեր ժամանակներում չնշին փոփոխություններ է կրել:

Ազատանի դամբարանի ոլորտված շուրբով քրեղանները հայտնի են դեռևս միջին բրոնզի ժամանակաշրջանից, ավելի լայն կիրառություն են ունեցել հատկապես ուշ բրոնզի դարաշրջանում և կրկնով ձեմ ու հարդարման որոշ փոփոխություններ՝ շարունակում են օգտագործվել նաև հետագա դարերում: Ազատանի դամբարանների նյութերը (կճուճ, քրեղան) հիմնականում համապատասխանում են ուշ բրոնզի ավարտական փուլի՝ մ.թ.ա. 14-13դդ. նյութերին:

Քենարկված դամբարանից արեւելք պեղված արեւելք-արևմտուք կողմնուշմամբ հիմնահողային դամբարանում գտնվեց խեցանոցային երեք կճուճ (աղ. II, նկ. 1, 4, 6), որոնցից երկուսն ունեն դուրս մկան շուրբեր (աղ. II, նկ. 1, 4): Շուրբի նման ձեմ զալիս է ուշ բրոնզի դարաշրջանից և շարունակվել է պահպանվել նաև հետագայում:

Հաջորդ դամբարանը գտնվում է նախորդից արևմտուք՝ հարյուր մետր հեռու: Գետինի մակերեսովին՝ փոքր ժայռի հարավային եզրի տակից, երևում էին ոսկորների և խեցանորների բեկորներ: Կիսով շափ ժայռի տակ կատարված թաղման ուղեկցող նյութերն են՝ սևանյան տեսակի բրոնզյա դաշտույն, բրոնզյա ապարանջան և ականջոյ, երեք խեցանորը և սարդինից ու մածուկից ուլունքներ (աղ. III), նաև խոշոր գորշ կճուճներ, որոնց զուգահեռները ուշ բրոնզի դարի վերջին

¹ Պետրոսյան Լ. Ռազոկու պամտնիկօն Կետի և Յօսեասկա, Եր., 1989, տաճ. 42-44.

² Խաչատրյան Տ. Դревնյա կոլյուտրա Շիրակա, 1975, Եր., սր. 97-123.

³ Դեւեճյան Ս. Լորի-Բերդ Լ. Եր., 1981, տաճ. XII-XIV.

փուլից և վաղ երկարիդարյան ժամանակաշրջանի հուշարձանների՝ Արքիկի թիվ 69, 77⁴ և այն, Սեծամորի⁵, ինչպես նաև Թալինի⁶, Շիրակավանի⁷, Չեշմանիսի⁸ և այլ դամբարանների նյութերում են: Ուշագրավ է հատկապես առավել փրուս իրանով, ցածր վզով թիշ հանդիպող կճուճը (աղ. III նկ. 3): Նման անորներ հայտնի են Մաստարայի ուշ բրոնզի վերջին փուլի թիվ 7⁹, Տանձավերի թիվ 3¹⁰, ուշ բրոնզի և վաղերկարիդարյան, ինչպես նաև Արքիկի վաղերկարիդարյան դամբարաններից: Գտածուներից է նաև դուրս թերքած շուրբով խոհանոցային կճուճը (աղ. III, նկ. 2): Անորների այս տիպն սկսվում է ուշ բրոնզ-վաղերկարիդարյան ժամանակաշրջաններից և շարունակվում են նաև հետագա դարաշրջաններում: Ուսումնամիջոկով դամբարանի ժամանակագրության համար կարևոր է սեանյան տեսակի դաշույնը (աղ. III, նկ. 6), որի գուգահեռները թափինի վաղերկարիդարյան թիվ 64¹¹, Մաստարայի թիվ 24¹², ինչպես նաև Մակարաչնին¹³, Թռեղի¹⁴ և մ.թ.ա. 9-8դդ. բվագրվող մի շարք այլ դամբարանների նյութերում են: Նշենք նաև, որ վերջին երկուսը երկմետաղ են: Օնիկ Խելիկյանը, անդրադառնալով ուշ բրոնզ-վաղերկարիդարյան դաշույնների տեղայնացման հարցին, կյութերի համեմատական վերլուծությամբ հանգել է այն եզրակացության, որ դաշույնների ներկայացվող տեսակը ձևավորվել է Կոյր Արարսի միջագետրում մ.թ.ա. II հազ. վերջում և I հազ. սկզբում¹⁵: Դամբարանում գտնվել են նաև բրոնզյա զարդեր՝ ապարանջան և մատանի (աղ. III, նկ. 7, 8), սարդինից (աղ. III, նկ. 4), մածուկից (աղ. III, նկ. 5) ու լունքներ, որոնք նույնպես բնորոշ են ուշ բրոնզ-վաղերկարիդարյան ժամանակաշրջանին:

Լեռնա հարավիայց լանջի ստորոտում պեղված ժարափոր երկու բաղումները գտնվում էին կողք կողքի: Դրանցից հարավայինի նյութերը տասն են. կավամաններ՝ քրեղաններ, կճուճներ և տարատեսակ այլ նյութեր (աղ. VI): Այս դամբարանից հայտնաբերված քրեղանները երկու տեսակի են: Առաջինը հարթ հատակով, երկրեք իրանով, դուրս թերքած կամ ոլորված շուրբով (աղ. VI, նկ. 4, 5,

⁴ Խաչատրյան Տ. Արտիկսկու նեկрոպոլ, կառաօպում, Եր., 1979.

⁵ Khanzadyan E. Mecatot II, necropolis, volum II, Paris, 1995, pl. 42 (1).

⁶ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարավայն դաշույն մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Եր., 2006, աղ. 19, նկ. 12, աղ. 34, նկ. 5:

⁷ Թորոսյան Ի., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., Հյուն Շիրակավան, Եր., 2002, աղ. LXXXV, նկ. 8

⁸ Դեղյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր- Զորագետավ, Եր., 2001, աղ. III, նկ. 1.

⁹ Pavel Avetisyan, Arsen Bobokhyan, the pottery traditions of the Armenian middle to late Bronze age transition in the context of bronze and iron age periodization, p. 189, fig. 42 (12).

¹⁰ Խոկիկյան Օ., Syunik During the Bronze and Iron Ages, Mayreni Publishing, 2002, p. 188, pl. XXVII.

¹¹ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 215, աղ. 19, նկ. 12:

¹² Badalyan R., Avetisyan P., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region//BAR International Series 1697, 2007, p. 218, pl. VI.

¹³ Մարտirosյան Ա. Արմենիա և այսուհետու բրոնզ և բարձր արու ժելեզ, Եր., 1964, ռուս. 205, ռուս. 10.

¹⁴ Մենացե Մ., Ճաւանաց Ա. Մողալլուկ Տրուալետի, կառաօպում I, Տեղական, 1968, տաճ. VII, ռուս. 323.

¹⁵ Խելիկյան Օ., Հայաստանի դաշույնալեռների տեղայնացման փորձ (ուշ բրոնզ վաղ երկարի դար), Բանքեր Երևանի համալսարանի, 1991, N2, էջ 79-91:

7) Է: Այս տեսակն ուշ բրոնզի դարի վաղ փուլի գնդածե իրանով քրեղանների փոքր-ինչ ձևափոխված, երկեք իրանով անորներից է, որոնք, սկսած ուշ բրոնզի վերջին փուլից, հայտնի են Արքիկի գրեթե բոլոր Շիրակավանի թիվ 3, 4, 6¹⁶, Սեծամորի թիվ 8¹⁷, Քուչակի թիվ 1-5 և այլ դամբարաններից¹⁸: Նշենք, որ ուշ բրոնզի ավարտական փուլի և վաղերկարիդարյան ժամանակաշրջանների վաղ և ուշ փուլերի ձևերը հաճախ միասին են հանդիպում: Երևանյար դիտվում է նաև ներկայացվող դամբարանում գտնվել է նաև սկզբանե հիշեցնող իր (աղ. IV, նկ. 8), որը մոտ է Արքիկի թիվ 208 և թիվ 223¹⁹, Քերիի թիվ 34²⁰ և Ուկեհասկի վաղերկարիդարյան դամբարանների սկզբանեներին²¹: Մյուսը ևս թիշ հանդիպող, հարթ հատակով, երկեք իրանով անոր է (աղ. VI, նկ. 9), որը, չունենալով ստույգ գուգահեռներ, որոշ ընդհանրություններ ունի Օշականում հայտնաբերված օրինակներից մեջի²² և Թալինի թիվ 57 դամբարանի նմուշի հետ²³: Դամբարանի վերջին իրը փոփած կողերով բասի բեկորն է (աղ. VI, նկ. 10): Նման նյութեր հայտնի են Թալինի թիվ 70, 71²⁴ և Շիրակավանի վաղերկարիդարյան թիվ 31²⁵ դամբարանների նյութերում: Մեծ թվով նման իրեք հայտնի են Շիրակավանի բնակատեղիի վաղերկարիդարյան շերտերից²⁶: Ժամանակագրության հատակեցման հարցում առավել կարևոր է Սեծամորի հրդեհված շերտում գուգահեռ նյութերի առկայությունը²⁷:

Հյուսիսային կողմում բացված կատակումբային թաղման նյութերը մասամբ կրկնում են հարավայինին (աղ. V, նկ. 2, 4, 6): Այստեղ նորույթ են թիշ բարձր վզով կճուճը, բաժակը, սաջի բեկորը, բրոնզյա ապարանջանն ու ականջօղը (աղ. V): Ուսերը ակրասագութիների մեջ ներառված, հատիկաշարով զարդարված այս կճուճը (աղ. V, նկ. 1) Արքիկի թիվ 275 դամբարանի օրինակի կրկնությունն է²⁸: Այս նյութերն ընդհանրություններ ունեն նման թիվ 14, 15, 17 և այլ դամբարանների հետ: Ազատանի օրինակին շատ մոտ է նաև Թալինի թիվ 89 դամբարանի գտածոն²⁹: Նշված նյութերը զգալի շափով մոտ են նաև վաղերկարիդարյան խոհանոցային կճուճներին: Դամբարանի մյուս նորույթը գլանածն բաժակն է

¹⁶ Թորոսյան Ռ., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. XLIII:

¹⁷ Khanzadyan E., նշվ. աշխ., աղ. 44:

¹⁸ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 189, աղ. II.

¹⁹ Խաչատրյան Տ., նշվ. աշխ., էջ 194, 203:

²⁰ Պետրօսյան Ա., նշվ. աշխ., աղ. 59:

²¹ Նույն տեղում, աղ. 66, 67:

²² Եսայան Ը., Կալանտարյան Ա., Օշական I, Օսկառի դամբարանադաշտի 1971-1982 թվականների հայտնաբերությունները, տաճ. LXXXIX, ռուս. 5:

²³ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., աղ. 37, նկ. 9:

²⁴ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 256, աղ. X:

²⁵ Թորոսյան Ռ., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. LXXI, նկ. 17:

²⁶ Նոյն տեղում, աղ. LXXVII, նկ. 7, 9-11:

²⁷ Խանգաղյան Է., Սկրույզան Կ., Պարտավան Է., Սեծամոր, Եր., 1973, աղ. XVI, XV:

²⁸ Խաչատրյան Տ., նշվ. աշխ., էջ 225, 118-121:

²⁹ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 259, աղ. 57:

(աղ.V, նկ. 3): Ճիշտ նույն ձեն ունի նաև այս դամբարանից գտնված բաժակը (աղ.V, նկ. 3): Նկատենք, որ Ազատանի նշված բաժակները տրօրինակ են և տարբերվում են նույնիսկ Շիրակի դաշտի Քեթիի³⁰ համաժամանակյա նյութերից: Վերջիններիս նմանակները հայտնի են նաև Հայաստանի երկարիդարյան մի շարք հուշարձաններից՝ Օշական³¹, Թալինի թիվ 5 դամբարան³², Սաստարա³³: Մեծ բանակությամբ հայտնաբերվել են նաև Շիրակավանի բնակատեղիի վաղերկարիդարյան շերտերից³⁴ և Մեծամորի հրդեհված շերտից³⁵:

Ազատանի այս դամբարանում գտնվել են նաև մեկական բրոնզյա ապարանչան, մատանի (աղ. V, նկ. 8,9): Գտածոների մեջ կա նաև սաջի բեկոր (աղ. VI, նկ. 5): Տնտեսական կենցաղում օգտագործվող սաշեր հայտնի են Կարմիր բլուրի³⁶, Մեծամորի³⁷ և Շիրակավանի³⁸ երկարիդարյան բնակատեղիներից:

Նյութերի քանակով և բազմազանությամբ աշքի է ընկնում Ազատանի դամբարանադաշտի դարավանդի վրա պեղված կատակոմբային թաղումը (աղ. VII): Ժամանակարական առումով այս դամբարանի նյութերը համահունչ են Ազատանի արդեն քննված դամբարանների նյութերին, այդ բայց են նաև երկրեք իրանով քրեղանները (աղ. VII, նկ. 16, աղ. VII, նկ. 14): Այս դամբարանի նյութերում կան նաև ավելի վաղ ձևավորված զնդաձն իրանով քրեղաններ (աղ. VII, նկ. 3, 6,10), որոնք եզակի չեն նաև վաղերկարիդարյան հուշարձաններում և գտնվել են Քեթիի թիվ 5, 31, 32, և 36 դամբարաններում³⁹: Քրեղանների այս տեսակը սակագ քանակով հանդիպում է երկարիդարյան փոքր-ինչ ավելի ուշ փուլերի հնավայրերում. Գոլվին⁴⁰, Քեթի⁴¹ և այլ.:

Ազատանի կատակոմբային այս քաղման ուղեկցող նյութերի մեջ կա նաև ուսերին բազմալար ակոսագոտիներով մի սափոր, որի իրանը զարդարված է կտորելու եղանակով արված եռանկյունաձև, մեջը կետերով, մի դեպքում է՝ եռանկյունիներով լցված զարդանախշերով (աղ. VI, նկ. 5): Սափորների այս տեսակը և երևան է գալիս վաղ երկարի ժամանակաշրջանի հուշարձաններում՝ Արքիլի թիվ 223⁴², Այգեշատի թիվ 1, 5, 13, 31⁴³ և այլ, ինչպես նաև Գոլվինոյի մ.թ.ա. 9-8-րդ դամբարաններ: Մյուս անթեր հարք հատակով, փրուն իրանով, դուրս թերված շուրջով կծուծ է, որի իրանը զարդարված է կետերով լցված եռանկյունիներով

³⁰ Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 57, 61:

³¹ Եսայան Ս., Կալանթարյան Ա., նշվ., աշխ., աղ. LXVII, նկ. 4:

³² Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 233, աղ. 37, նկ. 5:

³³ Ավետիսյան Բ., Յովոկիսյան Ա., նշվ. աշխ., էջ 180, նկ. 43 (3):

³⁴ Թորոսյան Ռ., Խնկիլյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. LX, XL, նկ. 1-4:

³⁵ Խնանգայան Է., Սկրույցան Կ., Պարսամյան Է., նշվ. աշխ., աղ. X:

³⁶ Երևանի հետազոտական իրերի կատալոգ, Եր., 1969, աղ. XXXIX (33-41), աղ. XI:

³⁷ Խնանգայան Է., Սկրույցան Կ., Պարսամյան Է., նշվ. աշխ., աղ. XXI:

³⁸ Թորոսյան Ռ., Խնկիլյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. XLIX, նկ.37:

³⁹ Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 56-58:

⁴⁰ Մարտիրոսյան Ա., Ռասկոլուկի մասին, Եր., 1954, տապ. XII.

⁴¹ Նույն տեղում, աղ. 71:

⁴² Խաչատրյան Տ., նշվ. աշխ., էջ 203:

⁴³ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., աղ. 1,5, 13, 25:

(աղ. VI, նկ. 2): Անորի նման ձեր հայտնի է Մեծամորի հրդեհված շերտից⁴⁴, Թալինի թիվ 48, 69⁴⁵, Օշականի թիվ 67⁴⁶ դամբարաններից: Ազատանի կծուծի զարդերը կրկնում են Սոզի երկրորդ և երրորդ բլուրների պլատումներով հայտնաբերված նյութերը⁴⁷: Նման զարդերը ունեն նաև Շիրակավանի թիվ 115 դամբարանի անորիները, որոնց մեջ առկա է նաև Ազատանի դամբարանի կծուծի նմանակը⁴⁸: Ուսումնասիրվող դամբարանի մյուս կծուծը (աղ. VI, նկ. 11) և զուգահեռներ ունի Շիրակավանի թիվ 9, 10 և 11 համաժամանակյա դամբարաններում⁴⁹: Ազատանի դամբարանում գտնված մյուս կծուծն ունի հարք հատակ, փրուն իրան, ցածր, զանաձն վիզ, դուրս դրորված շուրջը: Ուսերը զարդարված են սեղմումով արված ցանցագուխով (աղ. VI, նկ. 1): Իրի ձևը զգալի ընդհանրություններ ունի Անինականի⁵⁰, Արքիլի թիվ 274⁵¹, Սաստարայի թիվ 7, 18⁵² դամբարանների նյութերի հետ: Ազատանի կատակոմբային քաղման նյութերում կա նաև ձեռածեփ կխազնաձն անոթ (աղ. VI, նկ. 12), որի զուգահեռները Արքիլի թիվ 263, 579⁵³ և Թալինի թիվ 57⁵⁴ դամբարանների նյութերում են: Նոյն դամբարանում կա նաև վերը ներկայացված կծուծներից որոշ չափով տարբերվող ևս մի օրինակ, որն ունի հարք, լայն հատակ, զնդաձն իրան, ցածր վիզ, դուրս թերված շուրջը, ուսերին՝ թիվ բարձր եկուանուներու (աղ. VI, նկ. 14): Կծուծների այս տեսակը հայտնի է երկարիդարյան գրեթե բոլոր հուշարձաններից (Թալին, Սաստարա, Օշական և այլն), և հարդարում կրկնում է Դիլիջանի Կամայի փողոցից⁵⁵ և Քեթիի թիվ 42⁵⁶ դամբարանների նյութերը:

Թիվ հանդիպող, փոքր-ինչ ուսուցիչ իրանով, բարձր ուսերով անոթի (աղ. VI, նկ. 4) վաղերկաթմարդարյան օրինակները հայտնի են Օշականի թիվ 85⁵⁷, Շիրակավանի թիվ 121⁵⁸, Քեթիի թիվ 36⁵⁹, Զեշմանսիրի թիվ 1 և 16⁶⁰ դամբարանների նյութերում: Վերջիններս իրանի թերեակի ուսուցիկությամբ առավել մոտ են ուշրոնզիդարյան նյութերին: Սրանց մաս է նաև ձգված իրանով, պարանազարդ գոտիներով խոհանոցային կծուծը (աղ. VI, նկ. 9), որի մեզ հայտնի զուգահեռ Շիրակա-

⁴⁴ Խնանգայան Է., Սկրույցան Կ., Պարսամյան Է., նշվ. աշխ., էջ 40, նկ. 50:

⁴⁵ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., աղ. 31, 69:

⁴⁶ Եսայան Ս., Կալանթարյան Ա., նշվ. աշխ., աղ. LXVII:

⁴⁷ Օռուկ Տ. Խոկկիկան, նշվ. աշխ., աղ. LXVII (26-28):

⁴⁸ Թորոսյան Ռ., Խնկիլյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 115:

⁴⁹ Նույն տեղում, աղ. LXVI:

⁵⁰ Մարտիրոսյան Ա., 1964, նշվ. աշխ., էջ 128, նկ. 51:

⁵¹ Խաչատրյան Տ., նշվ. աշխ., էջ 225:

⁵² Բագալյան Բ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 215, 217, աղ. III, աղ. V:

⁵³ Խաչատրյան Տ., նշվ. աշխ., էջ 220 և 371:

⁵⁴ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 233, աղ. 37:

⁵⁵ Դիլիջանի երկրազնական քամբարանի հնագիտական իրերի կատալոգ, Եր., 1969, աղ. XXII, նկ. 1:

⁵⁶ Պետրոսյան Ա., նշվ. աշխ., աղ. 71, նկ. 2:

⁵⁷ Երեակի քաղման պատմության քանզարանի հնագիտական իրերի կատալոգուղարք Ա. Երևան, 1972, աղ. LXXXVII, նկ. 1, 4:

⁵⁸ Թորոսյան Ռ., Խնկիլյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 61, նկ. 1, 2:

⁵⁹ Պետրոսյան Ա., նշվ. աշխ., աղ. 60, նկ. 1:

⁶⁰ Դիերան Ս., 2001, նշվ. աշխ., աղ. 1, նկ. 9, աղ. VI, նկ. 1:

վանի թիվ 106 դամբարանի նյութերում է⁶¹: Այս դամբարանի խոհանոցային կճուճը (աղ. VI, նկ. 7) տարածված է ինչպես ուշ բրոնզի, այնպես էլ վաղերկարիդարյան ժամանակաշրջանների նյութերում:

Ազատանի այս դամբարանում գտնված վերջին խեցանոթը հարթ լայն հատակով 12սմ բարձրությամբ զավաթն է, որի իրանի վրա պահպանված է ունկի հիմքը (աղ. VI, նկ. 8): Այն Շիրակի մարզում վերջերս պեղված Սայշայանի թիվ 3 դամբարանի բաժակի նմանակն է, տարբերությունը միայն չափերի մեջ է: Այս բաժակները նման են նաև Թուերի մ.թ.ա. 9-8-րդ դարերով թվագրված թիվ 6 և 7⁶², Շիրակավանի թիվ 101⁶³, Քերիի⁶⁴ դամբարանների նյութերին:

Այսպիսով, Ազատանի դամբարանների 2014թ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ գործ ունենք բաղման մի նոր ձևի՝ *ժայռապիլով* բաղրամների հետ, որպիսիք Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում հայտնի չեն: Ամենայն հավանականությամբ դամբարանների նման տիպի ի հարյ զալը պայմանավորված է երկրակազմական գործնուով: Ազատանի հուշարձանախմբի այս հատվածում՝ բարձրադիր դարավանդի հարթ տարածքը և հարավինաց լանջը ծածկված են բազալտի հոծ, ոչ հաստ կեղևով, որի տակ հրարիսային ծագման, պեմզայատիպ փիրուն ապարներ են: Տեղաբնիկներին քաջ հայտնի է եղել դա: Հարթ տարածքում բաղրում կատարելու նպատակով մի փոքր հատվածում ծակվել է բազալտի կեղևը, փորվել ուղղահայաց հորատանցք, որն արդեն փիրուն ապարները հեշտությամբ քանդելով և մի ուղղությամբ ընդարձակելով վերածել են բաղման իցի: Այնուեւս հորատանցքը փակելով համապատասխան չափի քարե խցանով՝ դամբարանի տարածքը եզրագծել են կրոմիելով:

Նույն երեսոյը Շիրակում տեսնում ենք Արքիլի⁶⁵ և Ուկենասկի⁶⁶ դամբարանահաշտերում: Քանի որ նմանատիպ դամբարանները նախառեսված են եղել բազմակի բաղրամների համար կրոմիկին կից՝ արտաքին կորոմում, դրվել է սալաքար, որը ցույց է տվել մուտքի ուղղությունը: Սա փաստված է 2013 և 2014 թվականներին կողք կողքի պեղված 2 կատակոմբային դամբարաններում, իսկ 2015թ. հարեանությամբ պեղված 3-րդ կատակոմբային դամբարանի մուտքի մասում դրված էր եղել կոպտատաշ բազալտից կոնաձև կորող, որը հավանաբար վերջին բաղրումից հետո չեր կանգնեցվել և պեղումներով հայտնաբերվեց մուտքի մոտ:

Կատակոմբային և ժայռավոր դամբարանների նյութերի գույքակազմի բննությունը ցույց է տալիս, որ դրանք չեն տարբերվում համաժամանակյա կրոմիկով շրջափակված հիմնահողային բաղրամների ուղեկցող նյութերի գույքակազմից, հետևաբար բաղրման այս ձևումանավորված չէ: Հանգուցյաների ունեցվածքային կամ հասարակական ցենզով: Նկատենք, սակայն, որ ի տարբերություն հիմնահողային բաղրամների՝ ժայռափոր և կատակոմբային բոլոր դամբարանների գույքակազմը պահպանվում է առաջնահատակությամբ:

⁶¹ Թորոսյան Ռ., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. XLII, նկ. 9:

⁶² Մենածե Մ., Ճավահանց Ա., նշվ. աշխ., աղ. I, նկ. 2:

⁶³ Թորոսյան Ռ., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. LXIX, նկ. 11:


⁶⁴ Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 70, նկ. 2:



⁶⁵ Շաշատրյան Տ., Արտիկսկий նекрոպոլ, Եր., 1979, սոր. 3, 4:

⁶⁶ Պետրոսյան Լ., Բաշկու պարտիկու Կետս և Յօսկեասկա, Եր., 1989, սոր. 69, 70:

բում, բացի մեկից, կատարվել են տարձամանակյա մի քանի բաղրում: Սա հուշում է, որ դրանք եղել են ընտանեկան դամբարաններ: Գուցե վաղ երկարի ժամանակաշրջանում երկրակազմական բնույթով թևադրված բաղման այս ձևը ձեռք է բռնշակի սովորության, ծիսական և պաշտամունքային բովանդակություն, սակայն առաջացած հարցերը պատասխան կստանան հետազա պեղումներով, եթե հայտնաբերվելու Ազատանի երկարի լայն տարածման ժամանակաշրջանի հիմնահողային բաղրումներին փոխարինելու եկած, մեծ քարարկդային դամբարաններին համաժամանակյա կատակոմբային և ժայռափոր դամբարանները: Այդ դեպքում կիֆաստվի դրանց ավանդական բնույթը, ինչը կարող է ծիսական և պաշտամունքային բովանդակությամբ կապվել քարանձավի հետ:


Գտածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն խեցեղենի՝ այստեղ մետաղյա իրերը սակավ են, իսկ կավանքները՝ տնտեսության մեջ և կենցաղում օգտագործված:






Ազատան

Օ - 12 հ (Շյուշիսահին Կրոնլելս)




Ազատան

Բ - 12 (Ժայռի տակի դամբարան)




Ազատան


Տ - 12 (Ճայի տակի էխուավեր դամբարան)




1 0 3




1 0 3




1 0 1




1 0 2




1 0 2



1 0 2




1 0 2




1 0 2




2



1 0 3




1 0 1




1 0 1

1 0 1



Ապառաժ 2014

Տ-11 հ (Տորով, Առ Խորանութիւն գաղտնական)



Ապառաժ 2014

Ն-14 (Շունակով)

Հայտնաբերված նմուշների քննությունը ցույց է տալիս, որ հիմնական աղերսները առկա են Թուղթի և Արագածոտնի տարածաշրջանների համալիրերում, ինչը խոսում է Շիրակի և այդ տարածաշրջանների սերտ տնտեսական կապերի և մշակութային ընդհանրությունների մասին:

РАСКОПКИ АЗАТАНСКОГО НЕКРОПОЛЯ 2014 ГОДА

Резюме

Ա. Խաչատրյան, Լ. Եղանյան, Լ. Պետրոսյան,
Ա. Ֆուրթվանգլեր, Թ. Նեստրով, Դ. Մայերման

В 2014 году совместная экспедиция Краеведческого музея Ширака и университет им. Мартина Лютера г. Галле/ФРГ/ продолжала раскопки некрополя поздней бронзы-раннего железа Азатана. Были раскопаны 4 грунтовые захоронения в кромлехах, одно катакомбное захоронение с вертикальной шахтой и два склепа с горизонтальными шахтами.

Кромлехные захоронения находятся на юго-западном склоне возвышенного плато. Во всех кромлехах были обнаружены одиночные грунтовые захоронения, в которых скелеты лежали в скрюченом виде, зависимо от пола на левом или на правом боку. Вышеупомянутые захоронения датируются 14-11в.в. до н.э..

Грунт плато и юго-западного склона из себя представляет рыхлую вулканическую породу типа пемзы, покрытой сплошным слоем базальтовой коры. На плато было раскопано, обводненное кромлехом, большое катакомбное захоронение, в склепе которого были обнаружены остатки шести скелетов. Это семейный склеп, где поочередно, в течении времени, производились захоронения мужчин, женщин и одного младенца. Из потребления были найдены 16 разнотипные керамические сосуды, бронзовые браслеты, кольца, серьги, иголки и железный нож. По материалам весь комплекс датируется 9-8в.в. до н.э..

По конструкции погребения этого типа не отличаются от катакомбных захоронений Артика и Воскеаска. В двух случаях во внешней стороне кромлеха вплотную ставились отдельные каменные плиты, которые указывали местонахождение пробки.

Особый интерес представляют захоронения в склепах с горизонтально выкопанными шахтами в скальной породе. Эти захоронения находятся на самом низу вышеупомянутого склона. Первый такой склеп наим был раскопан в 1995г., второй в 2013г. Рядом с последним в 2014г. были раскопаны 2 однотипные захоронения. По сопутствующим материалам обе датируются 12-ым веком до н.э..

Возможно в дальнейшем захоронения этого типа приобрели мифологический аспект и специальный ритуальный обряд.

Տեղեկություններ հեղինակների մասին

Խաչատրյան Հայագանսա Հակոբի - ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. E-mail: styxscut@web.am
Եղանյան Լարիսա Գրիշափի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. E-mail: styxscut@web.am
Պետրոսյան Լևոն Աշոտի - ՀՀ ԳԱԱ հետազոտության եւ ազգագրության ինստիտուտ

Ֆուրթվանգլեր Անդրեաս - լրացոր. Հայեր /Գերմանիա/ համարարան,
E-mail: adolf.furtwangler@wcrf.de

Նեստրով Թորիան - Հայեր համարարան,
E-mail: obr@uni-magdeburg.de
Մայերման Դորոթեա - E-mail: dorothea.mayermann@adendorff.com

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

QURIA ԵՐԿՐՈՒՄԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅՈՅ ՄԱՏՌՎԱԿՆԵՐԸ

Արձեշի շրջանի Հաղի գյուղի մոտ Ուրարտուի Արգիշտի II թագավորի (մ.թ.ա. 714-685թթ.) բողած արձանագրության մեջ հիշատակվող *KURQuria երկիրը* գտնվում էր Վանա լճից հյուսիս-արևելքը.² «Աշխարհացոյց»-ի Աղյուսիտ գավառի տարածքում՝ Գնունի նախարարական տոհմի տիրույթում.³ Այս սեպագրային երկրանոնք իմաստաբանական ուղղակի կապի մեջ է Գնունի տոհմանվան, Գնունի հազարավետների արքունի մատովակներ լինելու իրադրույթան,⁴ ինչպես նաև նրանց տիրույթի հետագա Արձեշ գավառի, մինչև Մեծ Եղեռն ունեցած համբավի հետ՝ որպես ընտիր խաղող և ընտիր գինի ունեցող շրջանի.⁵

Գնունի տոհմանունն առաջին ստուգաբանող եղել է Սովուս Խորենացին: Նա գրում է. «Գիտեմ եւ գնունիադ գինի ունիս, որ զարժանի թագավորին պատրաստէր զըմպելիսն, որ սրանչելի իմն դիպեալ եղել ըստ գործոյն եւ անունն ըանզի պատրաստէր զըմպելիսն արքայի լրնտիր եւ ի համեն գինեաց՝ ունէր եւ կոչումն անաւանն Գին».⁶ Խորենացու առաջարկած Գին/Գնունի/գինի ստուգաբանական շարքը կարելի է համարել նույնարմատ և իմաստաբանական նույն շարքին պատկանող հետևյալ բառերով. օրինակ «Խաղողի մի տեսակ, դեղնականաչ գույնով, հաստ կեղեսով, մեծ՝ կոր հատիկներով, որից կախան են պատրաստում»,⁷ զինեծաղիկ «խաղողի ծաղիկը, որից հետո երևում է ազդյար»,⁸ զինուկ «զինու խաղող, բարակ կեղեսով, սպիտակ մանր հատիկներով»,⁹ ինչպես նաև «զինն զինին է»:¹⁰ Սրանց բոլորի հիմք *զին-ը ծագում է հ.-ե. *yei-/սի «ոլր(վ)ել, փաթաթ(վ)ել, զալար(վ)ել» արմատից, որից ևն ծագում նաև փաթաթվող-գալարվող բույսերի և ոլրվող-հյուսվող շիվեր ունեցող ծառերի, մասնավորապես, խաղողի վազի և ուռենալ անունները հնդկաբական մի շարք

¹ Մելիկշամիլ Ղ., Սարդարական կլինուանու պատմություններ (այսուհետև՝ ԱԿՀ), Մ., 1960, հաջ. N 276; Արդուտյան Հ., Տոպոնիմիկա Սարդարական կլինուանու (ՏԿՀ), Եր., 1985, стр. 123.

² ՏԿՀ, стр. 41, 123.

³ Արքանց Ն., Հայաստանը Հույսամինիանուի դարաշրջանում, Եր., 1987, էջ 338:

⁴ Պետրոսյան Ս., Գնունի նախարարական տոհմի և զինու պատմամոնքի շուրջ, «Պատմամասնության համարեն» (ՊԲՀ), 1999, թիվ 2-3, էջ 175-178:

⁵ Հակոբյան Թ., Մէլիք-Բախչյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան հ.1, Եր., 1986, էջ 462:

⁶ «Սովուսի Խորենացու պատմությին Հայոց», Եր., 1981, զինք Բ, գլուխ ը:

⁷ Սայմասյանց Ս., Հայերն բացարարական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1, Եր., 1944, էջ 435:

⁸ Նույն տեղում, էջ 436:

⁹ Նույն տեղում, էջ 437:

¹⁰ «Բարակավիր Հայոց», թիվական թիվագիրը, առաջարանը և ծանոթագրությունները, Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 66, ծան. 183:

(իմա՝ խաղողի այգիների) մի տեսակ չափ», «որքատուների մեկ ուղղությամբ տնկված շարքը»:⁴⁵ Ի նկատի առնելով պար-/փար- համարժեքությունը⁴⁶ Փարայի տեղանվան հիմք «փարայ «վայրի խաղող» բարի հնչյունական տարրերակը կարող ենք տեսնել պարպատ (^{*պարպատ}) «վայրի որթ, վազ»⁴⁷ բարի մեջ (-ու վերջածանցի համար հմմտ. դանդուռ, ճակատ, մամուռ, ջաջուռ բուսանունները): Պարպատ հիմքին -ին վերջածանցի հավելումով կա բարբառային պարպատինեւ «վայրի որթ, որ բուսնում է Ձեւյունի լեռներում» բառը:⁴⁸

Բերված «խաղողա-զինխական» սուսուզանությամբ տեղանուններին իմաստով հարող տեղանուններ կային նաև Վանա լճի շրջակայրում: Դրանցից մեկը Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի հիշատակած ^{ՄԱՐ}Zanzinaka բնակավայրի⁴⁹ անունն է: Նրա հիմքում առկա են հայերեն չանչ բառը (սեպազրությամբ սա կարող էր արտացոլվել միայն *zanz-* տեսքով) և -ին վերջածանցը (հմմտ. կորին, հերին, ջանջին, տրոփին և այլն): Չանչ նշանակում է «խաղողի ողկույզը, որի վրայից հատիկերը պոկած են քերեն», «քամած խաղողի մնացորդը» (չանչից որի են քաշում, չանչը գինուն կծվություն և թթվություն է տալիս) և համարվում է իրական կամ կովկասյան փոխառություն:⁵⁰ Մեր կարծիքով, հակառակ ուղղությամբ՝ հայերենից այդ լեզուներ կատարված փոխառությունն ավելի հավանական է, որովհետև չանչ բառի և իր չաչ տարբերակի հայերեն գրական լեզվում և բարբառում ունեցած բազմազան նշանակությունները⁵¹ բացառում են այդ հնարավորությունը: Բանն այն է, որ չանչ բառը խաղողին վերագրվել է նրա հատիկներից զրկված տունկը ձեռքի նմանեցնելու պատճառով, ուստի ունենք նաև բառի նախնական նշանակությանն ավելի մոտ չանչ՝ «զրող, մժիկ», չանչ անևլ «զրող չափել» չանչել «ձեռքի մատները լայն բացած զրող չափել, մժիկ հանել», չանչու «կատվի բար, բարով, բանթով»:⁵²

Չանչ բառի «ձեռք» > «խաղողի չանչ» իմաստային զարգացման համար հմմտ. թերթ խաղողոյ «խաղողի որթի կոտրակ», այսինքն՝ «խաղողի վազի սոսրին չոր և հաստ մասը»⁵³ և թեւ «մարդու բազուկ, ձեռք՝ ուսից մինչև դաստակը (մատների ծայրը)»,⁵⁴ նաև մատ «խաղողի որթի ձյուղերը» և մատն «ձեռքի և ոտքի մատ»:⁵⁵ Առավել ուշագրավ է կուռ բառը, որն ինչպես վերելում տեսանք նշանակում է «խաղողի որթի գլխավոր ճյուղերը, որոնց վրա գտնվում են մի բանի շիվեր»,⁵⁶ բայց

որը նույնն է կուռ «բազուկ, թե, ձեռք, ուսից մինչև մատների ծայրը»⁵⁷ բառի հետ: Իսկ է. Աղայանը ցույց է տվել, որ վերջինս ծազում է հ.-ե. *ցօր- «գարձնել», «զալարել ուղրել» արմատից,⁵⁸ այսինքն՝ այն նույն արմատից, որից են նաև խաղողագործությանն ու գինեգործությանը վերաբերող կուռ արմատով բառերը և *Quria* երկրանունը:

Ուրարտական Արամալի/Արմարիլի նահանգի բնակավայրերից «խաղողային» բնույթի անուն էր կրում *Sini-unak*-ը (<*Sini-unak*,⁵⁹ որի անվան երկրորդ բաղադրիչը առկա է նաև նույն Վանա լճի ավազանի *Ardi-unak* (<*Ardi-unak*,⁶⁰ Ուրմիա լճի ավազանի *Barunakka* (<*Bar-unak*)⁶¹ տեղանունների, հայ. բարունակ (<*բար-ունակ*) «Երկայնատարած ուռն որթը»⁶² բառի մեջ: *Sini-unak*-ի *Sin-* բաղադրիչը հայ. ծին (հ.-ե.*gén) բառն է՝ արմատակիցը ծան «ձանաչել» (նաև «հայտնի», իսկ ազգակից լեզուներում՝ «ծանոթ, սովոր»)⁶³ բառի՝ առկա նաև ծեներեկ, ծնկի, ծնծառ, ծնծեղ, ծնծղար բուսանուններում:⁶⁴ Ըստ երկուրին, «ծինի-ունակ կոչվել է մշակուիլ» առվարական, ծանոթ խաղողը՝ ի տարբերություն վայրի խաղողի: Վերջինը կարող էր կոչվել «արդի-ունակ», որում արդի բաղադրիչը հավանաբար «ժայռ» է, նշանակում և արմատակիցն է հին հնդկ. adri- «սար, ժայռ» և իյուր. adri «ժայռ, խութ» բառերի:⁶⁵ Հայերենի օրինաչափությամբ հ.-ե. *dr->rj->arpi-, ուստի այս բառերի արմատակիցն է լինելու Վանա լճի *Արսի* կղզու՝⁶⁶ անունը՝ «ծովաժայռ, խութ» իմաստներուի: Սեպազիր «*Bar-unaka* տեղանվան և հայերեն * բար-ունակ բառի առաջին բաղադրիչները ծազում են հ.-ե. *bher- արմատի ստորին «եհր- Ճայնադարձից: Այս արմատի վերին Ճայնադարձից ունենք բեր/բերք «բերը, հողի բերած արդյունքը, պտուղ» բառը, որի ազգակիցներն են հուն. φέρμα «պտուղ», ֆօրά «պտուղաբերություն, բեր», պարս. *bar* «բերք, պտուղ, արդյունք» և այլն:⁶⁷

**Ardi-unak*, *Sini-unak*, **Bar-unaka* սեպազիր տեղանունների և **բար-ունակ* բառի երկրորդ բաղադրիչները արտացոլում են հ.-ե. *seip-ag «խաղող, խաղողուս» բառի կարճ տարբերակը: Այս նույն նախաձեխ երկար տարբերակն է առկա զինակ (հ.-ե. *ս-> հայ. զ-) «խաղողի մի տեսակ, դեղնականաց գույնով, հաստ կեղեսով, մեծ՝ կոր հատիկներով» բառում: Արանց հետ միասին հ.-ե. *seip-ag նախաձեխը է ծագում նաև ինն սլավ. vinyaga «խաղողի վազ» բառը, սիկ նախաձեխն մերձավոր ձև է համարվում վրաց. venag «խաղողուս» բառը:⁶⁸ Վերջինս փոխառյալ է լինելու հայերեն զինակի հնագույն ձևից (երբ դեռևս տեղի չեր ունեցել հ.-ե. *ս-> հայ. զ-

⁴⁵ ՀԱԲ, հ. IV, էջ 56:

⁴⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 55:

⁴⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 29, ՀՀԲ, հ. IV, էջ 54:

⁴⁸ ՀՀԲ, հ. IV, էջ 54, ՀԱԲ, հ. IV, էջ 29-30:

⁴⁹ ԱԲԻՒ, N 27.

⁵⁰ ՀՀԲ, հ. IV, էջ 10, ՀԱԲ, հ. III, էջ 623-624:

⁵¹ ՀՀԲ, հ. IV, էջ 10, ՀԱԲ, հ. III էջ 623-624:

⁵² ՀՀԲ, հ. IV, էջ 10:

⁵³ ՀՀԲ, հ. II, էջ 100, 475, ՀԱԲ, հ. II, էջ 177:

⁵⁴ Նույն տեղում, էջ 99:

⁵⁵ ՀԱԲ, հ. III, էջ 270:

⁵⁶ ՀԱԲ, հ. II, էջ 638:

⁵⁷ ՀՀԲ, հ. II, էջ 484:

⁵⁸ Աղայան Է., կշկ. աշխա., էջ 102-103, 107-108:

⁵⁹ ԱԲԻՒ, հաճ. N 49; ՏՎ, սր. 235.

⁶⁰ ԱԲԻՒ, հաճ. N 49; ՏՎ, սր. 34.

⁶¹ ԱԲԻՒ, հաճ. N 49; ՏՎ, սր. 54.

⁶² «Նոր բառզիր հայկակեան լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 467:

⁶³ ՀԱԲ, հ. II էջ 443, 457:

⁶⁴ ՀՀԲ, հ. II էջ 345, 346, ՀԱԲ, հ. II, էջ 464, 465:

⁶⁵ Զահարյան Գ., Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 13 և ծան. 8:

⁶⁶ Երեմյան Ս., կշկ. աշխա., էջ 41, 45, 108:

⁶⁷ ՀԱԲ, հ. I, էջ 440-441:

⁶⁸ ԻԿԻ, ր. II, սր. 649, որ. 2, սր. 881, որ. 1.

հնչունափոխությունը) այնպէս, ինչպէս հայերենից են փոխառյալ «զինի» նշանակող բառերից այս դեպքում հատկապէս հիշատակելի վրաց. դվինի, դվինո, մեզո. դվինի, լազ. դունի, դինի բառերը.⁶⁹

Մեր նախնիների խաղողագործության և զինեգործության հովանավոր աստվածություններից ոմանք լինելու ին նաև երկնային մատովակներ: Այդպիսին էր լինելու հայաստական Unagašta-ք կոչված 2 աստվածություններից⁷⁰ մեկը (մյուսը կարող էր լինել միայն խաղողագործության հովանավոր աստվածություն): Unagašta-ք//Unagasta- դիցանված մեջ առկա է վերոիշշալ **<unak-//> ունակ-*-բառի ավելի հին **unag-* ձևը (հ.-ե. * g-> հայ. կ) և -asta-/-աստ վերջածանցը (հնմտ. առագ-աստ, զգաստ, իմ-աստ, հաւ-աստ-ի-ք):⁷¹

Հին Հայաստանում պալատական մատովակի և հազարավետի՝ երկրի զինավոր տնտեսի, պաշտոնների միասնությունը դարավոր արմատներ ուներ: Քսենոփոնի վկայությամբ, երբ Հայաստանի փոխստրապ (հյուպարքոս) Տիրիքագուրը դիմել էր փախուստի, նրան հանկարծակի բերած հույն վարձկանների կողմից «զրավկեց Տիրիքագուսի վրանը և նրա մեջ արձարյա ոտքերով մահիճներ և ըմպանակներ, ինչպէս նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատովակներ»:⁷² Հացի և զինու փոխադարձ կապը իր դրսուրումներն էր գուել ոչ միայն հայի առօրյայն, այլև իր հոգեոր կյանքի բազմաթիվ ութրտներում: Հողվածում ընսարկվող հայցերի տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության են արժանի ինչպէս «Հացն ու զինին, Տե՛ր Կենդանին» աղորքի, երդման և ոգեկոշման հանրահայտ բանաձեռ, այնպէս էլ այն հանգամանքը, որ մեր եկեղեցու ծիսակարգում մեկ ընդհանուր՝ Սպաս անտոնվ է կոչվում պատարազի ժամանակ օրինվող հացն ու զինին:⁷³ Հայոց Արամայիս նահապետի 2 որդիների վերաբերյալ ավանդագրույցի պատարիկները ևս վկայում են հացի և զինու միասնական պաշտամունքի հնամենի ակունքների մասին: Արարատյան դաշտում հաստատված Արամանյակի սերունդների թվարկումը թե՛ Սովուս Խորենացու, թե՛ Անանուն պատմիչ (Սեբեոս) երկուում սկսվում է նրա որդի Արամայիսով, ով Արմավիրը հիմնադրելուց հետո «զորդի իր զՇարայ զյուղաձին եւ զշատակեր, առաք ամենայն աղլիի իրով ի դրաշտ մի մօստաւը յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ», իսկ Արամայիսի մյուս որդին՝ Ամասիան, «անցանէ զգեստովն մերձ ի լեռնն հարաւյ... զիւտնն Ամասիա անուանէ իրով անուամբ Սասիս. Եւ ինքն դարձեալ յԱրմավիր՝ եկած ամս սակաւ, եւ մետաւ»:⁷⁴ Շարայի առնշուրյունը հացարատ Շիրակին, իր անվան «հացահատիկային» սոուզաբանությամբ հանդերձ, վկայում է նրա

⁶⁹ ՀԱՐ, հ. I, էջ 558-559.

⁷⁰ Խաչատրյան Բ. Վոստочныe провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ер., 1971, стр. 148 ("Keilschrifturkunden aus Boghazköi", Hf. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 39, IV, 31-33).

⁷¹ ՀԱՐ, հ. IV էջ 672:

⁷² Քսենիփոն, Անարասիս, Եր., 1970, էջ 94 (թարգմ. Ս. Կրկինաշարյան, Xen. Anabasis, IV, 21):

⁷³ ՀԲԲ, հ. IV, էջ 254:

⁷⁴ Խորենացի, Ս. ժք (հնմտ. Սեբեոսի Եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Ա, էջ 5):

նախատիպի հացահատիկի անձնավորում աստվածություն (ոգի) լինելու մասին,⁷⁵ իսկ Ամասիան՝ որպէս Սասիս/Արարատ լեռն անվանադիր, առնչություն ունի խաղողագործության հետ, որովհետև այս լեռն է խաղողագործության և գինեգործության առաջին օջախը համարվում թե՛ հայկական, թե՛ աստվածաշնչային ավանդությունների համաձայն:⁷⁶

Եթե Գործ կոչված երկրներից Արագածուանինը առնչվում է Արամայիսին և կրկնորդ կերպար Արամայիսին՝ Արգածունը երանց տիրույթն էր, ապա Արիովատինը գտնվում էր Ասորեստանի թագավոր Սալմանասար Ա-ի (Ա.թ.ա. 859-824թ.) կողմից Aramaic անվամբ հիշատակված ուրարտական նահանգում:⁷⁷ Ասորեստանի մեկ ուրիշ թագավոր՝ Սարգս Ա-ը (Ա.թ.ա. 722-705թ.), նույն այս նահանգը կոչում է Armarili և Armariali:⁷⁸ Այս անունների Արամ- և Արմ- սկզբնամսերը այնպիսի հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին առկա է նաև Արամանեակ/Արամայիս և Արմատիր առնչության դեպքում: Սեպազրային Aramali-⁷⁹*Aram-ali (հնմտ. գարան-աղի, Սան(ան)աղի, Սարդ-աղի հին հայկական գավառանունները) տեղանվան հիմք *Aram-ը նույնական է ինչպէս Ուրարտական թագավորության հիմնադիր Arame/Aramu թագավորի (Ա.թ.ա. IXդ. կեսեր), այնպէս էլ հայոց Արամ նահապեափ⁸⁰ անունների հետ: Արամանեակ անվան նման դրանը ևս իրենց հիմքում ունեն հ.-ե. *ար-/*Har- «հերկել, վարել», արմատը⁸¹ և արգասիրն են հողագործության մեջ արորի (արօր< հ.-ե. *ար-տօ-) ⁸² ներդրման՝ հացարույսերի մշակության բրիչային ձևից արտրայինին անցնելու երևույթի և դրանք ընդգրկած դարաշրջանի: Տնտեսայշակութային այդ առաջննաշացի արգասիրն էր նաև Արա Գեղեցիկի անունը (Արայշ-ար- և -այ վերջածանց: հնմտ. նաև Արարատյան բարբառում տղամարդկանց նկատմամբ կիրառվող արա կոչական բառը⁸³: Արան՝ Արամ նահապետի որդին և անվանադիրն էր Արարատյան դաշտի (Արարատ, դաշտն Արայի),⁸⁴ եռվանավորը արտարային հողագործության և ժառանգործը մենող-հարուսող մի աստվածության:

⁷⁵ Պետրոսյան Ս., Հացազցիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդագրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 177-189, Նոյնի. Դասերը և եռադասության դրսերումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 281-285, 306:

⁷⁶ Պետրոսյան Ս., Սիսակ և Նոյ նահապետների մասին հայոց ավանդությունների պատմական հեկոր, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենսարկության «Գիտական աշխատություններ» հ. VI, Գյումրի, 2003, էջ 5-16, Նոյնի. Արարատյան լեռների հին անունների և անվանադիրների մասին, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 223-225:

⁷⁷ ԱԲԻՒԿ, ՆՆ 27, 28.

⁷⁸ Արոեց Ն. Հայաստանի պատմություն. ակունքները. Խ-Վլդ. մ.թ.ա. Եր., 1972, էջ 85, ծան. 1 էջ III:

⁷⁹ Խորենացի, Ս. ժք-Ժզ:

⁸⁰ Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 53-55:

⁸¹ Նոյնի, Դասերը և եռադասության դրսնորումները հին Հայաստանում, էջ 176-180, 305-306, 365-366:

⁸² ՀԱՐ, հ. I, էջ 350:

⁸³ Հմմտ. Պետրոսյան Ս., Հացազցիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդագրույցում, էջ 197-198:

⁸⁴ Խորենացի, Ս. ժք, Ժզ. Սէրէսի Եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Ա, էջ 6, 7:

Հ.-ե. *agə- և *aruo- «ազատ հողագործ» արմատակից նախաձերից սերած բառեր կան մի շարք ժամանակ լեզուներում, որոնցից են հայ. հարաւունք «ցանք, վարուցան, սէրմ, արտ» (Մշո բարբառում ունենք հարվունք «զարնան և աշնան եղանակին՝ անձրևներից կակդած հող, որ կարելի է արորով վարել»⁸⁵), հուն. *άραυρα «վարելահող», լատին. arvum «դաշտ», միջ. իոլ. arbor «հացահատիկներ», խեթ. arasa «ազատ, ապահարկ», լատին. arawa «(հարվից) ազատ, լիսվ. arvas «ազատ» և այլն⁸⁶ հ.-ե. aruo- «ազատ հողագործ» նախաձեն է ընկած ուրարտական Արմարիի նահանգի բնակավայրերից մեջի Arbu անվան⁸⁷ հիմքում (սեպագր. Ե/Ե, Ա, Վ, Խսկ ս/ս, Օ): Սա ուրարտական արքայատունի բնակավայրերից էր, որովհետև Սարգոն II-ն այն կոչում է «Ուրսայի հայրական տուն», իսկ հարեւան Ռիյար բնակավայրը՝ «Բշտարդուրիի քաղաք»՝ ի նկատի առնելով Ռուսա Լին (Ուրսա) և Սարդուրի Լին (Բշտարդուրի):⁸⁸

Arbu-ի գուգակից Riiar-ի անունը ևս հնդեվրոպական ծագումով հողագործական բառոյ ունեցող տեղանուն է: Այս անունը պահած ճրեր գրալը (Երեր⁸⁹ «Երիար») «քաղված էր այգիների և ծառաստանների մեջ: XIX դարի կեսերին ուներ 82 տուն, Վերջերին՝ 100, իսկ 1915թ. նախօրյակին՝ 110 տուն հայ բնակիչ. գրալում էին երկրագործությամբ, անստապահությամբ, պարագուծությամբ, խաղողագործությամբ և արհեստներով»:⁹⁰ Riiar⁹¹ «Rij-ar տեղանվան առաջին բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *teHi- «ունեցվածք» արմատից, որից են նաև իին հնդկ. rai «բարիք, ունեցվածք, հարստություն», ավեստ. rāevant «հարուստ», լատին. res (սեռ. հոլով. rei) «ունեցվածք, իրեր» բառերը:⁹² Rij-ar տեղանվան երկրորդ բաղադրիչի համար հմտություն. -ար վերջածանցը արդ-ար, կերպ-ար, մոլ-ար, պալ-ար և այլ բառերում:

Հնագույն Արդիուկանի և Արագածոտնի Quria անունները և դրանց իմաստակից մյուս տեղանունները վկայություններն են Հայկական լեռնաշխարհի առանձին շրջանների տնտեսաւթյան մեջ խաղողագործության և գինեգործության առաջատար ճյուղեր լինելու, երբ դրանց հարեւան և այլ շրջաններից շատերում այրախի դեր վերապահված էր հացագի բույսերի մշակությանը: «Խաղողա-գինիական» ստուգարանությամբ բերված և այլ տեղանունների առաջացման ժամանակաշրջանը, անտարակուր, նախարդել է դրանց սեպագրային գրանցում ստանալու դարաշրջանի և, մեր կարծիքով, գուգադիպել է արորային հողագործության արգասիք բննարկված տեղանունների մյուս խմբի առաջացման դարաշրջանին: Դատմական այդ գործընթացը պայմանավորված է եղել մինեւովն էքնիկական ընդհանրությանը պատկանող Հայկական լեռնաշխարհի բնակչության տարբեր հատվածների ըստ տնտեսամշակութային հատկանիշների առանձնացման և

⁸⁵ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 57:

⁸⁶ ԻЯИ, բ. II, ստր 477, 885.

⁸⁷ ԱՎԻԿ, ուժը. ԱՆ 46, 49.

⁸⁸ Ադրեն Ն., Հայաստանի պատմություն. Ակտոնքները. X-VI դդ. Աթ.ա., էջ 193-194:

⁸⁹ Հակոբյան Թ., Սելիք-Բախչան Ս., Բարսեղյան Հ., Աշումյան Հ. Ա. Եր., 1988, էջ 364:

⁹⁰ ԻЯИ, բ. II, ստր. 747; Սեպագրայն Ս., Դասերը և եռաղասության դրսուրումները իին Հայաստանում, էջ 181-182:

դասային խմբավորման հասարակական պահանջով, իսկ դրանք նախորդել են մեր լեռնաշխարհում պետական կազմավորումների առաջացման և պետությունների ձևավորման դարաշրջանին:

СТРАНЫ QURIA И ДРЕВНЕАРМЯНСКИЕ ВИНОЧЕРПИИ

Резюме

С. Петросян

По сообщению Мовсеса Хоренаци, родовое имя нахараров Гнуни происходит от арм. гини «вино». Наследственное владение Гнуниев находилось в древнеармянской области Алиовит, а как придворные виночерпии они имели поместье на севере древнеармянской области Арагацоти. В Урартский период эти земли назывались Quria-, так же «винное» название: ср. арм. կորի (կոլոֆ) - в арго «вино», слово индоевропейского происхождения. Quria в Алиовите была в составе урартской провинции Арамали/Армар(ий)али, а Курия в Арагацотне, по древнеармянским эпическим сказаниям, считается вотчиной Араманяка - старшего сына этнарха армян Хайка (Хоренаци, I, 12). В основе л.и. Aramanak (Արամանակ) и топонимов Aramali/Armar (այ)ա-լի և -ե. «агэ «пахать, вслачивать»: ср. арм. գրօր (արօր<արշար<ի-ե. *are-tro-) «орало, соха». И.-ե. корень «агэ-» наличествует и в имени основателя Урартского государства царя Араме (Arame, Aramu).

Появление названий Quria должно быть обусловлено процессом дифференциации населения армянского нагорья по хозяйственно-культурным типам задолго до появления здесь государственности, но после широкого распространения пашенного земледелия. В данном случае имеется в виду факт распространения у предков армян в Алиовите и Арагацотне уже виноградарства и виноделия, а их соседи продолжали преимущественно заниматься культивированием зерновых.

Տեղեկություններ հեղինակի մասին

Սեպագրայն Սարգսի Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ

Ծիրակի հայագիտական եռագուտությունների կենսագիր:


ԳՊՄՀ պատմության և իրավագիտության տուրիստ:

E-mail: Vahel1996@mail.ru

Lուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՃ

Մեծ Հայրի Սոկաց աշխարհի Սյուս Բշայր զավառում՝ Բաղեց քաղաքից 35կմ հարավ-արևելքում է գտնվել Խիզան քաղաքը։ Այն հաճախ հիշատակվել է XIV-XVդդ. ձեռագիր հիշատակարաններում՝ որպես հայկական գրչության կենտրոն։ Խիզանից հայտնաբերվել է մի ձեռագիր (Երևան, Մերու Սաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 2865, 4ր, Պատմագիրը Հայոց), որի մանրանկարն¹, ըստ ընդունված կարծիքի, հետևյալ բովանդակությունն ունի։ Պատմահայր Սովուս Խորենացին գրում է իր «Հայոց պատմութիւն»-ը, պատմիրաւու Սահակ Բագրատունին ձեռքը մեկնել է դեպի պատմահայրը՝ հանձնարարական շարժումով, իսկ նրանց ուորերի մոտ՝ հատակին, ծնկաշոր կեցվածքով ձեռագրի ստացող Ներսէս Գևունեցին է (նկ. 1)։ Նկարի տակ ծանոթագրված է «Սահակ Բագրատունին խնդալն Սովուս Խորենացու բան»։ Մանրանկարը համարվում է 1567թ. գործ, իսկ ծաղկողի անունը հայտնի չէ։



Նկ. 1

Ինչպես նշվեց, մանրանկարը համարվում է Խիզանի դպրոցի ստեղծագործություններից, սակայն, ամենայն հավանականությամբ, մանրանկարի հեղինակը Կիլիկիայի մանրանկարչական դպրոցի (կազմավորված XII դարում և գոյատևած մինչև XIV դարի 80-ական թթ.) ներկայացուցիչ է, քանի որ նկարը բավականին ցայտուն կերպով կրում է Կիլիկյան դարոցի ազդեցությունը։ Իսկ ինչ վերաբերում է մանրանկարի բովանդակությանը, ապա, մեր կարծիքով, այն չի համապատասխանում իր ներքոզբար ծանոթագրությանը և արտահայտում է բոլորովին այլ ժամանակաշրջան, միջավայր ու գործիչներ։ Մեր կարծիքով, նկարում պատկերված բազակիր անձնավորությունը կարող էր լինել Կիլիկյան Հայաստանի քաջավոր Լոռն Ա Մեծագործը (1198-1219թթ.), իսկ մյուս երկուար՝ նրա ժամանակակիցները։ Բերենք փաստարկներ։

- Թագակիր անձնավորությունը Սահակ Բագրատունին լինել չէր կարող հետևյալ պատճառով։ Սահակ Բագրատունին բազավոր չէր, իշխան էր, ապա՝ մարզպան (481-482թթ.) և չէր կարող կարմիր կոշիկներ ու քաջ կրել, այն էլ՝

կիլիկյան քաջ (հմմտ. Լոռն II արքայի քաջը՝ ըստ դրամի (նկ. 2, 3)², Լոռն III արքայի քաջը (նկ. 4)³, Լոռն V արքայի քաջը (նկ. 5)⁴)։



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5

- Կարծեցյալ Սովուս Խորենացու փոխարեն տվյալ պատկերում կարող էր հանդիսանալ զալ Ներսէս Լամբրոնացին, ով իր կյանքի վերջին տարիներին պաշտոնավարել էր Լոռն II-ի արքունիքում որպես ատենադպիր, պալատական խորհրդատու և քարզմանիչ⁵։

² Կատալոգան Ս. Լոռն I Մեծագործ, Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1978, էջ 589.

³ Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, Լոռն Գ քաջավոր. Կեռան քաջուհի և երած որդիները նկ. N 13.

⁴ Նոյնի, Լոռն Ծ քաջավոր, նկ. N 35.

⁵ Արգարյան Գ., Գրիգորյան Գ., Ներսէս Լամբրոնացի, Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 8, Եր., 1982, էջ 253.

3. Հանձին ձեռագրի պատվիրատուի՝ կարծեցյալ Ներսէս Գևոնեցու, պէտք է մահմեղական գործի տեսնել, քանի որ իր կրոնական պատկանելությանը համապատախան նա կրում է մահմեղական փաթթոց, իսկ իր ուստաբրի ու ծնկաչոր կեցվածքով հուշում, որ իրենից վերև գտնվող երկու կերպարների հանդեպ ստորադաս վիճակում է:
4. Շինուրյան աշտարակը և ներքին հարդարումը ես բնորոշ են մահմեղական կառույցներին:
5. Մանրանկարի խորքում՝ պատվանդանի վրա դրված զիրքը, որը համարվում է Սովոր Խորքնացու երկը, ամենայն հավանականությամբ, Դուրանն է, որը մահմեղականի երդման արարողության կարևոր ասրիբուտներից մեկն է՝ այս դեպքում մահմեղական գործի հնագանդության ու հավատարմության երաշխիքը:

Իսկ կոնկրետ ի՞նչ իրադարձություն է արտացըլում մանրանկարը: Նրա պատմական հենքը կարելի է գտնել Լեռն Ա-ի և հարեան Իկոնիայի (Ռումի) սև-շուկան սուլթանության քաղաքական հարաբերությունների մեջ: Կիլիկյան Հայաստանի միջազգային հարաբերությունները Լեռն Ա-ի կառավարման տարիներին բավականին բարդ էին: Այդ տարիները համընկել էին Սերձավոր Արքելուում տեղի ունեցող խոշոր քաղաքական իրադարձություններին և արմատական փոփոխություններին: 1176թ. Միրիմկեֆարնի ճակատամարտում Իկոնիայի սեղուկ-ներից կրած ծանր պարտության ենուանքով Բյուզանդիան այլևս Կիլիկյան հայկական քաղաքության հետ անմիջական սահման չուներ և զրկվել էր Արքելուում որևէ դերակատարություն ունենալու հնարավորությունից: Պատմության բաւրաբեմից վերջնականապես հեռացել էին Կիլիկյայի երեմսի ամենավտանգավոր ախտանները՝ Սերաստիայի և Սելիստենի Դանիշմենյան ամիրայությունները: Եղիպատի սուլթան Սալահեդինի (1169-1193թթ.) հարվածների տակ զրեթե կործանման եզրին էին հասել Արքելամիջերկրածովյան խաչակրաց պետությունները: Ներքին զահակալական կոիլներից սաստիկ թուլացել էին Իկոնիայի և Հալեպի սուլթանությունները: Ծայած բարդությանն ու հաճախակի փոփոխականությանը՝ ընդհանուր առմամբ Կիլիկյայի համար միջազգային այդ իրադարձությունը բարենպաստ էր: Լեռն Ա-ը հմտորեն կարողացավ օօտվել դրանից, առավելագույնս ընդարձակեց իր պետության սահմանները և «ծավալապաշտությունը դարձրեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնաքարը»⁶: Լեռն Սեծազործը կապեր ուներ թե՛ պապականության, թե՛ Հռոմեական Սրբազն կայսրության և թե՛ Բյուզանդիայի հետ: Միջազգային ասպարեզում շատ էր բարձրացել նրա անձնական հեղինակությունը: Երկրի շահերից բխող անկախ և ձկուն դիվանագիտության որդեգրումը, Կիլիկյայի տարածների ընդարձակումն ու պաշտպանության ամրապնդումը, պետական համակարգի արդիականացմանը միտված բարեփոխումների իրականացումը ուղեցվում էին երկրի բնակչության ստվագումով, նրա տնտեսական վերելքով, քաղաքների և արտաքին առևտորի զարգացումով: Այս գործոնների շնորհիվ Կիլիկյան հայոց պետությունն այնքան հզրա-

⁶ Տեր-Պետրոսյան Լ., Հայակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007, էջ 231:

ցավ, որ դարձել էր Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը, և դրա ազդեցությունը շարունակարար զգացվեց քաղաքության հետագա ողջ գոյության ընթացքում:⁷

Լեռն Ա-ը դեպի արևելյան տարածքն ընդացնել էր ի հաշիվ Անտիոքի իշխանության⁸: Նա դիվանագիտական ձկունություն ու խոհենություն էր ցուցաբերել նաև Իկոնիայի առլուսն Խիճ-Արալան Ա-ի (1156-1192թթ.) որդիների միջև ծագած գծության ժամանակ: Նա արշավել էր արևմուտք և հյուսիս, գրավել Իսավրիայի և Կապաղովլիկիայի սահմանամերձ շրջանները: Իկոնիայի առլուսն Խիճ-Արալանը դեռևս կենդանության օրոք էր իր պետությունը բաժանել որդիների միջև, ինչը բուլացըրել էր Փոքր Ասիայի սելցուկների ռազմական հզրությունը և կասեցըրել նրանց արշավանքները Կիլիկյան Հայաստան: Այժմ Լեռն ինըն էր արդեն հաջող պատերազմներ մկրում սելջուկ-թուրքերի դեմ, ուստի Խիճ-Արալանի՝ միմյանց դեմ մարտնչող որդիներին այլ բան չէր մնում, քան ապավինել նրա հովանավորությանը: 1195թ. նրանցից Սուլիս Եղ-դին Տողրուշահը՝ Սալիքը (Ալիքստանի կիրը 1192-1201թթ.), գալիս է Լեռնի մոտ, ընդունում նրա գերիշխանությունը և իրեն կախյալ հայտարարում նրանից:⁹ Լեռն իր հերթին փայլուն կերպով իրականացնում է իր խոստումը. նա արշավում է Սալիքի եղբոր՝ Կեսարիայի տեր Նուր Եղ-դին Սուլթանշահի դեմ, հաղթանակ տանում նրա նկատմամբ, գրավում անգամ Կեսարիայի հարեան մի բնակավայր: «Արիազոյն Լեռն տիրեաց ներանասուն և երկու բերդի, եր գոր նախնիքն իր կախալ էին և եր զար ինքն էան ի յունաց... Եւ ել մեծն Լեռն և էան բերդ մի մերձ Կեսարիոյ և էան նմա» մելիքին՝ Ալիքստանի տիրողը:¹⁰

Ցավոր, աղբյուրները լրում են Լեռնի և Սուլիս Եղ-դինի միջև կնքված որևէ գրավոր համաձայնագրի առկայության մասին, սակայն դժվար չէ կռահելը, որ աղյուսին եղել է ռազմական օգնության դիմաց գերիշխանության ձանաշումը և փոխադարձ պարտավորությունները պետք է որ ամրագրվեին պայմանագրով:

Հետազոտմ ևս՝ քաղաքոր օծվելուց հետո, Լեռն Ա-ին տևսառմ ենք Իկոնիայի սուլթանության այս կամ այն քաղամարանցին իր քաղաքական աջակցությունը ցուցաբերելիս,¹¹ սակայն դրանք ավելի շուտ դրվագային միջամտու-

⁷ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, քարգմանությունը, առաջարցանը և ծանոթագրությունները՝ Կարազ Առաքելյանի, գլ. Գ, էջ 118: Միջայեցան Գ., Կիլիկյայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 178 (Միջայել Ասորի, Ժամանակագրութիւն, էջ 501): Նույնի, էջ 178-179 (Վարդանայ Քարձարերդցոյ Պատմութիւն ափեցերական, էջ 182): Օրմանեան Մ., Ազգապատում, հ. II, Պեյրութ, 1959, էջ 722:

⁸ Միջայեցան Գ., Կիլիկյայի հայկական պետության պատմություն, էջ 144:

⁹ Տեր-Պետրոսյան Լ., Հայակիրները և հայերը, հ. Բ, էջ 234 (տե՛ս Սմբատ, Տարեզիրը, Վեհետիկ, 1956, էջ 212):

¹⁰ Միջայեցան Գ., նշվ. աշխ., էջ 155 (Միջայել Ասորի, Ժամանակագրութիւն, էջ 501-502):

¹¹ Գյուս Եղ-դին Քեյ Խոսրովի և Եղոր՝ Ռուբեն Եղ-դինի միջն ընթացող հակամարտության ժամանակ Լեռն Ա-ի աջակցություն էր Ռուբեն Եղ-դինին (տե՛ս Հովհաննեսիան Ա., Կիլիկյայի հայկական քաղաքավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները՝ 1198-1219թթ., Էջմանձնի հանդես, 2012, էջ 86): Սուլթան Գյուս Եղ-դին Քեյ Խոսրովի (1205-1210թթ.) որդիներ Բզզ Եղ-դինի ու Ալա Եղ-դինին: Սակայն Բզզ Եղ-դինը ունի Զելալ Եղ-դինի միջնարդությամբ Լեռն օգնում էր Ալա Եղ-դինին: Սակայն Բզզ Եղ-դինի զանազան պայմանագրով:

բյուններ էին, և կարծես թէ կախյալ ճանաչվելու կամ գերիշխանություն ընդունելու խնդիր որևէ մեկի առջև Լուսնը չէր դրել: Ի նկատի առենքը, որ սկսած XIII դարավակքից՝ Իկոնիայի սուլթանությունը վերականգնել էր նախկին հզորությունը և իր հերքին աջակցում էր Անտիոքի դրությանն ու Հալեպի սուլթանությանը՝ ընդում Կիլիկիայի, ուստի միջազգային իրավիճակը մերձավորաբելյան տարածաշրջանում կտրուկ փոխվել էր՝ հօգուտ Կիլիկյան Հայաստանի հակառակորդների:¹² 1216թ. սեղուկյան գորքերն անզամ ներխուժել էին Կիլիկիա, նրանց հաջողվել էր մի քանի օրվա ընթացքում կողոպտել սահմանամերձ շրջանները, գերեզարել մարդկանց, տիրանալ մեծ թվով անասունների ու նշանակալի ավարի: Լուսն Ա-ը հիվանդության պատճառով չէր մասնակցել ռազմական գործողություններին.¹³ Ըստ Սմբատ սպարապետի՝ 1216թ. սեղուկների հետ բախտմաներն ավարտվել էին հայերի պարտությամբ, որի պատճառներից մեկը ժամանակագիրը համարում է թշնամու գերակշռությունը, իսկ մյուսը՝ Լուսնին ենթակա որոշ իշխանների անտարքերությունն ու անհավատարմությունը¹⁴: 1218թ.¹⁵ Կերքած հաշտության պայմանագրով Լուսն Ա-ը գերիներին ազատում է՝ տարածքային զիջումների և սավանի գերակայությունը ճանաչելու պայմանով: Կարծիք կա նաև, թէ Լուսնը զերյալ իշխաններին ազատել է ոչ թե զիջումների զնով, այլ ուժի ցուցաբությամբ¹⁶: Այսուամենայնիվ, սեղուկ-թուրքերի՝ Կիլիկիայի դեմ ունեցած ռազմական հաջողությունները վկայում են, որ Լուսն Ա-ը կորցրել էր նրանց նկատմամբ նախկինում ունեցած իր ազդեցությունն ու հեղինակությունը, ուստի «իր զահակալման վերջին տարիներին ստիպված էր զգալի զիջումներ կատարել հարեան Իկոնիայի սուլթանությանը»:¹⁷ Հետևաբար, մանրանկարում արտացոլված դրվագը կարող է վերաբերել Լուսն Սեծագործի կառավարման այն ժամանակահատվածին, երբ Կիլիկյան Հայաստանը նա դարձրել էր Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը, իսկ Իկոնիայի սուլթանությունը գտնվում էր բռնացած ու պառակտված վիճակում:

Նկարագրված իրադարձությունները կարծես ամբապնում են մեր այն կարծիքը, թէ մանրանկարում պատկերված ծնկաչոր անձնավորությունը բարձրաստիճան մահմեղական է և ստորադաս վիճակում է զտնվում Լուսն Սեծագործի հանդեպ: Նրա ուստարիկ ու ծնկաչոր դիրքը շեշտում է քազակիր անձնավորությունը:

կարողանում է առանձին դաշինք կնքել Լուսնի հետ և չեղորացնել նրանից եկադիր վտանգը (տե՛ս Սիրայեցան Գ., նշվ. աշխ., էջ 172):

¹² Հովհաննեսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., էջ 85:

¹³ Սիրայեցան Գ., նշվ. աշխ., էջ 173:

¹⁴ Նույնի, էջ 175 (Սմբատաց Սպարապետի պատմություն, էջ 107-108):

¹⁵ Հովհաննեսյան Ա., Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սեղուկյան սուլթանության միջև 1918թ. կերպած հաշտության պայմանագրի շուրջ, «Բաերեւ Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերությունները. Քաղաքականություն», Եր., 2010, էջ 73:

¹⁶ Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 275-276 (Վահրամ Շարուկի, Ուսանառը պատմություն, էջ 216; Հերում արքայորդի Հաջոց, էջ 586-587):

¹⁷ Հովհաննեսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., էջ 93:

թյունից՝ տվյալ դեպքում Լուսն Ա-ից, կախման մեջ գտնվելու և հնագանի լինելու մասին: Հնարավոր է, որ պատկերվածը Խիճ-Արաւանի որդի Սուլիս եղ-դին Տողուշանի է, քանի որ, ինչպես տեսանք, Սուլիս եղ-դինն էր ուազմական աշակցության դիմաց իրեն կախյալ հայտարարել Լուսնից, բացի դրանից, Լուսնը Սուլիս եղ-դին - Նոր եղ-դին հակամարտության տարիներին ավելի ուժեղ էր, ինքնուրույն ու անկախ: Այդ տարիներին նրա մոլած պատերազմները սեղուկների դեմ կրում էին հարձակողական ու նվաճողական բնույթ, եթե սեղուկ-թուրքական հետազագականական պայքարների ընթացքում, ինչպես վերևում նշվեց, Լուսնն այլևս նախկին ազդեցիկ դիրքը չուներ տարածաշրջանում, նրա մոլած պատերազմները սեղուկների դեմ արդեն պաշտպանողական բնույթ էին կրում և անզամ ուղեկցում տարածքային գիշումներով:

Եթե ըստունենք, որ խնդրո առարկա մանրանկարում լուսապատճեն պատկերված անձնավորությունը Ներսես Լամբրոնացին է, ապա անվիճելի կինի այն փաստը, որ Լուսն Ա-ի հանդեպ պարտավորություններ ստանձնած բարձրաստիճան մահմեղականը Սուլիս եղ-դին Տողուշանի (Սալիք) է: Խիճ-Արաւանի որդիների գժությունն ու Լուսն Սեծագործի միջամտությունն այդ առակատմանը տեղի է ունեցել 1195 թ.¹⁸, եթե Ներսես Լամբրոնացին տակավին ողջ էր: Նա Լուսնի արքունիքի ատենապային էր և առանց նրա մասնակցության դժվար թէ կայանար Սուլիս եղ-դին Տողուշանին վասալ ճանաչելու պայմանագիր-պարտավորազրի կիրման արարողությունը: Լամբրոնացին կնքել էր իր մահկանացուն 1198թ. հուլիս ամսին՝ Լուսնի թագավորությունից (1198թ. հունվարի 6) ամիսներ անց, այսինքն՝ չեր կարող ներկա լինել հետազագ որեւէ դիվանագիտական բանակցության:¹⁹ Իսկ այժմ փորձենք պարզաբանել, թէ ինչու էր Ներսես Լամբրոնացին մանրանկարում լուսապատճեն հանդես գալիս:

1. Հայկական եկեղեցիներում սովորույթ է եղել սրբերի շարքում պատկերել նաև կաթողիկոսներին:²⁰ Ճիշտ է, Լամբրոնացին կաթողիկոս չէր և 1175թ.-ից Տարսոնի նահանգի արքեպիսկոպոսն էր, սակայն այնպիսի հոչակ էր վայելում երկրում, որ յուրաքանչյուր պետական կարևոր նշանակության հարց առանց նրա մասնակցության չէր լուծվում: Այս առորիվ Ս. Օրմանյանը գրում է. «Ապիրատէն (1194-1203թթ. կաթողիկոսական արքուր զբաղեցրած Գրիգոր Զ Ապիրատ-Լ.Պ.) աւելի ժիր է գործունեալ էր իր քառորդին Ներսես Լամբրոնացի Տարսոնի արքեպիսկոպոսը, տակաւին հազի բառասուն տարեկան, որուն ամէն եկեղեցական և

¹⁸ Այսունի կարող է հարց ծագել՝ եթե Լուսն Սեծի միջամտությունը երկու եղբայրների հակամարտությանը տեղի է ունեցել մինչև Լուսնի թագավորվելը, ապա ինչու չէ վերջինն մանրանկարության բազով պատկերված: Ենթադրելի է, որ մանրանկարն ստեղծվել է հետազոտության հետեւ արքունիքի կառավագանության հարցում կարող մոր հոչակավոր թագավորին առանց թագի պատուիկին:

¹⁹ Կարծիք կա նաև, թէ Լամբրոնացին վախճանել էր Լուսնի թագավորման արարողությունից առաջ, և, ըստ այդի, Լուսնի՝ թագավոր հոչակիվը դրվում է 1199թ. հունվարի 6-ին՝ ինքը ընդունելով թագավորման համարնի ներկա գտնված և համարնել իշխուական 14 եպիսկոպոսների շարքում Ներսես Լամբրոնացու անվան թագավորության փաստը (Օրմանյան Ս., նշվ. աշխ., էջ 802-804):

²⁰ Հայկական մանրանկարչության Դիմանկար,

քաղաքական գործերու մէջ առաջնակարգ դեր վարելը տեսանք, եւ որ Լեռնի զլսաւոր խորհրդակիցն ու գործակիցն էր, և որուն ընտրելիութիւնն (կաթողիկոսական ընտրություն-Լ.Պ.) ալ խօսուեր»:²¹ Այսպիսով, կարողիկոս Գրիգոր Ասիրաւոր ստվերում էր մնացել, ինչպես Օրմանյան է նկատում, իր մերմ ու վարանուտ բնավորության պատճառով:²² Գրիգոր Զ Ապիրաւորին հաջորդած Հովհաննես Զ Ստեղին (1203-1221թթ.) ևս որոշիչ դեր չի կատարել Կիլիկյան Հայաստանի քաղաքական կյանքու:

2. Ներսէս Լամբրոնացին նաև մատենազիր է եղել զիտնական, փիլիսոփա, հրապարակախոս, բանաստեղծ, երաժիշտ, թարգմանիչ, տիրապետել մի քանի օտար լեզուների (հունարեն, լատիներեն, ասորերեն, երայերեն, դպտերեն): «Նա ամէնէն աւելի ոգով վարած է բարբ եկեղեցիները միացնելու բարձր՝ բայց անգործադրելի խորհրդին»:²³ Լամբրոնացուն վատահված է եղել նաև երկրի արտարին գործերը վարելու ու կարգավորելու պարտավորությունները, որոնց համար նա բազմիցս է ուղարկվել օտար երկրներ: Լեռնի բազարուման շորջ բանակցություններ վարելու համար Կոստանդնուպոլիս ուղարկված դեսպանությունը նույնպես Լամբրոնացին էր գլխավորել:²⁴

3. Լամբրոնացու հայրը Լամբրոնի ազգնեցիկ իշխանական տոհմի ներկայացուցիչ էր, որից ժառանգած նյութական միջոցներով Ներսէս Լամբրոնացին օժանդակել է դպրոցներին, գրադարաններին, գրչատներին, ձեռագրերի գնմանը, ընդօրինակմանը, վանքերի, եկեղեցիների ու այլ շենքերի կառուցմանը, հասարակական այլ կարիքների²⁵:

Անկասկած, նման բեկմնավոր գործունեություն ծավալած պետական ու եկեղեցական ակնառու գործիչն իր ժամանակակիցների կողմից պետք է, որ ընկալվեր և ընկալվել է որպէս Սուրբ: Ինչպես հայտնի է, Ներսէս Լամբրոնացուն մեծարել են «Տիեզերական վարդապետ», «Այրելի», «Սուրբ» մակղիրներով:²⁶ Ավելին, Լամբրոնացին ժամանակին Կոստանդնուպոլատում դասվել է տոնելի սրբերի շարքը:²⁷ Հույներն ու հոռմեացիները կոչել են նրան երկրորդ Պողոս առաքյալ Տարսունացի:²⁸ Հայ եկեղեցին Ներսէս Շնորհալու և նրա անվանակից ու աջակից Ներսէս Լամբրոնացու հիշատակներին տոն է սահմանել, որը կոչվել է «Ներսիսիսնց»:²⁹

Այժմ պարզաբնենք, թե ինչու մանրանկարի տակ բերված ծանոթագրությունը չի համապատասխանում մանրանկարում պատկերված իրուրիշանը: Ըստ Երևույթին, գրությունն արված է ոչ թե մանրանկարչի կողմից, այլ ավելի ուշ՝

²¹ Օրմանյան, եշվ. աշխ., էջ 776-777:

²² Նույն տեղում, էջ 809:

²³ Նույն տեղում, էջ 802:

²⁴ Միքայել Գ., պատմություն Ներսէս Լամբրոնացի, Հայկական սովորական հանրագիտարան, հ. 8, էջ 157:

²⁵ Արգարյան Գ., Գրիգորյան Գ., Ներսէս Լամբրոնացի, Հայկական սովորական հանրագիտարան, հ. 8, էջ 253:

²⁶ Նույն տեղում, էջ 254:

²⁷ Օրմանյան Մ., եշվ. աշխ., էջ 802:

²⁸ Հայոց հեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մաթևոսյանը, Ա. Էջմիածին, 1999, էջ 188:

²⁹ Նույնը:

հետագայի միջամտություն է, որը կատարված է ոչ այնքան բանիմաց ու գրագետ անձնավորության կողմից: Դրա վկայությունն են տառերի անհամաշափությունը և գրվածքի՝ նկարի հանդեպ ոչ սիմետրիկ տեղադրությունը: Գրությունը կատարյալ ու անթերի կիններ, եթե գրված լիներ նման տաղանդավոր վարպետի կողմից, ինչպիսին է մանրանկարի հեղինակը, որի գործն ինքնին բարձր արվեստի նմուշ է:

Այսպիսով, ամրողացներով պատկերը կարելի է եզրակացնել, որ մանրանկարը հեղինակել է կիլիկյան մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ, ով բացատելյակ է եղել Լևոն Մեծագործի իշխանության տարիներին երկրում տեղի ունեցած քաղաքական, ռազմական, եկեղեցական ու դիվանագիտական անցուդարձին և դրանցից մի դրվագ վավերացրել իր ձեռքի աշխատանքում, որտեղ պատկերված են ոչ թե Սովոր Խորենացին՝ «Հայոց պատմություն»-ը գրելիս, պատմիրատու Սահակ Բազրատունին և ձեռագրի ստացող Ներսէս Գնունեցին, այլ բայց Երևույթին, Լևոն Մեծագործն ու Ներսէս Լամբրոնացին, իսկ նրանց ուորերի տակ՝ ծնկաշոր կեցվածքով Լևոն Մեծագործի օգնությանը դիմած և գերիշխանությունն ընդունած Իկոնիայի սուլթան Խիջ-Արալանի որդի Սուլիս Եղինին Տողրությանը, ով, Ղուրանի առջև երդվելով, իր հպատակությունն է հայունել Լևոն Մեծագործին:

ПОПЫТКА НОВОЙ ИНТЕРПРЕТАЦИИ ОДНОЙ МИНИАТЮРЫ

— Резюме —

— Л. Петросян —

В городе Хизан (губерния Мокк) была найдена рукопись, миниатюра которой, согласно принятому мнению, изображает родоначальника армянской историографии Мовсеса Хоренаци во время работы над книгой "История Армении". Напротив Хоренаци сидят якобы марзпан Армении (181-182гг.), заказчик произведения Саак Багратуни, а под ногами Хоренаци и Саака Багратуни, на коленях стоит получатель рукописи Нерсес Гнунец.

Видимо, такое содержание миниатюре приписано по недоразумению, потому что присутствующие в нем образы с киликийской царской короной и мусульманской чалмой, как и вообще, миниатюра в целом, нас переносят совсем в другую среду и эпоху. По нашему мнению, миниатюра отображает подписание соглашения, которое состоялось между Киликийским царем Левоном II (1198-1219гг.) и владельцем Альбистана Мугис эд-дин Тогрулшахом (1192-12012гг.), одного из престолонаследников Иконийского султаната. Последний поссорился со своим братом, прибыл к Левону и поставил себя в зависимость от него. Взаимные обязанности, по-видимому, записывал выдающийся деятель своего времени Нерсес Ламбронаци.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Լուսինն Սարգսի - պ.գ.թ., 22 ԳԱԱ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,

ԳՊՄԴ պատմության և իրավագիտության ամբիոն,

E-mail: Vahel19%@mail.ru

Ինգա ԱՎԱԳՅԱՆ

ՇԻՐԱԿԻՑ ՀԱՅՏԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՊԾԻՎՆԵՐԻ ՇՈՒՇ

Շիրակում պեղված են բազմաթիվ տարժամանակյա գոտիներ, սակայն հարկ ենք համարում անորոշական ուրարտական մի բանի օրինակների¹: Ս. Եսայանը ուրարտական գոտիներն ըստ զարդամուտիվների բաժանում է հինգ խմբերի: Համաձայն այդ խմբավորման՝ Շիրակից հայտնի բրոնզե գոտիները պատկանում են առաջին՝ երկրաշափական զարդանախշերով, երկրորդ՝ բջջած զարդանախշերով և չորրորդ՝ ծիսական զարդանախշերով խմբերին²:

Առաջին խմբին են պատկանում Լենինականից հայտնի գոտին (49X9սմ)³, որի մակերեսը զարդարված է յոթ զարդագոտիներով, որոնցից վերին երկրորդ և ներքին երկրորդ զարդագոտիները կրում են երկու շարքով զուգահեռ դասավորված կետեր, զարդագոտիներից երեքը եզրագծված են զույգ գծերով, կենտրոնական զարդագոտին դաստարկ է (նկ. 8): Նմանօրինակ գոտու բնելոր պեղվել է 1952 թ. Լենինականի «Սսի կոմիտեատի» թիվ 9 դամբարանում (նկ. 4): Գոտին ունի ինը զարդագոտի, որոնցից չորսը եզրագծված են զույգ զարդագոտիներով, որոնց մեջ չորս զուգահեռ շարքերով դասավորված են կետերը: Գոտիների զարդամուտիվի վաղ նմանօրինակները հայտնի են Տիրի դամբարանադաշտից⁴: Գոտիների համաժամանակյա նմանօրինակները հայտնի են Կարմիր-բլուրից⁵ և հրատարակված են Հ. Քեների ուրարտական գոտիների կատալոգում⁶:

Բջջած զարդանախշերով գոտիները բաժանվում են երկու ենթախմբի՝ ձևած և շեղանկյուն բջջներով զարդարված նմուշների: Շեղանկյուն բջջները, որոնք ոճավորված կենաց ծառեր են, լինում են սրածայր և կլորացող զազարներով՝ դասավորված մեկ հորիզոնական շարքով: Պատկերները դասավորված են ինչպես բջջների մեջ, այնպես էլ բջջների զազարների միջև⁷: Հայտնի են կլորագուն զազարներով շեղանկյունաձև բջջներով շիրակյան երկու նմուշներ Անդրկանքայի թիվ 6 դամբարանից (նկ. 6) և Կարսի մարզի Զարիմ գյուղի գանձից (նկ. 7):

¹Տե՛ս Ավագյան Ի., Հակոբ Կարակյանի մի ենագիտական հավաքածուի մասին, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հայրապետական յոթերորդ գիտաժողով (ՇՊՄԺ ՎII), Գյումրի, 2007, էջ 34-40: Ավագյան Ի., Պատմահական գոտածների հավաքածու Լենինականից, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Հայաստանի Հայրապետության անկախության 15-ամյակին նվիրված հայրապետական զինուական նախաջանական կառավագանքի նյութերի ժողովածու, Գյումրի, 2007, էջ 155-159:

²Եսայան Ս. Սարդարական բրոնզու ոյքա Շիրակա և սա հովեա ուրարտական գոտիներու մասին, Հ. Վ. Գյումրի, 2002, էջ 91:

³Նոյն տեղում, էջ 91:

⁴Տեխով Բ. Կենտրալնայ Կավկազ ԽVI-X աւ. գո հ. թ., Մ., 1977, տր. 125, էջ 97-5:

⁵Պոլոտրովսկի Բ. Վանսկое պարտական Ուրարտու, Խոհեմարտու, Մ., 1959, տր. 112.

⁶Kellner H., Gertelbleche aus Urartu, Prähistorische Bronzefunde, Abteilung XII, Band 3, Franz steiner vergal, Stuttgart, 1991, tabl. 78-79/341, tabl. 72-73/283-285, 290, 292:

⁷Եսայան Ս., նշվ. աշխ., էջ 94:

Կարսի գոտին գտնվել է 1904թ., գոտու եզրանախշը նախշված է կետերով, որոնցից անջատվում են արմավազարդերը: Կենտրոնական զարդամուտիվը կազմված է երեք բջջներից, որոնցից վերինը և ստորինը կազմում են կիսաշրջաններ, կենտրոնական՝ ամբողջական բջջներում ձախից աջ պատկերված են՝ առաջին՝ աղեղը լարած և ծնկի վրա հենված նետաձիգ, երկրորդ՝ նետաձիգին ընդառաջ պացող թևավոր ձի, երրորդ՝ ոճավորված կենաց ծառ, չորրորդ՝ ցատկող առյուծ, մարդու զլուխ, երկրորդ՝ կենաց ծառ, երրորդ՝ թեավոր ձի, չորրորդ՝ թեավոր առյուծի զլուխ: Ներքին կիսաշրջանում ձախից աջ պատկերված են՝ առաջին՝ ցատկող ցույզ, երկրորդ՝ կենաց ծառ, երրորդ՝ թեավոր ձի, չորրորդ՝ թեավոր առյուծ: Գոտու աջ մասը զարդարում է ոճավորված կենաց ծառը, որի չորս ճյուղերը դասավորված են չորս շարքով, նմանօրինակ բարաշար դասավորություն ունի Սյունիների բանգարանի ուրարտական գոտիներից մեկը⁸ և մասնավոր հավաքածուներից մեկում հայտնված գոտին գտնվել է 1930թ. պեղումների ժամանակ, գոտու եզրագոտին զարդարված է ուռուցիկ կետերով և շրջանակներով, շեղանկյուն բջջները արված են զույգ փորագրված գծերով: Ինչպես Կարսի, այնպես էլ այս գոտին զարդարված է կետրոնական ամբողջական բջջների և վերին, ստորին կիսաշրջանների շարքերով: Սակայն գոտու բեկորային վիճակը թույլ չի տալիս լիարժեք բնույթագրել առասպեկտական պատկերները: Պահպանված վերին երկու և ստորին մեկ կիսաշրջաններում պատկերված են հինգ կամ յոթ շրջանակներից կազմված երեք փարզակներ: Կենտրոնական բջջների շարքի պահպանված հատվածներում պատկերված են ոճավորված անգաղոյութ՝ պոչի հատվածը թերի, թեավոր առյուծի մարմնով և զիշատիչ թռչնի զլուխ, թերի պահպանված ցլի զլուխ և ուոր, ցատկող առյուծի թերի մարմին՝ առանց զլյախ, և վազող ցույզ: Վերին կիսաշրջաններից մեկում պատկերված է ցատկող ձի, ստորինում՝ ցատկող առյուծ, մարդագույն, ձկան պոչով անգաղոյութ և ցատկող ձի: Գոտու աջ մասում է տեղափորված է կենաց ծառը, որը բաժանված է երեք ճյուղերի: Դրանք ունեն եռաշար դասավորվածություն: Նմանօրինակ կենաց ծառ և մարդագույն, ձկան պոչով անգաղոյութ ունեն անհատական հավաքածուներից մեկում տեղ գտած գոտին¹⁰ և Սյունիների բանգարանում պահպանված պատկերված գոտածներից մեկը¹¹:

Գոտիների չորրորդ խմբին է պատկանում Լենինական 22 հավաքածուի թիվ 11՝ լավ պահպանված ուրարտական բրոնզե գոտին ձախակողմյան թեկորը:¹² Գոտու (նկ. 1) կենտրոնական մասում պատկերված է վազող թեավոր անգաղոյութ:

⁸Kellner H., նշվ. աշխ., աղ. 59/224:

⁹Նոյն տեղում, աղ. 55/211:

¹⁰Նոյն տեղում, աղ. 54/206:

¹¹Նոյն տեղում, աղ. 57/221:

¹²Լենինականից հավաքածուի այս նմուշի հերթական համարն է 11, ոչ թէ 49, ինչպես նշված է թ. Խաչատրյանի «Ճրենքայ կուլտուրա Շիրակա Ա-ի տակ. գո հ. թ.», Եր., 1975, աշխատությունում, էջ 19 ծան. 71: Թ. Խաչատրյանի կողմից նշված № 49(ա) թոնդային համարով գոտին Հայաստանի պատմության բանադրանի մեջուղյա իրերի զետեղարանում է պահպում Շիրակից՝ Սպահադարյանի դամբարան, գոտին անհատական իրերի հավաքածուի մեջ և բերված է Հայոց ազգագրական ընկերությունից:

գրիֆոն, գիշատիչ թռչնի գլխավ և թևավոր առյուծի մարմնով¹³, ներգծված խաչով արևի սկավառակ և կենաց ծառ: Գոտիների որոշ մոտիվներում կենաց ծառին փոխարինում է մարդակերպ աստվածության պատկերը¹⁴: Անգղաղուծի պատկերում առանձնահատուկ ընդգծված են թերերի փետուրները, առջի և ետևի քաթերը, տնկած պոչը, վզի և իրանի վրա մանր շտրիխներով ընդգծված են մանր աղվավետուրները¹⁵: Դեմքի վրա ընդգծված են կոր աչքը և խոշոր ու կեր կտուցը: Ուշագրավ է ճակատից վիզը զնացող փոքր գծիկներով՝ աղվագիտուրներով, զարդարված բաշը, որի նմանօրինակները հայտնի են ուրարտական գոտիների կատալոգում հրատարակված թիվ 255 գրտու առյուծապոչ անգղաղուծի մոտիվը¹⁶: Անգղաղուծի նմանօրինակներն են Տիրի դամբարանադաշտի թիվ 40 դամբարանից Աղանայի բանգարանում պահպող գոտիների անգղաղուծները:

Ուրարտական գոտիների վոա պատկերված անգղաղուծները տարբեր վում են պոչերով, հանդիպում են 1. կարիծի պոչով¹⁷ 2. առյուծի պոչով¹⁸, 3. ձկան պոչով անգղաղուծներ¹⁹: Լենինականյան գրտու անգղաղուծի պոչը առյուծի է, նմանօրինակները հայտնի են Հայկական Լենաշխարիի ուրարտական բազմաթիվ գոտիների մոտիվներում: Անգղաղուծները ուրարտական արվեստում ծառայել են նաև որպես կահույրի, գահավորակի մաս²⁰:

Գոտու երեր կողմերում հավասար հեռավորության վրա անցքեր են արված, հավանաբար կաշվի կամ կտորի վրա կարելու համար²¹: Գոտու թեկորի վերին հատվածի եղրազարդը զարդարված է ոլորապտույտ զարդարուդով, որը բազմաթիվ գուգահերները տևանում են Նուզիից պեղված խեցանորների վրա, նաև ուշբրոնզիլարյան դամբարանադաշտերից հայտնաբերված խեցելենի և մետաղյա

¹³ Ս. Պետրոսյանը, գոտում է, որ գոտու կենտրոնական մասում կենաց ծառի և արնի սկավառակի աջ և ձախի կողմերում պատկերված են եղել գոյզ անգղաղուծներ, որոնցից պահպանվել է միայն մեկը: Պետրոսյան Ս., Գյումրիի պեղածող գրտու թիվը թվագրված է 1994, էջ 30-32: Պետրոսյան Ս., Գյումրու ուրարտական գրտու թեկորի մնանաքարերը, ԾՊՄ 7, էջ 43-50:

¹⁴ Kellner H., նշվ. աշխ., էջ 59, աղ. 62-63/240, 245, 246, 64/243, 244-65/241, 242:

¹⁵ Esayan C., նշվ. աշխ., էջ 101:

¹⁶ Kellner H., նշվ. աշխ., աղ. 67/255:

¹⁷ Նոյն տեղում, աղ. 68-69/266, աղ. 62-63/235:

¹⁸ Նոյն տեղում, աղ. 68-69/261, աղ. 62-63/235, աղ. 66-67/255:

¹⁹ Նոյն տեղում, աղ. 37/136, աղ. 68-69/266, աղ. 62-63/235, աղ. 66-67/251:

²⁰ Пиոտровский Б. Искусство Урарту, VIII-VI вв до н.э., А., 1962, стр. 45-51, к. 11-24: Խոյակյան Տ. The study of Urartian monuments in the republic of Armenia (1992-2007), in Արամած. Երևան, 2010, р. 17, табл. 9:

²¹ Լուսի-Քերդիլ միջին երկարի դարաշրջանով (Ք.ա. VII-VIդդ.) թվագրված, թիվ 2 դամբարանից հայտնի նշանավոր ոսկե դիարեմայի ականախույր, ծայրերին կաշվի կամ կտորի վրա կարելու նպատակով նույնական մանր անցքեր են արված, նաև Լուսի-Քերդիլ համաժամանակյան (Ք.ա. VII-VIդդ.) թ. 4 դամբարանից պեղված ականախույրի վրա, Դեսեդյան Ս. Լորս-ծերց, 1, Եր., 1981, էջ 64-65, 74, նիշ. 23 թ. 1, 23a, 24, 25) և ուրարտական արվեստին բնորոշ որոշ գոտիների եղրերին, Էսայան Ս., նշվ. աշխ., էջ 92-93, նիշ. 2-6, էջ 96-97, նիշ. 7-10, 12, էջ 100, նիշ. 16):

իրերի վրա: Ուրարտույտ գարդարույտի մտավոր կարելի է տեսնել նաև Լոնդոնի թանգարանում պահպող, Վանում պեղված ուրարտական վահանի բեկորի վրա և ուրարտական այլ հուշարձաններում: Գոտու թեկորի ներքին հատվածի եղրազարդը զարդարված է պտուղներով և արմավազարդերով, որը Բ.Կուֆիխինը գուգակցում է բեղոյնյան օրինակի հետ: Ըստ Ս. Եսայանի՝ այս գոտու արմավազարդերը որոշ նմանություն ունեն երերանի Խալդ աստծոն տաճարի և պալատի արմավազարդերի հետ²²: Գոտու զարդամուտիվը հաճախ ենք հանդիպում ուրարտական արվեստում: Հատուկ նշենք կենաց ծառի և արևի սկավառակի գուգակցումը, որը հաճախ է հանդիպում ուրարտական արվեստում, մեկ այլ դեսպրում կենաց ծառերի միջև է տեղադրվում արեգակի սկավառակը²³, սակայն մեր գոտու դեպրում գործ ունենք սակավ հանդիպող կենաց ծառի և վարդակի համադրության հետ, որը Բ.Պիտրովսկին նույնացնում է Կարմիր բլուրից հայտնի գոտուն²⁴. Կելերմեսից և Լիսոն դամբարանաբլուրից հայտնի ակխնակների ոսկե պատյանի կենաց ծառերին²⁵: Կենաց ծառի վրա պատկերված վարդակի նմանօրինակները թիվ են, մեր մոտիվին ունով նման է Բաղիշի երկրագիտական թանգարանում պահպող, Արևմտյան Հայաստանից հայտնի պատահական գոտածոյի կենաց ծառով և վարդակով մոտիվը²⁶: Ուրարտական ժամանակաշրջանով թվագրված ունավորված կենաց ծառերի մոտիվը դիտարկվում է նաև խեցելենի վրա: Կենաց ծառերով մարուր կավից կտրվածքում ուղղանկյունաձև բարձրորակ թթուումով կարմրագույն անթի կանք հայտնաբերվել է Շիրակում՝ Սև ամրոցի ուրարտական կատուցի պեղումներից: «Սև ամրոց» կանքի հիմնական մասում կան երեր դրաշմվածքներ (նիշ. 13), որոնք կատարված են նույն դրաշմիչով և ներկայացնում են փոքրիկ ուղղանկյունաձև, դաշտի մեջ առնվազ կենաց ծառի ռելիեֆ պատկերներ: Կենաց ծառի մեկ դրաշմակնիքը խեցանեկոր է պեղվել նաև Հոռոմի ամրոց-բնակատեղիում (նիշ. 11): Կենաց ծառի նմանատիպ պատկերումներ հայտնի են ուրարտական զարդամուտիվներից: Լենինականի գոտու և ստորին եղրազարդերի զարդանախշերը՝ ուղրապտույտ զարդարությունը, սրածարը պատուներով և արմավազարդերով դրասանզը նույնական է Կելերմեսից և Լիսոն դամբարանաբլուրից հայտնի ակխնակների ոսկե պատյանների վրայի զարդանախշերի, իսկ ուղրապտույտ զարդարությունը է նաև Կարմիր բլուրից հայտնի Արգիշտի 1-ի, Սարդուրի II-ի և Թոփրակակելից հայտնի մեռսա III-ի վահաններին²⁷: Արևի սկավառակով պատկերված և

²² Esayan C., նշվ. աշխ., էջ 101:

²³ Kellner H., նշվ. աշխ., աղ. 64-65/242:

²⁴ Բ.Պիտրովսկին գրում է, որ Կարմիր բլուրի գոտու վերջնամասում տեղափորված է երիգապատված խիստ ոճավորված կենաց ծառոր, նմանատիպ պատկեր կամ նաև Ասի-Պետրոսյանից հայտնի գոտու վահանաբլուրից հայտնի ակխնակների ոսկե պատկերները կամ կտորի վրայի զարդարությունը է նաև հայտնի բլուրի հետ, մոտական կողմանից լուսավորված արվեստի բնորոշը այն նմուշների հետ, որոնք ունեն հինարևելյան բնույթի տարրեր. Պիոտրովսկի Բ. Կարմիր Ելուր II, Եր., 1952, էջ 36-37, Պիոտրովսկի Բ. Վանսկու պատմություն, 1959, ստոր. 242, կ. 82, ստոր. 250, կ. 86-87):

²⁵ Պիոտրովսկի Բ., նշվ. աշխ., էջ 251:

²⁶ Kellner H., նշվ. աշխ., աղ. 64-65/241, 242:

²⁷ Պիոտրովսկի Բ., նշվ. աշխ., էջ 251-252; Esayan C., նշվ. աշխ., էջ 91:

սրածայր պտուղներով դեպի վերև ուղղված ճյուղերով կենաց ծառի նման պատկերներ մեծ թվով հանդիպում են ասուրատրարտական մշակույթի կնիքների մեջ: Այս գոտու բեկորը դասվում է չորրորդ՝ ծիսական տեսարաններով գոտիների խմբին: Ուսումնասիրելով Սյունինի թանգարանի գոտիների երկու բեկորները և Լուվրի գոտու բեկորը՝ Ս. Եսայանը եգրակացնում է, որ Լենինականի գոտու բեկորը դասվում է սակավ հանդիպող պատկերներով ուրարտական գոտիների թվին, որին նմանվում են Արևմտյան Հայաստանի տարածքից գոտնված նոր գոտածուները:

Ծիսական մոտիվներով են Սպանդարյանի դամբարանում պեղված գոտու բեկորները (ՀՊԴ 49ա), որոնք կրում են փորագիր կենդանակերպ և երկրաչափական նախշազարդեր (նկ. 5): Գոտին թվագրվում է Ք. ա. IX-VIII դդ.: Բրոնզե մեծ թիթեղից պատրաստած գոտիները կրում են իրենց զարդ, պաշտպանության միջոց և պաշտամունքի առարկա: Այս գոտիները առաջ են եկել ուշբրոնզիդարյան մշակույթի II փուլից ոչ շուտ և հարատել են մինչև ուշ ուրարտական ժամանակաշրջանը²⁸: 49ա բրոնզե գոտին ներկա վիճակում թերի է: Պահպանվել են վեց բեկորներ, որոնք կրում են փորագիր կենդանակերպ և երկրաչափական նախշազարդեր: Գոտին թվագրվում է Ք. ա. IX-VIII դդ. և չի դասվում Հ. Ա. Մարտիրոսյանի դասակարգած չորս խմբերից և ոչ մեկին²⁹: Ուշագրավ է բրոնզե գոտու մոտիվը: Գոտու երկու բերի բեկորների վրա պահպանվել են զայլերի/³⁰ ինձ պատկերներ, որոնցից ամբողջական են միայն երկուսը: Վերին ձախ կողմից զայլակերպ եակի երախը կիսարաց է, ունի թռչնի ճանկեր իիշեցնող ետևի ոտքեր և հազարութուկ իիշեցնող (ուրարտանշուրը ութ ճանկ) առջենի ոտքեր: Այս եակին ընդառաջ է զայլս երախը կիսարաց երկորդ զայլը, որի պոչը նման է կարիճի պոչի, այն ունի երկու ականջ և շորս թաթ, մինչդեռ առաջինը չունի ոչ պոչ, ոչ չականջներ: Սպանդարյանի գոտու վրա պատկերված անպոչ և անականջ կամ փոքր ականջներով առասպելական կենդանիների նմանօրինակներ են պատկերված Ծիրակավանի թիվ 10, 11 Ք. ա. IX-VIII դդ. թվագրվող դամբարաններում պեղված գոտիների մոտիվներում³¹: Թիվ 11 դամբարանից գոտու (նկ. 3) բեկորի վերին ժապավեններից մեկի վրա պատկերված է երևակայական անականջ կենդանիների շարք, իսկ ստորին ժապավեններից մեկի վրա՝ փոքր ականջներով կամ եղջյուրներով կենդանիների շարք: Թիվ 10 դամբարանից հայտնի գոտու (նկ. 2) գրեթե ամբողջական 13 երևակայական պատկերներից միայն մեկն է, որ պոչ չունի: Ուշագրավ են Սպանդարյանի գոտու իինձ զայլերի մարմինների վրա շրջանակների մեջ տեղադրված, ոճով տարբեր, հավասարաթիւ մալթյան խաչեր, որոնք հայտնի են Կանի թագավորության արվեստից, մասնավորապես Արտիսի Խալդիի տաճարի ներքին հարդարման խորաքանդակներից (նկ. 9, 10): Այս մոտիվը բազմիցս կրկնվում է Արևմտյան Հայաստանի տարածքից գոտնված ուրարտական գոտիների մոտիվներում, որոնց մի մա-

²⁸ Մարտիրոսյան Հ., Ուշբրոնզեարդարյան թանգավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հետազոտական հուշարձանները 2, Եր., 1969, էջ 32-33, աղ. XXVIII, աղ. XXXIX:

²⁹ Մարտիրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 33:

³⁰ Թորոսյան Ռ., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., Ծիրակավանի դամբարանները, ՊԲՀ, 2, Եր., 1980, էջ 273-277: Թորոսյան Ռ., Խելիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Ծիրակավան /1977-1981թթ. պեղումների արդյունքներ/, Եր., 2002, էջ 98, նկ. 13, 14:

որ այժմ պահպառ է անհատական հավաքածուներում, իսկ մյուսը՝ Մյունիենի ու Ադանայի թանգարաններում³¹: Առանց շրջանակների, նման հավասարաթիւ խաչեր են պատկերված Ծիրակավանի թիվ 10 դամբարանից պեղված գոտու երևակայական կենդանիներից մեկի մարմնի վերեռում՝ զիմից ձախ, կենդանիներից մեկի դիմաց՝ երկնային լուսատուի տակ, մյուս կենդանուն ընդառաջ թռչնի տակ և վերջին դեպքում՝ երկու հավասարաթիւ խաչեր են պատկերված երևակայական կենդանու իրանի եւնուում՝ պոչի մոտ: Ըստ Ս. Դեղյանի բանավոր հաղորդման՝ նման հավասարաթիւ խաչ է պատկերված Լոռի-Բերդի թիվ 49 դամբարանում պեղված բրոնզե բերի թիրեղի վրա: Մալթյան խաչից իր ոճով լրիվ տարբեր է Ցիի դամբարանադաշտից հայտնի, Ք. ա. XII-X դդ. թվագրվող, թիվ 76 դամբարանի բրոնզե գոտու խաչի մոտիվը³²: Մալթյան խաչերի մոտիվը մեզ հնարավորություն է տալիս դիտարկելու և ենթադրելու լաշեն-մեծամորյան գոտիների վրա ուրարտական արվեստի ունեցած մասին, մանավանդ որ այս տիպի խաչեր հանդիպում են նաև անտիկ շրջանում. օրինակ՝ նման հինգ խաչեր են դաշված Ք. ա. III-I դդ. թվագրվող, հունաբակտիրական մշակույթին պատկանող, Ղազախստի պետական թանգարանում պահպանվող արծաթե անոթի հատակին³³: Բացի մալթյան խաչերից, ուրարտական զարդարվեստի նշանավոր մոտիվներից են կարիճի պոչով օժուված առասպելական կենդանիները: Ուրարտական զարդարվեստի ցայտուն ազդեցություն է համարվում լաշեն-մեծամորյան գոտիների վրա հանդիպող մալթյան խաչի կարիճի պոչով առասպելական կակի համարությունը, ինչը հնարավորություն է տալիս նման զարդանախշերով գոտիները թվագրելու Ք. ա. IX-VIII դդ. և դասելու Ս. Եսայանի առաջարկած չորրարդ՝ ծիսական խմբին:

Ծիրակավանի գոտիների վրա պատկերված երևակայական կենդանիները առասպելական զայլեր են: Ինչ վերաբերում է Սպանդարյանի գոտու վրա կենտրոնում պատկերված անականջ և անպոչ առասպելական զայլանման կենդանուն (որի ետևի ոտքերը թռչնի ճանկեր են հիշեցնում, իսկ առջեկեր հազարություն՝ յուրաքանչյուրը ութ ճանկ, իսկ կենդանու իրանի վրայի մալթյան խաչը իր գեղարվեստական հարդարանքով տարբերվում է մյուս չորս զայլերի իրաների վրա եղած միանման խաչերից), կարող է նաև կիսաբաց երախով շուն լինել որը բոլիչի պատրաստ կանգնած է զայլի դիմաց: Այս դեպքում գրձ կունենածք առասպելական զայլի և առասպելական շան հակառակյան են, որը թվում է, թէ կարող է մի դրվագ հանդիսանալ լաշեն-մեծամորյան մշակույթում պատմվող առասպելից: Առասպելի եւրուունը և բոլվանդակարգությունը դեռ ուսումնասիրության կարիք ունի: Սակայն ուրարտական մոտիվների առկայությունը գոտու վրա թռւյլ է տալիս ցուցաբերել այլ մոտեցում և խոսել այսուեղ գոյություն ունեցող ուրարտա-

³¹ Kellner H., եշխ. աշխ., աղ. 14-15/64, 26-27/97-99, 28-29/100, 101, 102, 30-31/103, 52-53/193, լո 63 էջ. 19:


³² Техов Б., եշխ. աշխ., էջ 130:

³³ Тревер К. Памятники греко-бактрийского искусства. Памятники культуры искусства в собраниях Эрмитажа, I, М.-Л., 1940, стр. 110-111.

եթիունյան հակադրության մասին, որն արտահայտվում է գեղարվեստական մի դրվագի մեջ և ուսումնախրության անհրաժեշտություն է զգում³⁴:

Հետաքրքիր են երեք արծիվների պատկերները, որոնց թոփքը կարծեն հատուկ խոշնդրություն է գալիքի վազքը: Գոտու այս մոտիվին համահունչ է Շիրակավանի գոտու մոտիվը, որտեղ հավասարաթև խաչերից մեկի վերևում պատկերված թոշունը խոշնդրություն է գույնը եւ շրջած և երախը լայն բացած երևակայական կենդանու ընթացքը:

Միջնադարյան Հայաստանում արծիվը Գնումիների և Արծրունիների ու այդ տոհմերի մանուկների, ինչպես նաև Բյուզանդական Սակեղոնական արքայատոհմի խորհրդանշն ու հովանավորն էր³⁵: Ուրարտական շրջանում արծիվի կերպարանով է պատկերվել Արծիվինի աստվածությունը, որը Խալդիի սուրհանդակն է եղել³⁶: Շիրակում արծիվի զարդանախշով եղակի խեցաբեկոր է հայտնի Հայկաձորի ու շուրջառական ամրոցից (Խ. 12)³⁷: Գոտու կենդանակերպ երկու բեկորների մոտիվը կարելի է բաժանել երեք մասի, զայերով զարդարված վերին և ստորին համաշափ ժապավեններ և կենտրոնում գտնվող սրբագրծված տարածք (սակրալ դաշտ): Վերին և ստորին ժապավենների պահպանված մասերում զայլերն են և արծիվներից երկուսը, իսկ կենտրոնում սրբագրծված տարածքով պաշտպանված այծիկներն են: Սրբագրծված տարածքը թերի է, ոչ ամբողջական, և երեսում են միայն երեք այծիկներ: Սրբագրծված տարածքից դուրս, այծերի վազքին ընդառաջ, իր թռիչքն է ուղղել արծիվներից երրորդը: Տպավորություն է ստեղծվում, թե արծիվները պահպանում են սրբագրծված տարածքը, որը երփշված է եռաշար ձևածիր զարդանախշով լցված ուղղանկյունով: Գոտու պատկերների ոճավորումը առաձգական է, նկատելի է շարժում պատկերելու ձգուումը: Գոտու վեց բեկորներից չորսի վրա պահպանվել են թերի երկու մեծ եռանկյուններ, որոնք զարդարված են երկրաշափական զանազան զարդանախշերով, պարզունակ և բարդ փորազիր զարդերով՝ մեծ և փոքր եռանկյուններ, մեծ և փոքր բեկյալներ, բոլորանախշեր, շրջանակներ, ալիքաձև պատկերներ, եռաշար ձևածեն զարդանախշ: Գոտու զարդարված մակերեսը բարձրված է ալիքաձև պատկերներ հիշեցնող եզրանախշերով: Անշափ ուշագրավ է գոտու ձախ եռանկյուն զագաբը, որտեղ իրար միացող բոլորանախշերը ուղղված են դեպի սրբագրծված տարածք: Կենաց ծախի և սրբագրծված տարածքի միջև է ընկած թոշող արծիվը:




³⁴ Տիրացյան Գ., Արեշյան Գ., Հետաքիւթյունը և Ուրարտու-Հայաստան պրոցեսը, ՊԲՀ, 1990, հ.3, էջ 72: Հմայակյան Ս., Ուրարտական պետության և մշակույթի ձևավորման խնդրի շարք, Հայաստանի հետազոտական հուշարձանները 16, Ուրարտական հուշարձաններ, պյալ 3, Երև., 1995, էջ 105-106:

³⁵ Համեմատենք Ք.ա. II-I դդ. թվագրված հունաբակտրիական ասկենազործություններից մեկի մոտիվի հետ, որտեղ թեկող բացած արձվին ընդառաջ՝ ծայրիկից դրվու է զալիս մերկ երեխա-զինվորը: ԹրեՅեր Կ., Եղվաշխ., Էջ 145:


³⁶ Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 58-60:

³⁷ Խաչատրյան Հ., Հայկաձորի բնակավայրի 2010թ. պեղումների նախնական արդյունքները, ՀՀ ԳԱԱ ԸՆՆ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Խ. XIII, Եր., 2010, էջ 123:


10




11





12



13





Այս մեծ եռանկյունիների ավելի պարզունակ զարդանախներով նմանօրինակները հայտնի են վաղ երկարի դարով (Ք.ա. XI դ. վերջ - X դ.) թվազրվող Հաղպատի և Ստեփանավանի դամբարաններից հայտնի բրոնզէ գոտիների մոտիվներում³⁸: Առասպելական զայլերի մոտիվի նմանօրինակներից երկրորդը վերջերս հայտնաբերվել է Շիրակավանի դամբարանադաշտից մեկ այլ գոտու վրա³⁹ և թվագրվում է Ք.ա. IX-VIII դդ., սակայն այս զայլերի պոչերը տարբերվում են մեր գոտու զայլերի պոչերից, դրանք առյուծապոշ են: Հայաստանում և Այսրկովիասում գտնված բրոնզէ գոտիների վրա երբեմն լինում են միջանցիկ փոքրիկ անցքեր, որոնք ծառայել են գոտին կապելու կամ ամրացնելու համար: Սակայն Շիրակավանի թիվ 10 և 11 դամբարանների գոտիները և Սպանդարյանի գոտին այդպիսի անցքեր չունեն և հավանաբար օգտագործվել են բնիկներին հայտնի հատուկ եղանակներով: Ինչ վերաբերում է առասպելական զայլերի պաշտամոնքին, ապա Շիրակում զայլի պաշտամոնքի արմատները ավելի խորն են և հասնում են մինչև վաղբրոնզիդարյան մշակույթ: Այդ է վկայում Մեծ Սեպասար հուշարձանում պեղված զայլի պաշտամոնքային տաճարը, որը թվազրվում է Ք.ա. XXVIII-XXVI դդ.⁴⁰:

О МОТИВАХ УРАРТСКИХ ПОЯСОВ, РАСКОПАННЫХ В ШИРАКЕ

Резюме

Во время раскопок на территории исторического Ширака были раскопаны разновременные бронзовые пояса, среди которых важное значение имеют урартские и датируются VIII-VI вв. до Р.Х. Урартские пояса делятся на пять групп. Ширакские пояса относятся к первой-с геометрическим орнаментом, ко второй-с ромбовидными ячейками и к третьей группе-с культовыми мотивами. К первой группе относятся два пояса из Лепинакана.

В четвертую группу с культовыми сценами можно включить фрагмент пояса с крылатым грифоном, деревом жизни и солнечным диском-ном, 11 из коллекции Лепинакан 22 (МИ). К четвертой группе можно отнести обломки пояса (VIII-VI вв. до Р.Х.) из погребения, раскопанного в селе Спандарян (МИ, 49а), которые украшены гравированным геометрическим орнаментом и фантастическими животными.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավագյան Բնակ Էդուարդի - ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: inga.avagyan.76@mail.ru

³⁸ Սարգսիսյան Հ., նշվ. աշխ., աղ. XXXVIII, նկ. 1, 4, 184, էջ 137, նկ. 2, էջ 161, հի. 65:


³⁹ Նյութերը պահպում են Շէմֆում և երաժարակվել են «Շիրակը մշակույթի օրրան» կատալոգում, Խաչատրյան Հ., Եղանյան Ե., Եր., 2013, թիվ 165, էջ 68-69:

⁴⁰ Տէ և Եղանյան Լ., Մեծ Սեպասարի վրա սրբարանի կառուցման դիցարանական հենքը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.ХIII, Եր., 2010, էջ 5-11:

Մարզիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԻԾԱԳՐԵՐ» - ԺԱՅՈՒՊԱՏՎԵՐՆԵՐԸ ՔԱՐԱՅԾԻ ԵՎ ԴԻՑԱՅԾԻ
ՊԱՇԱՍՈՒՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայ ժողովրդական հանելուկների մի մասը գալիս է վաղնջական ժամանակներից: Դրանցից մի քանիսը վերաբերում են Հայոց բարձր լեռների ժայռերին փորագրված «փծագրեր»-ին («այծագրեր»՝ մ.թ.ա. VII-II հազարամյակներում ստեղծված ժայռապատկերներին):¹ Անա այդ հանելուկներից մեկը. «Սիվուակ կող, Մ/ն իծան մեջ կարածան»:² Թեպետև այս հանելուկն ակնկալում է «քուղը և զիր» պատասխանը, բայց շատ ավելի ուշ երևան եկած բղդի համարժեքը հանելուկի բանաձևում, ինչպես տևանում ենք, կող-ն է՝ լեռն կողը, իսկ նույնաբնույթ մյուս հանելուկներում՝ լեռները, պայիրը («զառիվայր»), դարը («գլուր»), փլերը («բլրակներ»): Այս բարերը կասկածի տեղ չեն թղթում, որ հանելուկներում հիշված «փծան»-ը՝ «զրեր»-ը, վերաբերում են ժայռապատկերներին: Ընդ որում, այդպիսի հանելուկների համահայկական բնույթի վկան դրանց գրառման վայրերի աշխարհագրույթունն է՝ Ալաշկերտ, Արցախ, Զեյթուն, Խարբերդ, Խոտքուր, Կեսարիա, Պարսպատունիք (Պարադա), Վաղարշապատ, Վան: ³ Ինչպես վերոբերյալ հանելուկը, այնպես էլ ներքոբերյալ ուրիշ մի շաբաթ տվյալներ ցույց են տալիս, որ հանելուկներում տառերն՝ «փծան» («այծեր»), իսկ ժայռապատկերներն՝ «փծագրեր» կոչվելու պատճառը մեր հեռավոր նախների մտածելակերպում «այծ» և «զիր» հասկացույթների սերտածած լինելու մեջ է: Իսկ թե ինչու են առաջին հայացրից անհարիք այդ հասկացույթները կապի մեջ դրվել ու սերտածել, կփորձենք ցույց տալ եղած տվյալների վերլուծության միջոցով՝ սկսելով այծի (բարայի) առասպելարանական կերպարից:



Նկ. 1 Միջոցով՝ սկսելով այծի (բարայի) առասպելարանական կերպարից:

Այծի առասպելարանական կերպարը ձեավորվել է վաղ նախնադարում: Սայր այծերը սովորաբար երկվորյակ ուլիկներ են ծնում: Այս հանգամանքը պատ-

¹ Կարախանյան Գ., Ժայռապատկերներ, «Հայկական սովորական հանրագիտարան», հ. IV, Եր., 1978, էջ 277: Դրանք տարածված են «մինչև Հայկական Տավրոսի լանջերը, մինչև Ասորի-Պաղեսափիի ու Գրաքի սահմանները» (Մարտիրոսյան Հ., Գիտություններ սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 9): «Փծագրերին» ծնունդ տված այս տարածքը հնդեվրոպական ցեղերի նախահայրներն են, այն նույն տարածքը «Փոքր Ասիայից մինչև Միջագետը և պատմական Գրան»: Երտեղ մ.թ.ա. IX-VIII հազարամյակներում տեղի է ունեցել վայրի այծի բնուելացումը (Ղամքրելց Տ. Խանով Բ. Հնդօւրուպեյսկի լեզու և այլունանակ ԱՅԱ, տ. I-II, ԵԲ, 1984, տ. II, ստ. 588):

² Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 178: Նույնը:

ճառ է դարձել, որ հակադրամիասնության մեջ ըմբռնված բնական երևոյթները առասպելարանական մարմանպրում ստանան նաև ի դեմք սպիտակ և սև այծերի: Այսպիսով, նրանք դարձել են խորհրդանշները լուսի և խավարի, ցերեկվա և զիշերվա, Լուս (Այս՝ Կենդանի եակների) աշխարհի և Սուրբ (Այն՝ Անդրշիրիմյան) աշխարհի, արևային և ամպրոպային երևոյթների և այլն (նկ. 1):⁴ Արժախյան հերիաթներից մեկում հանդիպում ենք Լուս և Սուրբ աշխարհները խորհրդանշող այծերի վաղագույն կերպարներին: Խոր հորում հայտնված հերիաթային հերոսին խորհրդանշ են տալիս: «Խոր կը թիսնաս էսիինչ տը եղը մին ախապուր կա, մին սն էծ, մինօյել մին սիստակ էծ միշտ կյամ ըն էս ախապրան ճուր խմում, լոր կըստան եր ինիս էտ սիստակ էծին մաշկեն նստես, քեզ տուս ա ուննական լուս ախշարքը, իսկ վրեր շիլ ինզիլի սև էծին մաշկեն նստեցեր, տուս ա ուննական ավելի մթեն ախշարք»:⁵ Հիշատակված աղբյուրը համապատասխանում է առասպելարանական այն գետին, որը միմյանցից սահմանազատում էր Լուս (Կենդանի եակների) և Սուրբ (Մեռայների, Անդրշիրիմյան) աշխարհները, իսկ սպիտակ և սև այծերը խորհրդանշներն են այդ հակադիր աշխարհների:

Այժմ առասպելարանական կերպարի լուսավոր և խավար երևոյթների խորհրդանշաներ ծառայելու երևոյթին արդեն առկա է ժայռապատկերներում: Ինչպես Հ. Սարտիրոսյանն է նշում, դրանցում այծապատկերները փոխարինում են արևապատկերներին և արևի խորհրդանշաներին:⁶ Որ այդ երևոյթը հնդեվրոպական ժողովուրդների նախնիներին բնորոշ է եղել ի սկզբանե, կարելի է կոսին հետևյալից: Վաղ հ.-ե. DY արմատից են ծագում հայ. *տիկ*, *տկճոր*, *պարկապուկ* <*«այծ»> և *տիւ* «ցերեկ», *օրվա լուս մասը» բառերը:⁷ Սրանցից առաջինի արմատակիցներից և իմաստակիցներից են հուն. *λαկոն*, δίξα «այծ», իին բարձր գերմ. *zige* «այծ», *zickē* «ուլ», անզ. սարս *ticcen* «այծիկ» բառերը,⁸ որոնց շարքը պետք է դասել նաև հայ բարբառային տրլեզալ բառի * *տիր* արմատը (տիկ < DY +^g ածական, **տիր* < DY+r ածական): *Տրլնգալ* < **տիր-լնգալ* նշանակում է*

(ոստոսատել, ցատկուտել»)⁹ և որպես երկրորդ բաղադրիչ ունի *լնգալ/լնզլեզալ* «խախուտ դրված լինելով շարժվել, խրխրալ, այս ու այն կողմ խաղալ» բառը:¹⁰

Վաղ հ.-ե. DY արմատից ծագած հայ. *տիւ* բառի արմատակիցներից և իմաստակիցներից են հին հնդկ. *divasa-* «օր, ցերեկ» հուն. ε'-ն-ծիօς «օր» լատին *dies* «օր», բայց նաև հին հնդկ. ծյանձ «օր, երկինք», ճենա «աստված», հուն. Ζεύς, Διός «Զես, աստված», լատին. *Deus* «Աստված» և այլն բառերը:¹¹

Այժմ առասպելարանական կերպարն է, որ հազարամյակների ճանապարհ անցնելով և սրբազն գրերի հետ ունեցած իր կապը պահպանելով՝ տեղ է գտել Կանք Այգեստան քաղամասի հարեանությամբ գտնված եկեղեցու *Քոշահան* Ար Աստվածածին անունը բացատրող ավանդագրույթում: Ըստ դրա՝ եկեղեցու պահպանվող Ար գիրքը բաղված տեղից հայտնաբերել էր բռշը՝ արու այծը:¹²

Ժայռապատկերներում այծը հանդես է զալիս նաև ամպրոպային երևոյթների խորհրդանշիչ դերում¹³ և Մեռյաների աշխարհի հետ ունեցած կապի մեջ: Ինչպես U. Արքահամյանն է նշում, այս դեպքում այծն «ունեցել է նաև մողական նշանակություն, երան պաշտամունքը կապված է եղել անդրշիրիմյան կյանքի պատկերացումների հետ»:¹⁴ Պատահական չէ, որ հետագա հայկական հավատալիքներում այծին՝ սև այժմին առնչված (անզամ նույնացված) ենք տեսնում սատանային: Այդպես է, օրինակ, «այծ» պատասխանն ակնկալող «սատանեն զիաց, բամբը մնաց» հանկըրւկում¹⁵, մի շարք առածներում (զրի առնված Աշտարակում, Թիֆլիսում, Շիրակում, Վանում)¹⁶, ժողովրդական հերիաթներում և «Սասնա ծուեր» դյուցագնավեպում:

Ժայռապատկերների այծերի բազմաթիվ ու բազմազան լինելը պայմանավորված է լինելու ոչ միայն նրանց տեսական նշանակությամբ ու պաշտամունքով, այլև վերջինս իրականացնալով, նախնադարյան բրիդ մասին զոյություն ունեցած առասպելարանական պատկերացումներով: Գոնի ծիսական արարողություններում բուրմը ուղարկի այծ կամ այծամարդ էր ըմբռնվելու: Ըստ այսմ, քրիստոն հայի պատկերացումներում անզամ նոր ժամանակների հոգևորականի (մահմեղական, թե քրիստոնյա) կերպարը համադրված էր մնում այծի առասպելարանական կերպարին: Դրա արտացոլումներն են առկա հազվագյուտ տրված բառում և ժողովրդական հանելուկներում: *Տրկան* նշանակում է «մոլլայի կար-

⁴ Սարտիրոսյան Հ., Բարյելյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. 6, Ժայռապատկերներ, պրակ Ա., Եր., 1971, աղ. 330: Պետրոսյան Ա., Երկգոյե-երկինքը տիեզերքի մասին առասպելարանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում, «Լրաբեր հասարակական զիտությունների», 1991, թիվ 2, էջ 126-127: Նոյնիւ Հնագոյն Հայաստանի գյուղավոր ատուֆածությունների շուրջ, «Հայաստանի հեղողական հանդես» թիվ 2, Եր., 2003, էջ 125-133:

⁵ «Հայ ժամուղյական հերիաթներ», հ. VII, Եր., 1979, էջ 13: Արցախյան ուրիշ երկու հերիաթներում գոյց այծերի փոխարքեն գոյց հակամարտ խոյեր կամ ոչխարներ են (Դույն տեղում, հ. V, Եր., 1966, էջ 21, 271-272), բայց նախնականը այծերն էին ինեւու:

⁶ Սարտիրոսյան Հ., Բարյելյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, աղ. 298, 302:

⁷ Անդրեև Հ., Բանհենդօքրոպելյան պրայզ, Մ., 1986, ստր. 87.

⁸ Ամաղան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 405:

⁹ Սալլահայան Ա., Հայերեն բացառության բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. IV, Եր., 1945, էջ 448: Հմմուտ. Նոյն տիյր «այծ» արմատը պարունակող տրտիկ, տրտինկ «զորությանների ուրախ-ուրախ ցատկուելը, խաղալը, խայտալը» բառերը: (Նոյն տեղում հ. IV, էջ 449):

¹⁰ ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 205:

¹¹ ՀԱԲ, հ. IV, էջ 410:

¹² Ղանայական Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 245:

¹³ Եղջերավոր խոտակեր կենացաների և ամպրոպային երևոյթների միջև ստեղծված առասպելարանական կապի վերաբերյալ տու և Ա. Արեգակ, Երկիր, հ. VII, Եր., 1975, էջ 66:

¹⁴ Արքահամյան Ա., Նախարարական պատկերացումներում: Գոնի ծիսական արարողություններում բուրմը ուղարկած էր կամ այծամարդ էր ըմբռնվելու: Ըստ այսմ, քրիստոն հայի պատկերացումներում անզամ նոր ժամանակների հոգևորականի (մահմեղական, թե քրիստոնյա) կերպարը համադրված էր մնում այծի առասպելարանական կերպարին: Դրա արտացոլումներն են առկա հազվագյուտ տրված բառում և ժողովրդական հանելուկներում: Տրկան նշանակում է «մոլլայի կար-

¹⁵ Հարությունյան Ա., Երկը, աշխատ, էջ 57:

¹⁶ Ղանայական Ա., Առածակի, Եր., 1960, էջ 291, 295:

դացած առավոտյան աղորքը՝ մզկիթի աշտարակից»:¹⁷ Հավաստի սոսուզաբանություն չունեցող հայերեն այս բառը կարելի է կազմված համարել տիր-վան բաղադրիչներից, որոնցից առաջինը *տիր «այծ» բառն է, իսկ երկրորդը ըստ երևույթին առնչվում է վանկ/վանց «հնչյուն, ձայն» բառին, հմմտ. միջ. պարս. vāng «ձայն, սպադակ», մանավանդ նրան հանգող բրդ. vanek, զազա. veng «ձայն ապադակ, մուեզզինի կոչը»:¹⁸ «Քահանա և բեմ» պատասխանն էլ ակնկալող հանելուկում ասվում է. «Սարին վրա ածը (այծ) կը մըկրկա»:¹⁹ «Սարին վերեն մարդ մը կայնի, որ զրուցի՝ մարդ չի, որ բարոցի՝ վարդապետ չի» հանելուկը թեև ակնկալում է «գրակալ» պատասխանը,²⁰ բայց սա, ինչպես ցույց է տալիս սար բառը, վերիմաստավորված պատասխան է: Նախապես հանելուկը վերաբերել է բարայծին: Հանելուկերում սարը համարձերն է բարձրադիր խորանի և բեմ (հմմտ. մզկիթի աշտարակը), Ար զիրքն ընթերցող ու բարօղող հոգենորականը՝ սարի վրա մըկրկացող այծի (հմմտ. տրվան կարդացող մոլլան), իսկ բարձրադիր Ար զիրքն է՝ հնագույն սուրբ զրերի «հծագրեր»-ի: Ներանու հայերի Տիր կամ Տիրը կոչված աստվածության անուններն ստուգաբանած են. Աղայանը դրանք համարում է արմատակիցները իին հնդկ. dyāus «օր, երկինք», dēvā «աստված», հուն. Ζεύς, Διός «Զես աստված», լատին. Deus «Աստված» բառերի,²¹ իսկ դրանք հանգում են վադինդեվրոպական DY արմատին, որից են ծագում հայ. տիր «օրվա լուս մասը, ցերեկ» *տիր «այծ» և տիկ «տիկ, տկճոր», «պարկապուկ» («այծ») բառերը: Մեր խորին համոզմամբ, սպիտակ և սև առասպելաբանական հակոտնյա երկվորյակ այծերի նախատիպերի վրա են ձեավորվել Տիր/Տիր և Տարք կոչված աստվածությունները: Կաղինդեվրոպական DY արմատից ծագած Տիր և Տիր դիցանուններում առկա է միևնույն թաճականը (հմմտ. բարձ-ր, բանձ-ր, մաճ-ր, մեժ-ր, փոր-ր), բայց առաջինն ունի «զրուսավոր (աստված)», երկրորդը՝ «այծ (աստված)» իմաստները: Տյուր/Տիր դիցային պիտի առանձնացնել ենուազայում նրան համարյած իրանական Տիր (<ավեստ. Tīstṛya) աստվածությունից, որը Tīstṛya աստորի (Միրուս, Շնիկ) անձնավորում աստվածությունն էր: Արա անունն էր կրում իին իրանցիների տումարի չորրորդ ամրաք (հմմտ. պարսից արեգակնային տումարի չորրորդ ամսի թիր և հայոց իին տումարի չորրորդ ամսի Տրէ անունները):²²

Ըստ Ազգաբանակենսի՝ Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը, իրքն թե, հայոց հեթանոսական մեհյանները կործանելիս Երազամուն վայրում էին «դիպեալ ի ճանապարհի երազացոյց, երազահան Տիր դից, դպրի զիտութեան

¹⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 439-440:

¹⁸ Խոյն տեղում, էջ 304:

¹⁹ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 88: Հմմտ. նաև «Մազր թէ զորություն ունենա, էջը մարգարե կը յինք» արածը (Ղանձական Ս., Առածանի, էջ 191): Ըստ երևույթին, ժամանակին զորություն են տեսեցի սպիտակ այծ/հայ հոգենորական և սև այծ/օտար հոգենորական («մոլլա» համարյունները):

²⁰ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 181:

²¹ Աղայան Է., Բառարննական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 148-150:

²² ՀԱԲ, հ. IV, էջ 435:

բրմաց անուանեալ դիւան գրչի Որմզդի...»²³: Երազահան և Երազացոյց բառերը Տիրին բնութագրում են որպես ընի և երազմերի աստծու (հմմտ. Նոր Նախիջևանում այժեղը գալ բառակապակցության «քունը տանելը» նշանակությունը):²⁴ Տիրի կրած Գրիշ մակոմիրը համարձերն է Գրադ «զիր անոտ» մակոմիրի: Երանց առնչվում են նաև ոզիների աշխարիի հետ կապված այնպիսի մի երևույթի, ինչպիսին է զրբացությունը («քուլը ու զիր» անելը): Առասպելաբանական այծը նախատիպ ունեցած Տիրի Գրող մակոմիրը այսօր է գործածական է «շարք» նշանակությամբ (հմմտ. «Գրողի բաժին դառնաս», «Գնա՛ գրողի ծոցը» և նոյնարնույթ ուրիշ մի շարք անեծքները):

Տիրի՝ հոգեառ զործառությը քրիստոնյա հայերի ժողովրդական հավատալիքներում հատկացվել է աստվածաշնչային Գարբիել հրեշտակին:²⁵ Ժողովրդական հերիաքներից մեկում ասվում է. «Տղեն էր իծու փոսա քաշեց վրշեց վրեն, քառսուն հատ զանգուլակ կախեց վզեն, եղակ Գարբիել հրեշտակ»:²⁶ Թէ ինչու ժողովրդական հավատալիքներում աստվածաշնչային կերպարներից հոգեհանության հետ կապ չունեցող Գարբիել հրեշտակապետին է հատկացվել հոգեառի պաշտոնը, թերևս պետք է բացատրել սրա անվան հետո մեր հեթանոսական հոգեառ աստվածության Տիրի կրած և «այծ» նշանակող մակոմիրի հեցունական նմանությամբ (հմմտ. մեր Տիրը և Տիր դիցանունների իրանական Տիր դիցանավան հետ ունեցած նմանության պատճառով դրանք կրած աստվածությունների նույնացման երևույթը): Այս դեպքում մենք ի նկատի ենք առել հնդեվրոպական լեզուներում «արուայծ» նշանակող այնպիսի բառերի զորությունը, ինչպիսիք են լատին. eaper, հին իոլ. gabor, վալ. gaſr, հին խլ. haſr, հին անզլ. hæſer արմատակից բառերը:²⁷ Կարծում ենք, թէ նոյն հնդեվրոպական արմատն է առկա միջնադարյան Սյունիքի Վասակ իշխանի Գարսու մականվան (վերջածանցի համար հմմտ. ծակ-ուռ, ճապուռ, մամ-ուռ, ջաջ-ուռ), Մեծ Հայրի Գարսու դաշտա («*Գար-առ հմմտ. գաւ-առ, խոշ-առ, կոր-առ, պայծ-առ» տեղանվան մեջ և Գարիքեան («*Գար-իր-եան» ու Գարեղեաներ («*Գար-եղ-եան-ը» զավարանուններում):²⁸

Ազգաբանգեղոսի վերահիշալ հարորդման մեջ առկա դպրի զիտութեան բրմաց բառակապակցությունը չի կարող վերաբերել միայն սև այծը նախատիպ ունեցած աստվածությանը, այլ նաև առասպելաբանական սպիտակ այծը նախատիպ ունեցած աստվածությանը, որովհետև դպրությունն ու զիտությունն են մտավոր լուսավարությունն են: Բնի դիւան գրչի Որմզդի բառակապակցության մեջ առկա Որմիզդ դիցանունը, որը իին իրանական Անուրամազդա աստծու անվան միջին պարսկերենից (պահլավերեն) եկած մի ձև է, վկայում է Երազամունի մե-

²³ Ազգաբանգեղոսի պատմութիւն Հայոց, Եր., 1983, ՁՀ. 778:

²⁴ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 170:

²⁵ Արեւյան Ս., նշվ. աշխ., հ. VII, էջ 22:

²⁶ «Հայ ժողովրդական հերիաքներ», հ. IX, Եր., 1968, էջ 106: Տիւնակ նաև հ. I, Եր., 1959, էջ 500, 512-513 և այլն:

²⁷ ԻԱԻ, թ. II, սրբ., 515, որ. 2, սրբ. 586.

²⁸ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 46, 51, 109, 110:

յանում նաև իրանական Տիր առտվածության պաշտամունքի գոյության և կրոնական սինկրետիզմի և մեկ դրսուրման մասին:

Առասպելաբանական սպիտակ և սև երկվորյակ այծերի մարդատիայ ժառանգորդները՝ Տյուր/Տիր և Տորք հակուռնյա աստվածությունները, այդուհանդերձ, համագործակցել էին «փծագրեր»-ժայռապատկերներն ստեղծելիս: Արդայիս համագործակցության դեպքեր կան նաև այլ երկվորյակ եղայրների դեպքում: Իրանական լուսավոր Ահուրամազդան (Որմիզդ) և Խավարամած Ահրիմանը (Ահրմն) միասին էին ստեղծել արեւը, հոռմեական չոռուուսն ու չումուս միասին էին հիմնադրել Հոռմը, մեր Սանասարն ու Բաղրասարը միասին էին հիմնադրել Սասնա բերդը: Գիրը՝ այս դեպքում «փծագրեր»-ը, ըմբռնվում էր Այս՝ Կենանի Էտիների աշխարհը, Այն՝ Մերայների աշխարհին, անցյալը ներկային կամքջող երեսությունը, ուստի երա ստեղծման գործում մեր նախնիները մասնակից են դարձրել այդ հակուռնյա աշխարհներն ու երեսւյները խորհրդանշող սպիտակ և սև այծերի առասպելաբանական փոխանարդ դիցայծերին միաժամանակ, համատեղ:

«Այծ» (սև այծ) և «գիր» հասկացությունների առասպելաբանական-իմաստաբանական կապն արտացոլված ենք տեսանում Անգելյան Տորքի մասին առասպելում: Այն, Սովուն Խորենացու համաձայն, Տորքն էր «այր խոտոռազեղ և բարձր և կոպտաբանձ և տափակաքիթ, խորակն էր դժմահայեաց», «վիրխարի հասակաւ եւ ուժով», նա կարող էր «գուրուն հարկանել զորձաքար վիմաց, ուր ոչ գոյր գեզուրին, եւ ճեղքել ըստ կամաց... եւ քերել եղնօսամբն և կազմել որպէս տախտակ և գրել նոյնական եղնօսամբ իւրով արծուիս եւ այլ այսպիսիս»:²⁹ Տորքի կապը ժայռապատկերների հետ նկատած Ա. Ղանալանիանը գրում է, «...ժայռապատկերները, մեր կարծիքով, ավանդական Տորքին վերագրված քարարվեստի ամբողինակ նմուշներից են, որն այնքան տարածված ու ծաղկած է եղել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների մոտ»:³⁰ Կարծում ենք՝ այս դեպքում պատճառը «այծ» և «փորագրություն, գիր» հասկացությունները առասպեկական հոկա այծամարդու կամ դիցայծի կերպարում համատեղված լինելու մեջ է: Եթե վիպական հոկա Տորքի առասպելաբանական նախատիպը արդախին ըմբռնված չլիներ, ապա Տորքը օժուված չէր լինի այնպիսի պինդ եղունգներով, որոնցով ժայռաբեկորներ էր հղուում և դրանց վրա տարբեր պատկերներ փորագրում: Ուրեմն նրա ամենավաղ և բնական նախատիպը եղել է պինդ կճղակներ (կճղակ կոչվում է «չորրոտանիների ոտքի եղունգ»):³¹ ունեցող ժայռաքանիքը՝ սև այծը: «Փորագրություն, գիր» և «այծ» հասկացությունների առասպելաբանական-իմաստաբանական կապի մասին են խոսում և մատ ու

²⁹ Սովունի Խորենացու պատմութիւն Հայոց, Եր., 1981, գիրք I, գլ. թ: Քեր արմատը նշանակում է «քերած կամ զրած բան» (քեր «եւ-եւ՝ տցը-ցը»՝ «կտրել, ճեղքել»), որից քերել բայց նաև «փորագրել, բանդակել» հշանակությունները: Նոյն արմատից ունենք քերական «քերականաւութ, քերագր», «քերածութ, քերածութ, քերագրութ» բառը (ՀԱԲ, հ. IV, էջ 570-571): Հմմուն: «Քերոր-նկարակերպ, կտմ հայշ» և «Քերդա-գրագիր» («Քատդիր հայոց», Քենական բնագիրը, առաջարանք և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Եր., 1975, էջ 333):

³⁰ Ղանալանիան Ա., Ավանդապատում, էջ 45ութ:

³¹ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 604:

եղունգի միջնորդական դերը դրանում բացահայտում հետևյալ տվյալները: «Մատներ» պատասխանն ակնկալող հնագույն հանելուկներից մեկում ասվում է: «Դու հորանք տասը էծ ունին, տասի ճակատն էլ պիծիկ (պիսակավոր) ա»:³² Այսուղեղ առկա են ինչպես «մատներ» և «այծեր», այնպէս էլ «մատի եղունգ» և «այծի պիսակավոր ճակատ» առասպելաբանական համարդումները, իսկ հայերեն եղունգն բառը գործածվել է նաև փորագրող գործիքի համար «քանդակագործի գրիչ»³³ Քանի որ կճղակը «չորրոտանիների ոտքի եղունգն» էր, իսկ այծը առասպելաբանութեն կարող էր համարվել սատանային (հմմտ. սև այծ և սև սատանա): Ապա հասկանալի է, որ այժմ կճղակը կարող էր ընկալվել ինչպես այծի, այնպէս է սատանայի եղունգ: Որ հենց այդպէս է եղել է, ցույց է տալիս օրինիանի (վանակատ) ժողովրդական սասաւելի եղունգ անվանումը:

Ս. Մալիսասյանից «Բացատրական բառարան»-ում կարդում ենք. «Մատնի եղունգ: 1. Սև գալլախազ (որով իբր թէ Կայենը սպանել է Արելին): 2. Մի տեսակ սև քար, որից շիշեր են պատրաստում: 3. Սև շիշի կարք, որի վրա բքելով լին են ձգում (իբրև սատանի քար):»:³⁴ Հրաբիսային ծագումով վանակատի խոշոր կուտակումներ կան Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում: Դրանցից մեկը Արագածի լանջի Արտին լեռան հանքավայրն է: Վանակատը, ինչ քարի դարից սկսած, մարդու կողմից կիրառվել է կտրող և հատող աշխատանքային գործիքներ, իսկ հետագայում նաև նիզակների և նետերի ծայրականներ պատրաստելու համար: Արագածունի մարզի Ներքին և Վերին Նավեր հնավայրերից պեղվել են «հիանալի մշակված վանակատներավանքներ», որոնք «զարմանալի սուր են»:³⁵ Ուրեմն, դրանցից կարելի էր նաև գրոցների ծայրականներ պատրաստել և դրանցով Հայոց լեռների ժայռաբեկորներին փորագրել առաջին ժայռապատկերները, ինչպես և վարվել են մեր հեռավոր նախնիները: Ինչպես նշվեց, գրոցը՝ «քանդակագործի գրիչ»-ը, նաև եղունգն («եղունգ») է կոչվել: Արանով ուղղակի իմաստաբանական կապի մեջ են հայտնվում «սատանի եղունգ»-ը՝ առասպելաբանութեն համարված «չորրոտանիների ոտքի եղունգ»-ի և ժայռաքանիքը՝ քարայծը (սև այծը) նախատիպ ունեցած վիպական հոկա Տորքի փորագրող եղունգները:

Տորքի վիպական կերպարի առասպելաբանական-տոտեմական նախատիպը սև այծ լինելու մասին է խոսում ինչպես նրա մոայ արտաքինի խորենացիական նկարագրությունը, այնպէս է անվան ստուգաբանությունը: Տորքը արմա-

³² Հայությունան Ա., նշվ. աշխ., էջ 103:

³³ ՀԱԲ, հ. II, էջ 22:

³⁴ ՀԱԲ, հ. IV, էջ 189: Համաձայն հայ ժաղովրդական ավանդությունների՝ սատանի եղունգ կոչված քարը է աստվածանշային Կայենը իր Եղայր Արելին (Ղանալանիան Ա., Ավանդապատում էջ 77, 337-338): Այսուղեղ գործ ունենք հակամարտ երկվորյակների մասին հայկական (հնդեվրոպական ծագումով) ավանդությունը սատվածանշային թէմային հարմարեցնելու հետ (Պետրոսյան Ա., Պատկերը և եռադասության լուսուրությունները իրենց շայունական բնական բնագիրը, առաջարանք և ծանոթագրությունները Հ. Ամայանի, Եր., 1975, էջ 85-86):

³⁵ Միմոնես Հ., «Հայկ և Քեր», առասպել և սըր, թէ իրապատում, «Հայկագունիներ».

³⁶ Ավելացնեան Հ., «Հայկ և Քեր», առասպել և սըր, թէ իրապատում, «Հայկագունիներ».

տակիցն է հուն ծօրէօ «այծքաղ» բառի, որի հետ միասին ծագում է հ.-է. *dor- և նախաձելից:³⁶ Վերջինիս *dor- արմատը միջին ձայնարձն է հ.-է. *der- «վազել» արմատի, որին են հանդում նաև թրակացիների Ճրենիս արական անձնանունը և նրա իմաստակիցը՝ ալբաներեն ճրենի «եղերու» բառը:³⁷ Նշենք նաև, որ գոյություն ունեցող կարծիքը *Snoř*— լիցանունը խեթալուվիական *Tarhuna*, *Tarhund*, *Tarku* կոչված ամպրոպի աստծու անունից ծագելու վերաբերյալ չի հաստատվում: Բայց նրանք հուն ծօրէօ «իմասին ծագում են հ.-է. *dor- և նախաձելից, որովհետև հ.-է. *d-> հայ. ու, հուն. ծ, խեթ. տ, հ.-է. *o-> հայ. ո (օ), հուն. օ, խեթ. ա, հ.-է. *k-> հայ. ք, հուն. կ, խեթ. կ, ի:³⁸

«Այծ» և «փորագրություն, զիր» հասկացությունները լիցայի առասպեկտանական կերպարում համատեղված է ենել նաև մուծածիրյան ծագումով ուրարտական նայրի աստծու և սեպագիր գրության դեպքում: Վանա ժայռալորին փորագրված «Մերի դրան» սեպագիր արձանագրությունը բովանդակում է ուրարտական նոր՝ պաշտանական լիցարանը Խալդի զլուալբրությամբ: Ըստ որում, ուրարտական սեպագիրը երկիր է ներմուծվել (կամ տեղում տեղեցվել) մուծածիրյան քրմերի կողմից որպես իրենց հարազատ աստծու պաշտամունքի բաղադրիչ: Այդպիսի բաղադրիչ էր նաև սպիտակ այծի պաշտամունքը: Խալդի աստծու տուեմական նախատիպի արու բարայծը լինելու վերաբերյալ խոտում են ինչպես նրան (միայն նրան) ուկեր գոհաբերելու հանգամանքը,³⁹ այնպես էլ նրա կրած Խալդի անունը: Hał-di բաղադրիչներից բաղկացած այս դիցանվան սրացին բաղադրիչը նույնական է հայերեն խաղախ (**խաղ-ախ*) «կաշի, մորթի» բառի *խաղ «այծ» արմատին, իսկ երկրորդը՝ հայերեն զիր «աստված, կուրո», բառն է:⁴⁰

«Փորագրություն, զիր» և «այծ» հասկացությունների սերտածած լինելու փաստն է արձանագրել հայ «կուտ» արմատը, որից ունենք բարբառային կոխ (**կուտ-ի*) «զառ, ուլ, ոչխար, այծ», «հատկապես՝ այծ» և կոխի (**կուտ-իկ*) «այծ, պատիկ այծ» բառերը⁴¹ (վերջածանցի համար հմմտ. արտիք, արտիկ «վարի ոչխար»): Հստ երեսությին, *կուտ արմատը նշել է արու այծերի մենամարտելիս իրար իրմշտելու, պողահարելու հատկությունը, որովհետև այս առկա է նաև հետեւյալ բարբառային բառերում: Կոտել (**կուտ-ել*), կուկուել (**կուտ-կուտ-ել*), կոտուել (**կուտ-ուտ-ել*), «հրել, մշտել, մխտել, իրմշտել»,⁴² «հրել, մխտել բոթել», «այս ու այն կողմ իրմշտել, բոթել», «առաջ քշել»:⁴³

³⁶ Պետրոսյան Ա., Հնագոյն Հայաստանի զյուսավոր աստվածությունների շուրջ, էջ 127-128, Նոյեմբ., Ամպրոպի աստծու մակարիները զահանուններում, «ՎՊՄԻ միջազգային գիտաժողովի կողմէն նվիրված հայ զրատպության 500-ամյակին», Կանաչը, 2012, էջ 7, ծան. 5:

³⁷ Георгиев В. Исследование по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 120.

³⁸ Զահուլյան Գ., Հայերենը և ներկայական իին լեզուները, Եր., 1970, էջ 85, 135:

³⁹ Մելիքոսիան Ղ. Մարգարեան պատմությունների ամսագործության մասին, 1960, հաջ. N 27.

⁴⁰ Պետրոսյան Ա., Խալդի դիցայի և զիրու պաշտամունքի շուրջ, «Հանդէս ամսորեար», Վիեննա, 1997, թիվ 1-12: Հմմու. ՀԱԲ, հ. IV, էջ 405:

⁴¹ Արքանձայաց Գ., Երկիր, հ. I, Եր., 1978, էջ 340, ՀՀԲ, հ. II, էջ 497:

⁴² ՀԱԲ, հ. II, էջ 664:

⁴³ ՀՀԲ, հ. II, էջ 497:

Հայ *կուտ արմատը, մեր կարծիքով, հանգում է հ.-է. *g^uod- նախաձելին և իր զուգահեռներն ունի ի դեմս հայ. կուլ և շումեր. ցած «ցուլ» բառերի: Ճիշտ է, վերջինս համարվում է հնդեվրոպական լեզուներում «կով» նշանակող բառերի արմատակիցը,⁴⁴ բայց հնչունաբանությունն ավելի մոտ է ոչ թե դրանց *g^uou նախաձելին, այլ հայ *կուտ ց^uod- արմատին, որովհետև հ.-է. *g^u->հայ. կ, հ.-է. *d-> հայերեն տ: Ի դեպ, շումեր. ցած «ցուլ» բառը կարող էր նախապես նաև «այծ» նշանակելին,⁴⁵ նրան փոխանցված իր մասղաշի միջնորդությամբ: Այս տեսանկյունից ուշադրությ է, որ հայերենն ցուլ «փոշոր եղջերավոր անառունի արուն» բառի հունարեն արմատակիցները տարբեր «անառունների ձագ» են նշանակում, իսկ յաւանակ բառը, որ իր հայերենում նշանակում էր «ձագ չորրոտանիների», հատկապես իշու, ձիու, նաև եղինիկի», բարբառներում և արդի գրականում ստացել է «ավանակ», «էշ, մեծ էշ» իմաստները:⁴⁶

*կուտ (>կախ, կոխի «այծ, ուլ») արմատի «փորագրություն, զիր» հասկացությանը ևս հատկացված լինելու փաստն էն արձանագրել հետեւյալ հայերեն բառերը. կուտ «սպի, մարմնի վրա ցտած նշան», որից զիր կոտեալ «մահտևսիների ձեռքի վրա բանված պատկեր»,⁴⁷ «մահտևսիների կոների վրա դաճած նկար, հաջի արած», կունչ «վեստ-կետ կամ կուտ-կուտ նշաններ նենել, մարմնի վրա զանգան նշաններ կամ նկարներ դաճել»,⁴⁸ մանավանդ՝ միջնադարյան «Բառզիր հայոց»-ի «Կոտէալ-գծեալ, կամ զրեալ» բառը:⁴⁹

Քարայի սերտ կապը «փորագրություն, զիր» հասկացության հետ հաստատվում է ենա բաղ «արու այծ» և «Քաղակ-քանդակում»⁵⁰ բառերի արմատակիցներ լինելու միջոցավ. քաղակ<*քադ-ակ (հմմտ. բոն-ակ, ձոր-ակ, տն-ակ և այլն): Հայերեն նույնարմատ բաղ «ընտրելով պոկել, հավաքել» և ցեղ «ճեղը, պատովածք» բառերը ծագած են համարվում հ.-է. *q^l- և *sq^{el}- նախաձելից: Դրանցից առաջնն, ըստ Հ. Աճայանի, ծագում է նոյն արմատի ս-ից զուրկ, իսկ երկրորդը՝ ս-ով ձերից:⁵¹ Քաղ և քաղակ բառերը՝ «արու այծ» և «քանդակում», նշանակություններով, իմաստով հարում են նախաձայն ս-ն պահպանած հնդեվրո-

⁴⁴ ԽԱԲ, ր. II, стр. 575. ՀԱԲ, հ. II, էջ 639:

⁴⁵ Ուշագրավ է, որ վիոլինիկան այրարկներում «սա» հնչած կողքի գրանք տեսակները լինելու միջոցավ. քաղակ<*քադ-ակ (հմմտ. բոն-ակ, ձոր-ակ, տն-ակ և այլն): Հայերեն նույնարմատ բաղ «ընտրելով պոկել, հավաքել» և ցեղ «ճեղը, պատովածք» բառերը ծագած են համարվում հ.-է. *q^l- և *sq^{el}- նախաձելից: Դրանցից առաջնն, ըստ Հ. Աճայանի, ծագում է նոյն արմատի ս-ից զուրկ, իսկ երկրորդը՝ ս-ով ձերից:⁵¹ Քաղ և քաղակ բառերը՝ «արու այծ» և «քանդակում», նշանակություններով, իմաստով հարում են նախաձայն ս-ն պահպանած հնդեվրո-

⁴⁶ ՀԱԲ, հ. III, էջ 390-391, 591, հ. IV, էջ 462:

⁴⁷ ՀԱԲ, հ. II, էջ 664:

⁴⁸ ՀԱԲ, հ. II, էջ 496-497:

⁴⁹ «Բառզիր հայոց», էջ 171:

⁵⁰ Նոյն տեսություն, էջ 329:

⁵¹ ՀԱԲ, հ. II, էջ 541-542:

պական ազգակից լեզուների հետևյալ բառերին. հուն. *σκάλλω* «փորել», «քաղանել», տակած «քրիչ», բրակ. տակած «դանակ, բուր», խեթ. աշկալաւ «պատուի, ձեղբել, խորտակել», լատին. *scaupo* «քանդակել», լիտվ. *skélti* «ձեղբել», հին հայ. *skalm* «քուր, դանակ» և այլն:⁵²

**Բաղ արմատի* «Ճեղքող, խորտակող, պատող» իմաստի զարգացումով ուներ ինչպես հեթանոս հայերի տագմի աստծու՝ Վահագնի վիշապաբար մակդիրը (լայնաբար՝ «վիշապասպան» իմաստով), այնպէս էլ քաղ «արու այծ» բառը: Այս վերջինի զարգացման աստիճանի վրա է հունարեն (պեղասզերենից⁵³) Շամարք է համարելու մեր քաղեմ, քեղի և ցեղում բառերի (Վերջինիս հ.-է. *sk- նախաձայնով ձևից) արմատակիցը:⁵⁴ Թե՛ հայերեն, թե՛ հունարեն բառերի դեպքում ի նկատի է առնելի պողահարող արու այծը: Եթե հայերեն քաղ և հունարեն Շամարք ի ցույց են հանում արու այծի «Ճեղքող խորտակող» լինելու իրողությունը, ապա հայ. քաղակ «քանդակում» և լատին. *scaupo* «քանդակել» նրանց արմատակից բառերը բացահայտում են մեկ ուրիշ իրողություն՝ այծին, ապա՝ դիցայծին, վերագրված բարեկեն նյուրը փորագրելու, բանդակելու կարողությունը:

Հունարեն Շամարք մեզ տանում է դեսի հունա-էտրուկյան ծագումով լատինական այրութենի Հ տառանշանը, որի իրա անունը կրկնում է հունարեն բառի առաջին մասը (այրութենների հիմք դարձած մեհենագրություններում ձայնավորումը ակրոֆոնիկ՝ առաջնավանկային, առաջնաձայնային էր), իսկ տեսքը՝ Հայաստանի ժայռապատկերներից հայտնի և դրանցում այծապատկերներին ուղեկցող նշանը (նկ. 2):⁵⁵ Հին գերմանների մեհենագրային ծագումով ռունական այրութենում (նկ. 3) կար X նշանագիրը՝ g (q) հնչումով: Ուշագրավ է, որ գերմանական լեզուներում կան «ուլ, այծիկ» և «էզ այծ» նշանակող, նոյնպէս g (q) հնչում ունեցող մի շաբք բառեր. Նմատ. գոր. ցուտ, հին անզլ, ցատ, անզլ. ցօտ, հին խլ. ցետ, հին բարձր ցերմ. ցեչ, որոնց հ.-է. *g^(h)it, նախաձեր համարվում է նախասեմական լեզվից կատարված փոխառություն: Շետեւուն նշվել է գերմանական լեզուների հիշյալ բառերի և լատին. haedus «այծիկ, ուլ» բառերի ազգակիցներ լինելու իրողությունը, բայց հաշվի չի առնվել, որ դրանք իրենց արմատակիցներն ունեն հայերենում ընդունում են որում արմատի առելի սախնական նշանակությամբ:

⁵² ՀԱՐ, հ. II, էջ 541-542. Զահուկյան Գ., եղվ. աշխ., էջ 59. Գեօրգիև Յ., եղվ. աշխ., էջ 114:

⁵³ Զահուկյան Գ., եղվ. աշխ., էջ 114, ծան. 33:

⁵⁴ Մարտիրոսյան Հ., Խորակեցան Հ., եղվ. աշխ., նկ. 150. Մարտիրոսյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Եր., 1981, աղ. I: Նոյնին, Հայաստանի հայնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակեները. Եր., 1973, էջ 23, աղ. V: Կարախանյան Գ., Սաբյան Ա., Սյունիքի ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Եր., 1970, աղ. 246, նկ. 1, աղ. 122, նկ. 2, աղ. 114, նկ. 4:

⁵⁵ ԻЯИ, թ. II, ստր. 586.



Խորը հայերեն կայթ բարի և նրա տարբերակ «կայտ» (կայտու և կայտիր բառերում) արմատի մասին է, որոնք համարվում են հավաստի ստուգաբանություն չունեցող արմատներ: ⁵⁶ Կայթ նշանակում է «ցատկունները, ոտքի թիրոտց, ուրախության՝ ցնծության պար», որից՝ կայթէլ «ուրախանալ, ցատկունները խաղալ»՝ ածերին և հատկապես ուլերին բնորոշող իմաստներ (նմատ Հիշյալ Շամարք այծը՝ «ցատկուր, աշխույժ» իմաստով գործածված ենց այծի համար): ⁵⁷ Կայթէլ նշանակում է նաև «ծափ զարնել», իսկ կայթս հարկանել «բաժակին ուժգին խփելով հնչեցնել»:⁵⁸ Վերջիններս ես առնչում են այծերին, երբ ի նկատի ենք առնում արու այծերի մեծամարտը կրկնող ուզմական ծափ պարերի համապատասխան ափահարումները և նախնական բաժակները այծի պողերից լինելու հանգամանքը: Կայտառ բառը բաղկացած է կայտ արմատից, -առ վերջածանցից (հմմտ. իոյառ, հաւ-տոռ, պայծ-տոռ, վրտ-տոռ և այլն) և նշանակում է «աշխույժ, առույզ, եռանդուն»: Ըստ Հ. Աճառյանի՝ սրա երկրորդ ձևն է կայտիր «ուրախություն, ուրախությունից խաղալ ցատկունները», որից՝ կայտուալ «ուրախ ուրախ վազվուել, եռաղկուալ»:⁵⁹ Կայտ արմատի *կայծ տարբերակի երբեմնի գոյության ընդունումը (ս/ծ հնյունական համապատասխանության տեսանկյունից հմմտ. բռւս/բռւծել, մուտ/մուծել, պիդու-պդուոր/պիդո, տատանել/ծածանել արմատակից զովգերը) մեզ նորից տանում են «այծ» և «զիր» հասկացությունների իմաստաբանական միասնական դաշտ. հմմտ. «Կայծել-դրաշւմել, կամ գրել»:⁶⁰

Հայերենի և գերմանական լեզուների հիշյալ բառերի ազգակցության փաստը հնարավոր է դարձնում ուղղակի կասի բացահայտումը նաև ինին գերմանների ունական այրութենումը (դ ու նշանի և Հայկ (Օրիոն) համաստեղության զապատկերը և ներկայացնող նշանների միջև: Ժայռապատկերներից սկսած՝ սա համարվել է խորիդանշանը հայոց աստվածային նախահայր Հայկի, որովհետև այս համաստեղությունը նրան էր ձևնված և նրա անունով էլ կոչվում էր Հակ/Հայկ: Ժայռապատկերներում այս նշանը հաճախ է պատկերված Հայկին խորիդանշը առաջնարդ բարայի հետ միասին՝ անգամ վերջինի մարմնի փոխարեն: ⁶¹ Վերևում նշվեց, որ վաղ հ.-է. DY արմատը ժառանգ լեզուներում ունի ինչպես «այծ», այնպէս էլ «զույս» և «աստված» նշանակող հետնորդներ (հմմտ. հայ. տիկ, տիւ, Տիւր): Այս DY արմատն էլ պայմանավորել է գերմանական ուների

⁵⁶ ՀԱՐ, հ. II, էջ 505-506, 510.

⁵⁷ Զահուկյան Գ., Հայերենը և հնդկությական հին լեզուները, Եր., 1970, էջ 86:

⁵⁸ ՀԱՐ, հ. II, էջ 505:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 509-510:

⁶⁰ «Բարգիր հայոց», էջ 157:

⁶¹ Պետրոսյան Ա., Հայոց մեհենագրության ակունքներում, Եր., 2008, էջ 7-8, 14-15, նկ. 2 գ:

❖ նշանի և (դ) արտասանությունն այնպէս, ինչպէս Հայկ (Օրիոն) համաստեղությունը պարմանավորել է նրա տեսքը:

Գերմական լեզուներն ունեն «տառ, զիր, զիրք, զրություն» և այլն նշանակող հետեւյալ բառերը. զոր. եօկա, իին իալ, եօկ, իին անզլ. եօս, իին բարձր զերմ. եսօհ և այն, իսկ սլավոնական լեզուները՝ իին պավ. եսկ «տառ», իին ուս. եսկ, եսկւե. «տառեր, զիրեր, զիր, զրություն, նամակ» և այլն:⁶² Գերմանական և սլավոնական լեզուների այս բառերը համարվում են ծագած հաճարենու, կաղնու հնդեվրոպական անուններից, ընդ որում, սլավոնական լեզուների բառերը իրենց է-կրի պատճառով համարվում են փոխառյալ գերմանականից: Այսուհանդեռձ, հայկական տվյալների լույսի ներքո այդ երևույթը հնարավոր է, որ այլ բացատրություն ունենա: Ասյացուցված է, որ հայ. բուժ(«հ.-է. *b̥hug-o-») «ուլ, գառ» բառը արմատակիցն է իին հնդկ. եսկկա «այծ», պարս. եսշ «ուլ, այծ», իին իոլ. եօս «արու այծ», իին իալ. եսկք, իին անզլ. եսսա, երգ. եօս և այլն բառերի:⁶³ Վանս լճի ավագանում գտնված իին հայկական թզնուեիր(<*Բուզ-ն-ունի-բ>), Բուժուեիր(<*Բուժ-ունի-բ>) և Բոզուեիր(<*Բոզ-ունի-բ>)⁶⁴ գավառների անուններում բուժ բառի հնյունական տարրերակների գոյությունը իին հնդկերեն եսկկա բառի հնաւ կարող են վկայել հօգուտ այն բանի, որ նրանց իիմք հնդեվրոպական արմատը ժառանգ լեզուներում (բարուի, նաև *b̥hug-o-ի զուգահեռ *b̥hugo- ձեի պատճառով) կարող էր և այլ կերպ արտահայտվել:⁶⁵

Եթե այդպէս է, ապա «զիր, զրություն» նշանակող սլավոնական լեզուների վերոհիշյալ բառերը ևս կարող են փոխառյալ չինել և արմատակիցները լինել «այծ» նշանակող ազգակից լեզուների բառերին: Այս դեպքում ի նկատի առնենք, որ գերմանական ու սլավոնական ցեղերի հնդեվրոպական լեզվակիր նախնիները ևս հայերի նախնիների ենու հնդեվրոպական միասնության գարաշրջանում բնակվել են Հայկական լեռնաշխարհում և մերձակա տարածքներում: Քիչ հավանական է, որ բարիդարյան մարդը ավելի վաղ սկսեր ծառերին նշաններ դնելը, քան դրանք բարերին ու ժայռերին փորագրելը: Ծառերին փորագրելը հաջորդելու էր բարերին նշանագրելուն՝ լեռնային նախահայրենիքից անտառապատ տարածք կատարված բնակչության արտագաղթի հետեւանքով:⁶⁶

⁶² ԻՐԻ, ր. II, ստр., 622-623.

⁶³ ՀԱԲ, հ. I, էջ 482:

⁶⁴ Երեմյան Մ., եշվ. աշխ., էջ 45, 108-109:

⁶⁵ Պետրոսյան Մ., Հայոց մեծենագրության ակունքներում, էջ 18-20:

⁶⁶ Նոյնպիսի մի պատճառով հյուսիսային լեռներից միջազգետքան հարթավայր տեղափոխված բնակչները բարիին նշանագրելը աներաժեշտաբար փոխարինել էին կամ սայիկներին նշանագրելով: Ըստ այդմ հասկանալի է, թե ինչպէս է Հայկ (Օրիոն) համաստեղության գծապատկերը ներկայացնող ❖, չ եղակը «աստված» նշանակող * և «կին» նշանակող ▶ նշանների հետ միասին հայունելի վաղ շրմերական կամ սայիկներից մեկի վրա (նկարները տե՛ս Mallowan M.E., *L'aurore de la Mésopotamie et de l'Iran*, Éditions sequoia, Paris-Bрюссель, 1966, p. 65, fig. 59-61; "Le berseau de l'humanité", La présente édition de L'encyclopédie de la civilisation est publiée sous la direction de Marcel Brion de l'Académie française, Londres, Genève, 1976, p. 87, fig. 111):

Այս տեսանկյունից ուշագրավ է հայ. զիր բառը, որի «տառ, զրություն» նշանակությունից ավելի հին է «փորագրել, բանակել» նշանակությունը, ինչը զալիս է դեռևս հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից: Նրա հիմք է-ն. *Արարմատից են ծագում նաև ժառանգ լեզուների հետևյալ բառերը. իին հնդկ. Վրանա (վերը, պատռվածք), հուն՝ բնη «Հարատոց», ալբ. Վոր «Վերը», իին պավ. Րառա (վերը), անզլ. Սարս. Վրտան «Փորել» և այլն:⁶⁷ Ըստ Հ. Աճարյանի՝ «մեր բառի հետ միշտ համեմատելի են զոր. Վրիտ «զիր», անզլարս. Վրիտ «զիր», Վրուտ «Փորագրություն, զարդարանք», Վրիտ, մազ. Վրիտ, որոնք բլուտ են նույն Վերացությունից: ⁶⁸ «Գրել»/«Քարին փորագրել» նշանակությունը պահպանվել է հետագա դարերում ևս: Սովոր Խորենացին հետեւյալ կերպ է նկարագրում մերոպյան այրութենի արարությը: Մերոպ Սաշտոցն աղոթելիս «տեսանելու ոչ ի քուն երազ և ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին զործարանի երեւութացեալ երգոյ աշաց բարձրին աջոյ գրելով ի վերայ վիսի, զի որպէս ի ձեան վերջը գծին՝ կուտեալ ունելու բարն... և յարացեալ յարօդիցն՝ եստելծ գնշանագիրս մեր...»:⁶⁹

Ինչպէս *կուտ «այծ» (որից կտի, կտիկ «այծ, ուլ») և «Կուեալ-գծեալ, կամ զրեալ»,⁷⁰ այնպէս էլ բաղ «արու այծ» և «Քաղակ-քանդակումն»,⁷¹ արմատակից զույգերը վկայում են, որ դարեր ու հազարամյակներ շարունակ հայի լեզվամտածողության մեջ պահպանված են եղել հայոց հնագույն զրության ժայռապատկերային փորագրություն լինելու վերհուշը և դրա «իծագրեր» կոչվելու պատճառների վիտակցությունը: Դրանցից զինավորները լինելու էն. 1. բարյածերի բնակեցրած ժայռութագունքներում ժայռապատկերների գտնվելու իրողությունը, 2. Ժայռապատկերն ստեղծողների այծամարդ կամ դիցայծ լինելու մասին պատկերացումը, 3. առասպելաբանական այծի կճակ (Եղունգ) ըմբռնված օրսիդիանի (սասանի Էղունգ) միջոցով ժայռապատկերների փորագրված-զրված լինելու դարեր փիլանցված հուշը: Դրանց «իծագրեր» կոչվելու առիշով կարելի է նշել նաև, որ օրսիդիանե ծայրակալով գրոցին փոխարինած մետաղի գրոցի պատճառով հետագա փորագիր զրերը կոչվել են նաև երկաթագրեր՝ այնպէս, ինչպէս նույն պատճառով երկաթագիր էր կոչվում մերոպյան այրութենը:

Եերկած նույրը և դրա վերլուծությունը մղում են հետեւյալ եզրակացության: Հնդեվրոպական հնագույն զրությունը եղել է ժայռափոր պատկերագրությունը: Հայկական լեռնաշխարհի ժայռերին հնդեվրոպական տեղաբնիկ ցեղերի կողմից նախ օրսիդիանե, ապա՝ մետաղի ծայրակալով գրոցի միջոցով արված

⁶⁷ ՀԱԲ, հ. I, էջ 561:

⁶⁸ Նոյնիւ:

⁶⁹ Խորենացի, Գ, ծգ:

⁷⁰ «Քառզիրը հայոց», էջ 171:

⁷¹ Նոյն ուղղություն, էջ 329:

փորագիր «իծագրեր»-ժայռապատկերներն են դարձել հիմքը հայկական, թերևս մյուս հնդկական ժողովուրդների ևս, մէհենազիր գրությունների:

“ИЦАГРЕР”- НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ КУЛЬТА ГОРНОГО КОЗЛА И КОЗЛИНОГО БОЖЕСТВА

Резюме

С. Петросян

В наскальных изображениях “ицагрер” (“козлиное писание”) Армении зафиксированы и символические сцены. Некоторые петроглифические знаки этих сцен являются иероглифами. Мовсес Хоренаци в своем труде “История Армении” пишет об исполине Торке, который, руками хватая скалы, мог склонять их ширеховатости ногтями и вырезать на них орлов и тому подобное (Хоренаци, II, 8). Без сомнения, речь идет о наскальных изображениях армянских гор. Значит, Торку было приписано изобретение петроглифических знаков – древнейшего иероглифического письма Армении. Из этого письма позднее возникло иероглифическое письмо языческих армян, помещенных в средневековых армянских манускриптах. Однако известно, что в пантеоне языческих армян богом письменности считался Тир. Он-писец верховного бога Арамазда, толкователь снов и гадальщик, его эпитеты գրիչ, գրալ (“писец, пишущий”). Последнее слово значит также “черт, злой дух”. Интересно, что Мовсес Хоренаци описал внешность Торка как мрачного, безобразного человека со сплющенным носом и свирепым взглядом глубоко посаженных глаз. Дело в том, что мифологические образы Торка и Тира происходят от одного тотемического прототипа: это горный козел. Ср. и.-е. *dor-k-> арм. Տորք, греч. δορκάς “серна, косуля”, и.-е. *dig- “коза, козел”< рани. и.-е. DY> Տիր, տիկ “бурдюк, волынка” (<“коза”). Фактически, налицо мифологическое представление и.-е. предков армян о двух божественных близнецах, действующих сообща в деле создания наскальных изображений армянских гор, значит и иероглифического письма языческих армян.

Տեղեկություններ ենդինակի մասին

Պետրոսյան Սարգիս Գարեգինի - պ.գ.դ. 22 ԳԱԱ
Ժիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ԳԴՄՄ պատմության և իրավագիտության ամբիոն
E-mail: Vahel1996@mail.ru

Աշխեն ՄԻՆԱՍՅԱՆ

ԴԱՅԱՀԵՆԻ-ԴԻՍՈՒԻՆԻ-SԱՅՔԸ Ք.ա. 12-8-ԻԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Եփրատի վերին հոսանքի շրջանից հյուսիսի Ք.ա. 12-րդ դարից մինչև Ք.ա. 7-րդ դարը վկայված է ասորեստանյան Դայաենի՝ ուրարտական Դիատիփ երկիրը, որն իր կազմի մեջ էր առնում մի շարք առանձին ցեղային երկրներ: Այն Հայկական լեռնաշխարհի ամենաամժեղ ցեղային միություններից մեկն էր: Ուստի ևս ասիրոպատման մասը գտնում է, որ այս ցեղային միության կամ երկրի անունը պահպանվել է հայկական Տայր նահանգի անվան մեջ:¹ Մեծ Տայրի 14-րդ նահանգը և Տայրը տարածվել են Ճորդի գետի միջին հոսանքի շրջանում՝ Կուրի վերնազավառում: Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացո»-ի՝ Տայրը վարչականորեն բաժանվել է 8 գավառի՝ Կող, Բերդաց Փոր, Պարտիզաց Փոր, Ճակը, Բողլիա, Օրաղի, Ազորդաց Փոր և Արսեաց Փոր²:

Սուաջին զրավոր տեղեկությունները Տայրի մասին հաղորդում են ասորեստանյան սեպագիր արձանագրությունները (Ք.ա. 12-9-րդ դդ.), որտեղ վերջինս հիշատակված է Դայաենի/Դայաենի անվանումով: Ասորեստանի Թիգլաթֆալասար I թագավորի (Ք.ա. 1115-1077թթ.) արձանագրություններում պահպանված տեղեկությունների համաձայն՝ Դայաենի-Տայրը եղել է վաղ պետական կազմավորում և կարենք դեր խաղացել Հայկական լեռնաշխարհում ձևավորված հակասորեստանյան ռազմավարական խմբագրման՝ Նաիրի 23 «Երկրների» մեջ: Թիգլաթֆալասար I-ի տարեգրությունների համաձայն՝ Ք.ա. 12-րդ դարի վերջին Դայաենի թագավոր Սենին առաջատար տեղ էր զրավում լեռնաշխարհի իշխողների շարքում³:

Դեպի հյուսիս՝ Նաիրի Երկրները, Տիգրիսի ակունքներից սկսած մինչև Ճորդի գետի ավագանում գտնվող Դայաենի երկիրը ասորեստանցիների կատարած արշավանքի մանրամասն նկարագրությունը պահպանվել է Թիգլաթֆալասար I-ի տարեգրության մեջ: Արշավանքն ուղղված էր ոչ թե Վանա լճից հարավարեւելք ընկած շրջանները, ինչպես Սարմանասար I-ի ժամանակ⁴ կամ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մաս՝ հարավից հյուսիս, այլ Արածանիի հոսանքն ի վեր: Ասորեստանյան բանակը շրջանցել էր Հայկական պարը, ապա Արարատյան դաշտ-Շիրակ-Վանանդ-Բասեն ուղղությամբ հասել էր Դայաենի⁵:

Թիգլաթֆալասար I-ի Ք.ա. 1114թ. արշավանքն ուղղված էր Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների դեմ: Դրանց ամբողջությունը են կոչում է Նաիրի Երկրներ: Իր այն արձանագրության մեջ, որը հայտնաբերվել է

¹ Արյունյան Հ. Տոպոնիմիկա Ուրարտу, “Խորրիտы и урарты”, I, Еր., 1985, стр. 70-71, 73.

² Երեմյան Ս., Հայացանք ըստ «Աշխարհացո»-ի, Եր., 1963, էջ 110:

³ Դյակոնով Ի. Ասսиро-վավիլոնյան առաջնային պատմությունների մասին: Վանա լճի առաջնային պատմությունների մասին: Վանա լճի առաջնային պատմությունների մասին: Վանա լճի առաջնային պատմությունների մասին:

⁴ Նույն տեղում, հաճ. N 27:

⁵ Պետրոսյան Ս., «Արարատյան դրախտը» սեպագիր առցյուրներում, «Պատմա-բանասիրական հանդես», 2009, թիվ 2-3, էջ 249-261:

Աշխուր քաղաքի ավերակները պեղելիս (այժմ Լոնդոնի Բրիտանական թանգարանում է) նա պատմում է Նախի երկրների նախ՝ 23, ապա 60 «արքաների» (ընդգրում «թագավորների») դեմ տարած հաղթանակների մասին⁶. Այդ ընթացքում Թիզլարֆալասար Ի-ը, եթե հավատ ընծայենք նրա արձանագրության հաղորդումներին, գերի է վերցրել Նախի բոլոր «արքաներին», բայց մեծահոգաբար բաց էր թողել բավարարվելով նրանց որդիներին պատանդ վերցնելով և նրանց վրա հարկ դնելով (1200 ձի և 2000 տավար):⁷ Միակ բացառությունը եղակ էր Դայանի երկրի արքան, որին Ասորեստանի թագավորը բաց չէր թողել, այլ իր հետ տարել էր Ասորեստան: Թիզլարֆալասար Ի-ն այսպես է նկարագրում այդ իրադարձությունը. «Դայանի երկրի թագավորին՝ Սենիին, որը չէր հնազանդվել իմ տիրոջ՝ Աշխուր աստծուն, գերեվարված և կապանքների մեջ թերի իմ քաղաքը՝ Աշխուր, բայց հետո նրան ներում շնորհեցի և իմ Աշխուր քաղաքից նրան կենդանի թողեցի՝ մեծ աստվածների փառքը փառաբանելու համար: Ըստածակ Նախի երկրին իր ողջ սահմաններով ես տիրեցի և նրանց բոլոր թագավորներին՝ խոնարհեցրի»:⁸

Ինչպես տեսնում ենք, Նախի միուրյան ներսում Դայանին մյուս երկրների համեմատությամբ ունեցել է ավելի բարձր կարգավիճակ, որն է նրա արքա Սենիին դրդել էր չինազանդվել Ասորեստանի թագավորին: Դրա համար է նա գերվել և տարվել էր Ասորեստանի մայրաքաղաք Աշխուր: Հետաքրիր է, որ Թիզլարֆալասար Ի-ը նրան ազատ էր արձակել, առանց նրա որդիներին պատանդ վերցնելու և առանց նրա վրա հարկ դնելու: Այս հանգամանքները խիստ կասկածելի են դարձնում «մեծահոգի» Թիզլարֆալասար Ի-ի հաղորդումները: Բացառված չէ, որ ոչ թե նա ինքն էր ազատ արձակել Սենիին, այլ վերջինիս հաջողվել էր փախուստի դիմել:

Թիզլարֆալասար Ի-ի ոչ բոլոր հաղորդումներն են արժանի վստահության: Ինչպես Ն. Արոնցն է նկատում. «Զափազանցնելու նրա ճաշակն արտահայտվում է նաև այլպիր: Այսպէս, նա ուզում է հավատացնել, թե երբ Խառանում իր սիրազործություններից հետո անձնատուր է լինում որտորդության հաճույքին, իբր թե մեկը մյուսի հետևից սպանել է չորս վայրի ցուլ, տասը հզոր արաւ փիզ, իսկ կենդանի է բռնել չորսին: Նա ունատակ է արել 120 առյուծ, իսկ մարտակառու՝ ևս 800-ը: Բացի դրանից, նա կոտորել է շրջակա դաշտերի բոլոր անասուններին և երկնիքի բոլոր թռչուններին»:⁹

Թիզլարֆալասար Ի-ի հաջորդ Ասորեստանի թագավորների ավերածություններից, կողոպուտից և «դարավոր հարկի ու տուրքի» տակ ընկնելուց հետո Նախի ցեղամիության մեջ մտնող թագավորություններից շատերը բոլել են պատմության ասպարեզը: Դրանցից շատ քչերին է հաջողվել մնալ կանգուն: Դրանցից է եղել Դայանի թագավորությունը: Եթե հավատանք Ասորեստանի

⁶ Ճյակոնօվ Ա., եշխ. աշխ., հաջո. N 10.

⁷ Հայոց Ն. Արոնցի, 120 ձի և 2000 տավար (Արոնց Ն., Հայուստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 59):

⁸ Հայ ժողովրդի պատմության բրեստումատիա. հ. 1, Եր., 1981, էջ 20:

⁹ Արոնց Ն., եշխ. աշխ., էջ 64:

թագավորների արձանագրություններին, կանգուն մնացած թագավորություններն առանց պատամբելու վճարել են Ասորեստանի «դարավոր հարկն ու տուրքը» միեւն Ք.ա. IX դարի կեսերը, եթե Ասորեստանի դեմ պատամբել են նրան հարկաւուն երկրները, այդ թվում՝ Դայանի թագավորությունը:¹⁰

Ասորեստանի վերջին թագավորը, որը բախում է ունեցել Դայանիի հետ, եղել է Սալմանասար III-ը (Ք.ա. 858-824 թթ), որն այսպես է նկարագրում դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը ձեռնարկած իր արշավանքներիը. «Իմ իշխանության երրորդ տարին ... Ալզիի (Ալձնիր) լեռնանցքները մտա: Ալզի երկրից միեւն Սուխմեն երկիրը, Սուխմեն երկրից միեւն Դայանի երկիրը, Դայանի երկրից միեւն ուրարտացի Արամուի Արծաշը թագավորական քաղաքը (զնացի): ... Արծաշը թագավորական նրա քաղաքը, շրջակայի քաղաքների հետ նվազեցի: Նրա անշափ ունեցվածքը և հարստությունը դուրս բերի: Քաղաքները քանդեցի, ոչնչացրի, կրակով այրեցի...»:¹¹

Ակնհայտ է, որ ասորեստանյան զենքի հարվածների բիրախ այս անզամ դարձել էր Ուրարտուն: Դայանին կա մ հարձակման օրեւել չեր դարձել, կա մ կ երա որոշ ծայրամասեր էին ենթարկվել ավերածությունների: Միևնույն ժամանակ պարզվում է, որ Թիզլարֆալասար Ի-ի նշանավոր արշավանքից շուրջ 250 տարի անց Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների փոխարարերություններում տեղի էին ունեցել նկատելի փոփոխություններ: Դայանին այլևս լեռնաշխարհի կյանքում առաջատար դեր չեր կատարում: Այդ գերը այժմ ստանձնել էր Ուրարտուն, որի պատճառով էլ Սալմանասար III-ը իր հարվածն ուղղում է հենց նրա դմբ:

Ինչ վերաբերում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետություններին, ապա 1989թ. հեղափոխության առանցքային գաղափարներից մեկը, խորհրդային ազդեցությունը բորափելուց բացի, նաև Արևմուտքի հետ միավորվելն էր։ Սկզբնապես, այս խնդիրները լուծելու համար նրանք իրենց հայացքն ուղղեցին ԵԱՀՆ-ին և Եվրոպական ընկերակցություններին։ Վերոնշյալ երկրներն արդեն իսկ ԵԱՀՆ անդամ էին, և նրանց շրջանում ԵԱՀՆ ընկալումը նաև բարյական էր, քանի որ Հելսինկիի Եզրափակիչ ակտը որոշակի դերակատարում էր ունեցել մարդու իրավունքների պաշտպանության և կոմունիզմի ընդունակությունների ոգեշնչման գործում⁵։ Սակայն ակնհայտ էր, որ անհենար է միայն բարյական ազդեցությամբ և ոչ մեծ ռազմական պոտենցիալ ունեցող հաստատություններից ակնկալել Եվրոպայի արեւելում անվտանգության խնդիրների և կամ Սառը պատերազմի շրբաժանի հաղթահարումը։ Եթե ԵԱՀՆ-ն թույլ էր այս առումով, ապա Եվրոպական ընկերակցություններն էլ բավական դանդաղաշարժ էին, և շուտով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շրջանում վերջինիս շարքերը համարելու հույսերն ի շիբ դարձան։ Բանն այն է, որ 1990-ական թվականները փոխակերպման շրջան էր նաև Եվրոպական ինտեգրացիոն միավորումների համար։ Եվրոպական ընկերակցությունների շրջանակներում ընթանում էին ինտեգրացիոն գործընթացների խորացման ուղղված բանակցություններ՝ նոր Եվրոպական պայմանագրերի շուրջ, որոնք կամ իրենց սահմանած չափանիշներով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին տրամադրում էին սահմանափակ մուտք դեպի իրենց շուկաները և քաղաքական խորհրդատվության մեխանիզմները՝ շրջանցկան նրանց շուտափույք անդամակցության հարցը։ Եվրոպական ընկերակցությունների ներառմ էլ կար լուրջ տարակարծություն՝ արյօք նախապես կենտրոնանալ Արևմտյան Եվրոպայի ներսում ինտեգրացիայի խորացման վրա, բայց ընդլայնվել դեպի Արևելը և ներառել նոր պետություններ։ Առաջին դիրքորոշմանը կողմնակից էր հատկապես Ֆրանսիան։ Հատ նախազահ Միտերաքի՝ այդ պետությունների ինտեգրացումը ապազա ԵՄ կառույցներում կարող էր տևել տասնամյակներ։ Ակնհայտ էր՝ Արևմտյան Եվրոպան իր պետություններով և ին-

⁴ Захаров В., Арешев А. *Расширение НАТО в государствах Закавказья: этапы, намерения, результаты*. Москва, «МГИМО-Университет», 2008, стр. 16.

⁵ Ասմուս Ռ., Բացելով ՆԱՏՕ-ի դրույքը։ Բնակչության վերակառուցվեց Դաշինքը նոր դարաշրջանի հայտնաբերման երրորդ շրջանում։ Արևմտյան Եվրոպական ընկերակցությունների համակարգությունները դաշտանուր դեկապարման մարմիններով և ինստիտուտներով։ Դրանք լին ամփառու ինքնակտությունը Եվրոպական, և Եվրոպական տնտեսական ընկերակցությունը, որը 1993թ. ուժի մեջ մտած Մասսարիխուի պայմանագրով վերանվանեց Եվրոպական ընկերակցություն։ Իիմք հանդիսանալով Եվրոպական միության ձևավորման համար։

տեղրացիոն միավորներով չեր կարող պաշտովել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անվտանգությունը։ Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները ձգուում էին դեպի ՆԱՏՕ հետևյալ պատճառներով՝

1. համագործակցությունը գրավական էր բացառելու համար ԽՍՀՄ, իսկ 1991թ. հետո ՄԴ ազդեցության հնարավոր վերահաստատումը,
2. տարածաշրջանի պետությունների համար այն զապում և հակակշիռ էր Եվրոպական տերությունների և արդեն իսկ միավորված Գերմանիայի պարագայում,
3. տարածաշրջանի պետությունների համար կարնոր էր ունենալ պատմականության բարդ աշխարհապարական անվտանգության ուժը, ինչն էլ իր հերթին բխում էր ԱՄՆ շահերից և տեղում արևմտամետ ուժեր ապահովելու նկատառումունք։

ՎՊԿ-ն՝ 1991թ. մարտից դադարեց գոյություն ունենալուց, և ԽՍՀՄ-ը մնաց առանց դաշնակիցների։ Սա անհանգստությունների տեղիք էր տախա, նամանավանդ որ Արևմուտքը շշապեց լուծարել ՆԱՏՕ-ն։ Ընդհակարակով՝ ԱՄՆ-ի դաշնակիցները համառոքեն պարունակում էին պահպանել ՆԱՏՕ-ն՝ որպես համաշխարհային անվտանգության և կայունության պահպանման միակ երաշխավոր։ Միևնույն ժամանակ Փարիզան խարտիայի պայմաններում վիճահարուց էր արդեն համարվում լուծարված ՎՊԿ-ին հակառակ ՆԱՏՕ-ի և Եվրոպայում ամերիկյան գինված ուժերի գոյությունը։ Եվ չնայած առկա տարակարծությանը՝ ՆԱՏՕ-ի դեկապարությունը հաստատակամորեն պաշտպանում էր Դաշինքի պահպանման տեսակետը՝ մոտեցումը հիմնավորելով հետևյալ կերպ։

- այն ապահովում է պաշտպանությունը սպառնացող վտանգից։ թեև այս չկար խրերդային հարձակման վտանգը, այնուամենայնիվ Եվրոպայում դեռևս չեր հաստատվել երկարաժամկետ բաղարական կարգ,
- կառույցի գործունեության միջոցով լեգիտիմացվում էր ԱՄՆ մասնակցությունը Եվրոպայի անվտանգության ապահովման գործընթացին՝ հավաքական պաշտպանության պարտավորությունների հիմունքով,
- ԵԱՀՆ (1994թ.-ից ԵԱՀԿ) միջնորդությունը և հակամարտությունների կարգավորումը զգում էին ՆԱՏՕ-ի ինտեգրված պաշտպանական կառույցների կարգը՝ ճգնաժամերի խաղաղ և հաջող լուծման համար⁶։

Սառը պատերազմի ավարտից հետո պարզ դարձավ, որ ՆԱՏՕ-ի՝ ի սկզբանե հոչակած «քարի մտադրությունները» պարզապես արտաքին քողարկում էին։ Նույնիսկ ԽՍՀՄ ֆլուգումից հետո ՆԱՏՕ-ն հակառակորդ էր տևենում ճգնաժամի մեջ գտնվող ՈՒ-ին՝ նրա կողմից եկող վտանգը ներկայացնելով ՈՒ-ում առկա խառը դրության լույսի ներքո։ Արևմուտքին ձեռնուու չեր ՆԱՏՕ-ի վերացումը ՎՊԿ-ի կազմակուծումից հետո, և բլոկի պահպանման ջատագովները ներկայացրին բոլոր հնարավոր փաստարկները՝ Վերջինիս գոյությունը վերահմաս-

⁶ Ասմուս Ռ., եշվ. աշխ., էջ 40:

⁷ Վարշավյան պայմանագրի կազմակերպություն։

⁸ Ռուս Բ., եշվ. աշխ., էջ 117:

տավորելու համար արդեն խև փաստացի միաբեռ աշխարհակարգի և զորակացիայի պայմաններում: ՎՊԿ կազմակութամբ ՆԱՏՕ-ի գոյության պահպանան պայմաններում հսկայական վեստ էր ԽՍՀՄ անվտանգությանը, քանի որ դարձեց առավել խոցելի հակառակորդի համար⁹:

ԽՍՀՄ և տցիալիստական ճամբարի մոտայրաւ վկուգման շրջանում Արևմուտքի համար իրամայական էին դառնում ստեղծված իրադրությանը ՆԱՏՕ-ի հարմարեցումը և փոխակերպումը: 1990-1991թթ. սկսվեց Հյուսիսատլանտյան դաշինքի վերածեակերպման քաղաքականության և ուսումնակարության հարմարեցման գործընթացը, որի հիմնական ուղղությունները սահմանվեցին Լոնդոնյան հոչակազրով¹⁰: ՆԱՏՕ-ի Խորհրդի լոնդոնյան գագաթաժողովն ընթացավ (1990թ. հուլիս) Դաշինքի առջև ծառացած հետեւալ մարտահրավերների և խնդիրների համատերասուում՝

1. ուսումնական իրադրության փոփոխությունը. Արևմուտքի և Արևելի միջև լայնամասշտար զինված հակամարտության հնարավոր վտանգի վերացմամբ առաջին պահն էր սկզբեական և միջակետական հակամարտությունների խնդիրը, որ, չնայած անմիջականարկն չէր շնչափում ՆԱՏՕ-ի և նրա անդամների անվտանգության հարցը, այնուամենայնիվ առաջ էր բաշում ՆԱՏՕ-ի ուսումնական վերանայման և անդամների ուսումնական ծախսերը, ինչպես նաև զինված ուժերը կրծառելու հարցը.
2. ԱԵՄ (Արևմտաեվրոպական միության) 90-ականների սկզբից սկսած՝ պաշտպանական համագործակցության ակտիվացման միտումները նպաստեցին դաշինքի ներսում շերտավորմանը,
3. դեռևս 1990-ականների սկզբից անվտանգությանը սպառնացող ավանդական և հարաբերականորեն նոր մարտահրավերների և սպառնայինների առաջացումը, որոնք ՆԱՏՕ-ի՝ որպես ուսումնական կառույցի ապագան դրեցին հարցականի տակ¹¹:

Լոնդոնյան հոչակազրում անհրաժեշտ համարվեց Դաշինքի և նրա գործունեության բարեփոխումը, սակայն չնշվեց դրան հասնելու միջոցները և ուղիները: Արևմտյան քաղաքականների կարծիքով, այն աշխարհը, որ նախատեսում էր այդ փաստաթությը, հնարավոր էր միայն ԽՍՀՄ-ի մշտապես բույլ լինելու դեպքում: Բայ ՆԱՏՕ-ում չկար միասնական կարծիք, թէ ինչ մերողներով էր պետք իրականացնել ճնշում ԽՍՀՄ-ի վրա: Շոշակագիրն ընդգրկում էր ՎՊԿ պետությունների հետ քաղաքական, ուսումնական և անվտանգության ոլորտներում համագործակցություն հաստատելու մասին դրույթ (համագործակցությունը լավագույնս կազմակերպելու համար առաջարկվում էր ՆԱՏՕ-ում հիմնել նախկին ՎՊԿ պետությունների դիվանագիտական առաքելություններ): Լոնդոնյան գագաթաժողովում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ս. Վերները հայտարարեց, որ իրենք ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի երկները դիտարկում են որպես իրենց ապագա գործն-

⁹ Захаров В., Арешев А., նշվ. աշխ., էջ 19:

¹⁰ Штоль В., նշվ. աշխ., էջ 116:

¹¹ Նույնը:

կերներ և հնարավոր ընկերներ¹²: Նույնը հաստատվեց նաև ՆԱՏՕ-ի անդամների արտգործնախարարների Կողենագենյան հանդիպման ժամանակ (1991թ. հուլիսի 6-7): 1990թ. նոյեմբերի 19-21-ը Փարիզում կայացավ ԵԱՀՆ 34 պետությունների և կառավարությունների դեկավարների խորհրդակցությունը: Նախօրեին տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի և ՎՊԿ 22 պետությունների դեկավարների մակարդակով հանդիպում, որի ժամանակ էլ ընդունվեց Նոր Եվրոպայի համար Փարիզի Խարտիան: Խարտիան ամրագրում էր Եվրոպայի բաժանման դարաշրջանի ավարտը: ՆԱՏՕ-ն և ՎՊԿ անդամ պետությունները համատեղ հոչակազրով հայտարարեցին Եվրոպական հարաբերություններում նոր բացված էջի և համագործակցության պատրաստակամության մասին: Փարիզի Խարտիան արտահայտում էր նոր, ժողովրդավարական և միասնական Եվրոպայի տեսլականը, քայլեր ձեռնարկվեցին ԵԱՀՆ-ն որպես Եվրոպայի երկու հատվածների միջև երկխոսության փորում օրինականացնելու ուղղությամբ: Խարտիան հիմնվում էր Եգրափակիչ ակտի 10 սկզբունքների վրա: Իրողություններից մեկն էլ այն էր, որ գլոբալ հակամարտության վերացումը հնարավորություն էր տալու Եվրոպային իր զարգացման քաղաքականությունը հիմնելու մնանական և արմերային առավելությունների վրա¹³: Փաստաթուրում ասվում էր, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները ՆԱՏՕ-ի կենտրոնակությունը համարում էին Եվրոպական անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչ: Նշվում էր, որ Հյուսիսատլանտյան դաշինքը շահագրգրված է Եվրոպական միասնությամբ, սակայն սրան հասնելու և Եվրոպայի առջև ծառացած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է սերտ համագործակցություն Հյուսիսային Ամերիկայի հետ: Նշվում էր, որ Դաշինքի առաջնային խնդիրն էր իներու նոր ուսումնական հայեցակարգի մշակումը. ակնհայտ էր, որ ձևավորվող նոր աշխարհակարգի պայմաններում, եթե չկար արդեն Արևելյան արտաքին հարձակման վտանգը, Եվրոպայում զինված ուժերը անհրաժեշտ են ավելի շատ ստեղծված ճգնաժամերը կարգավորելու և անվտանգության սպառնականների տարածումը:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի՝ ՆԱՏՕ-ի լիակատար անդամակցությունն պահանջելու, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետսառըպատերազման գործունեության և ուսումնակարության հիմնական ուղղությունները որոշակացնելու հարցում կարևոր եղան 1991թ. երկրորդ կեսին տեղի ունեցող գործընթացները.¹⁴

1. 1991թ. ամռանը պատերազմ սկսվեց Բունիախրում: Հարավալավիխան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մանրակերտն էր, որտեղ առավել խստացված էին արտահայտում տարածաշրջանում առկա խնդիրները, հատկապես ազգայինականությունը: Վերանցյալ տարածաշրջանում էլ առկա էին նման սառը պատերազմին բնորոշ ազգամիջյան հակասարյունների երևույթներ, և որպեսզի հնարավոր լիներ խուսափել իրավիճակի հետազարդումից, կարևորվեց ժողո-

¹² Захаров В., Арешев А., նշվ. աշխ., էջ 24:

¹³ Парижская хартия для Новой Европы, www.osce.org/ru/mc/39520?download=true.

¹⁴ Ասմուս Ռ., նշվ. աշխ., էջ 40:

վրդավարական ինստիտուտների կազմակերպումը և Դաշինքի հետ սերտ համագործակցությունը՝ որպես անլուսանգության երաշխիք:

2. 1991թ. ամռանը ԽՍՀՄ-ում տապալվեց հետադիմական կոշտ զժի ուժերի հեղաշրջման փորձը, որն իր ազդեցորյանը ունեցավ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վրա. նախ՝ ակնհայտ դարձավ, որ իրենք էլ ապահովագրված չեն հեղաշրջման նման փորձերից, և երկրորդ՝ ԽՍՀՄ փրկությունը 1991թ. երկրաշարժ առաջացրեց աշխարհաբարձրական ծրագրերում, դադարեցրին իրենց գոյությունը արտարին ու ներքին խորհրդային կայսրությունները (խոր այստեղ ՎՊԿ և ԽՍՀՄ-ի մասին է): Արդյունքը եղավ այն, որ ՆԱՏՕ-ի և ԽՍՀՄ միջուկը հանդիսացած Ռուսաստանի միջն առաջացան նորանկախ մի շարք պետություններ¹⁵: ՎՊԿ լուծարումն ազդեց (1991թ. մարտի 31) Եվրոպայում ընթացող քաղաքական գործընթացների, մասնավորապես Վիեննայում ընթացող բանակցությունների և 1990թ. նոյեմբերի 19-ին Փարիզում ՆԱՏՕ-ի և ՎՊԿ 6 անդամների միջն ստորագրված ԵՄՁՈՒ պայմանագրի հետագա ճակատագրի վրա¹⁶:

1991թ. նոյեմբերի 7-8-ը Հոռոմում ընդունվեց ՆԱՏՕ-ի նոր ռազմավարության հայեցակարգը (Հայեցակարգ-91)¹⁷ որպես ստեղծված նոր քաղաքական իրողությունների հարմարվելու հիմնական սկզբունքների ամբողջություն, որի համաձայն Արևելյաց լայնամասշտար հարձակմանը պատասխանելու նախապատրաստությունը աղես չեր համարվում Դաշինքի առաջնային նպատակներից: Դրան հակառակ առաջին պլան են մրգում ազգամիջյան և տարածքային հակամարտությունները: Այժմ արդեն Դաշինքի գլխավոր խնդիրներն են համարվում ճգնաժամային իրավիճակների կառավարումը, երկխոսության ընդլանումը ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացած պետությունների հետ և անլուսանգության խնդիրների լուծման համատեղ որոշումների ու քայլերի ձեռնարկումը համագործակցության հիմքերի վրա:

Փաստաթյա՞ի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ իիմքում ընկած է «ձկուն արձագանքաման» ռազմավարությունը: Դաշինքի գործունեության հիմնարարային սկզբունքներին՝ կոլեկտիվ պաշտպանություն (Ենթադրում էր ռազմական ներուժի մշտական աճ), երկխոսությունը (Ենթադրում էր Եվրոպայում լար-

¹⁵ Ասմուս Ռ., նշվ. աշխ., էջ 45:

¹⁶ Министр С. Мораторий на ДОВСЕ и Южный Кавказ, "Россия в глобальной политике", № 3, Май-Июнь 2008, www.globalaffairs.ru/p/number/п_10949; ՎՊԿ, իսկ հետո ԽՍՀՄ կազմակալությանց բլոկների վիճ առնակաման վերացումը Եվրոպայում և հետազոտման վեճարունական և Արևելյան Եվրոպայի պետությունների մուտքը ՆԱՏՕ ստիպեցին վերանայել ԵՄՁՈՒ Եվրոպայում սովորական զինված ուժերի պայմանագրի մի շարք դրույթները: Նախկին ՎՊԿ պետությունները մտան ՆԱՏՕ-ի կազմ իրենց զինված ուժերով և սպառագինությունով, սակայն նրանց դեսպրում էր գործել բրկային սահմանափակումները «ինքն ԵՄՁՈՒ-ով»: Դժորի էր նաև ՈՒ-ն՝ սահմանային զինված ուժերի և սպառագինության կրածություն և ՆԱՏՕ մոտած, սակայն ԵՄՁՈՒ պայմանագրին չփակացած հարեւան պետություններում «գորշ տարածքների» առաջացումից:

վածության բուլացմանն ուղղված կորս՝ երրեսն նույնիսկ ուժի կիրառմամբ¹⁷, այսինքն՝ բազմակողմ կապերի զարգացում Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային պետությունների հետ, որը, սակայն, չեր բացառում ՆԱՏՕ-ի կողմից ուժի կիրառմամբ այս պետությունների նկատմամբ: Համաձայն այս հայեցակարգի՝ Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրները Դաշինքի կողմից ներառվեցին կենսական շահերի գոտի: Նրանց հետ հարաբերությունները ՆԱՏՕ-ն սկսեց կառուցել երկողը հարաբերությունների և 1994թ. ընդունված «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Համագործակցության սկզբունքը ներարդում էր նաև փոխգործակցություն ԵԱՀՆ, են և ԱԵՄ շրջանակներում¹⁸:

Հայեցակարգը նոր ճգնաժամամային իրավիճակների առաջացման աղբյուր էր դիտարկում տարածքային պահանջները, ազգային և կրոնական հակասությունները, միջազգային ահարեկառությունը, ԶՈԶ տարածումը և երկակի նշանակության տեխնոլոգիաների կիրառումը, ներպետական իրադրության կտրուկ սրումը՝ կապված անցկացվող սոցիալ-տնտեսական ռեֆորմների հետ, առանձին երկրների կազմալուծումը, միջազգային բեռնատար հոսքերի, կենսական ռեսուրսների, ենուահաղորդակցության և տեղեկատվական հոսքերի խախտումը: Հայեցակարգ – 91-ում ՆԱՏՕ-ի գործունեության հիմնական ուղղություններից էր համարվում ռազմարարական ճգնաժամերի առաջացման և զարգացման ուղղված կանխարգելող քաղաքականությունը: Ուստի և մշակվեց «ճգնաժամերի կառավարման» կոնցեպցիան, որն առաջարկում էր ճգնաժամերի սկզբանավորման և առաջացման նախնական փուլերում կիրառել վերջիններիս կառավարման նոր մեթոդ՝ կանխարգելիչ դիվանագիտությունը (preventive diplomacy): Արա շնորհիվ հնարավորություն էր տաեղծվում հակամարտող կողմերի միջն բռլացներու լարվածությունը, իսկ խաղաղ միջոցներով կարգավորելու անհնարինության դեպքում նախատեսվում էր Դաշինքի Միացյալ զինված ուժերի համապատասխան գործերի կիրառում, ինչպես ՆԱՏՕ-ի սահմաններում, այնպես էլ նրա սահմաններից դուրս վերջինիս կազմի մեջ չմտնող, գլխ ծրագրում մասնակցող պետությունների գործումների հետ:

Այսպիսով, Հայեցակարգ – 91-ում տեղ գտան ՆԱՏՕ-ի քաղաքականության հետևյալ սկզբունքային փոփոխությունները՝

1. հայեցակարգը հիմնվում էր անվտանգության առավել լայն հասկացության վրա՝ կարևորելով հավաքական բնույթի պաշտպանության անհրաժեշտությունը,
2. շեշտադրվում են ՆԱՏՕ-ի գործունեության քաղաքական, տնտեսական, մշա-

¹⁷ Մետա Բ., նշվ. աշխ., էջ 127: Հայեցակարգ – 91-ի դոկտրինայի պարամետրերը զարգացան ՆԱՏՕ-ի գործունեության այս երկու սկզբունքների վրա հիմնված «Հարմելի դոկտրինի» շրջանակներում: Նշենք, որ «Հարմելի դոկտրինը» ՆԱՏՕ-ի կողմից պաշտոնապես չկը ընդունվել, այլ 1967թ. ՆԱՏՕ-ի Խորհրդի կողմից ընդունված և դաշինքի դեկավար շրջանակների մոտ մուտքության և մուտքությունների փոփոխությունը արտօնայուղը մի փառաթօռություն էր, որ կրում էր «Միաւթյան ապագա խնդիրները» և ներկայացվել էր Բելգիայի արտգործնախարար Հարմելի կողմից:

¹⁸ Ասմուս Ռ., նշվ. աշխ., էջ 39:

կուրային, սոցիալական բաղադրիչները, այսինքն՝ միայն ռազմականը չէ, որ համարվում է «ընդհանուր անվտանգության» բաղադրիչ:

3. այն համապատասխանում էր Դաշինքի՝ առճակատումից համագործակցության անցնելու իրականությանը՝ որպես Երաշխավորված խաղաղության բաղադրիչ¹⁹:

Ըստքելով Խավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքների նկատմամբ՝ Հայեցակարգ-91-ը պահպանեց դաշինքի նախկին բարական նպատակները՝ կանխելով դրանց բաժանումը Եվրոպայում անվտանգության այլ կառուցների միջն (ԵՄ, ԵԱՀՆ, ԱԵՍ):

Հայեցակարգ-91-ը որոշում էր անվտանգության ապահովման հիմնական նոր մոտեցումները՝ հիմնվելով երկխոսության, համագործակցության և հավաքական պաշտպանության վրա: Նրանում ակնհայտ էին հետևյալ առաջնային դրույթները՝

1. Եվրոպայում կայունության և անվտանգության անհրաժեշտ հիմքերի ստեղծումը, դեմոկրատական ինստիտուտների կայացումը, վեճերի խաղաղ լուծումը, պայքար ուժի սպառնալիքի կամ վերջինիս կիրառման դեմ,
2. ՆԱՏՕ-ի՝ դաշնակիցների համար կենսական կարեռություն ներկայացնող հարցերի քննարկման համար տրանսալյանտյան ֆորում հանդես գալը,
3. դաշինքի անդամ պետությունների պաշտպանությունը և դրանց նկատմամբ ազրեսիայի զսպումը,
4. Եվրոպայում ռազմավարական բարանսի պաշտպանությունը:²⁰

Իրավամբ, ինչպես նշել էր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Օրսմանը, Լոնդոնի (1990թ.) և Հռոմի (1991թ.) զարգացմողությունը առաջարկեցին ՆԱՏՕ-ի հետազա գործունեության հիմնական գծերը.

1. ՆԱՏՕ-ն ընդունեց սպառազինության նոր ռազմական ստրատեգիա՝ վերակառուցելով իրամանատարական կառուցները և սեփական ուժերը, հաշվի առնելով Սառը պատերազմի ավարտից հետո արաջացած անվտանգության սպառնալիքները: Այս իրաժարվեց ծանր սպառազինությունից և կրծատելով Եվրոպայում առկա միջուկային գենը՝ իրաժարվեց նաև առաջնային տեղակայման ուժերի օգտագործումից: Արա փոխարեն ոչ միջուկային ուժերն ընդլայնեցին իրենց ձկուաթյունը և շարժուակությունը, ինչը հնարավորություն կտար արագորեն արձագանքել ճշխաժամերին և դրանց կարգավորմանը՝ զուգահեռաբար աջակցելով ՆԱՏՕ-ի որեւէ անդամի վրա հարձակման անդրադարձմանը:
2. ՆԱՏՕ-ն հիմնեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը՝ անվտանգության բնագավառում ՎՊԿ երկրների հետ խորհրդակցությունների անց-

¹⁹ Կյանեցօք Դ. Հրետոմագիա, Современные международные отношения, Книга I, Благоевград, 2014, стр. 77.

²⁰ Захаров В., Арешев А., եշվ. աշխ., էջ 47: Հայեցակարգ - 91-ը ներառում էր նաև այլ կարևոր դրույթներ՝ յուրաքանչյուր երկրի սեփական անվտանգությունը սպահովելու իրավունքը ձևադրությունը, գիտական ուժերի որպես ծայրահեղ միջոցի կիրառման փաստի միանման ընթացքը, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների գիտական ռազմավարության փոխհավաքակցված ընույթը ձևադրությունը: Հայեցակարգը հաստատեց նաև «միջուկային զսպման» դրույթը՝ որպես պատերազմ կանխարգելող և կարունացնող բաղադրիչ:

կացման, գործողությունների կոորդինացման և փոխադարձ վստահության համար,

3. ՆԱՏՕ-ն հայտարարեց, որ անվտանգության նոր սպառնալիքները գալիս են այն երկրներից, որոնք դուրս են գտնվում ՆԱՏՕ-ի ստեղծման իմքը հանդիսացող 1949թ. ապրիլի 4-ին ստորագրված «Կաշինզունյան պայմանագրով նախատեսված Դաշինքի պատասխանատվության գրառուց²¹: Այս կերպ լուծված կարելի է համարել կազմակերպության գործունեության աշխարհագրության հետազա հարցը: Բացի այդ, ՆԱՏՕ-ն խաղաղության պահպանության համար առաջար կությամբ հանդես եկավ ԵԱՀՆ-ի հետ համատեղ գործելու: Ճգնաժամերի կար գափորման համար ենթադրվում է համագործակցության ծավալել ՍԱԿ-ի, ԵԱՀՆ-ի, ԵՄ-ի, ԱԵՍ-ի և ԵԽ-ի հետ: ՆԱՏՕ-ի դերը այստեղ կարևորվում է երա նով, որ ունի զինված ուժեր՝ բարակական և ռազմական համագործակցության հմտություններով՝ անվտանգության սպառնալիքներին ճկուն արձագանքելու համար:
4. ԱՄՆ-ն, չնայած իր բարության աճող խնդիրներին, շարունակելու էր պահպա նել իր անդամակցությունը²²:

1990-ական թվականներին ընդունված Ռազմավարության հայեցակար գերը, ի տարբերություն նախկինում ընդունվածների, չեին վերաբերում որոշակի ռազմապահարական սապեկունների, այլ հոչակում ևն նոր հայեցակարգային մոտե ցում հետսառըատերազման Եվրոպայում և ամրոց աշխարհում: Եթե Արևմտյան բարկը չեր կարող նույնիսկ պատերազմել Սառը պատերազմի նման հան գուցալուծումը, ապա տևականորեն ՆԱՏՕ-ի դեկավաները կազմակերպության ստեղծման օրից ձգուկ են հասնել սրան՝ սկզբնավես լրացնելով և ընդլայնելով իրենց ռազմավարական դոկտրինաները, ապա և օգտագործելով ՎՊԿ կազմալուծ ման (1991թ. մարտ) և Բելովեժյան համաձայնության (1991թ. դեկտեմբեր) միջն ըն կած ժամանակահատվածը՝ հաստատելու համար նոր ռազմավարության հայ եցակարգը 1991թ. նոյեմբերին: Հայեցակարգ - 91-ը ուղղորդված էր նախկին ՎՊԿ պետությունների շրջանում նոր կառուցների և զարգափարախոսության ամրա պելիմանը: Այս երկրները չպետք է ժամանակ ունենային ստեղծելու իրենցը: ՆԱՏՕ-ի դեկավարությունը, սա բաց զիտակցելով, նախ պատրաստում էր ՎՊԿ պետություններին իրենց զարգացման վեկտորի փոփոխությանը՝ ժամանակ չկորցնելով փաստացիորեն օրինականացնելու այս գործընթացը:

1991թ. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շաբթ երկրներ ՆԱՏՕ-ին դիմեցին իրենց ասացաված անդամի կարգավիճակ տալու համար: Ի պատասխան 1991թ. դեկտեմբերի 20-ին՝ ՆԱՏՕ-ն արևելյան վրապական 9 պետությունների հետ հիմնադրեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը (ՀԱՀԽ):

²¹ Североатлантический договор, Вашингтон, Федеральный округ Колумбия, 4 апреля 1949 г.: 1949թ. ապրիլի 4-ին պայմանագրված կողմերը իրենց նապատակների համարում կայու թության ամրապնդումը և բարեկեցության բարձրացումը շրջապատճենության տարրածացանությունը (այն երկառությունը էր ԱՄՆ, Կանադան և արևմտյան համարված մինչև ԽԱՀԽ և ՎՊԿ կազմալուծումը), www.pato.int/cps/rus/pato/live/official/texts_17120.htm:

²² Շտու Բ., եշվ. աշխ., էջ 122:

բազմակողմ խորհրդատվական մարմին, որի շրջանակներում է մշակվելու իր համագործակցությունը ՆԱՏՕ-ի և նախկին ՎՊԿ պետությունների միջև։ ԽՍՀՄ վիլուգումից հետո նրանց շարքերը համալրեցին նախկին խորհրդային պետությունները, ինչպես նաև Ալբանիան։ ՀԱՀՆ գործունեության մեջ գիտավոր ուշադրությունը դարձվում էր բազմակողմ բաղարական երկխոսությանը՝ իմանված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների և ՆԱՏՕ-ի միջն անդամակցության աստիճանին շիասնող, սակայն և առավել սերտ համագործակցության վրա²³։

Սարը պատերազմի ավարտը հանգեցրեց որակական մի շարք փոփոխությունների, որոնցից էին Յալթա-Դուստրամյան համակարգի վերացումը, ԽՍՀՄ անկումը և երկրներ աշխարհակարգից անցումը միաբների, Եվրասիայի կենտրոնական խորը ֆրազմենտացիայի և մայրցամաքում նոր պետությունների առաջացումը՝ աշխարհաքաղաքական պոտենցիալով։ Շնորհիվ Ս. Գորբաչովի վարած բաղարականության և ԽՍՀՄ-ի վիլուգման մի շարք օրինակիվ և սուբյեկտիվ պատճառների՝ Արևմուտքը իր համար բավական անսպասելիորեն հաղթող դուրս եկավ Սարը պատերազմում։ ԽՍՀՄ և սոցիալիստական ձամբարի վիլուգում, ինչպես նաև Չմիացման շարժման հետինակալույթյան սպառումից հետո մնաց մեկ ուժային կենտրոն՝ ԱՄՆ, որն էլ իր ազգային շահերի պաշտպանության համար հիմնվում էր արդեն զլորակ դաշինքների և կուալիֆիանների վրա, որոնցից մեկն էլ հենց ՆԱՏՕ-ն է։

1991թ. նոյեմբերին ՆԱՏՕ-ի՝ Հռոմում կայացած զարգանաժողովի շրջանակներում Դաշինքը բացահայտեց իր հետսառըատերազմյան նոր տեսակը՝ հաստատելով Նոր ուսումնական հայեցակարգ և իմանելով ՀԱՀԽ-ն նախկին խորհրդային բլոկի պետությունների հետ կապ հաստատելու համար։ ԽՍՀՄ վիլուգումը առաջացրեց նորանոր փոփոխությունների կարիք։ 1991թ. Հայեցակարգն ստեղծվեց այնպիսի աշխարհի համար, որտեղ դեռ գոյություն ուներ ԽՍՀՄ-ը, և ՆԱՏՕ-ի գործողությունների նպատակներից մեկն էլ հենց հնարավոր վտանգի գոյնումն էր, որ տեղ էր գտնել հայեցակարգում առավել մեղմ ձևակերպումներով։ Այս ուսումնական հայեցակարգը ամրագրեց անցումը առձականման ուսումնական ստրատեգիայից՝ լայնածավալ անվտանգության ապահովմանը։ Սա ուսումնակարգություն էր առանց հակառակորդի, քանի որ այլև չկար ԽՍՀՄ առաջնորդությամբ գործող ՎՊԿ-ն։ Հայեցակարգ-91-ը հրապարակվեց ցույց տալու համար ՆԱՏՕ-ի գործողությունների բափանցիկությանը, արժանահավաստությանը և համագործակցելու պատրաստակամությունը։ Չնայած ընդայնումը Դաշինքի հայեցակարգում արածնային խնդիր չէր, այսուամենայնիվ չէր կարելի բացառել նմանօրինակ զարգացումները ապագայում։

СТРАТЕГИЯ НАТО ПО НОВОМУ МИРОВОМУ ПОРЯДКУ ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ В 1989-1992 гг.

Резюме

A. Айрапетян

В статье рассматривается стратегия НАТО по новому мировому порядку после холодной войны в 1989-1992гг. Особенно подчеркиваются начало урегулирования отношений между СССР и США, состоявшиеся встречи и переговоры между стран ОВД в последнее время их существования и НАТО, а также в рамках НАТО и впоследствии представление Новой стратегической концепции альянса, содержащая стоящие перед НАТО приоритеты и вызовы. В статье обосновываются определяющие факторы и причины стремления полноправного членства НАТО стран Центральной и Восточной Европы и направления деятельности стратегии НАТО после холодной войны. В статье делается вывод, что Концепция-91, выдвинутая усилиями руководителей НАТО, должна была подготовить почву для трансформации и адаптации НАТО в новом мировом порядке. Такой акцент дал возможность расширить круг возможных угроз для демонстрации возможного применения сил в традиционной зоне ответственности, в дальнейшем дающие возможность для мешательств во внутренние дела других стран.

Անդեկություններ հեղինակի մասին

Հայրապետյան Աստղիկ Մերգելյան - ՀՀ Քննչական
կուխտեհ դեպարտամենտի արտաքին կապերի բաժին։
E-mail: astghhaztyrutyun@gmail.com

²³ Штолль Բ. Լրմու «Нового мирового порядка», Москва, 2010, стр. 482; 1997թ. ՀԱՀԽ վերաձևակերպվեց որպես Եվրատանըլյան գործիքերակարգական խորհրդություն (ԵԱԳԽ)։

Կարինե ԲԱԶԵՑԱՆ

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՔՄԱՆ

Հայոց առաջնային արտադրության մշակույթում առանձնահատուկ տեղ էն զրավում տնայնազործությունն ու արհեստները: Չնայած նրան, որ համաձայն դասակարգման՝ դրանք դիտվում են որպես օժանդակ տնտեսական զբաղմունքներ, սակայն արհեստները միշտ բարձր դիրք են զրավել ու կարևոր դեր խաղացել հայ ժողովրդի կյանքում: Ծագելով դեռևս նեղինքան դարաշրջանում, երկրագործության ու անանապահության հետ զուգընթաց զարգանալով ու կատարելազործվելով՝ արհեստները հասել են ընդհուպ մինչև մեր օրեր:

Արհեստները, կենտրոնանալով քաղաքներում, բարձր զարգացման հասան արդեն միջնադարում, իսկ XVII դարում առավել կատարելազործվեցին մասնագիտանալով ու ճյուղավորվելով: Պատմականորեն քաղաքների թիվը ավելի մեծ էր Արևմտյան Հայաստանում, ուստի պատահական չէ, որ արհեստներն էլ առավել զարգացած էին այս տարածաշրջանում:

Հայազգի արհեստավորները զգալի դեր են կատարել նաև Փոքր Ասիայի արհեստների զարգացման գործում: Դեռևս սեցուկների ժամանակ հայերի ձևորում էր գոնվում մետաղամշակությունը, և առհասարակ տեղական արյունաբերության մեջ մեծ էր նրանց տեսակարար կշիռը: Հենց այս պատճառով էլ, սկսած սովորական Սուհամմադ II-ի ժամանակներից, բուրք դեկավարող շրջանները Արևմտյան Հայաստանի զանազան մասերից պարբերաբար հայ արհեստավորներին դեպի Կ. Պոլիս էին քշում:¹

XVI –XVII դարերում Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքները վերածվել էին ռազմական ամրոցների ու քաղաքացիական վարչության կենտրոնների: Արհեստագործական արտադրությունը, որը կարգավորվում ու տնօրինվում էր պետության կողմից, պետք է նախ և առաջ բավարարեր բանակի, պալատի ու ֆեոդալների պահանջները: Արևմտյան Հայաստանում նշված դարերում առավելապես զարգացած էին արհեստագործության հետևյալ ճյուղերը՝ մետաղամշակման հետ կապված արհեստները, գործվածքների արտադրությունը, գորգագործությունը, կաշվի արդյունագործությունը, բրուտագործությունը և քարակոփությունը:

Հայ արհեստավորները բազմաթիվ բնագավառներում չունեին իրենց մրցակիցները: Առաջին հերթին պետք է հիշատակել ճարտարապետներին, շինարար վարպետներին, քարակոփներին և որմեադիրներին, ովքեր դարեր շարունակ

¹ 1473թ. Գերջանում Ռուգուն-Հասանին հաղթելուց հետո սովորական Սուհամմադ Ֆաթիք Էրգուումի, Երգնկայի, Տիվրիկի, Սեբաստիայի, Կարրերիրի և այլ վայրերի հայ արհեստավորներին հայքագրեց ու բռնությամբ տեղափոխեց Սումերու: Հետազարդ 1479, 1514, 1534 թվականներին, տեղի ունեցան հայ արհեստավորների նոր բռնի տեղահանումներ՝ մայրաքաղաքում վերաբնակեցնելու նպատակով: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1972, էջ 288–289:

մեծապես մասնակցել են օսմանյան երկրի շինարարական ձեռնարկներին: Նրանք կառուցել են համբային շենքեր, պալատներ, մզկիթներ:

Հայերի կողմից է կառուցվել Հայդար Փաշա-Բաղրամյան երկաթուղու կարևոր մասը: Պետական շինարարությունը՝ արքունի ճարտարապետությունը, սերնդեւերունդ գտնվում էր Պալյան գերդաստանի պատասխանատվության տակ: Այս բացառիկ ընտանիքի 9 անդամները, շուրջ 2 դար իրար հաջորդելով, վարեցին արքունի ճարտարապետի պաշտոնը և Կոստանդնուպոլիսը զարդարելով իրաշակերտներով՝ իրենց բարձր արվեստի կնիքը բռնեցին սովորանների մայրաքաղաքի վրա:

Գորգագործությունը ևս զարգացել է հայերի միջոցով: Կայսրության զանազան քաղաքներում՝ Սեբաստիայում, Կևսարիայում և այլուր, հայերի գործած գորգերը մեծ համրավ ունեին համաշխարհային շուկայում: 19-րդ դարից սկսած՝ նրանք զարկ տվեցին գորզի արտադրությանը:

Երկրում մեծ հոչակ ունեին հայ զինագործ վարպետները: Կարնեցի զինագործները դարեր շարունակ զենք են մատակարել օսմանյան բանակին: Կարինում մեծ հոչակ ուներ զինագործների Վեմյան գերդաստանը: Քիչ չեն եղել արքունի հայ զինագործները, ովքեր զենքեր էին պատրաստում սովորանների համար: Նրանցից շատերի գործերն այսօր պահպան են աշխարհի տարբեր բանզարաններում:

Կային արհեստներ, որոնք կարծես թե բացառապես հայերին էին վերապահված: Նրանցից մեկը, օրինակ, ատաղազործությունն էր և, մանավանդ, կահույքագործությունը: XIX դարի 60-ական թվականներին նշանավոր էր կահույքագործների Քեմիացյան գերդաստանը: Գալուստ Քեմիացյանն առաջինն էր կայսրությունում, ով Կոստանդնուպոլիս հիմնեց կահույքի գործարաններ:

Խեցեգործությունը կայսրություն մուտք է գործել XV դարում Քյութահիսյում հաստատված հայերի կողմից: Պարսկաստանից գաղթած հայ արհեստավորները զարգացման նոր որակ էին տվել հայնապահու արտադրությանը: Հայ վարպետները հետամուտ եղան և կարողացան բրացնել եվրոպական, առանձնապես ֆրանսիական կիրառական այս արվեստի նորությունները՝ իրենց արտադրանքը մրցունակ դարձնելով եվրոպական շուկայում: 1914 թ. Քյութահիսյում գործող հայնապահու երեք արտադրություններն աշխատում էին Լուդրոնի և Փարիզի շուկաների համար:

Հին ժամանակներից ի վեր հայերի նախընտրած արհեստներից եր ոսկերչությունը: Օսկերչության կարեռը կենտրոններից էին Կոստանդնուպոլիսը, Վանը և Կարինը, որոնք հայտնի էին դարձել իրենց ոսկերչներով: XVIII և XIX դարերում Կոստանդնուպոլիսի ոսկերիչների դասը գործել ամրողովին բաղկացած էր հայերից: 1806 թվականի սովորանական մի հրովարտակում հիշատակվող

տասնյոթ լավագույն վարպետ ոսկերիչներից միայն մեկն էր հույն: Հայ արծաթագործների, ոսկերիչների և ակնազործների արտադրանքն իր որակով զերպանում էր Եվրոպականին: Հայ ոսկերիչները միաժամանակ թանկարժեք բարեր, հատկապես աղամանդ մշակող լավագույն արհեստավորներն էին: Հայերն այս արհեստի սկզբնավորողներն էին երկրում: Աղամանդ մշակող հայ վարպետները չեն զիջում Հոգածիայի, Բելգիայի, Ֆրանսիայի իրենց արհեստականիցներին:

Ժամագործության մեջ հայերը նույնական առաջնակարգ դիրքում էին: Հայ ժամագործների մեջ նշանավոր էր մեծանուն երգահան Տիգրան Չուխաճյանի հայրը՝ Գևորգ Չուխաճյանը, ով սուլքան Մեջինի արրունի ժամագործապետն էր: Նա հետքել է երգոյ ժամացույց: Իր վարպետությամբ հայտնի էր նաև ժամագործ Մկրտիչ Գալֆայանը, ով հնարած մեծ ժամացույցը լարվում էր տասը տարին մեկ անգամ: Նա մեծ հոչակ է ունեցել նաև որպես ոսկերիչ, պատրաստել է օսմանյան զինանշանը: Եղել է սուլթան Սահմուղ Բ-ի ոսկերիչը:

Զիջյան գերդաստանի անդամները շուրջ 3 դար բարձրորակ ծնծղաներ են պատրաստել և հոչակվել ամբողջ աշխարհում: XIX դարում Բերովք Զիջյան Անգլիայում ներկայացրել է իր ծնծղաները: Ավստրիացի երգահան և խորակար Յոհան Շտրաուսը պատվիրել է այդ ծնծղաներից՝ նշելով, որ դրանց երևան գալով լրացրել է իր նվազախմբի հարվածային գործիքների ակնհայտ պակասը: Զիջյան ները 1914թ. ունեին ծնծղայագործության երկու գործարան: Նրանց պատրաստած ծնծղաներն իրենց որակով գերազանցել են Եվրոպականին թե՝ իրենց հնչողությամբ և թե՝ դիմացկունությամբ: «Զիջյան» փորագրությունը կրող ծնծղաներն այսօր գործածվում են աշխարհի բազմաթիվ սիմֆոնիկ, փողային և էստրադային նվագախմբերում:

Կոշկակարությունը և դերձակությունը նույնական հայերի նախասիրած արհեստներից էին: Որոնք զարգացած էին Կ.Պոլսում, Երզնկարում և երկրի այլ քաղաքներում: Կարնու հայ դերձակներն առաջնակարգ էին Թուրքիայում: Նրանք էին կատարում օտար վաճառականների և նույնիսկ կառավարության պատվերները: Եվրոպական հագուստները երկրի քաղաքներ մուտք են գործել հայերի և հույների միջոցով: XX դ. սկզբին հայերն էին անզիական նորաձեւության տարածող վարպետները:

Հայ կինը ևս իր բաժինն է բերել կայսրության մեջ արհեստների զարգացման գործին: Հայ կինը ճաշակն ու սունդագործելու ձիրքն ի հայութ են եկել ասեղնագործության և ժանյակագործության մեջ: Եվրոպան այս աշխատանքները ճանաչում է հայկական ժանյակ՝ «տանքել արմենին» անվանումավ: Այդ ժանյակները զարդարում էին սուլթանական հարեւի և բուրք բարձրաստիճան պաշտոնական հագուստները:

Գևորգ, Ստեփան եւ Վիշեն Արդուլյան եղբայրները եղել են օսմանյան լուսանկարչության հիմնադիրները: Նրանք արքունի լուսանկարիչներն էին, որոնց վարկը շատ բարձր էր սուլթանի մոտ: Արդուլյանների մոտ էին լուսանկարվում Կոստանդնուպոլիս ժամանած եվրոպական երկրների մեծանուն այրերը:

Թե՛ մայրաբաղարում և թե՛ երկրի կենտրոնական քաղաքներում գրեթե ավրողովովին հայերն էին լուսանկարիչները, բժիշկները, դեղագործները, փաստաբանները և ազատ մասնագիտության այլ ներկայացուցիչները: Ինչպես ուստի պատմաբան Գոլգորոսկուն է վկայում, քաղաքներում առանց հայերի չեր կարող գոյություն ունենալ տեխնիկայի, արվեստի, գիտության, արհեստագործության որևէ ձյուղ:

Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում հայերի գրաված դիրքի մասին վկայում է հայերի 1915թ. տեղահանության և կոտորածների ականատես նոհաննես Լեփսիուսի մի նկարագրություն: «Հայերի տեղահանությունից հետո դատարկված բնակավայրերում արդեն, մի քանի բացառություններից բացի, ո՞չ որմնադիր էր մնացել, ո՞չ երկարագործ, ո՞չ հրուս, ո՞չ ատաղձագործ, ո՞չ բրուս, ո՞չ դերձակ, ո՞չ կոշկակար, ո՞չ ոսկերիչ, ո՞չ դեղագործ, ո՞չ փաստաբան: Զիար այլև մեկ անձ, որ գրադիւմ էր ազատ մասնագիտություններով և արհեստով»²:

Այսպիսով, արհեստները, այլ գրադիւններն ու ազատ մասնագիտությունները քաղաքային հայ բնակչության հիմնական միջոցն էին: Սակայն, բացի կենսապահովման առաջնային գործառույթից, արհեստներն ունեն նաև երնիկ ինքնության պահպանման գործառույթ, որի դերն ու նշանակությունը հատկապես վատ դրսերվեց հայոց Մեծ եղեռնի տարիներին ու հատկապես դրանից հետո, երբ աշխարհասպիցու հայ ժողովուրդն իր գոյությունը կարողացավ պահել ու մեջքը շտկել հենց արհեստներին տիրապետելու շնորհիվ: Յեղասպանության համատերսում արհեստների դերն ու նշանակությունը դիտարկելիս հստակ տարածություն է երկու իրողություն: արհեստը՝ որպես ֆիզիկական բնաջնջումից փրկվելու միջոց զանգվածային կոտորածների ժամանակ և որպես գոյությունը պահպանելու եղանակ՝ Մեծ եղեռնից հետո:

Նախ անդրադառնանք ստացին իրողությանը: Ինչպես նշվեց, դեռ դարեր առաջ աշխատող ձեռքերի, հատկապես արհեստավորների նկատմամբ եղած պահանջարկը մեղմացրել է տեղացի բուրքերի հայացինց մոլուցը: Այս երևույթը հայտնի է գեղ Օսմանյան Թուրքիայի ձեռվորման ու կայացման տարիներից, ինչի մասին խոսվեց վերևում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Երիտրուրբերն իրականացնում էին իրենց հայացինց քաղաքականությունը, որը մնացած տղամարդկանց մի փոքր մասը կարողացավ փրկվել շնորհիվ իր արհեստավարժությանը: Բերենք մի քանի օրինակներ ականատեսների վկայություններից: Գևորգ Չուլայանն իր «Գրվածք սփյուռքում արևմտահայերու գրադերած արհեստներու մասին» ձեռագիր աշխատության մեջ հիշում է. «1915 թվին մեր հարազատներից հորեղբորս, մորեղբորս ընտանիքներով մեր քարավանից բաժնեցին և նրանց քեցին դեպի Սիրիա: Դամասկոսի մոտերքը կարավանը կանգ կառնէ: Այդ ժամանակ այսպիսի մի բարեհոգություն, որ բուրք և գերմանացիներից հրացք պետք էր սեպել, և կամ թե շատ խիստ կարիք ունեին արհեստավոր մարդկանց համար, և մի հրաման կուզա, որ այդ կարավանում արհեստավոր

² Զերբեզյան Կ., Աֆրոն-Կարամիսարի հայ գաղթօքայիր, Եր., 1986, էջ 21:

մարդկանց իրենց ընտանիքներով բերվի Շամ՝ Սուրիխ մայրաքաղաք և արհետավոր ընտանիքները կօռկվեն ոչ արհետավոր ընտանիքներուց: Անշուշն իրենց ալ չզիտեին, թե լավ են անում, թե ոչ, բայց և այնպես այդ արհետավորները իրենց ընտանիքներով ողջ մեացին մինչև պատերազմի վերջը, շնորհիվ իրենց արհետին, և ողջ ալ վերապարձան պատերազմից հետո, իսկ արհետավոր չեղողներին քշեցին դեպի Ռարքա և այնտեղից է ուրիշ քարավաններով տարան մինչև Տերգորի անապատները: Ահա արհետավոր գիտենալը ինչպես օգնեց այդ մարդկանց»³

Այնուեւսն նա մանրամասն ներկայացնում է նաև իր դերձակ հոր փրկության պատմությունը, որը շնորհիվ իր արհետավարժության ազատվում է տաժանակիր աշխատանքներից ու մինչև պատերազմի վերջ մնում հայրենի Դարդանել քաղաքում:

Նույնպիսի վկայություն ունենք նաև Այնթապից: «Այնթապի հայերը աքսորվում էին երկու ուղղությամբ՝ դեպի Միջիայի հարավային մասերը, Պաղստին և դեպի Դեր Զոր: Տեղահանության չենքարկեցին այն փոքրաթիվ հայերն ու նրանց ընտանիքները, որոնք՝ որպես արհետավոր, բժիշկ և այլն, օգտակար էին բանակին կամ աշխատում էին ամերիկյան հաստատություններում»⁴:

Արհետների՝ որպես սպանդից փրկվելու գործոնի մասին վկայում է նաև Կարապետ Շերքեզյանն իր «Աֆխոն-Կարահիսարի հայ զայրօջախը» գրությունում 1919-20 թթ. հույն-թուրքական պատերազմից հետո ստեղծված իրադրության մասին՝ նա գրում է. «Մինչ այդ տեղական թուրքական իշխանությունը եւրաքարելով, որ հայերը կարող են անցնել հույների կողմը և օգնել հունական զորին, բաղադրի 18-50 տարեկան բոլոր հայ տղամարդկանց աքսորեց Փոքր Ասիայի արեւելում գտնվող Կոչիխասը կոչված սակավաբնակ, անբերի, առի լճերի շրջանը: Արարտյալ հայ աֆխոնցիներն իրենց գոյությունը բարձ էին տալիս տուկայի պայմաններում: Միայն արհետավորները մոտակա գոյութերում ու ավաներում ծանր աշխատանքով կարողանում են պահպանել իրենց գոյությունը՝ ապշեցնելով տեղական բնակչյաներին»⁵:

Եթե արհետավի շնորհիվ բնաջնջումից փոկվեց հայ բնակչության մեջ սովոր, ապս մնացած մասն իր ձեռքի աշխատանքն ու արհետավարժ հմտություններն օգտագործեց գոյությունը պահելու և մեջքը շակելու համար: Ահա ինչպես է արհետավի դերը կարևորում Գ. Զուլայանը. «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սասատիկ տուժած, ամեն ինչ կորցրած ողջ մեացած հայերը շշմած ու մոլորված ցրվեցին ասթին, անթին, տեր ու տիրական շունենալով իրենց կորցրածից, կողոպտվածից ոչ մի հատուցում չստանալով բուրք կողոպտից կառավարությունից, ի՞նչ պետք է ընեին, ինչը՝ պետք է ապրեին այդ տուժայի մարդիկ, և ոչ որ շնորհաց այդ մարդկանց մասին: Հատուկ կոմիտե կազմվեց, որ իր թե բուրք կառավարությունից պիտի գանձեր բոլոր տուժած հայերու նյութական

³ Զուլայան Գ., Գրվածք սիրություն արևմտահայերու գրայեցրած արհետներու մասին, 1979, ձեռագիր, ԳԱԱ ՀԱՄ, ԱԲԱ 5/89, էջ 3-4:

⁴ Թորմածեան Հ., Այնթապի ասեղնագործությունն, հ. Ա., Հալեպ, 2015:

⁵ Շերքեզյան Կ., Աֆխոն-Կարահիսարի հայ զայրօջախը, էջ 122:

լորուստներու արժեքը և պիտի բաժաներ ողջ մեացած հայերուն: Ցուցակ կազմվեց երկու հատ, մեկը հանձնվեց, իսկ մյուսը մնաց մարդկանց մոտ, և այդպես միակ ցուցակը մնաց մարդկանց մոտ, և ոչ մի հատուցում չստացավ տուժող հայր: Բայց հայ ժողովուրդը երեք շնուսահատվեց և սկսակ իր զիշտն ճարը տևանել:

Մրանից վայսուն տարի առաջ, որ արդեն պատերազմը վերջանալու վրա էր, և ողջ մեացող հայերը ցրված էին բուրքին և արաբական երկրներում, այն ժամանակ այդ երկրներում ոչ գործարան կար, ոչ ալ աշխատանոց, ինչպես ու ապրեցին այդ մարդիկ, ինչպես պիտի պահեկն իրենց գոյությունը, եթե շատ շատերը արհետավոր չըլլային»⁶:

Այս իրադրությունը կարենու էր հատկապես կանանց ու որք երեխաների զուրյան հիմնախնդիրը կարգավորելու առումով, քանի որ փրկվածներից շատերը հետո նրանք էին: Հայտնի են բազմաթիվ օրինակներ այն մասին, թե ինչպես հայ կանանց և աղջիկների իրենց ձեռագործով կարողացան գոյություն պահպանել, երեխաներին կերակրել ու ուղի կանգնեցնել: Ասելնագործությունն ու ժանեկագործությունն այն արհետներն են, որոնք, ի տարբերություն գորգագործության, որին բարյ գործիքի կամ հաստոցի կարիք չունեն, ուստի հենց դրանցով էին շատերը գրադփում օտարության մեջ:

Դեռ 1895-96 թթ. համբյան կոտորածներից հետո ամերիկյան, գերմանական և Եվրոպայի այլ երկրների միսիոներական կազմակերպությունները, ճիշտ զնահատելով հիշյալ արհետների արտադրանքի պահանջարկը, օգնության եկան Արևմտյան Հայաստանի աղեւոյալ բնակչությանը՝ տեղերում բացելով որբանոցներ ու արհետանոցներ: Դրանց թվով բազմապատկեց Մեծ Եղեռնից հետո բոլոր այս բնակավայրերում, որտեղ տեղակարգած էին կոտորածներից փրկվածները: Այդ կազմակերպություններն ու անհատներն զբաղվում էին նաև պատրաստի արտադրանքի իրացման հարցով, ինչը ևս կարենու էր, քանի որ հայ կանանց չին տիրապետում լեզուների և ավանդաբար դուրս էին շուկայական հարաբերություններից:

Արհետներին տիրապետելու կարևորվում էր նաև երեխաների ու պատանիների աշխատանքային դաստիարակության գործընթացում: Հայ որբանցներին նոր կյանքի պատրաստելու համար անհրաժեշտ էին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև գործնական հմտություններ՝ իրենց ապրուստը վաստակելու համար: Ուստի որբանոցներում հատուկ ուշադրություն էր տրվում արհետների ուսուցմանը, որոնց հատկացված դասաժամերը գերազանցում էին մյուս առարկաների ժամերին: Այս դեպքում ևս դպրոցների ու որբանոցների դեկավարները կազմակերպում էին իրենց սաների աշխատանքների վաճառք՝ ստացված գումարն օգտագործելով նրանց խնդիրները լուծելու համար:

Այսպիսով՝ բարեգործական, միխմներական կազմակերպությունների ու անհատների միջոցով Եղեռնի տարիներին ու դրանից հետո հայ զայրականների հետ հայկական արհետներն ու հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների մասին:

⁶ Զուլայան Գ., նշվ. աշխ., էջ 3:

թյան նմուշները դուրս եկան իրենց բնօրքանից և սփռվեցին աշխարհով մեկ՝ ամենուր ներկայացնելով ազգային արվեստը՝ որպես հայ ժողովրդի դարավոր մշակույթի բարձրարժեք վկայություն, լայն ճանաչում բերելով նրան։ Այդ տարիների մասնաւում, ականատեսների հիշողություններում, արխիվային փաստաթղթերում բազմաթիվ տվյալներ են պահպանվել, որոնք վերաբերում են որբանացների սաների, դպրոցների աշակերտուիկների բարձրարժեք ձեռքի աշխատակեներին, դրանց ժաւադրմանը և վաճառքին՝ կարերելով դրանց վաճառքից ստացված հասույթը՝ որպես ստեղծված դրությունից դուրս գալու և մեծարիվ գաղթականության օգնելու այլնուրանքային տարբերակ։

РЕМЕСЛА В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДА АРМЯН

Резюме

K. Базян

Ремесла были основным средством существования городского армянского населения Западной Армении и Турции. Кроме основной функции жизнеобеспечения, ремесла исполняли также функцию сохранения этнической идентичности, роль и значение которой особенно ярко выявились и в годы Геноцида армян, а позже, когда разбросанный по всему миру армянский народ благодаря владению ремеслами, смог сохранить свое существование. В статье представлены на обсуждение вопросы роли и значения ремесел в контексте Геноцида в двух ракурсах: ремесло как средство спасения от физического уничтожения во время массовой резни и как средство выживания после Геноцида.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բագելյան Կարին Ռազմիկի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն։
ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական մշակույթի պահպանության ծառայություն, E-mail: kazeyyan@armavia.am

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Պատմական, աշխարհաբարական իրողությունների բերումով ՀԽԾ. կեսին – ՀԽԾ. սկզբին Ծիրակը դարձավ ազգային վառ դիմացիծ կրող արևմտահայության մի զգալի հատվածի նոր հանգրվանը, որտեղ հնարավոր եղավ անդառնալի կորստից փրկել և պահպանել էրնիկ մշակույթի՝ ազգագրության և բանահյության հարուստ ժառանգությունը։ Վերջինիս ուսումնասիրությունը խորհրդային տարիներից հայ գիտական մտքի տիրություն է և այսօր էլ որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ արևմտահայության հոսքը դեպի Ծիրակի տարածաշրջան իր հետ բերել է մշակութային յուրահատուկ վառ զեր։

Հայրենազրկված արևմտահայության էրնիկ ինքնության կարևորագույն տարրերը դարերի հոլովույթում ձևավորվել և զարգացել էին նաև ժողովրդական երգերի մեջ։ Արտահայտչական անսահմանափակ հնարավորություններ ունեցող և ժանրային որոշակի համակարգի մեջ զարգացող այս արվեստը հատկապես զուրական միջավայրում նաև տեղային ավանդություն բացահայտ կրողն է։ Բանավոր ավանդված ժարովրդական երգը համարվում է հոգևոր ժառանգություն, պատմական հիշողություն, ինչպես նաև գեղարվեստական մտածողության տեսակ, որը ցանկացած պահի կարող է նորովի կերպավարվել։

Ըստ Կոմիտասի՝ «Երգաստեղծության շնորհը գեղջուկի համար մի բնաւոր պարզ է, ամենը կ լավ կատ ի այլ կամ վատ, իսակ կապել երգել զիտեն։ Ծինականի համար իր առօրյա ստեղծագործությունն արժեք չունի, իսկ ու զրի պես մի ակամա պահանջ է։ Գյուղացին իր երգերի շատ տեսակներն արհամարհում է, ծիծաղում է ուսում առածների վրա, որ խնամքով զրի են առնում, ժողովում են այդ «Ճառոր բաներն ու աղջկա խաղերը»։¹

Ժողովրդական ստեղծագործության զիսավոր նպատակները վեր են գեղարվեստական ոլորտներից, թեև իրականացվում են նախևառաջ գեղարվեստական ճանապարհներով, ինչը կասկածից դրաւ է։ Ի մի բերելով ժողովրդական երաժշտական ստեղծագործության բազմաթիվ մասնավոր կազմումները՝ ֆոլկորագետները եղակացրել են, որ նրա զերազույն գործառությը «Արդկայնության վերաբարությունն է մարդու մեջ։ Ոչ թե առհասարակ վերացական մարդկայնությունը, այլ բավական կոնկրետ, պատմականութեն տվյալ մշակութային ավանդույթով նախորշվածը, որին այսպես թե այնպես պետք է հաղորդակցվի յուրաքանչյուր ձևավորվող անհատականությունն»։²

Այսպիսով, կարենի է պնդել, որ ժողովրդական երգը, ինչպես առհասարակ ժողովրդական ստեղծագործությունը, ապրում և գործառվում է զրեթե օրգանական բնության օրենքներուն։ Ուրեմն, որպես «կենդանի օրգանիզմ», ժողովրդական

¹ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 15։

² Алексеев Э. Фольклор в контексте современной культуры, М., 1988, стр. 170.

երգը գոյակցում է արտաքին երևույթների որոշ տարրերի հետ, դրանց յուրացման շնորհիվ պահպանելով ստեղծագործության հորինվածքի ողնուցը կամ հենքը:³

Ժամանակը շատ բարդ ու ազդու գործոն է ավանդական, ոչ նյութական մշակույթի ցանկացած դրսուրուման, առավել ևս ժողովրդական երգի գոյատևման և պահպանման գործում: Ժողովրդական երգի կենսառու միջավայրի փոփոխման և մշակութային էկոլոգիային սպառնացող որոշ հիմնախնդիրների համատեքսում փորձել ենք դիտարկել Շիրակի մի շարք գյուղական համայնքներում «ապրոյ» երգային բանականացության առանձնահատուկ դրսուրումների: Հիմնվել ենք 2010-2015թ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի երաժշտական խմբի /Հ.Հարությունյան, Ե.Վարոսյան/ կողմից իրականացրած ազգագրական, բանականացության արշավակամքերի նյութերի վերլուծության վրա:⁴

ՀՀ Ա. Ակզերին, չնայած համաշխարհայնացման արդի գործենթացների ներգործությանը /հեռուստացույց, համացանց, կապի այլ միջոցներ/, Շիրակի տարածաշրջանի ցանկացած զյուղում հեջում են ժողովրդական երգեր՝ տեղային նմուշների գերակայությամբ: Նյութի կրողներն ու կատարողները հիմնականում տարեց և ծեր անձինք են, որոնք սուրբ մատունների նման են վերաբերվում ավագ սերեցից իրենց ժառանգած երգային նմուշներին:

Այսպիսով, մեզ հետաքրքրադ երգերի մի մեծ խումբը պետք է դիտել որպես հայուրդ սերունդներից հաջորդին վայսաեցված ժառանգություն: Հետևաբար, այս երգերը մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը, պահպանվել են ընտրութիւն, նախասիրված ժանրերը:

Այսուեղ տեղին է մեջքերել երաժշտագետ Ա.Փակինանյանի կողմից կատարված դիտարկումները խնդրու առարկայի շուրջ: «Ժամանակի ստիլամունքով որոշ ժանրեր դուրս են մրգում ժողովրդի երաժշտական կենցաղից: Բանականացության ժանրը ժամանակի համեմատ վրիպում է մի բանի պատճառով».


- ա) կորցնում է իր ստեղծագործական հողը, այն պարտադիր պայմանները, որոնց մեջ ծննդում է այն, զարգանում, փոխանցվում, այսինքն՝ կորվում է իր պատմաշխարհագրական, սոցիալ-հոգեբանական հիմքերից /վիպերգեր, պատմական երգեր, պանդիստության երգեր/,
բ) կորցնում է իր ֆունկցիան /հոգևոր, ծիսական, աշխատանքային երգեր/,
գ) սոցիալ-հոգեբանական գործուների փոփոխության հետ դուրս է զայխ մարդու արվեստընկալման համակարգից, որպես ժանր դադարում է հոգևոր պահանջ լինելուց /օրորոցային, մանկախաղաց, առտերին-աշխատանքային կենցաղային երգեր/,
դ) երաժշտական-բանաստեղծական բարդ կառուցվածքը պահանջում է կատարողական բարձր մակարդակ, գրեթե մասնագիտական-ավանդական փոխանցում

և բացառում է պատահական կրող ու կատարում, ավանդի հեշտ փոխանցում /հայրեն, վիպերգային, աշխատանքային, ծիսական, աշուղական/»:⁵

Իր ժանրային կենտրոնակությամբ բացառիկ տեղ է գրավում պարեզգի ժանրը: Հայ բազմադարյա մշակույթում մեծ է եղել ժողովրդական գեղջկական պարեզգերի երաժշտական, պարային ու բանաստեղծական արվեստի նշանակությունը որպես ժողովրդի արվեստի ամենահարազատ, ամենահուսական ու կենարար կակետային ակունք:

Շիրակի տարրեր համայնքներում այն այսօր էլ հանդիպում է խաղ, խանա, բաղադր, մասեի անվանումներով:

«Առնեմ օյ մեկ է»⁶



Տարածված են ինչպես կրկնատողերով և կրկնակներով, այնպես էլ առանց կրկնությունների խաղիկները՝ պարզ մեղեդային հորինվածքներով: Դրանց որոշ նմուշներ առանձնացել են տարրեր ծիսակարգերից և ապրում են ինքնուրույն կյանքով: Կարեւոր արտահայտչականություն ունեն շեշտված վանկերի համաշափ և ոչ համաշափ հարաբերակցությունները:

Ժանրի կենտրոնակությունը պայմանավորված է նախ՝ կրկնակների ու կրկնատողերի բանաձևված բաղադրիչների առկայությամբ, ապա նաև բովանդակային բազմազանությամբ: Այս է պատճառը, որ պարեզգի ժանրին են միահյուսվել նաև ծիսական և կենցաղային տարրեր իրավիճակների երգեր:

Փոքրիկ խաղիկների կողքին պահպանվել են նաև ծանր պարեզգերի՝ գովընդների եզակի նմուշներ:

³ Թային. Հայկական ժողովրդական երգեր և նվազեր», կազմողներ՝ Ա.Ս.Փակինանյան, Ա.Սահակյան, Եր., 1983, էջ 18:

⁴ Հարությունյան Հ., ԴԱՆ. 2015: Երգը ձայնագրվել է Լանջեկ գյուղում, երգասաց՝ Բարեղաս Գևորգ Մովսիսյան: Ծնվել է 1938թ. Լանջեկ գյուղում: Ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Նախնիները գաղուել են Աղաջեկերտի գավառակի Մալևաման գյուղից 19-րդ դարի կեսերին: Հայորյան Գ., Հայրենի եզերը. Բաննի պարեզգերը, Եր., 1978, էջ 20:

«Ասմար տման»⁷.

Բազմազան են նաև ծիսական երգերը. Դրանց մեջ գերակշռում են հարսանելան և Համբարձման տոնի երգերը.

Ալ առելու եմ էկե,
Ծալ առելու եմ էկե,
Ես թագվորի բուրքն եմ,
Հարս տանելու եմ էկե:⁸

Համբարձման տոնի երգերի բազմատեսակուրյամբ և կենսականությամբ՝ պայմանավորված նաև դրանց նորովի ծիսականացումը հատկապես հարսանելան ծիսակարգում.

«Զան զյուղում»⁹

⁷ Հարությունյան Հ., ԴԱՆ. 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Շահիկ Միսակյան-Արացյան Շնվել է 1941թ. Լանջիկ գյուղում, ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառակի Խասուրի գյուղի 19-րդ դ. կետերին:

⁸ Հարությունյան Հ., ԴԱՆ. 2015: Երգը ձայնագրվել է Լուսակերտ գյուղում, երգասաց՝ Զեմս Բագրատի Կարապետյան: Շնվել է 1936թ. Լուսակերտում: Տառաձնալու է: Նախնիները գաղթել են Սուշից 19-րդ դարի կեսերին:


⁹ Հարությունյան Հ., ԴԱՆ. 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Աստղիկ Արտաշի Առաքելյան: Շնվել է 1925թ. Լանջիկ գյուղում: Ունի տարրական կրթություն: Նախնիները գաղթել են Սուշից 1915թ.:

Վիավական երգերի շրջանակը սահմանափակվում է աշուղական սիրավելուրի, ինչպես նաև առանձին անհատ աշուղների երգերի շրջանակով.

«Կոռունկ»¹⁰

Այս նմուշները հատուկ վերլուծության կարիք ունեն, քանի որ դրանցից շատերի մեղեղիները տիպականացվել և յուրօրինակ ինքնուրույն կյանքով են ապրում՝ համբարեցվելով նոր անհատ հեղինակի բանաստեղծությանը: Երգերի բանաստեղծական տեքստերում գերակշռում է զրական հայերենը, ինչը վկայում է դրանց նախնական տարրերակների փոխակերպումների մասին: Կարծում ենք, որ այս երևույթը ոչ միայն ժամանակի և նոր միջավայրի արդյունք է, այլև աշուղական երգերից ազդվելու հանգամանք:

¹⁰ Հարությունյան Հ., ԴԱՆ. 2015: Երգը ձայնագրվել է Քարաքերդ գյուղում, երգասաց՝ Հասմիկ Մնացականի Բաղդասարյան: Շնվել է 1936թ. Քարաքերդ գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Սուշից 1915թ.:

«Երգ Անդրանիկի մասին»¹¹

Սա պատմական երգի փայլուն նմուշ է, որը երգասացը լսել է ծնողներից՝ ի երախտագիտություն շուրջ 30000 արևմտահայ գաղրականներին իր եռվանավորությամբ նոր ու ապահով հանգրվանի ուղեկցող զորավար Անդրանիկի:

Ազգակրածչուանական տարբեր հետազոտություններում առանձնահատուկ տեղ են զրավում բանավոր ավանդությի ստեղծագործությունների կենսական գոյարանության խնդիրներն ու դրանց ուսումնասիրության մեթոդաբանական յուրահատկությունները:

Ժողովրդական ստեղծագործության մեջ դասական ժառանգություն է համարվում ոչ թե երգերի ընտրանին, այլ յուրահատուկ երաժշտաարտահայտչական գենետիկ ֆոնով, որը բնագրություն պաշտպանվում է՝ ազգամիջյան հետաքրքրությունների ու փոխազդեցությունների ակտիվության պայմաններում:¹² Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ։ Սակայն ավանդությունը երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում։


Ծիրակի արդի բանակյուսության մեջ թեև սակավարիվ, սակայն երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նմուշներ հանդիպում են։ Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն է։ Կարեոր է այն, որ այդ երգերը, արարվելով համանքային միկրոմիջավայրի մեջ, կատարվում էն որպես ավանդական դասական նմուշներ։

Այս առումով բացառիկ տեղ են զրավում օրորներն ու ողբերգերը, որոնց ժանրային առանձնահատկությունները հնարավորություն են տալիս ասացողին ազատորեն ստեղծագործելու և անկաշշկան շարադրելու երաժշտաարանաստեղծական հորինվածքը՝ ըստ տվյալ պահին ունեցած ապրումների և զգայական վիճակի։ Թեև ասացողներից շատերը հղում են կատարում իրենց մեծերից լսած նմուշներին, սակայն պարզ վերլուծությունից անգամ ակնառու է դրանց հանկարծաստեղծ անհատական բնույթը։ Ինչը նաև լավագույն վկայում է երգա-

¹¹ Հարությունյան Հ., ԴԱՆ, 2015։ Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Ասսոյիկ Արտաշի Առաքեցան։ Սնկել է 1925թ։ Լանջիկ գյուղում։ Ունի տարրական կրություն։ Նախնիները գաղթել են Սուլիջ 1915թ։

¹² Փոման Վ. Способ существования музыкального произведения и методология сравнительного анализа. // Музыкальное искусство и наука. М., 1973, вып. 2. Wiora Walter. Ergebnisse und Musikforschung. Darmstadt, 1975.

ստեղծության ավանդույթի կենսականության ու ինքնատիպ դրսերումների մասին։ «Օրորցային երգ»¹³



СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ МУЗЫКАЛЬНОГО ФОЛЬКЛОРА ШИРАКА

Резюме

A. Арутюнян

В разных сельских общинах Ширака и ныне проживают представители поколений армян – переселенцев /1850-1915 гг./ из Западной Армении, которые продолжают сохранять уникальные образцы музыкального фольклора своих предков. Это разные жанры песенной и инструментальной музыки.

В статье представлены жанровые и типологические особенности образцов современного песенного фольклора Ширака, присущие живой музыкальной традиции выходцев из Муша и Алашкerta. Благодаря сохранению этого уникального наследства, продолжают развиваться живительные традиции песнетворчества фольклорной классики.

Տեղեկություններ եղիշեական մասին

Հարությունյան Հասմիկ Հայկի – արվ.գ.թ., 22 ԳԱԱՀ

Ծիրակի հայագիտական հետազոտությունների կննութեան

E-mail: hasmik.haz@ymail.ru

¹³ Հարությունյան Հ., ԴԱՆ, 2015։ Երգը ձայնագրվել է Քարաքերդ գյուղում, երգասաց՝ Լիզա Գուրգենի Մարգարյան Սնկել է 1935թ։ Քարաքերդ գյուղում։ Ունի ութնամյա կրություն։ Նախնիները գաղթել են Սուլիջ 1915թ.։

Թորգում ԱՂԱՆՅԱՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈԴՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սարդկային հասարակության զարգացումը երբեք չի եղել ոչ կոնֆլիկտային և ոչ հակասական գործընթաց: Հասարակություն-բնություն փոխհարաբերության մշտական խնդիրներից մեկը մարդու գործունեության, մարդկային հասարակության զարգացման և բնական միջավայրի միջև հակասությունն է: Դրա հետ մեկտեղ, բնությունը միայն արտաքին միջավայր կամ կաղապար չէ, որտեղ հասարակությունը զարգանում է: Հասարակությունը բնության օրգանական մասն է, իսկ մարդկության պատմությունը՝ բնական միջավայրի պատմության մի մասը Այս տեսանկյունից է կարևորվում աղետների ազգաբանական ուսումնասիրությունը:

Տարատեսակ ծագում ունեցող աղետները ֆիզիկական իրադարձություններ են՝ հասարակական համատերասառն: Ինչպես ցույց են տալիս ՍԱԿ-ի տվյալները, բոլոր տեսակի աղետների շարքում զոհերի թվով առաջին տեղում ջրաօդերևութանական աղետներն են (ջրհեղեղներ, ցունամիներ և այլն), երկրորդում երկրաբանականը (երկրաշարժեր, երարտիներ և այլն), իսկ երրորդ տեղում տեխնածին աղետները: Բնական և տեխնածին աղետների նշված բաժանումն անբարդապատճեն է միջազգային մի շարք փաստարդերում, մասնավորապես՝ Կարմիր Խաչի և Կարմիր Սահիկի գործունեության կազմակերպման Համաձայնագրում, որը ստորագրվել է 1997 թ. Սեպտեմբերի:¹

Ինչպես բնական, այնպես է տեխնածին աղետները բողնում են սոցիալական խարը հետեւանքներ: Նույնիսկ այնպիսի բնական աղետներ, ինչպիսիք են երարտիները, ցունամիները, քրեթեղները, անտառային երդեները և այլն, տարրեր հետեւանքներ են բողնում՝ կախված այն բանից, թե հասարակությունը ինչպես է նախապատրաստված և նախազգուշական ինչպիսի միջոցների է դիմում դրանց սկսվելուց առաջ: Բնականաբար նման արհավիրքները մարդկային զոհերի պատճառ են, այս ամենից անմասն չեն մնում փրկվածները, վերապրելով այդ ամենը, երանք երկար ժամանակ գտնվում են եղոգեկան, ֆիզիկական և սոցիալական ծանր վիճակում: Արհավիրքը վերապրած մարդը հայտնվում է եղոգեկան ցնցման վիճակում, և հարցը միայն այն չէ, որ անձը զգայաբար է վերապրում տեղի ունեցածը: Ցնցումը և միաժամանակյա իրադարձությունն է, և գործընթաց, որն ազդում է մարդու հետազա կանքների վրա: Հաճախ այդ ամենը անդրադարձում է ոչ միայն մարդ անհատի, այլև մարդկային մեծ խմբերի վրա:

Մեզանում աղետների սոցիալական հետեւանքների, դրանց հարցահարման մեխանիզմների, աղետը վերապրածների հարմարվագականության եղանակների և աղետի հետ կապված այլ հիմնախնդիրների ուսումնասիրությունը դեռևս

գուևում է սահմանային վիճակում: Այդ ուղղությամբ որոշ հետազոտություններ են կատարվել ացիոլոգների կողմից: Հետազոտական տարրեր խմբերի կողմից աղետների սոցիալական հետեւանքների համեմատական վերլուծության իրականացմանը խանգարում է միասնական մեթոդաբանության բացակայությունը: Ընդ որում, բաց է թողնվում նշված հետեւանքների համային գնահատումն իրականացնելու հնարավությունը, իհարկե, ներառելով տեղական առանձնահատկությունները:

Աղետների ուսումնասիրության մեջ հատուկ նշանակություն է ստացել աղետը վերապրածների հարմարվագականության ուզմավարության վերլուծությունը, բանի որ անկախ մարդկանց կամքից, կտրուկ փոխվում է նրանց ապրելակիրապը, ինչը խշընդունում է բնականոն կյանք վարելուն, ապագայի ծրագրեր կազմելուն, երեխաների մեջ կյանքի նկատմամբ դրական ձևավորություն և այլն: Խզվում է կապը ժամանակների միջև, խաթարվում է սովորական դարձած սոցիալական միջավայրը, փոխվում է նաև շրջակա միջավայրը՝ անհետ դաշտությունը փոխելու խնդիր:

Աղետների գոների կամ իրենց աղետի զոհ համարողների շրջանում ձևափորվում են կյանքի յուրահատուկ նորմեր, որոնք կարելի են անվանել ռենտուային: Մարդիկ, գիտակցելով, որ իրենք զոհ են, կարծում են, թե իրենց պետք է օգնեն, չատ հաճախ օգնության են սպասում նույնիսկ նրանք, ովքեր աղետի հետ ոչ մի կապ չունեն: Կորսվածի փոխհատուցման սպասումները բավական նվազեցնում են մարդու ակտիվությունը, և նրանք իրենց կյանքը բարելավելու նպատակով դադարում են անհրաժեշտ քայլերից՝ սպասելով, որ ամեն ինչ կլուծվի «վերսում»: Իսկ երբ առաջարկիած օգնությունը պակաս է լինում կանխատեսածից, որոց մարդկանց մեջ առաջանում է անձնական վիրավորանքի շարունակական զգացում կամ ավելի հաճախ՝ ազբեսիվ պահկածը: Պահկածի նման մողելներն առաջանում են որպես հոգեբանական հետեւանք բուրաբանչությունը աղետից:

Աղետների հետեւանքներին վերաբերող հետազոտությունների մեջ մասն ուշադրությունը կենտրոնացված է բնական միջավայրի ի և էկոհամակարգի վրա մարդկային գործունիքի և մարդու ազդեցության վերլուծությանը, ուսումնասիրվում են մարդու և բնության փոխհարաբերությունները և դրանց բժշկակենսաբանական խնդիրները: Չթերագնահատելով այս ուսումնասիրությունների նշանակությունը՝ պետք է ընդգծել, որ բավականաչափ ուշադրություն չի դարձվում աղետների և արհավիրքների սոցիալ-մշակութային հետեւանքներին, այսինքն՝ այս իրադարձանը, թե ինչպես են առանձին մարդիկ վերապրում սոցիալ-մշակութային դրամատիկ փոփոխությունները, որոնց մասնակիցն ու ականատեսն են իրենք, և թե ինչպես է դա դրսարվում նրանց ավանդական կենցաղավարման մշակությի վրա:

Ծործ Կյուվեյի կողմից է ստեղծվել բնական աղետների տեսարժությունը, որը հետազայում ունեցել է զարգացման տարրեր ուղղություններ: Թեմայի նկատմամբ հետաքրքրությունն այն դարձեց սոցիոլոգիական հետազոտության առարկա, որի առաջին լուրջ ուսումնասիրություններն իրականացվել են է. Կարանտելիի, Հ.

Ֆրիտշի, Ա. Բարտոնի, Ռ. Դայնսոնի կողմից 20-րդ դարի 60-70-ական թվականներին ԱՄՆ-ում, ապա տարածվել Գերմանիայում (Վ. Շմիդբուլի), Խոախայում (Զ. Պելլանդի), Անգլիայում (Բ. Ռաքայել), Նիդերլանդներում (Ի. Ռեզենտա) և ԽՍՀՄ-ում (Ա. Ի Պրիգունի, Բ. Ն Պորֆիրի, Ե. Ն Բարոսով, Վ. Ի Օսիպով):²

Այսօր աղետների մասին գրող և այդ թեմայով ուսումնասիրություններ կատարող մասնագետների քանակը սահմանափակ է: Նրանց մեծամասնությունը հետարքրված է հետադեսային իրավիճակների խնդիրներով: Հիմնականում ուսումնասիրվում են հասարակության, կազմակերպությունների, ստանձին խմբերի ունակցիան տեխնածին կամ բնապահպանական աղետների նկատմամբ, ինչպես նաև ազգաբնակչության հարմարվողականությունն աղետների նկատմամբ՝ ըստ հանրապետության:³

Սոցիալական լարվածության՝ որպես սոցիալ-կարգավորող գործոնի հիմնախնդիրը դեռևս պատշաճ չի լուսաբանվել, չեայած արտասահմանյան սոցիոլոգների ձեռնարկած փորձերին՝ որոշելու սոցիալական հիմնական կողմնարշիչների տեղին ու դերը անհատի և հասարակության կյանքում: Նույնը կարելի է ասել սոցիալական ինքնազգացողության տարածքային առանձնահատկությունների և հարմարվողականության մոդելների ձեռվորման վրա դրանց ազդեցության ուսումնասիրության մասին:

Հասարակության և բնական միջավայրի փոխազդեցության հետ կապված խնդիրների մեծ մասը միավորված է բնապահպանական հիմնախնդիրներ ընդհանուր անվան տակ: Այժմ կարտրվում են գիտական երեք հիմնական ուղղություններ, որոնց ուսումնասիրության առարկան մարդու և բնական միջավայրի փոխարակություններն են:

Սոցիալական էկոլոգիան առաջացել է սոցիոլոգիայի, էկոլոգիայի, փիլիսոփայության ու գիտության այլ ճյուղերի հանգուցակետում, որոնցից յուրաքանչյուրի հետ սերտորեն փոխարաբերվում է: Սոցիալական էկոլոգիայի առարկան հանրության և բնության փոխարաբերություններն են, իսկ խնդիրը՝ այդ հարաբերությունները բերել ներդաշնակության՝ հիմնվելով մարդկության բանականության վրա:

Մարդու էկոլոգիան ուսումնասիրում է մարդու՝ որպես անձի փոխարաբերությունների համակարգը բնական միջավայրի հետ: Մարդու էկոլոգիան համակարգային գիտություն է, որ բաղկացած է իրար փոխկապակցված երկու՝ կենսաբանական և սոցիալ-մշակութային մասերից: Մարդու էկոլոգիայի հիմնական խնդիրը կոնկրետ բնական պայմաններում մարդկային խմբերի կենսապահուման գործուների և այդ ընթացքում հանրության ու բնության միջև առաջացած փոխադարձ կապի ուսումնասիրում է:

² Մանրամասն տե՛ս Ե. Բաբոսօվ. Ե. Կатастрофа ու քաղաքական համակարգը ու համարդարձությունը. // Սոցնի. 1998. № 9; Օսիլով Վ. Մեգապոլիսները՝ ուժության աշխատավայրերը. // Վեստնիկ ՀՀ ԱԳՀ. 1996. № 9; Օսիլով Վ. Համակարգությունները՝ աշխատավայրերը. // Վեստնիկ ՀՀ ԱԳՀ. 1995. № 6.

³ Կատաstroficheskoe soznaniye v sovremennom mire v kontse XX veka. / Red. V. Shlapko et al., Moscow, 2002.

Էկոլոգիական գիտությունների համակարգում յուրահատուկ տեղ է գրավում էթնոէկոլոգիան կամ էթնիկական էկոլոգիան: Այս գիտածովով առավել ամրացական բնութագիրը տվել է ուսումնական պահագագործության և առաջնահատիկական էթնիկական մարդաբանության և էթնիկական աշխարհագրության, էթնիկական ժողովարդագրության, էթնիկական հոգեբանության, բժշկական աշխարհագրության և այլ գիտաճյուղերի հետ: Ուշադրության կենտրոնում դնելով անձերի, հակույթների ու միջավայրի փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ուսումնասիրությունները՝ էթնիկական էկոլոգիան հաշվի է առնում մարդու՝ որպես սոցիալ-կենսաբանական եակի յուրատեսակարգությունը, սոցիալ-տնտեսական գործուների առաջնային դերը որպես զարգացման մեջ, մշակույթի՝ որպես միջավայրին հարմարվելու հիմնական արտակենսարանական միջոցի կարևորությունը, բնությունը վերափոխելու՝ մարդկանց տնտեսական գործուներության աճող ազդեցությունը:⁴

Էթնիկական էկոլոգիայի ուղրության առաջին ուսումնասիրությունները կատարել է ամերիկացի մարդարան Ջ. Սոյուարդը, որը մշակել է նաև «մշակութային էկոլոգիա» ի հայեցակարգը: Գիտության այս ուղղությունը երա կողմից մերուժանորեն հիմնավարվել է 1955թ., թեև բուն հայեցակարգը ձևավորվել է դեռևս 1930-ականներին: Ջ. Սոյուարդը գտնում է, որ «մշակութային էկոլոգիան շրջակա միջավայրում մարդկային հասարակության համարվողականության գործընթացի ուսումնասիրություններն են: Դրա զիսավոր խնդիրն է պարզաբանել, թե արդյոք հարմարվողական այս գործընթացներն առաջ են բերում էվոլյուցիոն բնույթ ունեցող ներքին սոցիալական փոփոխություններ»: Իր ուսումնասիրությունների մեջ նա կարևոր տեղ էր հատկացնում նաև մշակույթի տեխնոլոգիական հիմքի փոփոխություններին:⁵

Ջ. Սոյուարդի գաղափարների հիմնան վրա հետազոտում առաջ եկան միշարք գիտական ուղղություններ, որոնց մեջ ամենահայտնին «էթնիամակարգային մարդարանության» դպրոցն է, որը ձևավորվեց 1960-ական թթ. Ո. Ռապապանությունի է: Վայդայի ուսումնասիրությունների շնորհիք: Դպրոցի առաջատար է: Վայդան հակադրում էր իր մերժող մշակութային-էկոլոգիականին, նա առաջարկում էր բնական և սոցիալական երևույթները դիտարկել ընդհանուր համայնքի մեջ՝ որպես ամրողական ֆունկցիանուն համակարգ: Տեսելով դաշտական ֆունկցիոնալիզմին, սակայն զարգացնելով այն համակարգային-կառուցողական մոտեցումներով՝ «էթնիամակարգային մարդարանության» դպրոցի ներկայացուցիչները առաջնարդվում են նրանով, որ յուրաքանչյուր համայնք ազտում է հռոմեական Փառչությանը (ինքնակարգավորման, դիսամիլի հավասարակշռության պահպանման): Եթե ինչոր պատճառով այն կորցնում է հակասարակությունը, ապա անհրաժեշտ է հասուն մեխանիզմ՝ դրան իր նախկին վիճակին վերադարձնելու:⁶

⁴ Կօզլով Վ. Մեթոդологիческие основы этнической экологии и вопросы их практического применения // Методы этноэкологической экспертизы. М., 1999, стр. 17.

⁵ Steward J., Theory of cultures change// The Methodology of multilinear evolution. Urbana, 1955.

⁶ Белин А., Культурология. Антропологические теории культуры. М., 1999.

1970-ական թթ. կեսերին ձևավորվեց էթնիկական էկոլոգիայի և մեկ՝ «պրոցեսուալ/գործընթացային բնամարդաբանության» դպրոցը, որի կողմանակից ներն ուշադրությունը կենտրոնացնում էին մարդկանց վարքի անհատական մոդելների ձեավորման վրա՝ բնական միջավայրի ազդեցության խնդրին: Վ.Ի. Կողովը և Ա.Ն. Յամսկովը այս դպրոցի ձևավորման պատճառներից են համարում «ուսումնասիրություններից շատերի հիասթափությունը «բնահամակարգային մարդաբանության» ծայրահեղ ֆունկցիոնալիզմից, ինչպես նաև բնահամակարգ (էկոսիստեմ) հասկացողության բացարձության մեջ կատարված վափառվածությունների ու դրա զարգացման վերաբերյալ էկոլոգիայի մասնագետների մոտեցումներից»⁷:

Ինչպես վերը նշվեց, մարդու էկոլոգիայի՝ որպես կոմպլեքսային գիտության գլխավոր խնդիրը կոնկրետ բնական միջավայրի պայմաններում մարդկանց կենսապահովման գործուների և այդ ընթացքում հասարակության ու բնության մեջ առաջացող փոխարարքերությունների ուսումնասիրությունների մեջ կատարված վափառվածությունների մոտեցումների մասինց, որ կենսապահովումն իրականանու է բնական և անտրոպոգեն/մարդածին միջավայրին կողեւութիվ հարմարողականության շնորհիվ: Ըստ որում, առանձնացվում է կենսաբանական (ֆիզիոլոգիական և մարդաբանական) հարմարվողականությունը, որը պայմանավորված է մարդու օրգանիզմի և կոնկրետ մարդկային հանրության կենսաբանական յուրահատկություններով և առջալ-մշակութային հարմարվողականությամբ: Հենց էթնիկական էկոլոգիայում է կարևորված մշակույթի (և դրա ավանդական համակարգի)՝ որպես բնական միջավայրին մարդկանց համատեղ հարմարվելու միջոցի ուսումնասիրությունը:

Մարդկային տեսակի համար (*Homo sapiens*) մշակույթը և բնական միջավայրին հարմարվելու միջոցն է, և այդ միջավայրի առաջընթաց յուրացումից բխող սոցիալական հետևանքը:⁸ Մշակույթն, այդպիսով, դիտվում է որպես մարդկային համարություններին յուրահատուկ ու բազմակողմանի հարմարվողական մեխանիզմ: Էթնիկ հանրությունների մշակույթները, որոնք արտահայտում են տվյալ էկոլոգիական և սոցիալ-մշակութային միջավայրի յուրացման ընթացքում մշակված գոյության ու գործունեության կոնկրետ եղանակների առանձնահատկությունները, ևս դատարկ են հարմարվողականության մեխանիզմներ:

Այսպիսով, էթնիկական խմբերի գործառության էթնոէկոլոգիական բացարձության հիմքում երկու հիմնական հասկացություններ են՝ կենսապահովում ու հարմարվողականությունը: Հենց այս եզրույթներն են սահմանում այս գիտական ուրբության ժամանակակից հայեցակարգերի հիմքերը:

Կենսապահովման մշակույթ հասկացությունը ազգաբանների կողմից այս ոլորտում առաջադրված գիտահետազոտական նորամուծություններից մեկն է:

⁷ Կոզլով Վ., յամսկով Ա. Էթնիկական էկология // Էթնոլոգիա և անտրոպոլոգիա. Տեղ. թիկ. Ե. Տիմոկ Վ. Մ., 1989, թր. 86-107; <http://dejantrit.edify.ru/>; կոզլով Վ. Էթնիկական էկология: ժառանգություն և պահպան. Մ., 1994.

⁸ Արյուխով Ս. Էթնոգրաֆիկ գիտական ու առաջարկական առաջարկական համարությունների մեջ է:

Կենսապահովման մշակույթը որպես էթնիկական մշակույթի առավել դիմացկուն բաղկացուցիչ, սահմանում է էթնիկական խմբի հարմարվողականության հետափորության մակարդակը և փոխարարելությունները շրջապատճ բնույթին ու սոցիալ-մշակութային միջավայրի հետ: Այս հանդես է գալիս որպես էթնուգումնական խնդիրների ուսումնասիրության ու էթնիկական երևույթների մշակութային-պատմական վերակառուցման կարևոր մաս և պարունակում է կութական (մասամբ՝ նաև հոգեոր) մշակույթի բոլոր այն տարրերը, «որոնք անմիջականորեն ուղղված են մարդկանց կենսագործունեության ապահովմանը»:⁹ Կենսապահովման մշակույթը հասկացությունն անհրաժեշտ է այս կամ այն էթնոսի զարգացման օրինաչափություններն ուսումնասիրելու համար, քանի որ այն հետափորությունը է տալիս տարրեր չափանիշներից ենելով, համեմատաբար ամբողջական և կառուցվածքանորեն նկարագրել մշակութային համալիրի առանձնահատկությունները: Այս պարագայում, կենսապահովման մշակույթը դառնում է ուսումնասիրության առարկա:

Ս.Ա. Հարությունովը կենսապահովման մշակույթը համարում է էթնոսի մշակույթի կարևորագույն բաղադրիչներից մեկը, որը պետք է լինի նրա ուսումնասիրության հիմքում: Ըստ նրա՝ կենսապահովման մշակույթը «մշակույթի այն մասն է, որն անմիջականորեն ուղղված է իր կողուների կենսագործունեությունը պահպանելուն և նախնառաջ գործում է սպասման ոլորտում»¹⁰: Դրա հետ մեկտեղ այն ներառում է նաև սոցիալական կյանքի և հոգեոր մշակույթի կարևոր առումներ, քանի որ մարդկանց ապահովելով կյանքի համար անհրաժեշտ մշակուվը կոչված է բավարարելու նաև սոցիալական և հոգեոր կարիքները, որոնք, այդպիսով, հանդես էն գալիս մեկ անքածան համալիրում:

Աղետի ազգաբանական հետազոտության առանձնություն, այսպիսով, պետք է լինեն էթնիկական մշակույթի այն բաղկացուցիչ մասերը, որոնք ընդգրկված են Ս.Ա. Հարությունովի, Է.Ա. Մարգարյանի և Յու. Ի. Մկրտչյանի կողմից առաջարկված «կենսապահովման մշակույթ» հասկացության մեջ:¹¹ Նրանց կարծիքով, «բնական միջավայրին հասարակության էկոլոգիական հարմարվողականության գործնական տեղի է ունենում համապատասխան տարածքի սոցիալական կազմակերպված յուրացմանը, որն արտահայտվում է առօրյա կյանքի համար անհրաժեշտ բնակելի կացարանների և մշական բնականակարգերի կառուցմանը, սննդամբերի, կահկարասու, հագուստի և այլ անհրաժեշտ առարկաների կազմակերպված արտադրությամբ»:¹²

⁹ Արյուխով Ս., մկրտչյան յուն. Պրоблемы типологического исследования механизмов жизнеобеспечения в этнической культуре // Типология основных элементов традиционной культуры. Մ., 1984, стр. 27.

¹⁰ Արյուխով Ս. Նարություն և զանագույն մասերը, որոնք ընդգրկված են Ս.Ա. Հարությունովի, Է.Ա. Մարգարյանի և Յու. Ի. Մկրտչյանի կողմից առաջարկված «կենսապահովման մշակույթ» հասկացության մեջ:

¹¹ Արյուխով Ս., մկրտչյան յուն. Պրоблемы исследования культуры жизнеобеспечения этноса // ՀՀ. 1983, № 2, стр. 22-31: Կուլտура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры), Еր., 1983.

¹² Արյուխով Ս., մկրտչյան յուն. Պրоблемы исследования культуры жизнеобеспечения этноса // ՀՀ. 1983, № 2, стр. 24.

Եթիկ հանրությունների կենսապահովումն ուսումնասիրելու ժամանակաշեցու է, ֆիզիկականից (նյութականից) բացի, հաշվի առնել նաև հարմարվողականության հոգեքանական կողմը: Առաջինը, ինչպես նշվեց, ներառում է և մարդկանց կենսարանական հարմարումը բնական միջավայրին, և՝ տնտեսական մասն գործունեության հետ կապված սոցիալ-մշակութային հարմարվողական թյունը, որը նյութական մշակույթի մեջ դրսորդում է որոշակի առանձնահատկություններով: Երկրորդը վերաբերում է մարդկանց հոգեքանական հարմարվողականությանը անձնական և խմբային մակարդակներում՝ շրջակա բնական և այլ էթնիկ սոցիալ-մշակութային միջավայրի նկատմամբ, ինչպես նաև սրբապահ իրավիճակների կանխարգելման կամ բռուցման ավանդական եղանակներին: Խոկապես, շրջակա միջավայրը ազդում է ոչ միայն մարդու օրգանիզմի, այլ նաև հոգեկան վիճակի վրա, դրանով՝ նաև ֆիզիոլոգիայի: Անբարենպաստ ազդեցության դեպքում դա հանգեցնում է ոչ միայն հոգեկան, այլև, այսպես կոչված, հգեստմատիկ հիմքանդությունների:

Եթե կենսապահովում եզրույթը ցույց է տալիս եթենսի բացարձակ կապը բնության հետ, ապա մյուսը՝ հարմարվողականությունը կամ հարմարվելը, արտահայտում է էթնիկական մշակույթի դինամիզմը (հարատև շարժմանը): Մարդու հարմարվողականությունը հումանիտար գիտությունների կարևորագույն հիմնախնդիրներից է: Սակայն բուն եզրույթը զիտնականների կողմից օգտագործվում է տարրեր իմաստներով, ինչը հանգեցնում է վերջինիս ընկալման դժվարությունների: Այն հաճախ օգտագործվում է հարմարվողականության վիճակը նկարագրելու համար կամ նշելու այն գործնքացը, որի ժամանակ մարդու օրգանիզմի որոշակի փոփոխության է ենթարկվում և հարմարվում շրջակա միջավայրին: Հարմարվողականությունը դիտվում է և որպես մի քանի սերունդների կենսագործունեության ընթացքում բնական ընտրության արդյունք, և որպես պատասխան հակագլեցություն, որը ձևավոր է բերվել կամ յուրացվել կարճ ժամանակահատվածում: Եզրույթն օգտագործվում է նաև այն դեպքում, երբ ցանկանում են արտահայտել մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի համապատասխանությունը:

Թեմայի իրականացման համար կարեւը ենք համարում Վ.Ի. Կողովոյի կարծիքն այն մասին, որ «բնակության նոր միջավայրի նկատմամբ էթնոմշակութային հարմարվողության գործնքացներն ունեն համակարգային և բազմամակարդակ բնույթ: Ըստ Էլույան, շոշափելով հանրության մշակույթի և կենցաղի բոլոր ոլորտները, դրանք արտահայտվում են նաև խմբի հոգեքանական, ժողովրդագրական և բժշկակենսարանական առանձնահատկություններում, սակայն տարրեր ինտենսիվությամբ և ոչ միաժամանակ: Ավելին, հարմարվողականության գործնքացները կանքի տարրեր ոլորտներում աշքի են ընկնում հարաբերական խննությունությամբ: Արանից հետևում է, որ աննպատակահարմար է բնակելի միջավայրի նկատմամբ էթնոմշակութային խմբերի հարմարվումը զնահատելու մեջ միասնական ցուցանիշով»:¹³ Երապես, բնակչության սոցիալ-մշակու-

թյին, ժողովրդագրական և բժշկակենսարանական բնութագրերը, որանց համարի վերլուծությունները հստակ պատկերացում են տալիս հարմարվողականության գործնքացի հաջող իրականացման մասին, ուստի աղետի ազգարանական հետազոտության ժամանակ առանձնահատուկ տեղ են գրավում բնակչության տողության և ժողովրդագրական խնդիրները:

Ամփոփելով կարող ենք նշել, որ հիմնվելով վերը բերված տեսական և մերոդական ձեռքբերումների վրա՝ հնարավորություն է ստեղծվում ազգարանական տեսանկյանից ուսումնասիրելու Սպիտակի երկրաշարժի սոցիալ-մշակութային հետևանքները և հետադեսյան շրջանում սոցիալի (հանրույթի) հարմարվողականության դրսուրամաները: Միևնույն ժամանակ աղետի ազգարանական ուսումնասիրության առկա տեսական ձեռքբերումները, հետազոտողի կողմից խորացված ազգարանական հարցումները իրականացնելու համար, համապատասխան հարցարերքեր կազմելու առավել ընդգրկուն մերոդարանական հնարավորություններ են ընձեռում:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ

ЭТНОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ КАТАСТРОФ

Резюме

Т. Аганян

В статье сделана попытка обобщения социологических, этносоциологических и этнологических исследований по изучению последствий катастроф, опубликованных в конце XX- начале XXI вв. Систематизированы и представлены основные теоретические положения по изучению последствий техногенных и природных катастроф.

Вышеуказанные теоретические и методологические подходы дают возможность всесторонне изучить социально-культурные последствия Спитакского землетрясения, и, в частности, рассмотреть в этнологическом аспекте проявления адаптации социума в посткатастрофном времени. В тоже время теоретические достижения могут стать методологической основой для составления анкет при осуществлении специализированных этнологических опросов.

Տեղեկություններ հեղինակի մասին

Աղասյան Թորգում Գրիգորի - 22 ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտը, E-mail: tagvezyan6@mail.ru

¹³ Կօզլով Բ. Մетодологические основы этнической экологии и вопросы их практического применения // Методы этноэкологической экспертизы. М., 1999, стр. 26.

Արարոյա ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐԱԳԻԼ ՀԱՅՈՅ ԱՎԱՆԴԱԳՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Թոշուններն ու դրանց խորհրդանիշ-կերպարները ուղեկցել են մարդու դարերի խորքից և իրենց ուրույն տեղն են զուել նրա ամենասարբեր պատկերացումներում, կրոնառասպեկտական հայացքներում և որպես արդյունք այս տեսքի ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ։ Համաշխարհային բանակու սության և առասպեկտական մտածողության մեջ թոշունները հանդես են զայիս իրու այդ համակարգերի անբաժան ու անփոխարինելի միավորներ։

Գերակշռող դեպքերում առաջին պլան է մղվում նրանց՝ վերելի, բարձր հետ առնչվելու հատկանիշը, և իբրև այդպիսին՝ նրանք խորհրդանշում են վերին, աստվածային եռորդում։ Միայն այդ հատկանիշն է բավական է, որ թոշունները դարեր ի վեր մնային մարդու հայեցության կենտրոնում և իրենց ուրույն տեղու զունեխն նրա աշխարհներական բոլոր փուլերում (տուտեմիզմ, անհիմիզմ և այլն)։ Սակայն կան որոշ թոշուններ, որոնք պաշտամունքի են արժանացել իրենց մեջ այդ հատկանիշով ևս։ Դրանք այն չվող թոշուններն են, որոնք իրենց վերապարձու ավելուել են զարնան զալուստը։

Հայ շինականի համար տարվա ամենաբաղադալի եղանակը ավելուղ թոշունների (արագիլ, ծիծեռնակ, սարյակ, կոռունկ, ստիտակ) պաշտամունքի հիմքերը պետք է փնտրել մեր երկրի կիմայական առանձնահատկությունների մեջ։ Հայութանի կլիման, ինչպես զիտենք, առանձնանում է երկարատև ավագանությունունքու և կարճաժամ տաք եղանակներով։ Գարունը՝ որպես երկրագործական աշխատանքներն սկսելու եղանակ, նաև բնության ու կյանքի զարթոնքի ժամանակն է։ Ուշազրավ մի հայրենում հայ զյուղացին իր սերն ու հրճանքն է արտահայտում «Գարուն հավերի» նկատմամբ՝ առանց նրանց առանձնացնելու։ Եթե թոշունը զարուն է ավելուում, ուրեմն նրա «Զայն անուշ է, քան ամենուն»։

Ան առաւտուն լրսուն

Զայնըն զայ զարնան ձագերուն

Այ իմ փարքիկ ձագեր,

Զայն անուշ է քանձ ամենուն։¹¹

Այսուամենայնիվ, շափականցրած չենք լինի, եթե նշենք, որ հայի համար զարնան պատգամաբերների շարքում առավել մեծ սիրու և պաշտամունքի առարկա է եղել հատկապես արագիլը։ Գր. Ղափանցյանն Արա Գեղեցիկի պաշտամունքին նվիրված աշխատության մեջ հայտնել է այն տեսակետը, որ թոշենի անվաշին հատվածը ժողովրդական կենծ ստուգաբանությամբ կարող էր կապված լինել Արայի անվան հետ։ Նա համամիտ է Սազզյանի և Քարատի տեսակետին, ովքեր բարը կապակցում են շումերական azik-gilim բարի հետ, որ նշանակում է

«բարձրասրունք մի թոշուն»²։ Ղափանցյանը գտնում է, որ «Արայի մեծ ժողովրդականության պատճառով շումերական այդ փոխառությունը (arigil) ձևով կարող էր Volksetymologie -ի ենթարկել՝ կապվելով Արայի հետ, ինչպես արել են Արարատյան դաշտի հետ»³։ Գիտնականը բերում է իր տեսակետը ապացուցող մի շարք հանդիպություններ։ Դրանցից է արագիլին «զարնան ախտեր» անվանելը։

Համաշխարհային առասպեկտականության մեջ կարելի է առանձնացնել բազմաթիվ թոշուններ, որոնք հանդես են զայիս իբրև տարրեր աստվածությունների ուղեկիցներ կամ խորհրդանիշներ։ Հունական դիցաշխարհում Ապոլոնի ուղեկիցներն էին կարապն ու ագուավը, Ափրոդիտեինը՝ աղավնիները։

Արագիլ Հերայի՝ իին հունական դիցարանի պատճերության հովանավոր դիցուհու ուղեկիցն է, իսկ հոռմետական դիցարանում՝ Յունոնայի՝ ընտանեկան օրախի և մայրության հովանավոր աստվածություն խորհրդանիշը։ Հայոց դիցարանում Արայի (իմա՝ զարնան) ուղեկիցը, «ախայերը» արագիլն է, որը եվրոպացիների, ինչպես և հայերի մոտ սերունդների բազմացման սիմվոլիզացիան է, ինչպես շումերների մոտ՝ ձուկը։ Եվրոպացիների հավատալիքների համաձայն՝ արագիլը նպաստում է, որ ջուրը նորածին երեխաներ բերի, կամ ինքն է կտցով քերում։

Մեր կարծիքով, արագիլը պատճերություն է խորհրդանշում հենց ձեռներով սնվելու, ջրի հետ առնչվելու հասկանիշի շնորհիվ։ Բացի այդ, ինչպես մեծ քիթ կամ կտուց ունեցող ցանկացած կենդանի կամ թոշուն, արագիլը ինքնաբերաբար լապվում է առնական մեծ ուժի և պտղաբերության հետ։ Եվրոպական հոգեկերությանություններ արագիլի կտուցը դիտում է իբրև ֆալոսի խորհրդանիշ, իբրև սերունդների աղբյուր։ Այս առումով ուշազրավ է հայոց Արա և պատինական Ար(Արայ) աստվածությունների զուգալրումը։ Ալավոնների մոտ նա (Արան) Արայ էր, այսինքն՝ կատաղի, մինչև իսկ առնական սեռական գծերով։ Իբրև պատճերություն հովանավոր աստծո ուղեկից և կյանքի հարատևության նախանձախնդիր՝ արագիլը հայ ժողովրդական ստուգաբանություններից մեկում հակադրվում է տատրակին, որը գուգընկերոց մահից հետո հրաժարվում է նոր կապերից։ Արագիլի խորհրդանիշ-կերպարի միջոցով առակը խրատում է. «Սարոյի կ, սիրե՛ք մաքրությունն ու ողամությունն և ամուսնացն որդեննության և ոչ թե անառակության նպատակով»⁴։

Կարծում ենք՝ այս սուսանվ հատուկ հիշատակության է արժանի «արագիլ» բառի ստուգաբանություններից մեկը, որը, զիտական որևէ հիմքից գործ լինելով, այնուամենայնիվ ճզրտորեն բնութագրում է այս թոշնին՝ իբրև պարկեցության և հավատարմության խորհրդանիշի։ Խորը Հյունքարապետականի

¹¹ Աճարյան Հր., Արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 292։

¹² Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1945, էջ 141։

¹³ Լոյնը:

¹⁴ Լոյն տեղում, էջ 143։

¹⁵ Marr H. Сборники притч Вардана, т. I, стр. 415.

ստուգաբանության մասին է, որի համաձայն՝ «արագիլ» բառը կապվում է առաջինի արմատի հետ⁷:

Արագիլների առարինության վկայությունները կան ժողովրդական գրույցներում: Ահա դրանցից մեկը. «Եղեւ ի վանքն ի Խարթայ ծովուն եզերն, որ արագիլ բռյն եղիր: Չարդ ի ներս ձու էրած յայն ժամն որ արագիլն չեր ի մօս. և զետ իրոյն թխւած և ձագ էին. արու ետև և խովեցաւ. զնաց և երեք 200 սպիտակ արագիլ և մին սև և որպես թէ ասել. Զայս ինչ ես արարեալ. ապա ի վերայ եկ եալ սպանին, և ծայր-ծայր ցրուցին զինքն և զրոյն իւր, և զարուն առեալ զնացին»⁸.

Վանական վարդապետի՝ 13-րդ դարում գրի առած այս գրույցում թէ՝ անմեղ սպանված արագիլը, թէ՝ նրանցից վրեժ լուծողները դատնում են իրենց իսկ առարինության զոհերը:

Եփրապական քրիստոնեական ավանդություններց մեկում ևս արագիլը դիտվել է իրքն անարատության, զգաստության ու առարինության խորհրդանիշ հակառակ նրան, որ Աստվածաշունչը բոլոր քայլոր թռչուններին դասել է անմարուր էակների շարքը:

Ալիշանի հավաստմամբ՝ արագիլի ձուն խւամական մզկիթներում իրքն զարդ է կախվել: Օձերով սնվելու իր հատկության շնորհիվ արագիլը քրիստոնեական հավատքում ընդունվել է իրքն օձ-սատանային հաղթող Քրիստոսի խորհրդանիշ:

Արագիլի և օձի հակամարտության մոտիվը լայն տարածում է գտնել հայ ժողովրդական բանահյուսության մեջ: Ասացվածքներում («Օձի գերեզմանը լազազի փորն ե», «Օձի փուշը լազազը կմարսի»)⁹, անեծքներում («Օձ ու լազազ դառնակ, իրար խեղդիկ»¹⁰), հերիաքներում¹¹, քնարական երգերում օձն ու լազազը իրար ոխերիմ թշնամիներ են, որոնց պայքարը երկնքի ու ստորերկրյայքի, կյանքի ու մահվան հավերժական գոտեմարտն է, որտեղ հաղթողը մշտապես կյանքն է:

Վանական վարդապետը անմեղ սպանված արագիլի գրույցը այսպես է եզրափակում. «Թէ որ բոչնոց ալ հարություն ըլլար, վարձք կառնուր այս անպարտ մեռածն ալ Չարին խարդախությամբ»¹²:

Գր. Ղափանցյանը փորձում է ապացուցել, որ վերոհիշյալ գրույցում կարող էր լինել նաև սպանված արագիլի հարություն առնելու մոտիվը, որը, ըստ գիտնականի, չի պահպանվել: Մեր կարծիքով, այդ մոտիվը կարող էր կրծատել ինքը՝ Վանական վարդապետը՝ նույն միտումով, ինչով Խորենացին Արայի

հարության մոտիվը անվանում էր առասպել, այսինքն՝ հորինվածք: Ղափանցյանը նոյնիսկ հոյս է հայտնում, որ այդ կորսված մոտիվը երբնից կգտնվի¹³:

Մեր ունեցած տվյալների համաձայն՝ վերջինս դեռ չի գտնվել, սակայն կան այլ առասպելներ, որոնք արագիլի հարության ուղղակի վկայություններ են: Դրանց համաձայն՝ արագիլներն իրենց երկրում մարդ են: Եթե մոտենում է չվելու ժամանակը, նրանք զայիս են գետի մոտ, լողանում ջրերում, թռչնի փետուրներ հագնում և ճանապարհ ընկնում դեպի մեր երկիրը:

Վերադարձի ժամանակ նրանք հավարվում են մի բարձր սարի մոտ, մատադ անում Աստծոն, լողանում գետում և նորից մարդ դառնապալ՝ գնում իրենց երկիրը: Արագիլն ամեն տարի խեղդում է իր ձագերից մեկին՝ Աստծուն մատադ անելու համար¹⁴:

Հաջորդ առասպելում, որն ըստ Էության նախորդի շարունակությունն է, ներկայացվում է, թէ ինչպես մի կին լվացվելիս ապարանջանը թողնում է աղբուրի մոտ, վերադարձում է լվացվելու, բայց ապարանջանը այլևս չի գտնում: Ընկնում է երկրեկրկիր, հանդիպում է հերկ անող մի զուլացու: Սա մտերմաբար խոսում է ինոց հետ: Պարզում է, որ նա կնոշ բակի ծառին բույն ունեցող արագիլն է, որ, հասնելով արագիլների երկիրը, նորից հողագործ է դարձել ապարանջանն էլ ինքն է վերցրել, որը ուրիշները չզողանան, և բարցրել է բնի տակ¹⁵:

Ս. Հարությունյանի հավաստմամբ՝ «Այս առասպելը բնույթով ու նախահիմքով մերձենում է մեռնող-համանդի առասպելույթին»: Այդ են վկայում իրար հակառակ մերձենում է մեռնող-համանդի առասպելույթին: Այդ են վկայում իրար հակառակները աշխարհները («իրենց երկիրը» և «մեր երկիրը»), որոնք իրարից բաժանվում են գետով: Հին հունական հավատալիքներում հայտնի է Ստիք գետը, որը մեռյալների աշխարհը բաժանում էր ողջերի աշխարհից:

Խոսուն է նաև առասպելների ժամանակային հատկանիշը՝ չվելու ժամանակը, որն ուղղակիորեն կապվում է զարնան՝ հողագործական աշխատանքներն սկսելու ժամանակի հետ¹⁶: Հիշենք հայտնի ասացվածքը՝ «Սարտի իննին՝ լազազը թիին»¹⁷, որի համաձայն՝ արագիլները վերադարձում են զարնան առևնաերկար օրը. Մարտի 21-ը (նոր տումարու) զարնանային գիշերահավասարի օրն է: Արագիլը հեռանալով իր հետ է տանում նաև երկիրն ու հողը շերմացնող արեր: Ինչպես նկատել է Ս. Հարությունյանը, առասպելում դա կը որ, օդակածն ապարանջանն է, որը որոնելու նպատակով Արևամայրը կամ Երկնային տիրամին հասնում է մինչև «այս աշխարհը» և վերացանում¹⁸: Արագիլը՝ իրքն արևի խորհրդանիշ, հանդիս է զայիս նաև հաննելուկներում. «Էրկու օսկի լայլակ/Առավոտման զանգեր տվին, ընցած ծովու վրեն, //Երիկուն վերջացան», «Խալքը ընցավ երկընուց,

⁷ Աճարյան Հր., Արմատական բարարան, Եր., 1971:

⁸ Ալիշան Ղ. Հին հավատը կամ հեթանոսական կրօնը Հայոց. Վենետիկ, 1910, էջ 211:

⁹ Ղանապական Ա., Առաջանի, Եր., 1960, էջ 206:

¹⁰ Նույն տեղում, էջ 219:

¹¹ Հարությունյան Ս., Անձերի և օրինակի ժամկեր հայ ժողովրդական բանահյուսության մեջ, Եր., 1975, էջ 218:

¹² Հայ ժողովրդական հեթիաքներ, հ. XI, Եր., 1980, էջ 318:

¹³ Ալիշան Ղ. Հին հավատը, էջ 212:

¹⁴ Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամուերը, Եր., 1945, էջ 143:

¹⁵ Ղանապական Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 366:

¹⁶ Լոյնը:

¹⁷ Հարությունյան Ս., Հայ առասպելայրանություն, 2000, էջ 302:

¹⁸ Ղանապական Ա., Առաջանի, էջ 241:

¹⁹ Հարությունյան Ս., Հայ առասպելարանություն, էջ 305:

//Ուկի լական կեր կտուց²⁰: Հայ ժողովրդական երգերից մեկում բնության բուսականության մահը բացատրվում է արագիլի հեռացումով:

Արագիլ, երք դր զրնացիր,
Դուն մեր ծառեն երք զնացիր,
Չուզումար հովար արին,
Սըծուն ծրդկիներս չորացուցին:

Մի թե սա նոյն Պերսեփոնեի հեռացումը չէ, ինչի պատճառով սաստիլ բախծելով՝ Դևանարա-բնությունն սկսում է բոշնել ու չօրանալ:

Արագիլ՝ իրք մեռնող-հարություն առնող աստվածություն, առնչվում է անդրաշխարհին և կապող օղակ է երկու աշխարհների միջև։ Առասպելներից մեկում Օշական զյուղում մի քարի վրա ժամանակին արագիլի բույն է եղել, որ ասլրել է մայր արագիլն իր ձագերով։ Սուսական տան բնակիչները սպանել են արագիլին ու քանդել բույնը։

Դրա համար էլ այդ գերդաստանը համազյուղացիներից ստացել է «Լազ լազ ուտողանք» մականունը։ Գյուղացիք խորշել են երանցից և չեն խոսել հետ ները։ Ասում են, թե այս քարի տակ է քաղված Սորիկ հայազգի կայսեր մայրը²¹։

Հավատալով, որ այս առասպելում բացահայտ տոտեմիզմի հետքեր կահ պահպանված (սրբազն կենանուն սպանելու, նրա միսր ուտելու արգելք), այնուամենայնիվ, հասուկ ուշադրություն դարձնենք առասպելի վերջին հատվածին, որը կարծեն առանձնացած է ընդհանուր համատերսությունուն։ Խոսք Լազլագի քարի տակ գերեզմանի արկայության մասին է։

Արագիլ՝ իրքն բոչուն, սերտորեն առնչվում է հոգու գաղափարին։ Մերյալի հոգու՝ բոչնի վերածվելու բազմաթիվ վկայություններ կան ոչ միայն հայ, այլև համաշխարհային բանահյուսության մեջ։ Լազլագու քարի՝ գերեզմանի վրա գտնվելը և այդ քարին բույն դրած բոչունների պաշտամունքը, մեր կարծիքով, նախնիների պաշտամունքի վերապրուկ է։ Նախնիները այս առասպելում վերադարձել են արագիլի կերպարանքով և պաշտպանում են իրենց պաշտող և սրբազն արգելքները շխախտող մարդու օջախն ամեն տեսակ աղետներից։ Ռուսների, լեհերի հավատալիքների համաձայն՝ արագիլը երդեից ու կայծակից պաշտպանում է այն տունը, որի կտորին բույն է երտսել։ Հայերին հավատալիքների համաձայն՝ տարին խոստումնալից ու բարերեր կլինի այն զյուղացու համար, ում տան երդիկին կամ մերձական ծափին բույն կիյուսեր լազլագը։

Արագիլ, մեզի իշիր,
Դուն, արագի և մեր տուն իշիր,
Մեր հացի ծառին բունիր,
Դու մեր սիրուն։

Համաշխարհային առասպելաբանության մեջ արագիլի գործառնքները գրեթե նույնն են։ «Արագիլ մի շարք ավանդույթներում խորհրդանշում է առաստրյուն, պատղաբերություն, երկարակեցություն, մայրական զգացմունքներ (և միա-

ժամանակ որդիական սեր), բարի բախս և երեխաների ծնունդ է կանխագուշակում»²²։

Այսպիսով, արագիլը հայ առասպելաբանության և բանահյուսության մեջ մարմնավորում է մի շարք խորհրդանիշ-կերպարներ, որոնք ինքնատիպ կերպով փոխկապակցված են։ Իրքն զարնան ավետաբեր, զարնան ախաղեր։ Արայի օգնականն է և ուղեկիցը։ Այդ նույն գործառույթով նաև կապող օղակ է այսրաշխարհի և անդրաշխարհի միջև։ Իրքն թոշող արարած՝ առնչվում է հոգու թոշեակերպ թնկարմանն ու նախնիների պաշտամունքին։ Իրքն երկար կտորույթ թոշուն՝ մարմնավորում է առնական սեռական ուժը, բեղմնավորությունն ու որդեննությունը, որով ևս առնչվում է Արային։ Իրքն օձապան՝ առնչվում է Հիսուսի կերպարին և որպես արդյունք այս ամենի՝ սերուորեն կապված է մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքին։

ЛИСТ В АРМЯНСКИХ ПРЕДАНИЯХ

Резюме

Ա. Պօգօսյան

Разнообразна и ценна роль перелётных птиц в мифологическом мышлении и фольклоре армянского народа. Аист исполняет в них разные функции, которые особенно образом взаимосвязаны: он - вестник весны, «брать весны», является помощником Ара Гегецика, хранителем полей. Он является связующим звеном между этим и потусторонним миром. Как птица с большим клювом, аист олицетворяет мужскую силу, деторождение и плодородие. Как известно, и эти восприятия отражаются культ Ара. Как змееубийца, он связывается с Иисусом и в результате относится к культу умирающей и воскресающей природы.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պողոսյան Արարավա Հովհաննեսիք - ՀՀ ԳԱԱ հետազոտության և ազգագրության ինստիտուտի առողջապահ, Գյումրու «Ֆուուն» վարժարան,
E-mail: araqsyar.poghosyan.77@mail.ru

²⁰ Հարությունյան Ա., Հայ ժողովրդական հանկուկներ, Եր., 1965, էջ 9, 11:

²¹ Ղանաղանյան Ա., Ավանդապատում, էջ 13.

²² Միֆы народов мира, т. 2, М., 1988, стр. 348.

Naira HAYRAPETYAN

THE ROLE AND THE SIGNIFICANCE OF CROSS-CULTURAL COMMUNICATION IN BUSINESS TODAY¹

It's no secret that today's workplace is rapidly becoming vast, as the business environment expand to include various geographic locations and span numerous cultures. What can be difficult, however, is understanding how to communicate effectively with individuals who speak another language, or who rely on different means to reach goal. The study of cross-cultural communication is central to both theoretical and applied linguistics. Examining the causes of misunderstandings in cross-cultural communication sets in relief the processes that underlie all communication but often go unnoticed when it proceeds successfully. Thus discourse analysts find cross-cultural communication a useful research site, apart from any real-world interest in cross-cultural relations. In fact, however, most discourse analysts have a genuine concern with real-world issues, and cross-cultural communication is crucial to nearly all public and private human encounters. At the most global level everything in political and economic life depends upon negotiations among representatives of governments with different cultural assumptions and ways of communicating. Moreover, in order to accomplish any public or private goals, people have to talk to each other, and in more and more cases, the people communicating come from more or less different cultural backgrounds².

Cultural aspect is a major element of international business negotiations. It is often compared to an iceberg; there is more to it than meets the eye. These hidden elements, if not understood, can make or break an international business transaction. The increasing independence between nations, businesses and people has brought the importance of national cultures to the forefront. Culture is defined as the socially transmitted behavior patterns, norms, beliefs and values of given community. Culture greatly influences how individuals think, communicate and behave. Thus it has a great influence on some aspects of negotiation. It is important to note that culture and nationality are not always the same.

Knowledge is the key to effective cross-cultural communication. First, it is essential that people understand the potential problems of cross-cultural communication, and make a conscious effort to overcome these problems. Second, it is important to assume that one's efforts will not always be successful, and adjust one's behavior appropriately.

¹ Հոդվածն իրև զեկուցում եերկայսացլիք է Երևանի պետական համալսարանում 2014թ. ապրիլի 4-5-ին կայացած «Բնությունի ուսուցման խթանումը» միջազգային գիտաժողովում:

² Cross-Cultural Communication, Deborah Tannen, HANDBOOK OF DISCOURSE ANALYSIS, Vol. 4 Copyright, 1985 by Academic Press London. Discourse Analysis In Society, 1985; <http://faculty.georgetown.edu/>

One should always assume that there is a significant possibility that cultural differences are causing communication problems, and be willing to be patient and forgiving, rather than hostile and aggressive, if problems develop, for example. Not jumping to the conclusion that you know what is being thought and said, one should respond slowly and carefully in cross-cultural exchanges.

To stop, listen, and think, or as he puts it "go to the balcony" when the situation gets tense is William Ury's suggestion for heated conflicts. By this he means withdraw from the situation, step back, and reflect on what is going on before you act. This helps in cross cultural communication as well. When things seem to be going badly, stop or slow down and think³. Is it possible I misinterpreted what they said, or they misinterpreted me? Often misinterpretation is the source of the problem. What could be going on here?

Active listening can sometimes be used to check this out-by repeating what one thinks he or she heard, one can confirm that one understands the communication accurately. However, even active listening can overlook misunderstandings if words are used differently between languages or cultural groups.

Often intermediaries who are familiar with both cultures can be helpful in cross-cultural communication situations. They can translate both the substance and the manner of what is said. They can tone down strong statements that would be considered appropriate in one culture but not in another, before they are given to people from a culture that does not talk together in such a strong way, for instance. They can also adjust the timing of what is said and done. Some cultures move quickly to the point; others talk about other things long enough to establish rapport or a relationship with the other person. The group that needs a "warm up" first will feel uncomfortable if discussion on the primary topic begins too soon. A mediator or intermediary who understands this can make appropriate procedural adjustments and explain the problem.

Yet sometimes intermediaries can make communication even more difficult. This gives the appearance of bias, even when none exists if a mediator is the same culture or nationality as one of the disputants, but not the other. It is common for mediators to be more supportive or more understanding of the person who is of his or her own culture, simply because they understand them better even when bias is not intended. Yet when the mediator is of a third cultural group, the potential for cross-cultural misunderstandings increases further. As is extra time for confirming and re-confirming understandings at every step in the dialogue or negotiating process, in this case engaging in extra discussions about the process and the manner of carrying out the discussions is appropriate.

Salacuse describes six distinctive features of international business negotiations. He begins by pointing out two mistaken assumptions about doing business in an international setting. Many economic commentators assume that international business

³ Conflict Research Consortium, University of Colorado, USA, Cross-Cultural Communication Strategies, www.colorado.edu.

deals will happen naturally if only the correct governmental policies and structures are in place. Corporate leaders assume that they can simply extend their successful domestic strategies to the international setting³.

Both of these assumptions are mistaken. Policies alone do not create business deals; companies do. In order to make successful deals business executives will need to be much better educated about international negotiating. International business negotiations require a different set of skills and knowledge, and are fundamentally different from domestic negotiations (here we deal with external and internal negotiations). "Domestic business dealings probably have about the same relationship to international business as domestic politics do to international diplomacy" Salacuse explains⁴.

Which as a set distinguish international business negotiations from domestic negotiations, Salacuse identifies six elements which are common to all international business negotiations.

1. The first is that in international negotiations the parties must deal with the laws, policies and political authorities of more than one nation. In the case of business negotiations we have got negotiating sides in the face of transnational corporations, international-financial organizations, national none governmental organizations-short for: NGOs and a range of multifarious associations, companies and firms. So the above mentioned sides are considered to be key actors in diplomatic dialogues and talks in its different aspects. They are considered to be state and none-state actors working together and assisting each others. Here we can bring forth a brilliant example of how the USA made Saudi Arabia to buy America's 'Boeings' instead of the European 'Airbuses', it was a semi-political and semi-business negotiation on the phone, in the aftermath of which that Middle Eastern country (Saudi Arabia) began to use the American airplanes⁵.

Laws and policies may be inconsistent, or even directly opposed. International business agreements must include measures to address these differences. Such measures typically include arbitration clauses, specification of the governing laws, and tax havens. In the early 1980s U.S. companies operating in Europe were caught between the American prohibition on sales to the Soviets for their Trans-Siberian pipeline, and European nations' demands that these companies abide by their supply contracts, for example.

2. A second factor unique to international business is the presence of different currencies. Different currencies give rise to two problems. The actual value of the prices or payments set by contract may vary, and result in unexpected losses or gains since the relative value of different currencies varies over time. That each government generally seeks to control the flow of domestic and foreign currencies across their national boundaries is another problem. And so business deals will often depend upon the

willingness of governments to make currency available. Unexpected changes can have dramatic effects on international business deals in such governmental currency policies⁶.

3. The participation of governmental authorities is the third element common to international business negotiations. Governments often play a much larger role in foreign business than Americans are accustomed to. The presence of often extensive government bureaucracies can make international negotiation processes more rigid than is usual in the American private sector. Sovereign immunity can introduce legal complications into contracts. State-controlled businesses may have different goals from private companies. State entities may be willing to sacrifice some profitability for social or political ends such as greater employment whereas private firms are usually primarily concerned with profits.

4. International ventures are vulnerable to sudden and drastic changes in their circumstances. Events such as war or revolution, changes in government, or currency devaluation have an impact on international businesses which is much greater than the impact that the usual domestic changes have on national businesses. These risks "require that international business negotiator to have a breadth of knowledge and social insight that would not ordinarily be necessary in negotiating a U.S. business arrangement." By employing political risk analysts, by foreign investment insurance, and by force majeure clauses which allow for contract cancellation under certain conditions international businesses try to protect against these risks.

5. International business negotiators (corporation, business, national NGOs "diplomats" and "negotiators")⁷ also encounter very different ideologies (Realism, Idealism, Liberalism and so on). Different countries may have very different ideas about private investment, profit and individual rights, in particular. Effective negotiators will be aware of ideological differences. They will present their proposals in ways that are ideologically acceptable to the other party, or that are at least ideologically neutral.

6. In the long run, cultural differences are an important factor in international negotiations. Different cultures have distinctive and simultaneously similar values, perceptions and philosophies in addition to language differences. Certain ideas may have very different connotations in different cultures as a result. For instance, Americans and Japanese tend to have a different view of the purpose of negotiations. Americans see the goal of negotiations as to produce a binding contract which creates specific rights and obligations. Japanese see the end (i.e. the goal) of negotiations as to create a relationship between the two parties; the written contract is simply an expression of that relationship. What the Japanese see as a reasonable willingness to modify a contract to reflect changes in the parties relationship, Americans see as a tendency to renege. By the Japanese, American insistence on adherence to the original terms of the contract may be perceived as distrust.

³ A Beginner's Guide to International Business Negotiations, 1988, www.beyondintractability.org

⁴ *Быть международным*, www.beyondintractability.org.

⁵ Зонова Т. Современная модель дипломатии: истоки становления и перспективы развития, стр. 174-175.

⁶ Grow Globally, Opportunities for your middle-market company around the world, Mona Pearl Chapter 5, Sound International Negotiations, Unlocking the Secrets of Success Across Borders.

⁷ Saner R., Yiu L. International economic diplomacy: Mutations in post-modern times, pp. 12-14.

While others prefer to address each issue individually, some cultures prefer to start from agreement on general principles. Some cultures prefer to negotiate by "building up" from an initial minimum proposal; other prefer to "build-down" from a more comprehensive opening proposal. Cultural differences also show up in the preferred pacing of negotiations and in decision-making styles. However, Salacuse cautions, that individual negotiators do not always conform to cultural stereotypes⁸.

In the conclusion we can say, that the demography and cultural attitudes of the U.S. population are changing. Current statistical research shows that one out of four Americans is of Hispanic origins or a person of color. They would constitute the majority of the American population by the middle of the 21st century. The "melting pot"⁹ concept never became the reality. Many groups prefer to maintain their traditions and beliefs and resist assimilation into Eurocentric or Anglo culture, currently. Those demographic and perceptual changes create the necessity for governmental agencies to develop better understanding of cultural differences and conflicts promoted by them.

ՄԻՋԱՏԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ամիսովում

Ն. Հայրապետյան

Հողվածում քննության են առնվում արդի գործարար աշխարհում միջմշակութային հաղորդակցության դերը և նշանակությունը, ինչպես նաև մշակույթի ունեցած ազդեցությունը միջազգային գործարար բանակցությունների վրա: Հողվածում ընդգծվում են միջմշակութային կապերի տեսական կարևորությունը և գործնական հարաբերություններում միջմշակութային շփումների ժամանակ առաջացող խնդիրները, ներկայացվում են նաև միջազգային գործարար բանակցությունները տարբերակող հիմնական հատկանիշները:

Տեղեկություններ հեղինակի մասին
Հայրապետյան Նաիրա Սերգյան - մ.գ.թ., Երևանի
պետական համալսարանի անգերենի թիվ 1 ամբիոն,
E-mail: nairia80@mail.ru

⁸ A Beginner's Guide to International Business Negotiations, 1988, www.beyondintractability.org.

⁹ An Encyclopedia Britannica Company, Merriam-Webster Dictionary, www.merriam-webster.com: 1. a place (such as a city or country) where different types of people live together and gradually create one community; 2. a process of blending that often results in invigoration or novelty.

Ողջա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԻ ՈԳՈՒ ՀԵՏԵՂԵՌՆՅԱՆ ԿԵՆՍԱԾԱՐԺԸ ՀԱԿՈԲՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ «ԿԱՊՈՒՅՑ ՀԱԶ» ԳՐՔՈՒՄ

Անտարակույս, մարմնից ծնվածը մարմին է, ոգու ծնվածը՝ ոգի, բայց տիեզերականը մարմնի ոգեհետությունն է երկնքում և հոգու մարմնացումը երկրի վրա: Դրա համար էլ հայրենիքը լուս է դառնում, եթե երկնում են երկինքն ու երկիքը, եթե ձառագում է գիրը:

Հակոբ Հարությունի «Կապույտ հազ» գիրը՝ հայի հավաքական ոգու տեսլականով, սուկ պատմություն չէ, այլ ոգու պացը՝ անցյալով ապագան իմաստափորդ: Ըստ Էության, գրքի գլխավոր կերպարը հայի ողին է, մյուս կերպարները՝ ողեկիրներ:

Հանիրավի, մարդկության գոհաբերվող տեսուկ են շարունակ մեզ համարել: «Կապույտ հազը» եկել է մեզ ասելու, որ պետք է թոթափենք այդ մտայնությունը. հայի ողին անպարտելի է ու հարաման:

Հ. Հարությունի «Կապույտ հազը» ուշագրավ է մի քանի չսփումներով. նախ՝ որպես գրողի ստեղծագործական հնարավորությունների ժանրային նոր դրսերում: Դժվար է միանշանակ տարրոշել՝ վեպ է, վիպակ է, պատմվածաշար, թե արձակի փոքր ժանրերի /պատմվածք, նովել, խոհագործյուն, ավանդագրույց, հրապարակախոսական ակնարկ, հուշագրություն/ խառնարան, քանի որ նրանում տեղ գտած պատումներն ունեն հարաբերական ինքնավարություն: Առանց որևէ ժանրի նախապատվության՝ գիրը կարելի է բնութագրել՝ պատում պատումի մեջ: Այն, որ հեղինակը պատմողի տարերք ունի, անժխտելի է, և վիպելու, պատմելու ընթացքում բառերից անդին ողին է, որ առաջնորդում է նրան:

Հակոբ Հարությունը, լինելով անապատով անցած սերնդի ժառանգ, արյան հիշողությամբ ու մարտոնակ գինվորի պիրկ մկաններով է շարժել իր գրիչը, և զրոյում հայտածել հայ կամավորական լեզենականի կերպարը, որը հանիրավի մոռացության էր տրված: Այս կերպարի գեղարվեստական անդրադարձը կարեռվում է նաև այն իրողությամբ, որ այսօր համայն հայությունը նշում է Մեծ Եղեռնի հայրութամյակը: Հայ լեզենականը Առաջին համաշխարհայինի հաղթող զինվորներից է, իսկ Եղեռնից հետո, ըստ Էության, առաջին վրիժառուներից մեկը, քանի որ, ըստ նրա, չղատապարտված ոճիրը կարող է լինել շարունակական:

Գրքում անցյալը արժանապատվորեն հառնում է մեր ժամանակի մեջ, որը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել հայի ինքնությունը, ըմբռնել հայ զինվորի հոգենկարագրի առանձնահատկությունները հատկապես սահմանային իրավիճակներում:

«Կապույտ հազ»-ում տարբեր ժամանակների հերոսները հայտնվում են նոյն հարցադրումների մոգական շրջանակում, հարցադրումներ, որոնց լուծման միակ երաշխիքը մնամ է հայի ոգու կենսաշարժը: Եթե գրքի գլխավոր հերոսը անցյալ դարի սկզբին Կիլիկիան ազատագրող լեզենական Դազարն է, ապա մեր

օրերում Արցախի սահմաններում ամուր կանգնած նրա ծոռ Մանուկն է: Գիրքն արձարձում է նաև Եղեռն ապրած երրորդ սերնդի աշխարհատեսությունն ու տաղիալ-հոգեբանական առանձնահատկությունները, որոնք լայն ընդգրկմամբ համամարդկային հայեցակետեր են՝ հայտանության գեղարվեստական անդրադառնությունը: Հարությունը ազգային արժեքանության համատեքստում պատմական նույնությունը ոգեմայութեան փոխակերպում է գեղարվեստականի, որով և ներկայացնում է հայ ժողովրդի ճակատագիրը:

Դատմական իրողությունն այսպիսին է՝ «1915թ. Դիարբերիքի վիճայեթի մեջ մտնող Զեքուշի հայ համայնքը տեղահանվեց և ամրողովին կուսորվեց»:

Դասարյանների մեծ գերդաստանից կենդանի մնացած միակ շատավունը պապս էր՝ Ղազարը:¹

Հեղինակն արեւելահայ գրականության մեջ առաջին անգամ գեղարվեստութեան լիարժեք անդրադառնությունը է կամավորական հայ լեզեռնականի՝ իր Ղազար պապի կերպարին, որի կենսագրությունը դարձել է ելեկոնագարկ գերդաստանի շարունակվող տարեզրություն: Մինչ այս գրքի լույսընծայումը հայ լեզեռնականների մասին մասնակի անդրադարձ է եղել Ստ. Աղաջաջանի «Եղեգները շխնարիվեցին» գրքում /Մարտի ողբերգության զանգվածային տեսարաններում/ և Կարպիս Սուրենյանի «Արարայի քահանան» պատմվածքի մեջ,² որտեղ քահանան Արարայի ճակատամարտի մասնակից է հայկական լեզեռնի կազմում:

Հ. Հարությունի գրքում մահապարտ Ղազարը դարձում է այն կանաչ շիվը, որ ահավոր ողբերգությունից հետո պէտք է ծաղկեր ու սաղարթվեր՝ աշըք հառած պապենական Զնքուշին /այս առումով ուշազրակ է «Նիկողոսի աղոթքն առ կենաց ծառ» պատումը/:

Ղազար պապը հայերծ պայքարող հայի կերպար է, ինքնամայրող, ինքնամանդուղ կերպար, որից կենում է Վահագնի կրակը, իսկական որդի որոտման: Նրա և հայկական լեզեռնի կամավորների համար հաղթանակի բանաձեռ աղոթքն է արդարության, իրավունքի, վրեժի... Վրեժի, որը նրանց ուղեկցեց ողջ կյանքում, մինչև իսկ այն ժամանակ, եթե դադարել էր զինավառ կրիվը, ու նրանց պայքարը աշխարել դևմ, իրենց աղոթքին հավատարիմ, շատ զավակներ ունենալին էր: Այս զաղափարի առհավատցան Ղազարի ծոռ Մանուկն է, որն այսօր է արցախյան սահմանին է որպես հայրենյաց դիրքապահ: Վեպում նրա՝ զինվորի երդման տերսութ նոյյան աղավնու նման ուղարկվում է կորուսյալ երկիր՝ Տիգրանակերտից Տիգրանակերտ:

Հեղինակը դիպուկ է բնութագրում Հայկական լեզեռնը՝ «հայ քաղկառմի հավաք միասնություն», որը միշտ է լորիչ է եղել, քանզի այն ոգի էր, որ հառնել էր արյուն-քրտինքից ավելի քան 5000 հայորդների, որոնք ուս ուսի, մեջք մեջքի տված հաստատեցին հայի՝ հայրենիք ունենալու բարոյական իրավունքը»:

Ի դեպ, լեզեռնականների թեմայով արևմտահայ գրականության մեջ հայտնի է Շ. Շահնուրի «Պույնուզը»³ /«Պույնոշակիրները»/ պատմվածքը, որը առաջին

անգամ տպագրվել է Փարփղի «Մենք» հանդեսում 1932-ին: Արյան վրեժին զիտակից մնալ թշնամու հետ վարվել այնպէս, ինչպէս նա է քեզ հետ վարվում. սա է Շահնուրի հայեցակետը: Ինքնուրույն պատմվածքի արժեքը ունեցող այս գործը Շահնուրի գրեթե «Որդիք որտուման» վեայի նախամուտն էր լինելու: Ցավոր, այս վեայը ինչ-ինչ պատճառներով չգրվեց:⁴

Հակոբ Հարությունը «Կապույտ հազ» գրքում Շահնուրի պատմահայեցնությունը շարունակում է նոր ժամանակների աշխարհընկալմամբ: Զարդի որևէ տեսարանի ուղղակի նկարագրություն չկա: Նա անդրադառն է Սևծ եղեռնը վերապլոտի հոգենկարագրին ու մտախառնվածքի դրսուրումներին: «Գիշերները նրա պայծառ աշքերում տեսիլրված ավերակների մեջ՝ շիրմաքմբերի վրա, հազարավոր ծաղիկներ էին սկսում բացվել զոյն-զույն, փունջ-փունջ:

«Քոյքը ծաղկաւոր հագուստներ կը հագեիին, - անցավ Ղազարի մորով ու 22նջաց բռուրերի անունները, - Մարի, Եղիս, Սոնա, Անի...»:

Զիան երանք այլևս, Տօւսանի խորրում ծաղկադաշտել են իրենց նահատակված մոր պատառությամբ կրծքին:

Դատմականությունը դրսերուլում է արդիականության հետ գիրկընիառն: Ժամանակը ևս չափում է ոգեղենությամբ: Գրքի պատումներից յուրաքանչյուրը ճակատագրի, ոգու կենսաշարժի մի քայլ է առաջ, որևէ անցյալի, ներկայի և պապայի հարափոփոխ ամրողություն է: Բոլոր ժամանակները ներառենով՝ հեղինակը տախիս է այսօրվա ժամանակի պատասխանը՝ Ծա ունեն իրավունք այս մասին խոսելու:

Հայ զինվորի հավաքական ոգին՝ որպես արնագոյն հայի ուրվական, ճախրում էր երգ դարձած... Արնագոյն հայի ուրվականն է իրական գորավարը կայանալիք ճակատամարտի. անցնում է հոգուց հոգի հավաքականության խարեցով, որ Արարա սղանալիս խոյանքը լինի անկատիլ: Արնագոյն հայի ուրվականը հնձել է Քուուկիկ Զալային, որի սմբակների դրափունից փիլրված է հողը. ոռունգերից ցայտող բռուր կրակն շունչ տախիս կամավորների հոգիներին, լուսավարում Արարան, որ աննշարք բռուր մեծանորով աշխարի աշքին դառնա Արարատ.⁵

Հ. Հարությունը դրվագ առ դրվագ հզորացնում է գրքի խորերդանշանների լեզուն՝ իրեն ազատության և հայ ինքնամարդականության կրող... Խորերդանշեները հայի ոգու կենսաշարժի յուրօքինակ դրսերումներ են: Նա ուրաւոր ընկալմամբ է մեկնում Ազրավարիի խորեություն՝ այն անսներով տապանաքարերի այլակերպումների մեջ, և գեղարվեստորեն ենթադրել տախիս, որ Միերը դուրս է զալու մեր նախնյաց հիշատակներից՝ մեր ներսից, եթե որ մենք արժանի լինենք նախնյաց փառքին...

Մետաֆոր-խորերդանշիշի իմաստ ունի գրքի «Կապույտ հազ» խորագիրը, որտեղ հազը մարդկային բողոքն է, ըմբռատացումն ու նաև հոգու ինքնամարդումը: Եվ բնավ պատահական չէ, որ անարդար աշխարի դեմ ընդգուսմը հերոսն

¹ Հարություն Հ., Կապույտ հազ, Եր., 2014, էջ 15:

² Տե՛ս Սուրենյան Կ., Արտուրը /պատմվածքներ ու հասկներ/, Եր., 2010, էջ 275:

³ Նույն տեղում, էջ 43:

արտահայտում է հազոր: Ընդհանրապես ժողովրդի մեջ ընդունված է կապույտ հազր բուժել հոգեհմայությամբ անաղարտ բնության միջնորդությամբ, ու թվում է, այս ենթատեքստում կապույտ հազր հայի ոգու ապարինման առաքելություն ունի:

Գրքում Միջերկրական ծովը դեպ երազը տանող ձանապարհի խորհրդանիշ է. վերապրադների սերունդը թեն տարբեր ուղղություններով, բայց այդ ծովը կտրելով՝ գնում է դեպի Արարատ: Խորհրդանշների համակարգում սիմվոլներից յուրաքանչյուրը՝ թօնին, ձիթենու տերեները, կենաց ծառը, Զին մարտիկը, հայելին, այծի կարը, Հովիի եկեղեցին և այլն, գաղտնագրում-զաղտնազերծում է հայկական ոգու այս ընթացքը, որն ասես մեր մեջ է գենետիկորեն: Խնճնակենսագրական այս զիրք-պատումում հեղինակն իրեն զգում է նախահայրերի կծիկ: այդ կծիկի թելերը աստիճանաբար բացվում են և շերտ-շերտ հասնում պատմական այն ժամանակներին, երբ օրինասական խնդիր էր հայի լինել-չլինելը:

Գրքում հայ ոգու կենսաշարժի դրսորումներում առանձնակի ուշադրություն է դարձվում հայ կնոջ դերակատարմանը: Լեզեռնականի կինը զինակցուի է, բույրը՝ մարե, մայրը՝ պահապան իրեշտակ: Ցավոր, մեր գրականության մեջ քիչ է անդրադարձվել հոգեհմա հայի՝ մարեի կերպարին: Սարեները, կարելի է ասել, բիկունիքի ընարական հերոսներն են, որոնք իմաստավորել են հայրենաց զինվորի առաքելությունը, նրան ոգեզարքոնքի կոչել: Գրքում Ղազարի մարեի պատմությունը որքան գեղեցիկ, այսքան եղերական է... Վկայաբերենք մի հատված, որի մեջ հասնում է նրա հնայատիպը: «Նամակի ձեռքս առի ու աշխարհի լոյր իշաւ փրա: Երախտապարտ եմ, աղքա՛ր, որ դուք կաս ու ինձի հաղորդ կրեն ան մեծ գործին, որու մահապարտն ես: Յիրահ, ես քու մահապուրծ եղած քոյրդ եմ: Չես կրնայ երեակայիլ՝ որչափ նպարտ եմ քեզմով, որչափ երջանիկ, որ աղքարս կամաւորական է:

Կը գրես. «Ես եմու վրէժս. այլ խոկում չուեիմ: Վրէժը եայրենիք կը պահէ»:
Օ՛, հոգիդ մարտական է և ակաղձուն հիշողություններուդ բարութեամբ: Ինչ լավ կը գրես. «Դերուշի քարին փրայ դաշտուած մնացած է սուրբ Սարգսի ձիուն պայտահետքը: Ու նազուկ աղօթիկ մը՝ ծաղկահասակ ու երրադալար՝ Սառա անունով, երգուս փրայ նոյն եելքով կը եեւայ»: Սիրտս կը ճմլուի Սառայիդ համար, որու զնգուն ձայնը կարծես ունեկերուս մեջ է՝ «Տուտանին մէջ հայիսէանս հարս կը մնամ»: Կը պատկերացնեմ՝ ինչպէս թնկապ աղաւեիի մը ենան Սառան նեսուած է Տուտանի լիիբը».⁶

Ուշագրավ է, որ «Կապույտ հազը» պատասխանում է 21-րդ դարի գրականությանն ուղղված մարտահրավերներին նաև լեզվական խմատով: Հեղինակի լեզվամտածողությունը, համապատասխան ոգեղեն կենսաշարժի, դրսորվում է և արևելահայերենով, և՝ արևմտահայերենով. արևմտահայերենով նա խոսում է ի սփյուռս աշխարհի ցրված իր հարազատների հետ: Լեզվական այլընտրանը արդեն իսկ խորհրդանշում է մեր երկիրեղկած ճակատազրի ֆենոմենը: Այս շահեկան է նաև գրական լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և

արևմտահայերենի՝ լեզվական միջավայրը ու կոլորիտ ստեղծելու խմատով, որն էլ ընդգծում է համայն հայության անբաժանելիությունը:

Գեղարվեստական պատմումը լրացված է փաստագրական արժեքավոր նյութով՝ Հավելվածով: Այն միջաբերվել է որպես պատմական ֆոն, որն ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացնելու պատմական այն ժամանակի ու միջավայրը, որոնց միջով անցել է հայ լեզեռնականը, անցել է և միշտ մնացել ասպետական պատվաստիճանով:

НЕСГИБАЕМЫЙ ДУХ АРМЯНИНА В КНИГЕ А. АРУТИОНА «СИНИЙ КАШЕЛЬ»

Резюме

P. Оганесян

В книге «Синий кашель» А.Арутюн впервые в восточноармянской литературе художественно и полноценно представлен образ армянина легионера-добровольца национально-освободительного движения армянского народа, деда Казара, биография которого стала продолжением летописи его истребленной династии.

Основной образ книги – дух армянина, остальные образы, это носители этого духа. Воистину, армян считали жертвенным видом человечества. Книга «Синий кашель» призывает избавиться от этого стереотипа, поскольку армянский дух непоколебим и вечен.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովհաննիսյան Ռոզա Պողոսի - ՀՀ ԳԱԱ Ենթական հայագիտական հետազոտությունների կենտրոն
E-mail: vagrd-roza@yandex.ru

Միրանուշ ԿԱՐՍՊԵՏՅԱՆ

ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՆ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԱՐԴԱԿՈՒՄ

1880-1914թ. ընթացքում ամրոջ արևմտյան աշխարհում առաջացած սոցիալական և մշակութային խարը փափոխությունները: Այն կարելի է կոչել դարավերջի ճգնաժամ, որի ամենաբնորոշ առանձնահատկություններն էին տեխնիկական և գիտական մեծ առաջընթացը, արյունաքերական արագ զարգացումը, հասարակական և անարիստիկ տեսությունների տարածումը, պողիտիկիզմի (գործնականություն) և ռացիոնալիզմի (բանապաշտություն) ճգնաժամը, երբ մարդը կասկածում էր՝ գիտությունը և բանականությունը կրավականացնե՞ն բացարելու և ճանաչելու աշխարհը: Այս մտածողությունն ավելի ուշ վերածվեց երգիստենցիալիզմի, ըստ որի՝ մարդ եւկն սուլոծված է մահվան համար, իսկ վերջինս մարդուն անխուսափելիորեն պատճառում է գոյապաշտական տրություն: Այս փուլն ի վերջո եզրափակվեց Առաջին համաշխարհային պատերազմով:

Սոհասարակ քաններորդ դարն առանձնացավ իր դաժանությամբ, որի ընթացքում, ըստ Իսպանիայի գերազանց դատարանի անդամ Բալտասար Ռեալի, «180 մէն մարդ է կյանքից զրկվել այն դեպքում, եթե բնույթան արհավիրքներից զոհ է գնացել 24 մէ»¹, իսկ Բարսելոնայի համասարանի մշակութարանության պրոֆեսոր, ցեղասպանագետ Ժոան Ֆոնտոնէ Ռեիբաչին 20-րդ դարը որպես է որպես ցեղասպանությունների դար, և որպես այդարիսին «այն թերեւս պահպանում է կապը տարբեր կայսրությունների կազմաքանդման գործընթացների հետ»²:

Բայց նախորդ դարին բնորոշ կազմաքանդման ու մասնաւում գործընթացը հատկական է նախևառաջ մարդու ներքին աշխարհին ու դրանից սկիզբ առնող հետևանքներին, որոնք մարդուն դարձնում են «ծայրահեղ լարվածության հասած հոգեբանական կառուցվածքը, որ թեև ձգուում է պաշտպանվել, պատուարվել այդ ուժերից և լարվածությունից, ամեն ճիզ ու ջանք գործի է դեռու վիճակը»³: Դարձելու, հաղթելու դրանց, բայց ինքը մշտապես գտնվում է փլուզվելու, քանդվելու, ոչնչանար վտանգի տակ, կանգնած է «ինչպէ՞ս ապրել» ճակատազրական հարցի ստուգը⁴: Մարդու հոգևոր աշխարհի դեկոնստրուկցիան վկայում է մարդկայինց հետևողականորեն օտարացող բանականության մասին և հիշեցնում երկայր սլաք. մի կողմից՝ այն սկիզբ է դնում մարդու կողմից մարդուն ոչնչացնելու գործընթացին, մյուս կողմից՝ այդ նույն հետևանքը պատճառ է դրանում մարդու «հոգեբանական քայլայման» խորացման, մարդու ներքին ճգնաժամի:

Այս համբնիանուր անկումային տրամադրությունները համակել էին նաև դարասկզբի Իսպանիան ու խսպանացուն, ինչը պայմանավորված էր խսպանամերիկյան պատերազմում խսպանացիների պարտությամբ ու վերջին զաղութե-

¹ Գուարչ Գ., Հայկական տոհմածառ, 24Մ հր., Եր., 2005, էջ 7:

² Joan Frigole' Reixach, Cultura y genocidio, Barcelona, 2003, p. 8.

³ Էրդյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգս Խաչենց, Եր., 2009, էջ 156:

րի կորստով, անկախություն ձեռք բերելու նպատակով Կատալոնիայի ու Բասկոնիայի կողմից մղվող պայքարով, ինչը ոչ միայն սրեց հարաբերությունները երկրի ներսում, այլև ավելի խորացալ քաղաքացիական պատերազմի ընթացքում: Հետևաբար, պատմական այս իրադարձությունները Իսպանիայում եիմք դրեցին մոտ երեք տասնամյակ տևող սոցիալական ու հոգեբանական ճգնաժամի: Ըստ էության, պատերազմը բեկում է մարդկանց հոգիները, մինչև կյանքի վերջ զրկում հանգստությունից և ուրախությունից՝ դատնալով մարդու մեկուսացման ու ինքնապարփակման պատճառ: Հետևաբար, սովոր, զրկանքը, բռնությունը, հոգեկան դատարկությունը դարձնում մարդկանց մշտական ուղիւղները քաղաքացիական պատերազմի ու եետպատերազման Իսպանիայում: Պատերազմից հետո սկսվեց վերլուծությունների ու վերացնահաստության շրջանը, որի ընթացքում խսպանացի մտավորականը իր խնդիրների օգնությամբ անդրադառն նաև համամարդկային հիմնախնդիրներին: «Եվ ինչպէս միշտ պատահում է, ամենակենսական ազգային խնդիրների լուծման վնասությունը արվեստում ճանապարհ է բացում դեպի համամարդկայինը: Հենց այս պատճառով, որ խսպանացի գրողներն ապրում ու խորհում էին ազգային կյանքի արմատական խնդիրների մասին, նրանք հասնում էին համապարփակ, համամարդկային նշանակություն ձեռք բերող գեղարվեստական լուծումների⁵: Այսպէս, 70-ական թվականներից խսպանական հասարակության մեջ սկսեց շրջանառվել ցեղասպանության թեման, որովհետև քաղաքացիական պատերազմի ու գեներալ Ֆրանկոյի բռնապետության ընթացքում կատարված դաժանությունն ու սպանություններն սկսեցին որակվել ցեղասպանություն⁶, իսկ այս տեսակետն իր կողմեակիցներն ունի նաև այսօր և հիմնավորվում է նրանով, որ «պատերազմը նույն ազգի տարբեր մասերի միջն նույնականացները կազմում է ցեղասպանություն այն չափով, որով չի սահմանափակվում միայն մյուս կողմից ջախջախումով, այլև ենթադրում է վերջինիս ոչնչացում, քայլայում, թռվացում, ստորացում»⁷: Ահա այս համապատկերում խսպանական գրականության մեջ նախորդ դարի ութառնականներից սկիզբ առաջ հայոց ցեղասպանության թեման, որն արծարծման լայն հուն մտավ 21-րդ դարի սկզբից:

Հայոց ցեղասպանությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ամբողջ մարդկության մեծագույն ցավն ու ողբերգությունն է: «Ցեղասպանությունը համընդհանուր ողբերգությունն է ինչպէս մարդու, այնպէս էլ հումանիզմի առումով, և սա երկրի վրա ապրող մեզ բոլորիս դարձնում է պատասխանատու»⁸, զրում է Կապությունսկին «Եշխանության պաթոլոգիաները» («Pathologías de poder») վերտառությամբ հոդվածում:

Ծնայած հարյուրամյա հեռավորությանը՝ հայոց ցեղասպանության հիմնախնդիրը չի կորցրել իր արդիականությունը՝ փորձելով հասնել տահասարակ

¹ Տերըրյան Ի. Իսլանդիայի պատմությունը. Օչերք իսլանդական լիտերատուրայի պատմության համար. ԽՍՀՄ ԳԱ Արևածագության պետական ակադեմիա, 1973, էջ 7.

² Այս մասին տես՝ Julius Ruiz, Las metanarraciones del exterminio, Revista de libros, Agosto 2014, <http://www.revistadelibros.com/articulos/las-metanarraciones-del-exterminio/>

³ Joan Frigole' Reixach, Cultura y genocidio, Barcelona, 2003, p. 13.

⁴ Kapuscinski R. El pais, 10 de diciembre de 2000, p.15.

ցանկացած ամեն մի եղեռնագործության դատապարտմանն ու կանխմանը Կուտակվել է հսկայածավալ բազմաժանք գրականություն, այսօր էլ գեղարվեստի լեզվով շարունակվում է ցեղասպանությանը նվիրված գրքերի լուսանձայումը։ Առհասարակ ժամանակակից գրականությանն ու արվեստին հետաքրքրությունը 21-րդ դարի մարդու դեմ ծառացած հարցերը, ենտեարաք սրանով պետք է բացատրել ցեղասպանության՝ համաշխարհային գրականության առավել արդիական թևաների շարքին պատկանելը, ժամանակակից աշխարհի համամարդկային հիմնախնդիրի մեջ խուժելը։

Ի տարբերություն մյուս երկրների, որոնք ցեղասպանությունից անմիջապես հետո դարձել են ապաստան տվյալներ, կամ որտեղ գերակշռում է հայ համայնքը, ցեղասպանությունը միշտ շրջանավոր թեմա է, իսկ Խսպանիան այս խմաստով շատ ավելի ուշ արձագանքեց հայոց մեծ ողբերգությանը։ Չնայած սրան՝ Խսպանացի ընթերցողը ծանոթ էր թուրքական նկարագրին, որն իր կերպավորումն ստացել էր տաղանդավոր գրող Խուան Գոյտիսոլյի «Օսմանյան Ստամբուլ» գործում, որում խսպանացի գրողը Ստամբուլ կատարած իր ճամփորդական մտորումներում վերականգնեց է թուրք էթնոսի մասին Արևմուտքում տարածում գտած կարծիքը։ «Օսմանյան կայսրության շրեպության շրջանում Արևմուտքում թուրքի դոմինանտ պատկերը ներկայանում է որպես բարրարու, անգութ, դաժան ու արյունաբերու՝ հանձնված մարմանական հաճույքներին ու սողումի գարշելի փշացածությանը»⁸։ Խսպանիայում հայոց ցեղասպանության մասին սկսեցին խոսել միայն անցյալ դարի 80-ականներին, երբ հայ երիտասարդների մի խումբ ահարեկչությամբ փորձեց աշխարհի ուշադրությունը իրավիրել կատարվածին և լսելի դարձնել վերապրածների ձայնը։ Այս ճանապարհով Խսպանիան առաջին անգամ լսեց ցեղասպանության մասին, իսկ խսպանացի նշանավոր լրագրող նույն Անտոնիո Գոյտիսոր առաջինն էր, ով գեղարվեստի լեզվով պատմեց այս։ Այսպես, 1982թ. «Ռումբը» (*«La Bomba»*) վեպով խսպանական իրականության մեջ շրջանառության մեջ դրվեց հայոց ցեղասպանության թևանակ։ Գոյտիսորն վեպը կատացում է «ինքնանդրադարձությամբ» (գեղարվեստական պատկերի և իրական պատումի բացարձակ նույնություն), ասես խոստովանություն, որում սեփական կյանքի պատմությունը դառնում է ոչ միայն ցեղասպանության առաջ բերած հետևանքների ու դրանց ողբերգական ազդեցության պատկերման հնարավորություն, այլև առհասարակ բռնության, ահարեկչության, մարդասյացության ցավուն խնդիրների անդրադարձ։ Ռումբը մարդու մեջ կատարվող պայքարուի խորիրդանիշն է, երբ մարդը հանկարծ նկատում կամ պարզապես հայունագործում է ուրիշի՝ իր կողքին կանգնած անհատի ներքինը։ Ռումբը կոչված էր պայքեցնել մարդկային անտարբերությունը հայոց ցավի նկատմամբ, հասել դրա ճանաչմանն ու ուրիշի ցավը սեփականը համարելու գիտակցությանը։

«Ռումբը» հակասաբեկշական ու հակարոնության մասին վեպ է, մարդու հանդեպ հավատն ու սերը ժխտում են առհասարակ բռնությունը։ Գիրքը պատ-

մում է ատելությունից ազատվելու ու ներման հասնելու պատմությունը, ինչը դառնում է արդիական բոլոր ժամանակների համար։ Հետաքրքիր օրինաչափություն կարելի է տեսնել ցեղասպանության արձարձման, հարցադրումների առաջդրման ու տվյալ երկրի գրականության միջև։ Մեր կարծիքով, տարածքային գործուն այս հարցում էական է և ուղիղ համեմատական է եղեռնագորության ենթաթեմային։ Այսպես, թուրքական և արաբական գրականության մեջ գրական հերոսը զլաւավորապես մուտքանացված հայ կինն է, ով կյանքի վերջում (բնորոշ և թուրքական գրականությանը) բացահայտում է իր արմատները կամ բոռների միջոցով և պատմում իր պատմությունը⁹, կամ արաբական արձակությունը ընթերցող ականա է նաև ապաստան տվյալները, կամ դեպքում ևս մեծամասնություն են կազմում մուտքանացված հայ կանանց կերպարները) ներքին հոգեբանական աղեկոծումներին¹⁰։ Սա պետք է բացատրել նրանով, որ ցեղասպանության ժամանակ վերը նշված երկրներում առկա է ցեղասպանության հետևանքներից մեկը՝ գողացված կյանքների ու սրանից բխող ինքնության վերացնման ու սեփական հիշողությունների հետ հաշտեցման երևույթը։ Բայց արդեն փրկվածների դեպքում, ովքեր հանգրվանել են տարբեր երկրներում ու ձեսվորել հայկական սփյուռքը՝ փորձերով վերահաստատել ազգային գոյությունը, բնորոշ է հայրենաբաղդաւության, կարուի թեմաները։ Խսպանական գրականության մեջ ցեղասպանության արձարձումը ժամանակագրություն սկիզբ դրվեց հայկական ահարեկչության գործունեության հետ։ «Ռումբը» գրքով հեղինակը ոչ միայն անդրադառնում է հայոց ցեղասպանությանը, առհասարակ մարդու թեմային, այլ նաև, գուցե ոչ անմիջականորեն, հատկապես ութառնականներից Խսպանիայում բավի առած և ընդհանրապես ահարեկչության թեմային, որը ներկայացվում է որպես բաներորդ դարի շարիբներից մեկը։

1999թ. կատալոնացի դասական գրող Սարիա Անխելս Անգլանան անհատի բարոյական պարտավորվածության գիտակցումը հանդես եկավ «Արամի հուշատետր» վեպով, որը գրողի հարգանքի տուրքն էր ցեղասպանության գոհերից մեկի՝ Դանիել Վարուժանի հիշատակին, ով վեպում խորհրդանշում է հայ ժողովրդի սպանված հատվածի հալարական կերպարը։ Գրողը մշակույթի լեզվով բողագերձում է Մեծ Եղեռնի հակամարդկային ու հակամշակութային բնույթը, ցեղասպանությունը դիտարկում մշակութային հարթության մեջ՝ գուզահեռելով բանաստեղծին ընդդմ մարդասյացների, իսկ պունիան՝ ընդդմ բարբարության։ Մշակույթը ատելության դեմ լավագույն ցեղամիջոցն է, արդարության, ծշմարտության հետ առերևսվելու և ատելությունից ձերբագատվելու կովանը։ Անգլանան ավելի է խորացնում հիշողության դերը՝ հաստատելով առհասարակ

⁹Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թևան արդի թուրքական գրականության մեջ, ՎՄՎ-Պրիմո, Եր., 2010, էջ 127։

¹⁰Այս մասին տե՛ս Սարգսի Վիրակոսեան, Մեծ Եղեռնը արաբական արձակին մեջ, Գրականագիտական հանդեպ Բ(Դ), Եր., 2005, էջ 118-121։

մշակույթի ու մասնավորապես գրականության միջոցով հիշողությունը փոխանցվելու, արդարության ու ճշմարտության հասնելու հնարավորությունը:

Արդեն 21-րդ դարում ավելի հզորացավ ցեղասպանությունը դատապարտող շարժման Խսպանիայում, և իրար հետեւից լուս տեսան ցեղասպանությանը նվիրված և այն դատապարտող գրքեր: Կատարնացի ճարտարապետ ու գրող Գոնսալո Էռնանդես Գուարչը խսպանական հանրությանը ներկայացալ հայոց ցեղասպանությանը նվիրված եռազրությամբ՝ «Հայկական տոհմածառ» (2002թ.), «Հայոց կոտուկ» (2008թ.) և 2009թ. լուս ընծայված «Սպիտակ լեռ» (վեպը նախապես վերնագրված է եղել «Արևելյան մարդը») վեպերով, որոնցում տարածությունն ու ժամանակը պատմական են ու սոցիալական այն բաց է պատմական ժամանակի և Օսմանյան կայսրության 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի տարածության մեջ՝ պատկերելով տարբեր խավերի ներկայացուցիչներից մինչև քաղաքական գործիչների կերպարներ, պետական ամրող համակարգը՝ վերևից ներքի կառուցված կեղծիքի, անօրինականության, շահամղության վրա, պատկերում թուղթիայի գահի համար մղվող պայքարն ու բացահայտում թուրքերի՝ մարդ սպանելու հակումը գենետիկ մակարդակում: Սուլթանից մինչև հասարակ զինվորը, բվու և վարակված են այդ արատներով, և սա հանգեցնում է հասարակության մերկացման, ինչը երևան է հանում Օսմանյան կայսրության ամրող արատավորությունը: Գրողը սպանությունը, դաժանությունը, բոնությունը նախ և առաջ բնորոշում է որպես 20-րդ դարի մարդկային ճգնաժամի բնուրագիչներ, որպես «հումանիզմի ճգնաժամ»¹¹, որի համատեքստում նա բնուում է ցեղասպանության առաջ բերած հարցադրումները: Այսպես, գրողը պատկերում է ցեղասպանության ազդեցությունը մարդկանց հոգերը աշխարհի ու ճակատագրի վրա, ինչը ամենածանր ձևով արտահայտվել է ցեղասպանությունը վերապատճենի դեպքում: Գրողը ներկայացնում է բնության ենթարկված կանանց ու որպես բնության արդյունք ծնված երեխաների թեման, բացահայտում է մուտուլմանացված հայ մանուկների երկփեղկած ենթյան հոգերանական բարդույթները: Անհրաժեշտ է նկատել, որ վերը նշված թեմաների արծարծումը, որը շրջանցվել է հայ զրականության մեջ, խսպանացի գրողի կողմից համարձակ բայլ է, նրա կերպարները՝ հոգերանական ճշմարիտ ապրումներից բելադրվող վարքագծի առումով հաջողված են:

Գոնսալո Գուարչի ստեղծագործությունների դեպքում գեղարվեստական չափանիշը թերևս զիշում է պատմաճանաչողական արժեքին, սակայն եթե այն գրվում է օտարի կողմից, և մարդասիրության ևս մեկ կոչ է համաշխարհային ընթերցողին, մեկ անգամ ևս մարդկային ոլլերգության ժխտում, ապա պետք է կարևորել այն պատմաճանաչողական արժեքը, որը չափազանց կարեւոր է ոչ հայ ընթերցողի դեպքում:

Առաջին գրքից քանինգ տարի անց Հայաստան կատարած իր այցով Խոսկ Անտոնիո Գուտիհարանը անդրադարձում է հայկական թեմային ու լույսընթացում «Հայեր. մոռացված ցեղասպանություն» (2008թ.) վեպը, որի շրջանակներում հայ

ժողովրդի ազգային ճակատագրի պատմահոգերանական խորացումներով, տարբեր հանդիպումներում լսած պատմություններով հյուսում է Հայաստանի մասին իր վեպ-ուղեգործությունը: Գրողը փորձում է խոր ճանաչողությամբ պատմել հայրենիքում ու հայրենիքից դուրս ապրող հայ մարդու, նրա հաղթահարած դժվարությունների, իսկ ցեղասպանությունը վերապահենական դեպքում՝ հաղթահարած տառապանքների մասին: Այս ընթացքում հեղինակային զգացողություններն ու տպավորությունները միախառնվում են պատմական դեպքերին ու անձանց մասին պատմություններին, ճանապարհորդության ուղեկիցների՝ ցեղասպանությունը վերապահած իրենց գերդաստանների պատմություններին, ականատեսների կամ ժամանակների վկայություններին պիտի արդյունքում ստանում ինքնակենսագրական հենքով պատմագիտական, մշակութային խորհրդածություններով հազեցած ուղեգործություն:

Կովկասյան ճանապարհորդության տպավարություններն իրենց ուրվագիծը ստացան կատարելուցից լուսանկարիչ և գրող Սարկ Սորտեի կողմից 2007թ. լուս տեսած «Կովկասը լեզենդների ու կալաշնիկովի արակրում» գրքում՝ նվիրված կովկասյան երեք ժողովուրդների պատմությանը: Սարկ Սորտեն ցեղասպանությանն անդրադարձել է ակնարկի ձևով՝ «Հայկական արեւ» («La catástrofe Armenia») գլուում (հիշենք, որ ցեղասպանությունը «Արեւ» որպես է Երվանդ Օայանը «Անիծյալ տարիներ» արծերավոր գործում) նշելով, որ «հայոց ցեղասպանության պատմությունը մինչև այսօր՝ համարյա մեկ դար անց, կնծուու թեմա է»: 2008թ. Սորտեն երատարակեց գեղարվեստական վեպ՝ «Արարատի զավակները», որը կերտել է ուղարկուի ու թարականության ներեխուսմաբ և կառուցել է դասական վեպ, ընդ որում, և սյուժեն, և կերպարներն ունեն ոչ ուղղագիծ զարգացում, դրանք բարդ, հոգերանական կերպարներն են, որ օգնում են գրողին կերպավորելու ցեղասպանությունը վերապահենական, մի ամրող սերնդի, ում մանկությունը համընկավ ցեղասպանության ժամանակաշրջանին և իր վրա կրեց, այսպես կոչված, «կորուսալ սերնդի» բոլոր տառապանքները: Գրողը կերտում է դրական թուրքի կերպար (Սեհմետ), որ վեպում բացահայտում է մարդու անձնական դրաման, եթե անհատը բախվում է լյանքի հրեշտակությանն ու ողբերգականությանը, «լյանքի շավիղը» փոխելու անհնարինությունը պատճառ է դառնում երրոսի պարտության, իսկ հերոսի կործանումը արտացոլում է մարդկային արծենների ու կեցության հիմքերի կազմակերպությունը, բարոյական ու մարդասիրական համակարգերի դեֆորմացիան:

Այսպիսով, և Սորտեն, և մյուս հեղինակները պատերազմի անհեթերությունն ու ցեղասպանությունը տեսնում են որպես համաշխարհային չարիքի խորհրդանիշ, մարդկային ճակատագրի ողբերգականությունը, մարդու անօգնականությունն ու մենակությունը դիտարկում ոչ միայն ցեղասպանություն, բոնություններ ու պատերազմներ ծնող պատճառներ, այլև սրանցից սկիզբ առնող ողբերգությունը դառնում է կյանքի կոնցեպցիա, անխուսափելի պարտություն:

Գուարչի վեպերում առաջնային փաստական հենքով ու ցեղարվեստական լուծումներով պատում է, Գուտիհարանը ներկայացնում է ցեղասպանությունը

¹¹ Guardia H. G. La montaña blanca, Barcelona, 2009, p. 439.

վերապրածների զավակների հոգերանական բարդույթներն ու լուրջունից սկիզբ առնող ու շարունակվող ցեղասպանությունը։ Մարկ Սորտեն ու Մարիա Անգարան ատենական են ցեղասպանությունը վերապրած երեխաների հիշողություններով ու հոգերանական խորացումներով, բնարականությամբ առանձնացող գեղարվեստական վեպեր, որոնցում իսպանալեզու ընթերցողի համար բացահայտվում է Օսմանյան կայսրության ու հայոց ցեղասպանության պատմությունն իր մանրամասներով։ Իսպանական գրականության մեջ ցեղասպանությունը ներկայացված է համիլյան ջարդերից մինչև 1915թ. և ապա եեւեղեռնյան շրջանը՝ վերապրածների ու ցեղասպանության զոհերի ժառանգների հոգերանական տրավմաները, անտարբերությունից ծնվող ցավի ու շարունակվող ցեղասպանությունը (քանի դեռ ցեղասպանությունը չի ճանաչվել ու դատապարտվել, այն շարունակվում է)։ Առհասարակ, իսպանական գրականության մեջ հայկական ցեղասպանության անդրադարձի տեսանկյունից նկատվում է եեւեղալ միտումը. իսպանացի գրողներն ուշադրություն դարձնում են հատկապես ցեղասպանության առաջ բերած հոգերանական եեւենանքներին և զոհ-դահիճ փոխարարերություններին: 20-րդ դարում աշխարհի, կյանքի հոգնոր դատարկությունից սկիզբ առնող մարդու մենության թեման դրսուրված է ցեղասպանության վերապրածների մեջ, և ցեղասպանության տրավմաները դառնում են կերպարների հոգնոր ճգնաժամի պատճառ, այդ եերուները մենություն զգում են երկու մակարդակում՝ հոգնոր (սարսափելի ու անօնչելի հիշողություններ) և ֆիզիկական (ընտանիքի, գերլաստանի կորուստ): Եղենից փրկվածները հիշեցնում են Դոստուսկու հերոսներին, որոնք բացահայտում են հոգերանական պլանում մարդու քայրայումը¹²:

Գրեթե չկան ցեղասպանության անմիջական պատկերումներ, կա երկրորդ, երրորդ սերնդի հայ մարդու պատմությունը՝ հարստացած 1915թ.-ի ազգեցություններով:

Իսպանական գրականության մեջ եելինագրության մաս կազմող գրքերը (չորս հելլինակի թվով ուր գեղարվեստական գործեր) գրված են միայն արձակ՝ վեպի ժանրատեսակով։ Սա պես է բացատրել նրանով, որ վեպը լավագույնս կարողանում է հասնել կյանքի բազմաֆոն պատկերմանը, բայց այդ, «վեպը միակ փոփոխվող ժանրն է, այդ պատճառով այն ավելի խորը, կականորեն, զգայուն ձևով և արագ արտացոլում է նույն իրականության վերափոխումը»¹³: Ցեղասպանության թեման ինքնակենսագրական արձակի բալոր ենթատեսակներով (օրագիր, ուղեգործություն, հուշագրություն և ինքնակենսագրական վեպ), պատմագեղարվեստական ժանրերով (որոնք պատմական, ազգային հարցադրումների արծարձման լավագույն հնարավորություններն են ընձեռում) արտահայտված է իսպանական գրականության մեջ։ Կոնկրետ ժանրային պատկանելության որոշման հարցը դժվար է (ավելի շուտ մի քանի ժանրատեսակների սինթեզ է), ինչը բնորոշ է առ-

¹²Տե՛ս Հեղանակ 2, Շարժմամբ դեպի հավասարակշռություն, Սարգսի Խաչենց, Եր., 2009, էջ 172:
¹³ Եախտին Մ. Ժողով և ժողովական առաջնորդության մասին առողջապահության մասին օրենք, 2000, օրենք 198.

հասարակ մերօրյա գրականությանը, երբ ջնջվել են ժանրային հստակ սահմանները, և այսօրվա գրականագիտությունը շարունակում է զույգ կուրսեր ժանրապատկանելության հստակ ձևակերպումների առումով։ Ժանրատեսակի առումով այս գրքերը պետք է դասակարգել որպես վեպ-օրագրություն, վեպ-ուղեղորդություն, վեպ-ժամանակագրություն։

Իսպանացի հեղինակները խոսում են կրկնակի ցեղասպանության մասին՝ ֆիզիկական և մոռացության։ Եթե Գուտիարանի մաս ցեղասպանության մոռացությունն առաջին պլանում է, և այն արտահայտվում է գրքի վերնագիր սկսած, ապա մյուսների գործերում մոռացումը են դատապարտելի է ու առկա գեղարվեստական ստեղծագործության ենթատերսում, կամ հենց ստեղծագործության մտահացման պատճառն է։ Ընդ որում, իսպանական գրականության մեջ կրկնակի ցեղասպանությունը ներկայացվում է նաև պատմական հայեցակարգում, բայց 1915թ.-ից ցեղասպանությունը որպես նաև 1894-96թթ. համբյան կոտորածները։

Այսպիսով, իսպանացի գրողները ցեղասպանությունը քննում են 20-րդ դարին բնորոշ գոյաբանական՝ աշխարհի ու մարդու ամրողականության քարայրական, մարդու գոյության կեցությին որոնումների հայեցակերպությունը, որտեղ ցեղասպանությունը դիտարկվում է վերը թվարկված երևույթների դրամատծառ, ընդ որում որպես համամարդկային հիմնախնդիր։

ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ИСПАНСКОЙ ПРОЗЕ

Резюме

— С. Карапетян —

В статье анализируются восемь романов испанских писателей, посвященных теме армянского Геноцида, в которых для испаноязычного читателя раскрывается история Османской Империи и армянского Геноцида, эпоха и атмосфера, которые родили Геноцид. Тема раскрывается разными испанскими прозаиками. В данной статье представлена разработка темы, использование художественных принципов и критерии, аспекты рассмотрения Геноцида, характеристика армянского и турецкого народов, мотивы Геноцида, круг выдвинутых вопросов

Писатели исследуют тему одиночества человека, которое исходит из жизненной пустоты, в контексте первого Геноцида 20-го века. Целевая задача писателей: представить историческую правду, а некоторые из них постарались изобразить Геноцид в рамках отношений человека и войны. Главная тема романов - отношение жертвы и палача. Это история сохранения человеческого в страданиях и труднейших ситуациях. Проблематика романов-человек и его проблема, когда она увеличивается при ослабленных жизненных ориентациях.

Տեղինագրություններ հեղինակի մասին

Կարապետյան Միքանուշ Անդրանիկի-ԳՊՄԴ հայ գրականության և ԵԱՀ արտասահմանական գրականության ամբիոններ, Email: mikapushik@inbox.ru

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ

/Ա.Արսլանի վեպերի հիման վրա/

Հօրագոյրս միշտ կրկնում էր
«Երբ չարացին աներ եւ ինձ հոգեցներ,
Կզնամ Բեյրութ՝ Արռւսեակի մօս,
Հայէա՝ Զարքէ հօրելոր մօս, Բուտոն՝ Ֆիլիպպի եւ¹
Միլդրիդի, Ֆրեզնոն՝ բրոջ, Նուարդի կամ
Նիւ Եռոր՝ Անիի, կամ է Կոպակարանան՝
զարմիկիս՝ Միշելի մօս:
Բայց նրա մօս՝ ամենավերջում,
Քանի որ ասորու հետ է ամառնացել»:

«Զմյուտնիայի ճանապարհը» զրքի դարձերեսին սևով կարմրի վրա գրված է այս պատմությունը, որը աշխարհով մեկ սփռված հայերի ճակատազրի խոսացումն է, վավերագիրը: Վերապրող սերունդը արյան հիշողությամբ անվերջ պատմում է իր տոհմի պատմությունը՝ շարունակ վերադառնալով իր արմատներին:

Մեր ներքին արթնացման համար կարևոր է, թե ով նոր մենք և ուր ենք գնում: Հայի մտքի վերջին հեքիայը չի ավարտվում այսօր է:

Զմյուտնիայի ճանապարհը Գողգոթայի ճանապարհ է եղել, և հայերն անցել են այդ ամենի միջով՝ Հիսոսի խաչը շալակած: «Փոքր երեխաները ապաստանում էին մեծերի հետևում, իսկ մեծերը խղճուկ դեռահասներ էին՝ խուզած զլուխներով, թերսնված, կոլուզած ինչ-որ ընդարձակ հագուստի, ինչ-որ թշվար բաժկոնի մեջ, լայն բացած խոշոր հայկական աշքերով, որտեղ, ինչպես ծանծաղ ջրում արտացոլված էին անհետացած դեմքեր, տներ, ընտանիքներ»²:

Եվ հիմա հարկավոր է դիմակայել՝ իմիշելով ջրերից հարնած ու երկինք հասած լեռները...

Երե մեռած հայերի վերջին մտքերը շարունակ մրմնջան՝ Հայաստան, նրանց մրմունջը կարող է երկրի սահմաններից դուրս բախանցել և ամենուրեք լսելի դարնալ, մեծագույն մրմունջ կրարձանա, եթե բոլոր նրանք, ովքեր զահ են եղել այս աշխարհում, հանկարծ սկսեն իրենց մրմնջացող զանգատները հաղորդել, ամբողջ աշխարհը կիւլազարվի այդ մրմնջոցից: «Բայց այդ էր նրանց երկիրը, կողոպտված ու քանդված տներ, հրաշագործ եկեղեցներ, ամենուր մահվան ստվերներ, լրված այգիներ, ախոռների վերածված պարտեզներ ու քրտնացան աշխատանք, ու քուրքեր, որոնց այլևս չեր կարելի վստահել: Բայց այդ էր նրանց երկիրը,

կորուսյալ հայրենիքը, այնտեղ էին նրանց ակունքները, արևալից օրերի լույսը, հոգու հացն ու զինինե»³:

Անոռնիա Արսլան «Զմյուտնիայի ճանապարհ» վավերագիր մատյանում գրում է. «Երբեմն մեռնելն այնքան պարզ բան է...»⁴: Մինչդեռ անհրաժեշտ էր «մի որեւ բան անել, որը հաղթական վախճանի կհասցներ բռնությամբ տեղահան արված մարդկանց աղևանակի արկածային վերադարձը, որը հետո կթողներ նրանց հիշողության, պատմության մեջ, ովքեր այժմ ժառանգելու էին արքայությունը, ուկյա հարթավայրերը, ովքեր ճիշտ ցեղից էին ու կրոնից»:

Վեպի կիզակետը գալթականների օրորն է՝ արտորի ժամանակ գրված և վերապրածների կողմից հաճախ տարբերակներով փոխանցված երգերից մեկը.

Տեր Զօր կերթանք լալագին,

Ցալերուն մեջ կրակին,

Ցկա լուս ճաճանչի,

Ցալըրուկու, նանիկ կկանչելմ⁵:

Զմյուտնիայի ճանապարհը բռնած մարդկանց ճակատագիրն առնչվում է մեզանից յարաքանչյուրին: Թողնելով իր շնու օջախը՝ հայր իրականում հոգին բռնում է այնտեղ, իսկ զարդի ճամփերին ընդամենը նրա բգկալած մարմինն է: Եվ յարաքանչյուր հայ մյուսի մեջ տեսնում է մի խորհրդավոր գեղեցկություն, այն կորած աշխարհի կախարդանքը, որ միայն ինքը գիտի...

«Կարծես նախնիները անընդհատ իրենց ես էին կանչում, նրանց տները բանդված էին, իսկ ամենազեղեցիկները տարիների ընթացքում գրադեցրել էին բուրքերը, որոնք քաջ գիտեին ճշմարտությունը, բայց իրականում միտք չունեին հեռանալու, ասկայն վերադարձ հայերը վարժված էին կիսատ-պուտ ապրելու, հեզ ու խօնարի, ամեն օր շնորհակալություն էին հայտնում, որ դեռևս ողջ են, այնպես որ լուս էին և զիսի ճարը տեսնում, առաջարկում էին իրենց որպես խնամակալ կամ օգնական՝ փոխարենը գոհանալով զլուխը դնելու մի անկյունում մահճակալի վրա՝ այս տան տանիքի տակ, որը ժամանակին իրեն լր պատկանել»⁶:

Այս ամենից հետո պարզ է, թե՝ պատիժ էր վերապրողների կյանքը, ինչպես զաղթի ճամփան քրքրված ուոքերով անցած Վարդուհու հավերժական հարց՝ «Որդիս քեզ մո՞ւ է: Խսմեննեն երբեք չեր պատասխանում: Առնում էր նրա դոդացող ձեռքերը իր ձեռքերի մեջ, մոտեցնում դեմքին՝ փոխանցելով իւղած խենքին խաղաղություն և համբերություն: Ապա զրկում էր աղջկան և ողբասացների հնամենի դեմքով անեծքներ թափում, հրամաններ արձակում այնքան ժամանակ, մինչ որ արցունքի լճի մեջ ուժասպառ Վարդուհին բռն էր մտնում: Բոլորը սիրում էին այլալիք դեմքով, լիկված ու լրված այս կնոջը, որը կարծես կրում էր իր մեջ Սայր Հայաստանի տառապանքը»⁷:

² Անոռնիա Արսլան, հշվ. աշխ., էջ 159:

³ Նույն տեղում, էջ 169:

⁴ Նույն տեղում, էջ 130:

⁵ Նույն տեղում, էջ 147:

⁶ Նույն տեղում, էջ 132:

⁷ Տե՛ս Անոռնիա Արսլան, Արտոյտների ազարտկը, Գիրը 2, Զմյուտնիայի ճանապարհը, Եր., 2012, էջ 141:

Բոլոր դեպքերում այս վեպի առանցքային գաղափարը հայ մարդու ճակատագրի ֆենոմենն է ու պատմությունը: Ճակատագրի և լինելության այս մատյանում վավերագրերը սովոր մաս են զրագում, գեղարվեստականությունը, բայ լուրջան, դառնում է մասնավոր խնդիր: Տասնյակ հազարավոր գերեզմանաթմբերի փոխարեն մնացել են վավերագրերով լեցուն արկդեր:

«Արտուրների ազգակում» Անտոնիա Արսլանն ընդգծում է զղօման բացայությունը, կատարյալ սառնասրտությունը այդ հարցի անդրադարձներում նաև հետագայում: Ինչ սա է վեպի կիզակետը: Ասել է թէ՝ մարդ կան է լ ավելի է հեռացել դեպի ապամարդկայնացման խորխորատները, յուրաքանչյուր շացահայոված ու շղատապարտված ոճիր շարունակելի է: Վեպի այսպիսի «բաց» տարածքը բույլ է տալիս ժամանակային տարրեր կտրվածքների ու տոհմածառի տարրեր սերունդների գերակայություն: Վեպում կարեոր է հանդուրժելու անհրաժեշտությունը, մինչև որ կարողանաս հարվածին հարվածով պատասխանել, ներեւ, բայց չմոռանալ երբեք: Սա պատճառ է և ուղերձ՝ ուղղված սերունդներին: Պատահական չէ, որ ցեղասպանությունը որակվել է որպես մարդկային անհատականության փլուզում:

Բնության հիշողությունը երբեք չի լրում վերապրոների սերնդին: Շատերն անկարող եղան դիմանալու հիշողության ցավին ու կտտանքներին, թանկագին կորուստների և բոնության սերմը կրելու ահավոր գիտակցությանը: «...Զարեհը այդ օրերին հաճախ էր մեկուսանում ավագ եղբար հետ, սակայն ոչ մեկը, ոչ էլ մյուսը որևէ բան չին խոսում անցած-գնացածի մասին, մտախոն դեմքով ավարտում էին իրենց մշակված քաղաքավարի գրույցները, թեև թերեզան պատրաստի պատճառաբանությունը միշտ զրպանը դրած շարունակ հետ ու առաջ էր անում ամուսնու աշխատասենյակի փակ դրան առջև, բայց նրան երբեք շհաջողվեց ինչոր խոսակցության պատահիկ որսալ փոքր-ինչ ավելի բարձր ձայն, վճռական կամ հաստատուն կամ լսելի երկխոսություն»⁷: Դեպքերի դժբախտ բերումով ու ճակատագրի բայց շարունակ առնչվում ենք բնությունների՝ տարիների ընթացքում կորցնելով տոհմածառի սաղարթախիս ու բեղուն ճյուղերը:

Աշխարհը պարտավոր է իմանալ, թէ ինչ է կատարվել 1915 թ.-ին Արևմտյան ժայաստանում, այլային այդ երեշավոր եղենագործությունը ենթակա է կրկնվելու, ինչը տեսնում ենք մեր օրերում ևս: Պատմական հիշողությունը շարունակ շադափամ է գիտակցության խորքերը նույն սարսափները վերապրելու իմաստով, բանի որ, ինչպես Անտոնիա Արսլանն է ասում, «Մեծ պատմությունը նս մեկ անգամ ոչնչացրեց սովորական մահկանացուների պատմությունները»:

Եթե մեծ աշխարհում ինչ-որ տեղ հայեր էին հանդիպում, զրույցի թեման ավարտվում էր ողջերով, թիչ ողջերով ու զոհերով, շատ զոհերով: Բոլորը պատմում էին իրենց ողբերգությունն ու ողբում ուրիշներին: Կարծես երբեւ հայերը չին հոգնում մահկան ու զոյստեման պատմություններից, երբեք չին հոգնում կրկնվող սարսափներից, կարծես կիսված վիշտը շատ ավելի էր,

երբ դատնում էր պատմություն, առասպել՝ շաղախված նախատակված ժողովրդի կյանքով, որն իր հանգուցազների դյուցազներգության մեջ էր գտնում փրկազինը⁸:

Այս տխուր պատմության զոհերը ահա այստեղ են՝ մեր մեջ: Նրանք միայն մոխիք ու փոշի չեն, ինչպես պնդում են շատերը. Նրանց շունչը շարունակում է մեզ մղել առաջ...

ГЕНОЦИД: ТРЕТЬЕ ПОКОЛЕНИЕ

(на основе романов А.Арслан)

Резюме

К. Саакян

Статья посвящена социально-психологическим последствиям геноцида, которые проявились в умственно-психической характеристики и формах поведения третьего поколения, пережившего геноцид. Исследование проведено на основе книг А.Арслан «Ферма жаворонок» и «На дороге Змюрнин», которые являются егустками судьбы рассеянного по всему миру армянского народа. Стержневая идея романов – феномен судьбы и истории армянина, а целевая задача – чтобы весь мир узнал о содеянном в 1915 г. в Западной Армении, иначе это чудовищное преступление может повториться, что мы наблюдаем и в наши дни.

Տեղեկություններ հեղինակի մասին

Սահակյան Կարինե Արտավազ -հ.գ.թ., 22 ԳԱԱ Շիրազի
հայացիտական հետազոտությունների կենտրոն,
ԳԴՄԴ Խոգեբանության ամբիոն, E-mail: sashakyanan@ramail.ru

Тамара МЕЛИКЯН

ФИЛОСОФСКИЙ ПОДТЕКСТ "МОРСКОЙ" ПОЭЗИИ БОРИСА ПАСТЕРНАКА

Для русской литературы и русской читающей публики многие места черноморского побережья и Крыма впервые были открыты А.С. Пушкиным. Когда писатели и поэты первой половины XX в. писали о Крыме, они невольно поддавались магии пушкинских описаний Тавриды. Новые впечатления, рожденные новой эпохой, полноценно входили в их творчество, но рядом с этими впечатлениями, темами и мотивами присутствовали и образы пушкинской поэзии.

Исследователь творчества Б.Л. Пастернака М. Поливанов считает, что цикл Пастернака, названный «Тема с вариациями», непосредственно связан с многочисленными живописными опытами Айвазовского, который на протяжении нескольких десятилетий обращался к теме «Пушкин у Черного моря».¹ Первым таким опытом было изображение А.С. Пушкина на скале моря, в плаще и со шляпой в руках (1868). Это полотно называлось «Пушкин на берегу Черного моря». В 1887 г., к 50-летию гибели А.С. Пушкина, Айвазовский пишет картину в соавторстве с Репиным, и еще одну, под названием - «Пушкин на берегу Черного моря», где Пушкин полулежит, откинувшись на спину, а рядом с ним - шляпа и трость.

В 1897 г. появляется полотно с таким же названием, где Пушкин стоит лицом к волнам, а в руке держит шляпу и трость. Интересно, что образ трости появляется в поэзии Б.Л. Пастернака при описании А.С. Пушкина во второй «Подражательной» вариации - «... Полынь и дрок / За набалдашник цеплялись...»².

Существует еще несколько полотен, в которых Айвазовский обращался к изображению поэта (А. С. Пушкина) и моря, и, по крайней мере, два из них могут быть одновременно связаны с поэзией Б.Л. Пастернака. В 1880 г. Айвазовский создал полотно «Пушкин в Крыму у Гурзуфских скал», где поэт изображен в профиль, полулежащим на скале, рядом лежит его шляпа. Поза Пушкина (одной рукой поэт подпирает подбородок, а другая лежит на скале перед ним), напоминает позу, в которой изображали лежащих сфинксов, что позволяет объяснить причины появления образа сфинкса в «Теме» Пастернака. Картина Айвазовского «Пушкин и Раевская в Гурзуфе» соотносится с воспоминаниями Раевской и строками из «Евгения Онегина»: «... Я помню море пред грозою... как я желал тогда с волнами коснуться милых ног устами»³.

¹ Поливанов К. Канонические тексты Пушкина в лирике и романе Б. Пастернака. М.: Издательство РГГУ, 2006, стр. 199.

² Пастернак Б. Тема с вариациями // Пастернак Б.Л. Собрание сочинений в пяти томах. М.: Художественная литература, 1989. Т. 1, стр. 182.

³ Пушкин А. Евгений Онегин // Пушкин А.С. Собрание сочинений в 10 томах. М.: Художественная литература, 1977. Т. 5, стр. 20.

Можно предположить, что таким образом не только с Пушкиным, но и с Айвазовским связаны в цикле «Темы и вариации» Б.Л. Пастернака строки, в которых присутствуют образы поцелуя и прибоя: «... Песок кругом заляпан/ Сырыми поцелуями медуз», «С их чашечек коленных ... пил отблеск...»⁴.

Б.Л. Пастернак впервые обращается к морской, крымской теме в 1918 г. Тем не менее, письменных указаний на то, что летом 1918 г. поэт был на Черноморском побережье или в Крыму, - нет. Естественно, берег Черного моря Б.Л. Пастернаку был знаком с детства, первые тридцать лет своей жизни будущий поэт регулярно проводил лето в Одессе, на родине отца. Тем не менее, именно в 1918 г. впервые появляется пушкинская тема в лирике Б.Л. Пастернака, причем, это тема – морская, крымская. В сборнике «Темы и вариации» она обозначена просто: «Тема». Во всем сборнике (и, прежде всего, в первом его стихотворении «Тема») бросается в глаза присутствие достаточно явных зрительных образов, как-то: фигура на скале, берег, штормовой прибой и луна:

«Скала и шторм. Скала и плащ и шляпа.
Скала и – Пушкин. Тот, кто и сейчас,
Закрыв глаза, стоит и видит в сфинксе
Не нашу дичь: не домыслы в туник
Поставленного грека, не загадку,
Но предка: плоскогубого хамита,
Как оспу, перенесшего пески,
Изрытого, как оспу, пустыней,
И больше ничего. Скала и шторм».

Судя по описанию морского пейзажа, фигуры поэта и берега, Б. Пастернак писал свою «Тему», опираясь на зрительный образ полотна И. Айвазовского «Прощание А.С. Пушкина с морем» (1887 г.). Предыстория создания этого полотна И. Айвазовского такова: на одной из академических выставок в Санкт-Петербурге (1836) встретились два художника – пера и кисти. Знакомство с А.С. Пушкиным произвело неизгладимое впечатление на молодого Айвазовского. «С тех пор и без того любимый мною поэт сделался предметом моих дум, вдохновения и длинных бесед и рассказов о нем», - вспоминал художник. Пушкин с большим одобрением отзывался о работах талантливого студента Академии художеств.

Айвазовский всю жизнь преклонялся перед талантом величайшего русского поэта, посвятив ему позже (около 1880 г.) целый цикл картин. В них художник соединил поэзию моря с образом поэта. Картина «Пушкин на берегу Черного моря» была создана в год пятидесятилетия со дня гибели А.С. Пушкина. В том же году была написана и другая – одна из лучших картин на пушкинскую тему – «Прощание Пушкина с морем», над которой И.К. Айвазовский работал в содружестве с И.Е. Ре-

⁴ Пастернак Б. Тема с вариациями // Пастернак Б., Собрание сочинений в пяти томах. М.: Художественная литература, 1989. Т. 1, стр. 182.

⁵ Кузьмин Н. Воспоминания об Айвазовском. Киев: Энергия плюс, 2009.

пинным. (Репин писал в этой картине фигуру Пушкина, Айвазовский – пейзажный фон).

Полотно И. Айвазовского словно иллюстрирует пушкинские строки:

«Прощай же, море! Не забуду
Твоей торжественной красы
И долго, долго слышать буду
Твой гул в вечерние часы.
В леса, в пустыни молчаливы
Перенесу, тобою полны,
Твои скалы, твои заливы,
И блеск, и тень, и говор волн»⁶.

¹⁸Նոյն տեղում. գ. 7, թ. 96:

176կց²⁵: Տարեկան միջինը ցանվել է 9.2 հազ. տ գորենի և 1.3 հազ. տ գարու սկրիոցու²⁶ ծորեն ցանվել է բոլոր գավառակներում (տե՛ս աղյուսակ 2):

Բուսաբուծության զարգացման վրա ազդող կարևոր գործուներից էր զուգատնտեսական կրթության կազմակերպությունը: Երկրագործական աշխատաքինը նար՝ ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ 1922թ. Ալեքսանդրապոլ քաղաքում տեխնիկումի բացումը, որի գույքան տնտեսական բաժանմունքում ավորում էր 23 ուսանող²⁷, որոնց փորձառությունները բերում ապահովելու համար գավառքի նրանցից 9 հոգու աշխատավարձ հատկացնելով ուղարկեց գավառակի գյուղերը:²⁸ Անցկացվում էին գույզանություններ, որոնց մասնակցում էին հազարավոր ունկնդիրներ:

Բուսաբուծության զարգացման ընթացքում կարևոր նշանակություն ունեցավ ջրանցքների կառուցումը: Շիրակի ջրանցքն այդ տարիներին մեր հանրապետության ամենախոշոր ջրաշինարարական կառույցն էր: Ջրանցքն սկիզբ էր առնում Ախուրյան գետից (Կապս գյուղի մոտերքից) ուներ 21կմ երկարություն: Նրա շինարարության աշխատանքներն ավարտվեցին 1929թ.: Ջրանցքը հնարավորություն ընձեռեց ոռոգելու շուրջ 10հազ հա անջրդի հողեր²⁹. Խաղաղության նոր բուսատնտեսակների, մասնավորապես շարարի ճակնդերի մշակությանը: Կառուցվեց նաև Գեղարոտ գետից սկիզբ առնող մի այլ ջրանցք: Այն տեղը, որտեղից սկիզբ է առնում ջրանցքը, գյուղացիները մինչև օրս անվանում են «Շուսի բանդ»:³⁰

Լենինականի գավառում հացահատիկային գյուղատնտեսական աշխատանքները հիմնականում սկսվում էին գարնան սկզբին և շարունակվում մինչև ամառվա վերջը, որից հետո երկրագործը հողը մշակելով չէր զբաղվում: Այդ բացը լրացնելու համար գյուղացիների համար տեղական իշխանությունները կազմակերպում են ցուցադաշտեր և ցուցահոդամասեր, որտեղ ցույց էր տրվում աշխատան ցորենի մշակության կարևորությունը: Ներկայացնում էին ցանքաշրջանառությունը և մշակման տեխնիկան: 1927թ. գավառում կազմակերպվում է 149 գյուղացիական ցուցահանդեսներ, որոնց հիմնական նպատակն էր ցուցադրել գյուղացիությանը շաքացանի, սերմացանի, սերմերի ախտահանման առավելությունները:

Լենինականի շրջանում 1931-1932 տնտեսական տարում տրեստավորված խորհրդային տնտեսությունները մշակել են 673հա հողատարածք, հիմնարկ ձեռնարկությունների և ներակայության տակ գտնվող գյուղացիական տնտեսությունները՝ 10, կողեկտիվ տնտեսությունները՝ 6477 և մենատնտեսությունները 13160 հա, մերձադարձային կոոպերացիայի տնտեսությունները՝ 93.5 հա հողատարածք: Բերված թվերից երևում է, որ կողեկտիվացման գործընթացը չի ավարտվել և հողատարածքների գզայի մասը մշակել են մենատնտեսները:

²⁵ ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց. 1, գ. 5, թ. 1-2:

²⁶ Նոյեմբեր:

²⁷ Թամրացան Բ., եղջ. աշխ., էջ 33-34:

²⁸ ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց. 1, գ. 7, թ. 104:

²⁹ Վիրաբյան Ա., եղջ. աշխ., էջ 147:

³⁰ Դաշտային ազգագրական կյութեր, տեսոր 1, Գյումրի, 2014:

Աղյուսակ 2

Լենինականի գավառակների 1925-1926թթ. գյուղատնտեսական տարբանական բարերար բերքի բանակը(գ/հա) ըստ գավառային փորձագիտական հանձնաժողովի տվյալների /հաշվարկը ց/հա-ով/

գավառակ	Ցարեն ց/հա		գարի	կտավատ	Խոտ ց/հա		Ծանոթություն
	աշխանացան հա	գարնանացան հա			բնական ցանովի	ցանական ցանովի	
Դոգրյան	7,2	5,8	8,7	5,8	6,5	50,1	ա/Ռուբրանիի փարձադաշտի աշխանացան ցորեն՝ 20,5
Ջյավառու	7,0	6,5	7,5	5,8	7,3	29,1	Բյավառուի փարձադաշտի աշխանացան ցորեն՝ 17,9
Ղզըրու	-	4,3	5,8	4,6	11,6	36,4	
Մոլլա-Գյալշա	7,2	6,8	6,5	5,0	6,5	-	
Ամափա	-	5,8	7,2	4,6	11,6	29,1	
Թային	7,3	3,9	5,8	2,6	4,4	21,9	
Հաջի Խավի	-	4,3	6,5	2,9	8,7	29,1	
Միջինը	7,2	5,3	6,9	4,5	8,1	32,6	

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը ֆ. 9, ց. 1, գ. 5, թ. 1-2:

Աղյուսակ 2-ից երևում է, որ աշխանացան ցորեն ցանել են Դոգրյանի, Բյավառուի, Մոլլա-Գյալշայի և Թայինի գավառակներում, իսկ գարնանացան բոլոր գավառակներում: Գարնանացան ցորենի համեմատարար բարձր բերքատվություն ապահովվել է Մոլլա-Գյալշայի գավառակում՝ 6,8 ց/հա, իսկ ամենացածը՝ Ղզըրուի և Հաջի Խավիլի գավառակներում: Լենինականի գավառում ցորենի մշակության գլխավոր գավառներն են եղել Դոգրյանի, Բյավառուի և Թայինի գավառակները: Աշխանացան ցորենի բերքը 1 հա-ից ստացվել է 16-19 ց ցորեն, իսկ գարնանացանից 12-13 ց³¹:

Գավառը նշված ժամանակահատվածում նաև Հայաստանի գարու և կտավատի մշակության գլխավոր գոտիներից է եղել: 1925-26 տնտեսական տարում բոլոր գավառակներում մշակել են գարի և կտավատ, որտեղ գարու միջին բերքատվությունը 7 ց/հա, իսկ կտավատինը՝ 4,5 ց/հա: Թփարկած մշակարույսերի արտադրությանը բարձր ցուցանիշներ են գրանցվել հատկապես Դոգրյանի և Բյավառուի գավառակներում:

Այդ շրջանում բուսաբուծության զարգացման վրա ազդող կարևոր գործուներից մեկը կազմ օգտագործելու կարգավորակների կազմակերպությունը տարածքային մշակության գոտիների կազմակերպությունը էր: Արդեն 1922թ. Ալեքսանդրապոլում բացվեց տեխնիկում, որի գույղատնտեսության տարածքում գործունելու համար գավառակերպվում է 149 գյուղացիական տնտեսությունները շաքացանի, սերմացանի, սերմերի ախտահանման առավելությունները:

³¹ ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց. 1, գ. 7, թ. 110:

Աղյուսակ 3

Լենինականի զավառակների 1927-1928 թթ. գյուղատնտեսական տարվա
փաստական բերքի քանակը (հա)

(բառ զավառային փորձազիտական հանձնաժողովի տվյալների)

գույքան	Տարեկան		Գույքի	Տարեկան	Հաջողակացնելու պահանջման									
	աշխատանքներ	աշխատանքներ			աշխատանքներ									
Դաւթյան	775,5	10055,6	-	5876	29,2	2,4	-	16806	482,2	46,5	-	83,6	19,1	631,0
Քյալքառակ	-	6957,8	-	4277	30,4	13,7	20,1	11299	242,3	113,8	-	46,5	24,9	437,3
Ղերդոչ	-	1587,5	-	2279	-	-	-	3866,5	169,2	51,8	-	2,2	-	223,3
Մողմ- Գյալքա	5,8	9862,3	91,6	5668	21,5	15,1	10,7	15675	885,9	28,4	-	30,4	14,2	938,9
Ամասիա	-	1974,2	-	1795	-	-	10,3	3779,5	77,0	1,2	-	-	-	76,3
Թալին	861,6	1512,5	-	1023	-	-	-	3397,1	139,9	14,1	3,9	4,8	8,9	173,6
Հացի Խախի	-	2301,6	-	7125	69,5	69,5	28,6	9524,7	245,3	25,2	-	1,8	6,4	218,7
Ռայոններ	1645,9	34251,5	91,6	28043	150,6	100,7	69,7	61347,8	2165,1	281,0	5,9	169,3	73,5	2771,8

Աղյուսակի կազմելիս օգնագործվել են ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ.9, գ.1, գ.5, թ.4

Լենինական քաղաքի մի շաբք հիմնարկ ձեռնարկություններ այդ տարիներին ունեցան իրենց գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Այսպէս, 1938 թ. «Փորձասելեկցիոն» կայանն ուներ 302,9 հա, թռչարութարան՝ 4,0, «Բանշարարութական կայանը՝ 3,8 և այլ ձևնարկություններ՝ 280,7 հա հողատարածքներ՝³²: Քաղաքում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվել են նաև Լենինականի ճակնդեղի խորհուտական տարածքները, որտեղ աշխատանքների թիվը 1936 թ. կազմել է 119 մարդ, սկզբանի կայանում՝ 45, «Անդերկրամասի» բանվական մատակարարման բաժնում՝ 85, Լենինականի տեքստիլի խորհուտական բաժնում՝ 66 մարդ: 1939 թ. քաղաքի պետական ցանքատարածությունը կազմել է 444 հա, որից 102,3 հա հատկացվել է բանվարներին և ծառայողներին՝³³:

Այսպիսով, 1920-30-ական թվականները, հատկապես 1930-ականները Շիրակի բուսաբուծության զարգացման շրջադարձային տարիներ եղան: Հին, ավանդական մենատնտեսական երկրագործությանը փոխարինելու եկան համեմատարար մերենայացված կողմնտեսությունները և խորհուտական տարածությունները: Երկրագործական աշխատանքների մերենայացումը, հողաբարելավաման աշխատանքները, նոր ջրանցքների կառուցումը, գյուղատնտեսական կրթուրյան գործի կազմակերպումը զգալիորեն նպաստեցին բուսաբուծության համախառն արտադրանքի և ցանքատարածությունների աճին:

³² ՀԱԱ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ.9, գ.2, գ.203, թ.12:

³³ Նոյն տեքստում, թ. 28:

РАСТЕНИЕВОДСТВО ШИРАКА В 1920-1930 ГГ.

Резюме

А. Бояджян

1920-30 гг. стали поворотными в развитии растениеводства Ширака. Старое традиционно-единоличное хозяйство заменили механизированные общественные колхозы. Механизация земледелия, улучшение пахотных земель, строительство новых каналов способствовали резкому росту валового продукта. Как социальные слои исчезли кулачество, бедное и среднее крестьянство, а вместо них сформировались коллективы колхозов и совхозов. В Шираке были разработаны новые сферы развития растениеводства, в частности, сахарной свеклы. Резко повысилось выращивание картофеля.

Изменилась земледельческая культура. На смену традиционных методов была введена социалистическая земледельческая культура.

Տեղեկություններ եղինակի մասին

Բայցյան Արտաշես Գյորգի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայացիուսկան հետազոտությունների կենտրոն, ԳՊՄՌ աշխարհագրության ամբողջ,
E-mail: a.bogajyan@mail.ru

Ազատ ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՅՈՒՄՐԵՑԻ ՊԱՏԱՆԻ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ 1996-2000թթ. ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ծանրամարտը՝ որպես սպորտային մարզաձեռնություն, մուտք է գործել Հայաստան 1922թ.: 1925թ. ծանրամարտի խմբակներ գոյություն ունեն Երևանում, Լենինականում, Կիրովականում, Էջմիածնում և այլուր: Հայ ծանրորդների առաջին մրցուները տեղի են ունեցել 1926թ. Երևանում: Այն տարիներին ծանրամարտի մարզման մշակված ե երաշխավորված մեթոդիկա գոյություն չուներ, և մարզիկներն ու մարզիչները աշխատում էին իրենց անձնական նախաձեռնություններով: Սակայն հետագա 10 տարիներն ավելի արդյունավետ եղան: ԽՍՀՄ-ում աստիճանաբար սկսեց ձևավորվել մարզական աշխատանքի կազմակերպման տեսական ու մերդական համակարգը, որը զարգանալով ու կատարելագործվելով հետագա տարիներին ոչ միայն բերեց մարզական նշանակալի արդյունքների, այլ նաև հիմք հանդիսացավ խորհրդային սպորտի հետագա զարգացման համար:

Ծանրամարտը աստիճանաբար զարգացում էր ապրում ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության մյուս քաղաքներում: Արդեն համակարգված մարզումների արդյունքում 1930թ. Անդրկովկասի առաջնությունում զյումրեցի ծանրորդ Գյուրգեն Մինասյանը դարձավ անդրկովկասյան ռեկորդների հեղինակ: Հետպատերազման տարիները դարձան մարզական արդյունքների բարեկամման լավագույն ժամանակաշրջան, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, բայց հայ մարզիկներն առավել բարձր արդյունքների հասան 1970-ական թվականներից: Հատկապես նշանակալի էին լենինականցի ծանրորդների հաջողությունները, ովքեր ոչ միայն հանրապետության, այլ նաև ԽՍՀՄ և աշխարհի առաջտարներ դարձան՝ Կարդան Միլիտոսյան, Յուրի Վարդանյան, Սերգո Չախոյան, Խաչատոր Քյափանակյան, Խորյել Միլիտոսյան, Ալեքսան Կարապետյան և շատ ուրիշներ: Այս մարզիկների հաջողությունները ոգենորեցին նաև պատանիներին: Ավագների օրինակը իրան հանդիսացավ պատանեկան ծանրամարտի զարգացման համար:

Այդ տարիներից սկսած՝ մարզաձեռն երիտասարդացավ: Մեծ թվով պատանիներ տարբեր երկրներում սկսեցին զբաղվել ծանրամարտով և հավասար պարագաներու մեծահասակների կողքին: Պատանի մարզիկների ընդգրկվածությունը մարզաձեռն այսքան զանգվածային էր, և հաջողությունները՝ այնքան ակնհայտ, որ ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի որոշմամբ 1978թ. սկսեց անցկացվել մինչև 20 տարեկան ծանրորդների աշխարհի և Եվրոպայի երիտասարդական առաջնություն, իսկ ավելի ուշ՝ 1991թ., ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի որոշմամբ՝ մինչև 16 տարեկան պատանիների առաջնություն: Այս որոշումները խրանեցին պատանեկան ծանրամարտի զարգացումը ամրող աշխարհում:

Ծանրամարտի զարգացումը նոր թափ ստացավ Հայաստանում 1991թ. Անկախության հոչակումից հետո: Այս ժամանակաշրջանում զյումրեցի մարզիչները Աշոտ Միհրարյանի նախաձեռնությամբ ու զյումրեցի պատրաստեցին ծանրորդների նոր սերունդ, որի ներկայացուցիչները 1996թ. օգոստոսի 27-31-ը Բուլղարիայի Բուրգաս քաղաքում, ցուցաբերելով շատերի համար անսպասելի ցուցանիշ, 4 մասնակցով կարողացան ունենալ 3 հարթող: Բանն այն է, որ 90-ական թթ. Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը թույլ չէր տալիս գումարներ նախատեսել մրցումներին մասնակցության համար, և կազմակերպիչներն ատիպված էին հովանափրեներ փնտրել: Ի պատիվ զյումրեցի մարզասերների՝ հավարվեց պահանջվող գումարը, որի շնորհիվ մեր ծանրորդները մասնակցեցին առաջնությանը: Վերջինիս մասնակցում էին 24 երկրների 123 ծանրորդներ: Հայաստանի թիմը, որում ներկայացված էին ընդամենք 4 զյումրեցի մարզիկներ, թիմային հաշվարկով գրավեց 4-րդ տեղը՝ զիջելով Ռուսաստանին, Բուլղարիային և Թուրքիային, որոնք մասնակցում էին լրիվ կազմով (9 մասնակից): Նվաճած մեդալների թվով (9 մեդալ) զյումրեցիները 3-րդ տեղում էին: (աղյուսակ 1)

Աղյուսակ 1

№/7	Անուն, ազգանուն	Պահանջ	Պահանջ	Ընդունակություն	Ակտուացում	Շեմահաջող	Մարզիչ
1	Մակար Թամրազյան	75	92,5	167,5	I	46կգ	Ա.Միհրարյան Ա.Ղազարյան
2	Ռադիկ Ղետրոսյան	100	122,5	222,5	I	59կգ	Ա.Միհրարյան
3	Ռուդիկ Ղետրոսյան	115	142,5	257,5	I	64կգ	Ա.Միհրարյան
4	Վահիրանց Հակոբյան	77,5	95	172,5	X	54կգ	Ա.Բարդյան

Գյումրեցի ծանրորդներ Մակար Թամրազյանը (46 կգ՝ 338 միավոր) և Ռուդիկ Ղետրոսյանը (64կգ՝ 323 միավոր) զյումրեցին Եվրոպայի լավագույն ծանրորդների ցուցակը: 3-րդ տեղում Ռուսաստանի ներկայացուցիչն էր՝ 320 միավորով: Ռուդիկ Ղետրոսյանի հրում վարժությունը 142,5կգ գրանցվեց որպես մայրացմաքի ռեկորդ:

Ոգենորեցի պատանիների հաջողություններով՝ 1997թ. սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ Իշխան Զարարյանը մարզական խորհրդի հետ ըննարկումներից հետո որոշեց Հունգարիայի Թաթարախիա քաղաքում օգոստոսի 27-30-ը կայանալիք Եվրոպայի ծանրամարտի պատանեկան առաջնությանը հանրապետության թիմին գործուալի լրիվ կազմով (ինը մասնակից)՝ Ա.Միհրարյանի զյումրեցի պատրաստությամբ: Հայաստանի հավաքական թիմին անդամագրվեցին վեց զյումրեցիներ (թիմի կազմի և զրաված տեղերի մասին տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հ/Կ	Անուն, ազգանուն	Պահում	Հրում	Երկարություն	Գր.տեղը	Քաշ.կուրք	Մարզիկային	Մարզական կազմություն
1	Տիգրան Վ. Մարտիրոսյան	75	97,5	172,5	I	46	Ա.Գիորգյան	Գյումրի
2	Արմեն Ղազարյան	77,5	95	172,5	II	46	Ա.Ղազարյան	Սպիտակ
3	Սակար Թամրազյան	87,5	110	197,5	I	50	Ա.Միհիքարյան Ա.Ղազարյան	Գյումրի
4	Էդվարդ Հարությունյան	80	0	-	-	50	Միհիքարյան Ա.	Գյումրի
5	Գևորգ Ալեքսանյան	87,5	105	192,5	IV	54	Ա.Փիլոսյան	Էջմիածին
6	Գևորգ Դավթյան	102,5	115	217,5	III	59	Վ.Բիշախչյան	Գյումրի
7	Ռադիկ Ղևորյան	125	147,5	272,5	I	70	Ա.Միհիքարյան	Գյումրի
8	Ալեքսան Գասպարյան	105	122,5	227,5	IX	83	Ա.Միհիքարյան	Գյումրի
9	Գաղիկ Սողոմոնյան	110	130	240	XI	83	Պ.Պողոսյան	Վեդի

Պատանի ծանրորդների հիանալի մրցելույթների շնորհիվ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմը առաջին անգամ թիմային պայքարում 578 միավորով գրավեց 2-րդ տեղը՝ զիջելով Ռուսաստանի հավաքականին (645 միավոր): 3-րդը Լեհաստանի հավաքականն էր՝ 527 միավորով: Նվաճած մեղաների հաշվարկով Հայաստանի պատանիների թիմը ճանաչվեց հաղթող՝ 15 մետալ՝ 9 ոսկի, 3 արծաթ և 3 բրոնզ:

1997թ. մրցումներում հայաստանցի 4 պատանի ծանրորդներ՝ Արման Ղազարյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Սակար Թամրազյանը և Ռադիկ Ղևորյանը, սահմանեցին Եվրոպայի նոր ռեկորդներ:

Նոյն հաջողությունը կրկնվեց 1998թ. օգոստոսի 26-30-ին Խոպանիայում կայացած ծանրամարտի Եվրոպական պատանեկան առաջնությունում, որտեղ մասնակցում էին 27 երկրների 141 ծանրորդ: Մեր հավաքականը մասնակցեց լրիվ կազմով՝ մարզիչ Ա. Միհիքարյանի գլխավորությամբ և 658 միավորով գրավեց երկրորդ տեղը՝ 13 միավորով զիջելով Ռուսաստանի թիմին: Հայաստանի հավաքականի կազմում ներկայացված էին 5 գյումրեցիներ:

Սեղաների հաշվարկով մեր հավաքականը դարձյալ առաջինն էր՝ 9 ոսկի, 7 արծաթ և 2 բրոնզ, ընդամենը՝ 18: Այս մրցումներում լավագույն ծանրորդ ճանաչվեց Գևորգ Դավթյանը (362,74 միավոր):

1999թ. օգոստոսի 24-30-ը Խոտական Լիգնանո քաղաքում անցկացվեց ծանրամարտի Եվրոպայի պատանեկան (մինչև 16 տարեկան) եկեղական առաջնությունը: Մեր ազգային հավաքականը մրցումների մեջնեց լրիվ կազմով (9 ծանրորդ): Մրցումներին մասնակցում էին 24 երկրների 117 ծանրորդ և 14 երկրի 54 ծանրորդունիք: Ազգային հավաքականի կազմում ընդգրկվեցին 4 գյումրեցիներ, որոնք ցուցաբերեցին փայլուն հաջողություն՝ գրավելով 2 առաջին, 1 երկրորդ և 1 չորրորդ տեղեր՝ առաջին անգամ Եվրոպայի առաջնություններում թիմային հաշվարկում նվաճելով շեմպիոնի բարձր կոչումը: Սա մեծ հաջողություն էր հայկական ծանրամարտի համար և անցած առաջնությունների ունեցած հաջողությունների զարգանակետը: ՀՀ ծանրամարտի ազգային պատանեկան հավաքականը վաստակեց 656 միավոր և առաջ անցալ 634 միավոր հավաքած Ռուսաստանի հավաքականից: Թուրքիայի հավաքականը 578 միավորով երրորդն էր: (Անդաների բանակով 1-3 տեղերը գրաված երկրների նվաճումները տևել ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Երկիր	ոսկի	արծաթ	բրոնզ	ընդամենը
Հայաստան	9	5	2	16
Ռուսաստան	6	4	6	16
Բուլղարիա	3	4	3	10

Աղյուսակ 4

Մինչգերի աղյուսակով առաջնության լավագույն քառյակը պայմանավորված էր:

Գրաված մեջը	Անուն, Ազգանուն	Երկիր	Մարզիկային բարձրացուցանիշ	Երկարություն գումարը	Միավորները
I	Լոյանին Վաղիսյան	Ռուսաստան	53,0	230կգ	384,94
II	Դավթյան Գևորգ	Հայաստան	69,45	295կգ	382,94
III	Սարտիրոսյան Տիգրան Վ.	Հայաստան	58,25	240կգ	363,99
IV	Բարսեղյան Արկադի	Հայաստան	63,60	257,5կգ	359,69

Աղյուսակ 5

1999թ. Բաղադրիչում կայացած Եվրոպայի առաջնություններում ՀՀ պատանի ծանրորդների ցուցանիշները

Հ/Կ	Անուն, ազգանուն	Պահում	Հրում	Երկարություն	Գր.տեղը	Քաշ.կուրք	Մարզիկային	Բնակչություն
1	Վարդանյան Արմեն	70	85	155	V	46կգ	Պայան Բ.	Վանաձոր
2	Դանիելյան Արթուր	97,5	120	217,5	II	54կգ	Միրզոյան Օ.	Էջմիածին
3	Մարտիրոսյան Տիգրան	105	135	240	I	59կգ	Գևորգյան Ա.	Գյումրի

4	Բարսելյան Արկադի	120	137,5	257,5	I	64կգ	Այինչ Յ.	Էջմիածին
5	Դավթյան Գևորգ	135	160	295	I	70կգ	Բիշալյան Վ.	Գյումրի
6	Մատուկյան Կարեն	120	147,5	267,5	VI	76կգ	Սլսիքարյան Ա.	Գյումրի
7	Տեր-Աղասիյան Էդգար	130	160	290	II	83կգ	Սլսիքարյան Ա.	Գյումրի
8	Թագմացյան Վահե	117	155	272,5	IX	83կգ	Մուրադյան Ա.	Հոկտեմբերյան
9	Մալումյան Վահագան	125	162,5	287,5	IX	+83կգ	Պալյան Պ.	Վանաձոր

1996թ-ից մինչև 2008թ. Պեկինի օլիմպիադան խաղերը գրամքեցի պատահի ծանրամարտիկները ՀՀ ազգային հավաքականի կազմում բազմից մասնակցել են ինչպես Եվրոպայի, այնպես էլ աշխարհի առաջնությունների և այլ մրցաշարերի, իրենց ծանրակշիռ ավանդն ունեցել հաղթանակներում: Տղաների մարզական սիրանքը 2008թ. Պեկինի օլիմպիադան խաղերում Հայաստանին պարզեց 3 քրուգ մեդալներ, որոնց շնորհիվ ծանրամարտում Հայաստանի հավաքականը հավաքած մեդալների թվով ճանաչվեց երրորդը՝ 5 մեդալով զիջելով Չինաստանին և 4 մեդալով՝ Ռուսաստանին: Ներկայացված փաստերը վկայում են, որ նորանկախ Հայաստանի ծանրամարտի մարզական լավագույն էջերը գրվել են առաջին հերին զյումբեցի պատահի ծանրորդների կողմից:

Ժամանակակից աշխարհում սպորտը բանի հաճուր է, որ պահանջում է նյութական և զիտական լուրջ ներդրումներ: 1988-ադեսից հետո, նաև այսօր, այն Գյումրիում ծանր ժամանակներ է ապրում՝ եյուրական, սոցիալական, բարոյական գերազանցության առումներով: Ավերված քաղաքում պատանիները մարզվում են մարզական ու կենցաղային տարրական հարմարություններից գուրք, չշեռուցվող դահլիճներում, որոնք նույնիսկ մարզասրահ անվանել չեն կարելի: Սկզբնական շրջանում ֆինանսական միջոցների սողության պատճառով պատանիները չկարողացան մասնակցել հանրապետությունում ու նրանից դուրս կազմակերպվող բազմաթիվ հավաքների կամ ընկերական մրցումների: Այսինքն՝ ուզում ենք նշել, որ պատահի զյումբեցիների վերոնշյալ հաջողությունների հիմքում ընկած չեն նյուրական լավ բազան, պետական հովանավարությունը, մարզական ակտիվ կյանքը՝ մրցակցական հարուստ փարձը ու շփոսմները: Այս դեպքում հաջողության միակ գրավականը մարզիկների համար մերուդապես և հոգերանորեն ճիշտ մշակված ու կազմակերպված մարզումների համակարգի ապահավումն էր: Գյումրեցի մարզիչների ամենօրյա բրունաշան մարզումները կազմակերպվում և անցկացվում են զիտականորեն հիմնավորված մերուդներով: Հիշենք, որ ՀՀ ծանրամարտի մարզական խորհուրդը ուներ խորհրդային մարզման լավագույն փորձը, իսկ զյումբեցիները Եվրոպայում և աշխարհում հայտնի են իրենց բարձր ցուցանիշներով (օլիմպիադան 2 ոսկի, 2 արծաթ, աշխարհի և Եվրոպայի բազմակի չեմպիոններ և մրցանակակիրներ): Նկատենք, որ 90-ական թթ. գործող մարզիչները հիմնականում դեռևս խորհրդային շրջանում ձևավորված մասնագետներ են և տիրապետում են խորհրդային մարզական մերուդներին, որոնք աշխարհում լա-

վագույններից են: Անշուշտ, այս հանգամանքը պատանի ծանրորդների հաջողության անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Պատանիների հետարրությունը ծանրամարտի նկատմամբ պայմանավորված է նաև 1970-ական թթ. ձեռվորված ավանդություններով: Ավագ սերնդի ներկայացուցիչների համրավն ու փառքը մի տեսակ հմարում և ձգում է պատանիներին՝ վատահություն ու հույս ներշնչելով: Ծանրամարտ եկած պատանիների մեծ մասի համար սպորտը դառնում է սեփական ներուժը դրսութերու, իրականացնու, ինչ-որ բանի հասնելու միակ միջոցը: Այսուղեւ դրդապատճառ է ոչ միայն հայունի դառնուալու, առաջինը լինելու, աշխարհի տեսնելու մրումը, այ նաև որպես մարդ կայանալու, ընտանիքին նեցուկ լինելու, սոցիալական ծանր վիճակից, երբեմն նաև Գյումրիից դուրս գալու գործումը: Եվ նրանք սպորտն ընկալում են որպես սեփական շանքերով ինչ-որ բանի հասնելու լավագույն միջոց:

Երբ միավորվում են մարզիչների փորձը, գիտելիքը, նվիրվածությունը և մարզիկների նպատակավացությունը, աշխատավիրությունը, անձնական մոտիվացիան, արդյունքում ստացվում է այն, ինչ մենք այսօր ունենք: Բոլորովին էլ պատահական չէ, որ նորանկախ Հայաստանի պատանի ծանրամարտիկների թիմը տարիներ շարունակ կազմված էր կամ մ միայն գլումեցիներից, կամ մ հիմնական կորիզո գրումբեցիներն են: Առավել հետաքրքիր և կարևոր է, որ նրանք ոչ միայն մասնակցում են, այլ նաև ցուցադրում լավագույն արդյունքներ՝ մրցակցելով աշխարհապարագական, տնտեսական, մարզական գերտերությունների (Ռուսաստան, Չինաստան) մարզիկների հետ, որոնք հսկայական միջոցներ են ներդնում մարզաձևում: Գյումրեցիների երկար տարիների մարզական առաջադեմ փորձը տվել է իր պատուհները՝ կրկին ապացուցելով, որ բարձր ցուցանիշները մարզական առաջադեմ համակարգի և մերուդիկայի մշակման ու կիրառման արդյունք են:

ЮНЫЕ ТЯЖЕЛОАТЛЕТЫ ИЗ ГЮМРИ НА ПЕРВЕНСТВАХ ЕВРОПЫ В 1996-2000гг.

Резюме

Статья посвящена анализу спортивных достижений юных тяжелоатлетов из Гюмри, представлявших Армению на первенствах Европы в 1996-2000гг. Обширный фактический материал проанализирован с точки зрения особенностей условий и методов подготовки гюмрийских тяжелоатлетов и актуален для изучения истории тяжелой атлетики в Армении.

Տեղեկություններ հեղինակի մասին

Սահմանական Ազատ Վայրամի – սյուժեուսոր, ԳՊՄԻ ֆիզիկական դասախրակության ամբիոն, E-mail:elenavard@rambler.ru

A. Մագևոսյան

Անսահիս ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՆՁԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ

Աստուծոյ հետ խօսելու տիակ լեզուն հայերէնն է:
Հայերէնը հարուստ լեզու է լիռվին պարունակում է
մարդկային ճայների բոլոր հնչյունները
Զորջ Բայրոն

Բայրոնը բազմարափառ և բազմաշարշար իր կյանքի ընթացքում մի օր Վենետիկի մոտ, մի կղզում, հանդիպում է թուրքական բռնակալությունից փախած և այնտեղ մշտական բնակության համար հաստատած մի խոսք հայերի: Այդ կղզին գտնվում է Վենետիկի հարավային կողմում, և 12-րդ դարի երկրորդ կեսին անվանվել է Սր Ղազար, 13-րդ դարից հայտնի է դարձել որպես Հայոց Տուն: Սակայն այն ավելի հոշակվում և հայտնի է դարձում, եթե Միհրաք Սերաստացին իր 11 աշակերտներով հաստատվում է այստեղ, ստեղծում Միհրաքանների միաբանությունը՝ հոգեր կարգի մի հիմնարկություն, 1717թ. սեպտեմբերի 8-ին: Այդ օրից այն դառնում է հայ լեզվի, գրականության և մշակույթի ուրույն կենտրոն, որը աշխարհին ներկայացնում է հայ ժողովոյի պատմությունն ու պայքարը:

Անգլիական խավարամուներին մերկացնող և օսմանյան բռնակալության տակ խոշտանգված ժողովուրդների պաշտպան բանաստեղծը չէր կարող անտարբերությամբ անցնել այդ նույն բռնակալության տակ տառապող հայ ժողովով կողոքվ: 1816թ. նոյեմբերի 11-ին, ժամանելով Վենետիկ, Բայրոնը երապուրվում է Սր Ղազարի Հայկական Վանքով և միաբանությամբ: «Այդ ժամանակ ուրիշ ճամփորդների նման ես և խիստ հետաքրքրվում եմ «Սր Ղազարի մենաստանի ընկերությամբ», - գրում է նա:»¹ 1816թ. դեկտեմբերի 1-ին տարագիր բանաստեղծը, գոնդոլ նատած, դիմում է դեպի Սր Ղազար կղզին: «Դեկտեմբերի 1-ին մեծահոշակ և աշխարհաբարող անգլիացի բանաստեղծ Lord Byron-ը, որի գրվածքները ուկու արժեք ունեին, այցելության եկավ մեր վանքը... Նա աշխույժ, ուրախ բնավորությամբ և կրակու աշքերով մի երիտասարդ էր. թեև կադ էր մի ուսքից, բայց գեղեցիկ էր դեմքով», - գրում է Հ. Ավգերյանը իր «Ինքնապատում օրագրության» մեջ:²

Սր Ղազարում մի ամբողջ հետաքրքիր աշխարհ է բացվում Բայրոնի համար: Նրան դիմավորում են Ս. Սոմալյանը, Հ. Ավգերյանը և այլ վանականներ:

Վարդապետ Հարություն Ավգերյանի պաշտոնն է եղել ընդունել և ուղիկցել կղզի այցելած հյուրերին: Ավգերյանը Բայրոնին առաջնորդում է վանքի գրադարան: Նրան ցույց են տրվում մագաղաքայ բանկարժեք նմուշներ հայ հին գրազգերից, այդ թվում նաև՝ Մլք բազուհու պատմական նշանավոր ավելացրանք, ինչպես և հազվագյուտ բարգմանություններ հունարեն կորած բնագրերից, ասորերենից և պարսկերենից: Բայրոնը ծանրանում է հայ բանաստեղծության, նկարչու-

թյան և Ճարտարապետության հատընտիրներին: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան, Բայրոնը նորից է գալիս: Նա այցելում է վանքի տպարանը և Ավգերյանի հետ երկար գրուցում է հայ պատմության և մատենագրության շուրջ:

Զրույցի վերջում Բայրոնը խնդրում է Ադրնց արքահորը և վարդապետ Ավգերյանին թույլ տալ իրեն բնակվել վանքի մեջ՝ հայերեն սովորելու և հայ մշակույթին ավելի հանգամանորեն ծանրթանալու համար: Սակայն հայտնի է, որ Ադրնց արքահայրը մերժել է նրան վանքում բնակվել՝ վախենալով այդ այցելության քաղաքական բնույթից: Բայրոնը, հայտնի բանաստեղծ լինելով հանդերձ, քաղաքական խոշոր դեմք էր տարագրված Անգլիայից:

Մերձելով բարբառ բանաստեղծին կղզում բնակվել՝ վանականները միարեան խոստանում են ամեն հարմարություն տրամադրել նրան իրենց վանք հաճախելու, հայերեն սովորելու և հայ մշակույթին մոտիկից ծանրթանալու համար:

Երկօրյա այցելության տպավորությունն այնքան խորն էր, որ Բայրոնը համաձայնում է վանահոր առաջարկին: Նա գոհ էր տեսածից և լսածից: Նրա վրա հատուկ տպավորություն է թողնում վանականներից մեկը՝ Հարություն Ավգերյանը, որը բառասունենաց, կորովի դեմքով, կրակու աշքերով, սև մորուքով և երաշալի ձայնով մեկն էր: Այդ ամրող ընթացքում նա էր առաջնորդել մեծ բանաստեղծին: Հայրենասեր և զարգացած այս մարդը, հայերենից բացի, գիտեր մի քանի հին ու նոր լեզուներ՝ հունարեն, լատիներեն, երրայրեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հունգարերեն և գերմաներեն: Հմուտ լեզվարան էր և թարգմանիչ: Նա է հայերեն բարգմանել Սիլվանի «Դրախտ կորուսյալը», Լամբրոնացու «Ճարտասանություն»-ը և Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ը առաջինը հնչեցրել իտալերեն և այլ լեզուներով:

Ավգերյանը միաժամանակ երեւելի պատմաբան էր, անզիր գիտեր Խորենացու, Եղիշեի և մյուս նշանավոր մատենագիրների գործերը: Պատրաստակամ էր որպես ուսուցիչ և արժանապատիվ իբրև վանական: Հենց նա էր, հուրախություն Բայրոնի, դառնում է նրա հայերենի ուսուցիչը:

«Հայր Պատրիարք» (Padre Pascual) է անվանում Բայրոնն իր ուսուցչին, Ավգերյանը նրան փալաքշորեն անվանում է խենք:

Վանականները հայերեն դասերի համար Բայրոնին հատկացրել էին Գրչազրաց կամ Փաքք մատենադարան կոչվող սենյակը, որի լուսամուտը նայում էր ծովին: «Եվ ահա այդ սենյակում, որից արևելքի հնության շունչ էր փշում, նա սկսեց պարապետ հայոց լեզվով» (Յու. Վեսելովսկի «Բայրոնը Միհրաքայնների մոտ» Գիր և արվեստ):³

Դեկտեմբերի 9-ին Սըրբեկին ուղղած նամակում Բայրոնը գրում է. «Սկսել եմ և առաջ եմ տանում իմ հայոց լեզվի ուսումը, որը ես հաղթահարում եմ ուժերին շափով, հայոց Մենաստանում, որը ես հաճախում եմ ամեն օր, դասեր առնելու մի գիտնական արեղայից և ձեռք եմ բերել մի շաք եզական և օգտակար տեղեկություններ այդ արևելյան ժողովրդի գրականության և բարբերի վերաբերյալ: Նրանք

¹ Դաշտեց Խ., Բայրոնը և հայերը, Եր., 1959, էջ 38:

² Նոյն տեղում, էջ 41:

³ Դաշտեց Խ., նշան աշխ., էջ 50:

մի հաստատություն ունեն այսուել՝ մի եկեղեցի և Վանք՝ 90 աբդղաներով, որոնցից ումանք շատ զիտուն և զարգացած մարդիկ են: Նրանք ունեն մի տպարան և մեծ ջանքեր են գրծադրում իրենց ազգը լուսավորելու համար: Հայերենը (որ կրկին է՝ գրաբար և աշխարհաբար) են գտնում եմ դժվար, բայց ոչ անհարթահարելի (զեր այդպես հույս ունեմ»):⁴

Հայերեն սովորելու շարժադրը Բայրոնի բացատրությամբ չափազաց ուշազգավ է:

Դեկտեմբերի 5-ին Թումաս Սուրին ուղարկած նամակում Բայրոնը Վենետիկից գրում է.

«Զբոսանքի կարգով ես ամեն օր հայերեն եմ սովորում հայոց Մենաստանում: Ես զտա, որ միտք զբաղեցնելու համար մի դժվար աշխատանք էր հարկավոր ինձ: Սրանից ավելի դժվար զբոսանք ես չեմ կարող գտնել այսուել: Ես այն ընտրեցի, որ նրանով զբաղվելով՝ միտք տանջեմ: Դա մի հարուստ լեզու է, այսուամենայնիվ, և կարող է մեծապես հասուցել իրեն սովորողի նեղությունը: Ես զանում եմ և պիտի առաջ գնամ, բայց չեմ երաշխավորի իմ դիտավորությունների կամ հաջողությունների համար»:⁵

Սակայն Բայրոնի հայերեն սովորելու հիմնական շարժադրը պեսը է որոնել այն բացառիկ մեծ սիրո մեջ, որ նա տածում էր դեպի աշխարհի ճնշված հետազոտությունը:

Ավգերյանի հիշատակությամբ, Բայրոնը բուռն ցանկություն է հայունել սովորել հայերեն՝ հայ բանաստեղծության ընտիր հաստիքները կարդալու համար:

Քերականական կանոններին զուգընթաց, Ավգերյանը իր անզիացի աշակերտին հրամցում էր կտորներ հայ իին և միջնադարյան զրականությունից: Հայրենից բացի, նա ավանդում էր հայոց պատմության դասեր, որը Բայրոնն ունկնդրում էր լարված ուշադրությամբ՝ աչքը երկար պահելով Արարատի վեհատեսիլ պատկերին:

Դեկտեմբերի 24-ին Թումաս Սուրին ուղարկում էր նամակում Բայրոնի գրում և. «Կյանքը շատ կանոնավոր ընթացքի մեջ մտավ: Առավոտները գոնորով գտնում են հայերեն կաղալու (hobble) Ար Ղազարի միարանության արեղաների հետ և օգնելու նրանցից մեկին, սրբագրելով անզերենի բաժինը մի անզու-հայ քերականության, որ նա այժմ հրատարակում է»:⁶

Մարտի 25-ին Բայրոնը գրում է Սըրրեին. «Հայերեն քերականությունը լույս տեսավ, այսինքն՝ միայն մեկը, իսկ մյուսը դեռ ձեռագիր վիճակում է»:⁷

Բայրոնը հայերեն է սովորել մի ամբողջ ձմեռ:

«Եվ նա սկսեց վանք հաճախիկ հիսուն օր շարունակ ու առվորում էր օրական երկու-երեք ժամ և, մանավանդ, զրոյցներ էր ունենում սփոփանքի համար» (Ավգերյան «Ինքնապատում օրագրության»):⁸

⁴ Դաշտենց Ա., եղվ. աշխ., էջ 50:

⁵ Նույն տեղում, էջ 52:

⁶ Նույն տեղում, էջ 54:

⁷ Նույն տեղում, էջ 58:

Ավգերյանի և Բայրոնի մտերմությունը օրավոր խորանում էր: Բայրոնի հետաքրքրությունը և համակրանքը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի հանդեպ սկիզբ դրեցին մի համագործակցության, որը տվեց իր արզասիրը. 1817թ. առաջին անգամ լույս տեսավ անգլո-հայ քերականության դասագիրը, որ կոչվում էր «Քերականություն Անգլիական և Հայերեն»: Նրա ճակատին՝ ներսի կողմից, անզերեն և հայերեն գրված էր. «Որչափ լեզուս գիտե ոք խոսի, այնչափ անզամ ևս մարդ է նա»: 1817թ. հունվարի 2-ին Բայրոնը Սըրրեին գրում է. «Սի ուրիշ ծրարով քեզ եմ ու ուղարկում Անզու-հայ քերականությունից մի քանի թերթեր, հայերի օգտագործման համար, որը ես բաշալերեցի և որի հրատարակությանը արդարեն աջակից եղան (դա ինձ վրա նստում է միայն 1000 ֆրանսիական լիվրե):»⁹ Սա հաստատում է, որ Բայրոնը ոչ միայն հայերեն է սովորել, այլև իր ծախսով սպազրել է վերոնիշյալ Անզու-հայ քերականության դասագիրը: Ավգերյանը առաջարանի վերջում շնորհակալություն է հայտնում Բայրոնին. «... և լինել շնորհակալ երախտապարտ Միլարտին»:

Անզու-հայ քերականությունը Բայրոնի և Ավգերյանի առաջին գրական համագործակցության արգասիքն էր:

Միացյալ ջանքերով ձևանարկելով Անզու-հայ քերականության դասագրքի հրատարակությունը հայերի համար՝ Բայրոնի առաջարկությամբ և բաշալերանով նրանք միամամանակ կազմում են հայ լեզվի քերականության դասագիրը անզիախոս ուսանողների համար: Ավգերյանը գրում է. «Ապա հաղորդեց կազմել նաև մեկ ուրիշ հայերեն և անզերեն քերականություն հօգուտ իր ազգակիցներին»:¹⁰ Այս աշխատությունը լույս է տեսնում 1819թ.-ին, ապա 1832թ.-ին և կոչվում է «Քերականություն հայերեն և անզու-հայկան» («A Grammar Armenian and English»): Բայրոնի նպատակն է եղել իր եվրոպացի հայրենակիցներին ուսուցանել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի լեզուն, հետաքրքրություն արթնացնել նրանց մեջ դեպի հայերի հայրենիքը և մշակույթը: Այդ նպատակով դասագրքի ճակատին իրեն բնարան գրված է Ծննդոց գրքի խոսքը.

«Եւ նստաւ տապանն ... ի լերին Արարատայ»:

Դասագրքի բաժիններից մեկում բնագրի հետ զետեղված են մի շարք բարգմանություններ, այդ բվում և Բայրոնի՝ հայերենից կատարած բարգմանությունները:

Թե բարեկամության ինչպիսի մտերմությունն էր հաստատվել Բայրոնի և իր ուսուցչի միջև, երևում է 1818թ. հունվարի 27-ին Սըրրեին գրած նամակից. «Իմ հայրը, այսինքն՝ իմ հայ Հարություն հայրը, մեր Սենաստանի բոլոր մյուս հայրերի անունից հեռում է քեզ հարգալից ողջուններ»:¹¹

Կազմված և հրատարակված էր Անզու-հայ քերականությունը: Լույս էր տեսել Հայ-անզերեն առաջին քերականության դասագիրը: Ասպարեզ եկավ

⁸ Դաշտենց Ա., եղվ. աշխ., էջ 59:

⁹ Նույն տեղում, էջ 61:

¹⁰ Նույն տեղում, էջ 67:

¹¹ Նույն տեղում, էջ 71:

Անգլո-հայ բառարանը: Չնայած բառարանի փաստական հեղինակը համարվում է շարություն Ավգերյանը, խիստ զգալի է մեծ բանաստեղծի մասնակցությունը այդ գործում ևս: Բառարանը տպագրվեց 1821թ.-ին: Այն ունի անգլերն ընդարձակ առաջարան, հայերն առաջարանից գատ, որում կարդում ենք. «... մենք հպարտ ենք անվանելու լորդ Բայրոնին՝ ամենաականավորը անգլիական բանաստեղծներից, անգամ անգլիական բանաստեղծության ներկա հրաշալի դարում, որը մեր միջն հայերն ատվորելուց հետո դրդեց մեզ հրատարակել անգլերն լեզվի համատու մի քերականություն և նույնպես օգնեց մեզ կազմելու հայ լեզվի մի անգլերն քերականություն իր հայրենակիցների օգտագործման համար».¹²

Այսուհետև Բայրոնը Վենետիկի Սր Ղազար կղզում ծանոքացել է հայերն Աստվածաշնչին, նույնիսկ քարզմանություններ է կատարել դրանից (այն մասերը, որ պակասել են անգլիական Bible-ում): 1818թ. մարտի 31-ին նա գրում է Զոն Սրբեին. «Գրել եմ արդյոք թեզ, որ ես քարզմանել եմ առաքելական քոթերից երկուսը: Դա մի թղթակցություն է Սր Պողոսի և կորնքացոց միջն, որ մեր քարզմանության մեջ գոյություն չունի, այլ կա հայերենում, և, ըստ իս, խիստ վավերական է: Ես այն քարզմանել եմ Սր Գրի հատուկ անգլերենով»:¹³

Բայրոնի՝ հայերն արձակից կատարած քարզմանությունները, քարզմանական վարժություններ լինելով հանդերձ, արտահայտում են մեծ բանաստեղծի բուռն հետաքրքրությունն ու սերը դեսի հայ ժողովուրդը և նրա զիրն ու զրականությունը: Բայրոնը՝ որպես բանաստեղծ, մեծապես հետաքրքրվել է նաև հայ պոեզիայով: Զկարողանալով լրիվ հասկանալ մեր բանաստեղծական երկերը՝ նա խնդրել է իր ուսուցիչն հայ բանաստեղծության ընտիր հատվածները հայերենից խոսերեն քարզմանել, որ ինքը կարողանա կարդալ դրանք: Ավգերյանի օրագործյան մեջ ասված է. «Այս խնդրեց, որ խոսերեն քարզմանվի հայոց բանաստեղծությունների ընտիր հատվածներ ... որոնց մեջ նրան դուր եկավ Հոդիսիմեի մասին Շնորհալու գրած հանձարեղ երգը»:¹⁴

Հատերն են փորձել զտնել Բայրոնի հայերով հափշտակված լինելու պատճառները. «Նա (Բայրոնը) սիրում ու հարգում էր այն բոլոր ազգերին, որոնց սիրելի էր անկախության ողին: Այս էր գուցէ հայերի նկատմամբ ունեցած իր հիացմունքի քանակը, որովհետև նա զտավ նրանց մեջ մի ազգ, որին բռնությունն ու ազգության կարուստը չէին կարող աղավաղել կամ ընկճել, մի ազգ, որը, հակառակ իր պարտության՝ անաղարտ է պահել իր ավանդությների վեհությունը և իր իին համոզմունքների գեղեցկությունը»:¹⁵

Կազմելով Հայ-անգլերեն քերականության դասագիրը՝ Ավգերյանը խնդրում է Բայրոնին մի առաջարան գրել: Բանաստեղծը սիրով հանձն է առնում այդ գործը: Եվ ահա հրապարակ է զայխ Բայրոնի վերոհիշյալ նշանավոր Առաջարանը, որը գրված է անկեղծ ու ջերմ շնչով: Այն քաղաքական կարևոր փաստա-

¹²Տէ և «Բառարան Անգլիական և Հայերեն»-ի անգլերեն առաջարանը, Վենետիկ, 1821:

¹³ Դաշտենց Խ., կշկ. աշխ., էջ 81:

¹⁴ Նույն ուղղում, էջ 87:

¹⁵ Դաշտենց Խ., կշկ. աշխ., էջ 88:

թուղթ է, որում հանձարեն բանաստեղծն արտահայտել է իր հույզերն ու մտքերը հայոց լեզվի և հայ ժողովրդի մասին:

«Անգլիացի ընթերցողը հավանորեն պիտի զարմանա իմ անունը այսպիսի մի գործի հետ առնչված տեսնելով և գուցէ ինձ, իբրև լեզվագետի, իմ արժանիքից ավելի դրվագի: Չուզենալով զիտակցար մեղակից լինել այդպիսի մի պատրանքի, կարելույն չափ համառոտակի պիտի բացատրեմ իմ անձնական դերը սույն գործի հորինման մեջ և այն դրդապատճառները, որ ինձ դեպի այն մղեցին: Երբ 1816թ. Վենետիկի հասա իմ միտքն այնպիսի վհաճակի մեջ էր, որ կարիք էր զգում ծանր զրադրումի և այնպիսի մի զրադրումի, որ իմ երևակայության համար քիչ ասպարեզ թողներ և հետապնդումի համար բավականաշափ դժվարություն հարուցեր: Այդ ժամանակ ես ել մյուս ուղերձների նման խիստ հետաքրքրվում էի Սր Ղազարի մենաստանի հասարակությամբ, որը կերպական հաստատության մեջ միավորում էր բոլոր առավելությունները առանց յուրացնելու դրա մոլություններից որևէ մեկը: Կացարանի մաքրությունը, հանգստավետությունը, արեգաների ազնվությունը, քարեկրությունը և եղբայրական առաքինությունները անտարկույթը պես պետք է համոզեն աշխարհիկ մարդուն, թե «կա մի ուրիշ և ավելի լավ բան» նույնիսկ այս կանքի մեջ:

Այս մարդիկ քահանաներ են մի հարստահարված և ազնվական ազգի, որը հրեաների և հույների նման տարագիր և ստրուկ է եղել առանց առաջինների պես խստափրու կամ վերջինների պես գերի քանալու: Այս ժողովուրդը հարստացել է առանց վաշխառության և վաստակել է ամեն պատիվ, որ կարող են գերության մեջ վաստակել առանց խարդախության: Բայց նրանք, այնուամենայնիվ, երկար ժամանակ գրավեցին իրենց բաժինը «Գերության Տան» մեջ, որ վերջերս բազմապատկել էր իր անթիվ օթևանները:

Գուցե դժվար կիներ որին այլ ազգի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճիրներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրության արզասիր են, իսկ թերությունները՝ ճնշման հետևանք: Սակայն ինչպիսին է եղած լինի նրանց ճակատագիրը, - իսկ դա անցրալում դառն է եղել, - ինչպիսին է լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մետա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս միայն նրանց լեզուն կարիք ունի ավելի շատ ուսումնասիրվելու, ավելի զրավիլ դառնալու համար: Եթե Ս. Գիրքը ուղիղ բրդոնենք, Հայաստանի մեջ էր, որ զետեղված էր դրախտը, Հայաստան, որ Աղամի սերունդների չափ նույնքան թանկ վճարեց իր հոգու վաղանցուկ մասնակցության համար տյա մարդու երջանկությանը, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանի մեջ նախ ջրեկելու տևագույն և ապա աղավնին հանգչեց: Բայց կարելի է ասել, թէ դրախտի անհետացման հետ սկսվեց նաև այս երկրի տարաբախությունը, որովհետև թեակեսն երկար ժամանակ նա եղավ մի զրավոր քաղաքություն, բայց հազիկ երբեք անկախ մնաց. և՝ պարսից սատրապները, և՝ բուր-

բական փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված ստեղծել էր մարդուն ըստ իր հասուլ պատկերի»:¹⁶

Բայրոնն այս Առաջարանը ներկայացնում է Ավգերյանին, բայց Մխիթարյանները հրաժարվեցին այն տպագրելուց քաղաքական նկատառությունից ենելով։ Բայրոնը ազդեցիկ ուժ էր դարձել Եվրոպայում։ Նրա ամեն մի անգառույց խոսքը (նա երգիծել էր բուրքերին և պարսիկներին) կարող էր Մեսաստանի խաղաղությունը վրդավելու պատճառ դառնալ։ Նրան առաջարկում են ավելի «անվնաս» առաջարան գրել Հայ-անզերեն քերականության համար։ Նա խոստանում է և, Ավգերյանի պատմածի համաձայն, այլևս դադարում է Հայոց կղզի հաճախելուց։

«Դուք վախենում եք իմաստ կարծիք տպել ձեզ Ճնշողների մասին։ Ստրուկներ և վախեկուներ, դուք արժանի եք բիրու իշխանավորների։ Դուք արժանի չեք այն մեծ ազգին, որից ծագում եք», - զոշէ և նա Մխիթարյան հայրերի երեսին։¹⁷

Այդուհանդեռձ, լորդ Բայրոնի Առաջարանը այդ օրերում մի ուժգին ահազանգ էր Եվրոպայի մեջ՝ մեր ազգի զարքոնքին ու դասին նվիրված։ Նրանով Բայրոնը ասպարեզ էր իշխում որպես Հայաստանի և հայ ժողովրդի ազատության մեծ շատագով։

Թումաս Մուլը այս Առաջարանը գոտավ բանաստեղծի բոյերում և իրավաբակեց նրա կենսագրության մեջ, որտեղից է բարգմանվեց ու տարածվեց ամրող աշխարհում, գրեթե բոլոր քաղաքակիրք լեզուներով։

Առաջարանը գրված էր անզերեն լեզվով, քանի որ Բայրոնն այնքան չէր սովորել հայերեն, որ կարողանար իր վերոհիշյալ առաջարանը շարադրել հայերենավ, բայց այդ նրա նպատակն էր անզիացիներին հասու դարձնել այն, կցել իր հայրենակիցների համար կազմած Հայերեն-անզերեն քերականության դասագրին։

Թեպետ Բայրոնն Առաջարանի կապակցությամբ գժտված էր Մխիթարյանների հետ, Հունաստան մեկնելուց առաջ նա այցելել է Սրբական Ղղոփի կողմէ։ Սրտառուչ է եղել նրա իրաժեշտող իր հայ բարեկամներին։ Բանաստեղծի մեկնումից հետո երկու ծերերը՝ «հայր Սոմայանը և հայր Ավգերյանը, իրարու երես նայեցան... մեկնած էր ան, զոր տարիներով սիրած կին իրենց անառակ տղուն պես, ան պիտի մեկներ դեպի Արևելյ... և երկուքի ալ աշքերեն զույգ մը արցունքի կարիններ գլորեցան, ու տղու պէս լացին»։¹⁸

Կղզու հայ բնակիչները սիրով են պահպանում Բայրոնին հիշեցնող և նրա անվան հետ կապված բոլոր մասունքները։ Բայրոնի փոքրիկ գրչահատը, պատից կախված նրա երիտասարդ հասակի նկարը, կղզու վրա մինչև օրս գոյություն ունեն մեծ բանաստեղծի ձիթենիները, որոնք կոչվում են «բայրոնյան ձիթենիք»։ Այդ ծառերի տակ է երազել Անզիայի մրրկաշունչ զավակը։ Պահպանվում է նաև բանաստեղծի հայերեն ստորագրությունը վանքի այցելուների գրքում։ Այդ ստորագրու-

թյունը պահպան է ապակու տակ, այն սենյակում, որտեղ հայերեն է տպորել մեծ բանաստեղծը։

Թեև կարճ էր այդ երկու հանձարների՝ Բայրոնի և Հայոց լեզվի հանդիպումը, այնուամենայնիվ շատ խորը և անորոշանալի հետոր է բողել հայ պատմության և գրականության մեջ։ Եթե Բայրոնը գնահատեց և իր հարգանքի տուրքը մատուցեց Հայոց լեզվին անմիջապես, անարգել և հայուսն կերպով, ինչպիսին ինքն էր, ապա Հայոց լեզուն իր գիրկը բացեց մեծ անզիացու պոեզիայի առաջ, և ժամանակի ընթացքում բարգմանական գոհարներ ծնվեցին հայերենով՝ շրեղ գեղեցկությամբ վերարտադրելով մեծ պոետի խոսքը։

ВСТРЕЧА ДВУХ ГЕНИЕВ: БАЙРОН И АРМЯНСКИЙ ЯЗЫК

Резюме

A. Խաչատրյան

В статье представлена связь великого английского поэта Дж. Байрона с армянским языком и армянами, описано его посещение Мхитарянского аббатства на острове Святого Лазаря в Венеции, его участие в создании и публикации англо-армянского и армяно-английского словарей.

Были использованы письма Байрона к Мррею и Муру, которые относятся к этому периоду.

Տեղեկություններ հեղինակի մասին


Խաչատրյան Անահիտ Սերյոժայի – Գյուղու Զ. Բայրոնի անվան թիվ 20 դպրոց, E-mail: anahitexxex@mail.ru

¹⁶ Դաշտենց և. էջվ. աշխ., էջ 91-93:

¹⁷ Նույն տեղում. էջ 95:

¹⁸ Նույն տեղում. էջ 109:

ՀՐԱՏՈՒ ИНФОРМАЦИЯ INFORMATION



Կյանքից հեռացավ նվիրյալ հայագետ Սէնեքըիմ Արշակի Մէլքոնյանը, որի բարի անունը 68 տարի շարունակ անմատորդ կապված է Գյումրու ԱՆԱՐԱՆԴՅԱՆԻ անվան պետական մանկավարժական ինստիտուտի հետ, աևձնափորություն, որի 86 տարիների ազնիվ կենսագրությունն ու գործը բնականորեն այնպէս են միահյուսված հարազատ բուի տարեգործաբանը, որ դրանք տարանջատեն այնս ունկարելի է:

18-ամյա թորոսպարուղի պատասխին 1947-ին մտավ Հենինականի մանկավարժական ինստիտուտ, որպեսզի մինչև իր արդար վախճանը այն երբեք չբաժանվի նրանից, ու դեպի Անհունը իր հավերժի ձամփան է սիրելի բուից սկիզբ առնի: «Մարդու երօնակության կամ թշվառության աղբյուրը նրա սիրուն է. մենակ մեծ սրտի աեր մարդիկ են, որ կարող են մեծ վիշտ ու ցավ ունենալ, բայց երբեք դժուախու չեն լինում»: Հավատարիմ թումականական բարոյակուսության այս հանճարեղությունն պարզ ձևակերպություն, ի հետուկ կամքի դառնությունների ու հարկածների:

Մէլքոնյան-մարդին իր ողջ կյանքում ապրեց միշտ գլուխ բարձր, միշտ հպարտ:

Անհնար է թվարկել մեր կյանքի բոլոր այն ուղարկությունները, ուր աշխատու կամ աշխատում են նրա տարբեր տարիների սաները՝ մեր ոսկեղենիկ մայրէնիի հազարավոր ուսուցիչներ, համբակրության ու բումական գործի հարուրավոր կազմակերպիչներից, նրանցից շատերն այսօր բեն տատիկներ ու պապիկներ են, իրենց տարիքի մեջ առաջացած մարդիկ, բայց իրենց Ուսուցիչն անդիպելիս հուզվում ու կարկանդում էին նորաբուի տառաջնորդությունը և նման, անթարուց կարուով ու գորովանորով էին հաղորդվում հետու: Մտարում ես՝ սա չէ՝ արդյոք, մա րդ, ապրածդ կյանքի ու արածդ գործի ամենաիրական զնահատականը, այն ծովածակալ հեղինակությունը, որ կարող ես վայելել բռաշխատակրով, այն սերն ու հափատը, որ լիարու սերմանել ես բռ սաների մեջ հայոց լեզվի ու հայ մշակույթի հանդեպ, և արցոյր մեզանում շատ են բեզպեսները, ցավոր՝ ոչ, որովհետն «Բազում են կոչեցւալը, և սակաւ են բնարեալը»... Պրոֆեսոր Մէլքոնյանին հասարակ էր իր գործին անմատուրդ նվիրումը, ուսանողական լսարանն իրենով զերելու արվեստի զարտերներին կասարյալ սիրապեսումը, համարձակ ու անկուտրում բնափորությունը, կրթական գործի կազմակերպման բնատուր շնորհը, այն զիտանկանի վար արտահայտված տաղանդը, հայագիտության մեջ իր խոսքը ունենալու պատվախնդիր ձգուումը, որը դեռ 60-ական թվականներին շատերին ստիպեց հանրապետական զիտական մամուլում նախ գգուշավոր, հետո արդեն անթարուց ենսաքրքրությամբ ու հիացմություն խոսել հայերենի ուսացիչության, մասնավորապէս թումականագիտության բնագավառ մտած մի զիտնա-

կանի մասին, որի համարձակ ընդհանրացումները, կարծրատիպէք փշրող նորովի մոտեցումները, հարցադրությունների խորրայնություններ ու նորով դիմումականություններ մայրաքաղաքից հեռու ապրող զիտականին աննախադեպ ճանաչում բերեցին: Այսօր, երբ հրապարակի վրա են Անման Լոռու լեզվական գեղագիտության խնդրներին նվիրված նրա բազմաթիվ հողվածները, «Հովիկ Թումանյանի պոեզիայի լեզուի և ոճը» /1969/, «Թումանյանը և արևելահայ զեղարվեստական գրականության լեզուն» /1986/, «Թումանյանի հոգու կենսագրությունը» /2004/ եռագրությունը, պատրաստ և տպագրության «Թումանյանի պահանջման լեզու» մենագրությունը, անվարան կարելի է արձանագրել, որ մեծ բանաստեղծի հետ զիտնականի շարքը կեսրայր հոգեհարացատությունը մեր դիմաց լայնարեն բացել է թումանյանական զարմանածրաշ լեզվաշխարի նրանուր զարտերներին հասու լինելու հնարավորությունը, օգնում է բնորնելու արդի հայ զեղարվեստական լեզվի կայացման մեջ գրադի դերի անզուզականությունը: Սյուս կողմից՝ բանաստեղծի ու զիտնականի հոգենոր մտերմությունը, ավելին, մեկտեղությունը, ոչ միայն չի զրկել Մէլքոնյանի գրիչը ինքնասիպությունից, այլև բարեկացրել է նրա բնասուր խորը լեզվազգացողությունը՝ օժտելով այն բումանյանական լեզվամուածությունը խորրով ու նրբությամբ: Պրոֆեսոր Մէլքոնյանին առաջինը մեր իրականության մեջ առաջ բաշեց թումանյանի՝ արդի հայ զեղարվեստական ոչ զրական/լեզվի հիմնադրի զադափարը՝ այդորինակ արժեքավորելով մեծ բանաստեղծի լեզվամշակման ավանդների արդիական նշանակությունը:

1984-ին իրապարտկ իջած «Ակնարկներ հայոց լեզվի ոճարանության» մենագրությունը, բաս էության, հայերենի ոճագիտության առաջին բուհական դասագիրքը եռակ՝ գրված լեզվաբան-զեղագետին բնորոշ տեսական ու մեթոդական բարձր մակարդակով, իսկ 1993-ին լոյս տէսած

«Հովիկ Շիրազ գրական փարպետության հարցեր» մենագրությունը իր հանճարեղ համերկըրացու բանաստեղծական խորապետությունների հարցադրությունների խորրայնություններ ու նորով դիմումականություններ մայրաքաղաքից հեռու ապրող զիտականին աննախադեպ ճանաչում բերեցին: Այսօր, երբ հրապարակի վրա են Անման Լոռու լեզվական գեղագիտության խնդրներին նվիրված նրա բազմաթիվ հողվածները, լեզուի և ոճը» /1969/, «Թումանյանը և արևելահայ զեղարվեստական գրականության լեզուն» /1986/, «Թումանյանի պոեզիայի լեզու» մատուերներն առեալավատյան են համաժողովրդական սեր վայելու բանաստեղծի և ճանաչված դասախոսի մարանարություն բնկերական սիրություն բանաստեղծի բազմաթիվ նամակներու նորապատճեն բանաստեղծի և ճանաչված դասախոսի մարանարություն լեզվաբանն, բ որուել է սկիզբ տոնում գրականագետը: Ի դեպ, պրոֆեսոր Մէլքոնյանի թղթերի մեջ Հովիկ Շիրազից բազմաթիվ մատուերներն առեալավատյան են համաժողովրդական սեր վայելու բանաստեղծի և ճանաչված դասախոսի մարանարություն բնկերական սիրություն բանաստեղծի բազմաթիվ նամակներու նորապատճեն բանաստեղծի և ճանաչված դասախոսի գորով ու հպարտություն կա իր կրտսեր ընկերու նկատմամբ, որը մեկ հարզարժան Սէնեքերիմ» է, մեկ՝ «սիրելի Սենե», մեկ է՝ «ազենիվ զրչելովայրը, որի մարդասիրության համավար բարությամբ է լի տակավին»:

Մէլքոնյան ուրախությամբ ընդունեց Գյումրիում ՀՀ զիտությունների ազգային ակադեմիայի հայագիտական ենաւագությունների կենտրոնությունը ազգային հայագիտական գորով ու հպարտություն կա իր կրտսեր ընկերու նկատմամբ բարեկամը: Կէնարուի զիտական խորերի անդամ էր: Հասցեց մի բանի հետաքրքիր հողվածներու հանդեպ հանդեպ գալ կենարանի «Գիտական աշխատություններ» պարբերականում:

Գործենիերներից մեկը պրոֆեսոր Մէլքոնյանի մասին դիպուկ է ասել. «Հատակը ինտուիտուտուս մտան անուն ձեռու բերելու նպատակով, իսկ Մէլքոնյանը անուն ու պատիվ բերեց ինտուիտուակին»:

Համազված ասենք՝ հայրենական զիտության ու կրթության բնագավառություններ դռն են կիցվելու այս ազնիվ ու անխոնչ մշակի անունն ու գործը, երա հազարավագ երախտական ավանդների արդիական նշանակությունը:

Ցիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի...:

ՀԱԱ Շիրազի հայագիտական ենաւագությունների կնևորուկի զիտական հանդեպ ուղարկելու անունից՝ Ս. Հայրապետյան

«Գիտական աշխատություններ»
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն; Խմբ՝
Ա. Հայրապետյան, Գրումբի: 2014, հատոր
XVII, 221 էջ:



Հոյս տեսալ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XVII հատորը՝ 13 սպազմական մասնութեավուրով, պրոֆ. Ա. Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:

Այս հասորում նույնական է ամսագիրը՝ Ա. Հայրապետյանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XVII հատորը՝ 13 սպազմական մասնութեավուրով, պրոֆ. Ա. Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:

Այս հասորում նույնական է ամսագիրը՝ Ա. Հայրապետյանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից 2013թ. հոկտեմբերի 4-6-ը Գյումրիում կազմակերպված «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովին մասնակից հայ և այլազգի գիտնականների լավագույն գեկույցներից մի քանչիքը:

Անհաջողությունը նոր ու ինքնատիպ մենարանություններով են հարսացնում պ. գ. բ. Ե. Մարգարյանի «Ամի՞ արքա քաղաքացիությունը և արդիականությունը» մասնակից հայ և այլազգի գիտնականների լավագույն գեկույցներից մի քանչիքը:

Հայոց պատմության հնագույն շերտերի պատմահնագիտական նոր մենարանություններով են հազեցած պ. գ. բ. Ե. Եղանյանի «Վաղբրուգի կարգադրության մի ծեսի շուրջ», պ. գ. բ. Ս. Պետրոսյանի «Զարմայիր»:

Նի «Տրդասր որպես Անի Մրկի Մրկից եկեղեցու ճարտարապետություն» հաղմանները:

